- 2) ամբարտակ - պատնեշ, բարձրարվեստ - նրբաճաշակ, բացատրել - լուսաբանել, ազնվաբարո - առաքինի
- 3) բարձրանուն - մեծահռչակ, բեկում - շրջադարձ, բթամիտ - թանձրամիտ, ուստր - ոստրե
- 4) բրուտ - ատաղձագործ, անգիր - բերանացի, բացի - գատ, բերկրավետ - ուրախալի

4. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) բլուր - բարձունք, անտունի - տնանկ, բժախնդիր - քմաճաշակ, բյուր - բազմաթիվ
- 2) բնագորրեն - ինքնաբերաբար, բնակարան - կացարան, ամոլ - չբեր, բնաջնջվել - կործանվել
- 3) քանքար - անկյունաքար, բնիկ - երկրացի, բողոքել - տրտնջալ, բովանդակ - ամբողջ
- 4) բոտրաթույր - կարմրագույն, բովել - խարկել, գազանաբարո - վայրենի, գայթակղել - հրապուրել

5. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) գամվել - մեխվել, գաղտնապահ - փակբերան, գարշադեմ - տգեղ, գնահատելի - արժեքավոր
- 2) գանձարկղ - դրամարկղ, խոնջանալ - սեթևեթել, գեղաճաշակ - բարձրաճաշակ, գլխարկ - գդակ
- 3) գիշերերգ - ցայգերգ, արամբի - զամբիկ, գինարբուք - խնջույք, գինդ - ականջող
- 4) կեղծանուն - պատվանուն, գիտակցել - ըմբռնել, արմատական - առաջնաչին, դրվատել - փառաբանել

6. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) կանամբի - կանացի, դաղձ - անանուխ, դաղրել - հոգնել, դանդաղաքայլ - դանդաղաճեմ
- 2) աղիողորմ - դառնահամ, դասդասել - դասակարգել, դավաճան - մատնիչ, դեղախոտ - դեղաբույս
- 3) դասալիք - զինախոյս, կրոնաբան - դավանաբան, դասախոսել - դասավանդել, խրոխտաձայն - ասեղագոչ
- 4) ընչացք - մորուք, զագրաբար - ստորաբար, շախմատ - ճատրակ, լուսահոգի - երջանկահիշատակ

7. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) հունցել - շաղախել, զանազանել - տարբերել, բաղդատել - բաժանել, զայրույթ - ցասում
- 2) զվարթատես - ժպտաղեն, ազդրոսկր - գստոսկր, սանձահարել - զսպել, կատակաբան - զվարճախոս
- 3) դար - հարյուրամյակ, ընչամոլ - ագահ, ընձյուղել - ծլարձակել, ընկղմել - մխրճել
- 4) գեղդաստան - ընտանիք, սեղանապետ - թամադա, արքա - շահնշահ, թախծահար - վշտահար

8. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) թեզանիք - թևք, քողարկել - պարտակել, թափթփված - խառնափնթոր, բուրյան - հոտավետ
- 2) շրջմոլիկ - թափառական, ընչացք - բեղ, բամբասանք - ասեկոսե, ընտրող - քվեարկող
- 3) ընձեռել - տրամադրել, մոմռալ - կսկծալ, արտասվել - հեկեկալ, ադամանդ - շողակն
- 4) լայնախոհ - լայնահորիզոն, լախտ - մտրակ, գուղձ - հողակոշտ, մակույկ - նավակ

9. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) ծավալել - ընդարձակել, քաջածանոթ - լավատեղյակ, լաջվարդ - կապտագույն, անըստգյուտ - անթերի
- 2) լեզենդ - ավանդագրույց, բարվոքել - լավացնել, հափշտակել - կողոպտել, գռեհիկ - անբարեկիրք
- 3) շաղակրատ - շատախոս, բուրվառ - խնկաման, փաղաքշանք - գուրգուրանք, վիհ - անդունդ
- 4) արտասավախառն - լացակումամ, պիրկ - ձիգ, խոռոչ - խորշոմ, բարձրորակ - ընտիր

10. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) բուսագուրկ - լերկ, ճաղատ - հերաթափ, խրթին - կնճռոտ, բարբարոս - վայրենի
- 2) բարեկեցիկ - ապահով, առաքել - ուղարկել, խանդաղատանք - կորով, շեղջ - դեզ
- 3) առյուծորդի - դյուցազն, անհարկի - անպատշաճ, ողջամիտ - խելացի, բանախոս - հռետոր
- 4) բանադրանք - նզովք, ամբաստանել - մեղադրել, բանակ - զորք, բառարան - բառգիրք

11. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) բարգավաճ - ծաղկուն, կիսավեր - խարխուլ, լեզվաբան - լեզվագար, դշխ - թագուհի
- 2) արքունի - պալատական, արքայախնձոր - անանաս, կայսր - միապետ, ազնվահոգի - վեհանձն
- 3) նորոգել - բարեկարգել, վախճան - ավարտ, երկնահույ - բարձրագահ, հպարտ - վես
- 4) խատուտիկ - գույնզգույն, բժախնդիր - չմահավան, բնագդ - ենթագիտակցություն, բնականոն - օրինաչափ

12. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) գրգամոլ - փափկասուն, գրեթե - համարյա, տիրել - նվաճել, կարեկցանք - գութ
- 2) սփրթնել - գունատվել, խցկվել - սողոսկել, սողուն - գեռուն, թափանցիկ - թռուցիկ
- 3) նահատակ - մարտիրոս, զերդ - ինչպես, զիջել - ընկրկել, նողկալ - խորշել
- 4) գոջալ - ապաշխարել, զեփյուռ - հովիկ, զետեղել - տեղադրել, եղկելի - նողկալի

13. Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.

այրական - քարանձավային, կանացի - առնական, խափշիկ - խարտյաշ, խաբուսիկ - թվացյալ, լեզենդ - ավանդագրույց, ասպնջական - վաղնջական, թանկություն - սղություն, խրթին - դժվար:

- 1) յոթը
- 2) վեցը
- 3) հինգը
- 4) չորսը

14. Շարքերից քանիսի՞ր բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- թերեփ - կիսահում, թևատ - կռնատ, թթու - կծու, առածգական - դյուրաթեք
- անբուն - քնատ, թխվածք - անուշեղեն, անօրինական - անման, տխմար - պակասամիտ
- հանապազօրյա - առօրյա, ասեղ - հերյուն, խորունկ - ծանծաղամիտ, վճռական - հաստատական
- հավաստի - վստահելի, վրդովալից - խռովահույզ, վտիտ - թուլակազմ, ձեղուն - բեղուն

- 1) չորսի
- 2) երկուսի
- 3) մեկի
- 4) ոչ մեկի

15. Շարքերից քանիսի՞ր բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- սնապարծ - մեծամիտ, առվույտ - երեքնուկ, լայնախոհ – ներհուն, քաղցրավենիք - հրուշակեղեն
- ասպնջական - վաղնջական, տաքդեղ - պղպեղ, տրամադիր - հակամետ, թուրքատյաց - տաճկատյաց
- տվախտանք - տառապանք, տարտամ - անորոշ, նաժիշտ - երաժիշտ, տանիքագործ - ձեղնագործ
- տարրական - պարզագույն, հարթություն - տափարակ, կուպր - ձյութ, մակաղել - մաքառել

- 1) երեքի
- 2) երկուսի
- 3) մեկի
- 4) ոչ մեկի

16. Բառաշարքում երկնչել բառի քանի՞ հոմանիշ կա.

մղկտալ, երկյուղել, պոռթկալ, սարսափել, մտմտալ, ողորբել, սոսկալ, առինքնել, կասկածել, ահաբեկվել:

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

17. Տրված բառերից քանի՞ հոմանշային գույգ է հնարավոր կազմել.

մեղադրյալ, երկչոտ, կթղա, բուրյան, սպակե, բազին, եղնիկ, վեհերոտ, անդրավարտիք, գավաթ, եկեղեցի, տաբատ:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

18. Տրված բառերից քանի՞ հոմանշային գույգ է հնարավոր կազմել.

վեղար, սպահով, կնգուղ, սսպատ, սմբուկ, դեղձան, որդի, քաղցրախոտ, բաղրիջան, խարտյաշ, ուստր:

- 1) հինգ
- 2) չորս
- 3) երեք
- 4) երկու

19. Տրված բառերից քանի՞ հոմանշային գույգ է հնարավոր կազմել.

տնանկ, այտուց, յուրային, ավերակ, վիթ, դաշնակից, առևտրական, ձիրք, առընթեր, քանքար, ազեվազ, գործարար:

- 1) հինգ
- 2) երեք
- 3) երկու
- 4) չորս

20. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) նգովք-օրհուրյուն, ճապաղ-սեղմ, ստերջ-բեղմնավոր
- 2) գոց-փակ, վտիտ-մարմնեղ, փութկոտ-ծանրաշարժ
- 3) բնավ-միշտ, պարպել-դատարկել, դյուրին-խրթին
- 4) անձուկ-ընդարձակ, նվաղ-փոքրոգի, խոսուն-համր

21. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) քանքարավոր - անտաղանդ, կարծր - փխրուն, տաքարյուն - սառնարյուն, կողակ - ալիք
- 2) հույժ - հզոր, անախորժ - դուրեկան, թերի - անըստզյուտ, տզեղ - գողտրիկ
- 3) անանց - անցողիկ, հարձակվել - տեղի տալ, ներհուն - անխելք, լուսավոր - խավարչտին
- 4) խոնվել - ցրվել, հրապուրվել - հիասթափվել, հետաքրքիր - միապաղաղ, այրական - առնական

22. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) շաղակրատ - շատախոս, չոր - տամուկ, համախմբում - պառակտում, անուժ - կորովի
- 2) առնացի - կանացի, բացառիկ - սովորական, սեղմ - ծավալուն, ողջախոհ - խոհական
- 3) գեհեն - եղեմ, եսասեր - անձնուրաց, խթանել - օգնել, փութալ - հապաղել
- 4) շինծու - անկեղծ, բերկրել - տրտմել, հեղհեղուկ - անհողդողդ, մսխել - կուտակել

23. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) համանուն - հոմանիշ, հուժկու - անզոր, առատաձեռն - զծուծ, ուրբաթախոս - շատախոս
- 2) անպարկեշտ - ազնվաբարո, անոսր - այտոսկր, վեհերոտ - առյուծասիրտ, շենշող - պայծառ
- 3) հանձինս - հակառակ, ժպտերես - խոժոռ, շինծու - բնական, որկրամուլ - քշակեր
- 4) բացճակատ - ամոթահար, խոնջանալ - հանգստանալ, հեղզ - գործունյա, տիվ - ցայգ

24. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) ամրակոտ - խարխուլ, օրենսդիր - ապօրինի, հերաթափ - թավամազ, մեծախոս - համեստ
- 2) հանապազօրյա - ամենօրյա, շեն - ավերակ, խորամանկ - դյուրահավատ, համատեղ - անջատ
- 3) գորովագութ - անբարեսիրտ, ուղղամիտ - նենգամիտ, կուշտ - անոթի, վատաբանել - բարեբանել
- 4) ուխտավոր - ուխտագնաց, արևոտ - ամպագարդ, աղմկաշատ - խաղաղ, գթառատ - դժխեմ

25. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) երկրպագել - ատել, ընդդեմ - հանուն, հյուրընկալել - արտաքսել, աստանդական - մստակյաց
- 2) անպաճույճ - զարդարուն, հին - վաղնջական, վտիտ - գիրուկ, ապաքինվել - հիվանդանալ
- 3) անասասն - կայուն, յուրային - օտար, ստերջ - բեղուն, հնագանդ - ինքնասածի
- 4) երկչոտ - վեհերոտ, հոգևոր - աշխարհիկ, հեզ - ամբարտավան, ոսոխ - դաշնակից

26. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) ոռոգելի - անջրդի, փառասեր - ինքնասեր, ապառիկ - կանխիկ, վեհանճն - փոքրոգի
- 2) պիղծ - սուրբ, ստվարաթիվ - փոքրաքանակ, կանուխ - ուշ, հաշտվել - գժտվել
- 3) խոժոռվել - ժպտալ, անհյուրընկալ - վանատուր, ուռուցիկ - գոգավոր, թուլանալ - սաստկանալ
- 4) սքողված - անթաքույց, վանել - առիներել, առանցքային - երկրորդական, ընկնել - հառնել

27. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) պերճ - անշուք, բարեկեցիկ - անապահով, հաստատուն - անկայուն, հոռետես - լավատես
- 2) լայնաթիկունք - պարթև, խորապետ - հարևանցի, մեծահարուստ - ընչազուրկ, կալանավորել - ձերբազատել
- 3) հնարագետ - անճարտար, իրական - երևակայական, ակնածել - արհամարհել, ժուժկալ - անգուսպ
- 4) գիտուն - իմաստակ, բիրտ - քնքուշ, բաց - գոց, մարմնեղ - վտիտ

28. Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.

անբասիր - արատավոր, պղտոր - ականակիր, տառապել - հեծնել, ծանրաքարշ - զեր, ունևոր - զերծ, հաստատել - հերկել, ճշմարիտ - թույր, հանգույն - գույնզգույն:

- 1) վեցը
- 2) երեքը
- 3) երկուսը
- 4) մեկը

29. Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.

ազդր - սրունք, արտևանունք - հոնք, խուճապ - իրարանցում, դեզերել - թառել, ակնախոռոչ - ակնակապիճ, բացահայտ - գողտրիկ, դրվատել - գովաբանել, հեզ - աշխատասեր:

- 1) յոթը
- 2) հինգը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

30. Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.

ամբարիշտ - փառապանծ, սեփական - անձնական, սրտմաշուկ - սրտակեղեք, սյուք - մրիկ, խթանել - օժանդակել, խելահեղ - անխելք, քնկոտ - քնատ, լուսավոր - խավարտ:

- 1) ոչ մեկը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

31. Տրված բառերից քանի՞սն ունեն իրենց հականիշները.

աչալուրջ, անգույն, չքմեղ, բացառիկ, տամուկ, արծաթե, գոտեպնդվել, վեհ, սպիտակամորթ, դեղին:

- 1) բոլորը
- 2) ինը
- 3) ութը
- 4) յոթը

32. Տրված բառերից քանի՞սն ունեն իրենց հականիշները.

հանուն, ամբարտապան, ոչինչ, քառաձայն, արտագաղթ, ասլիկար, տմարդի, պնակ, հարձակվել, իրավարան:

- 1) ինը
- 2) ութը
- 3) յոթը
- 4) վեցը

33. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) *աղոտ* լույս - *աղոտ* ճաշ
- 2) *անել* վիճակ - դաս *անել*
- 3) *անձուկ* լիճ - *անձուկ* հոգեվիճակ
- 4) սիրո *գեղի* - ռազմի *գեղի*

34. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) *արի* հայորդի - նե՛րս *արի*
- 2) հայր *սուրբ* - *սուրբ* գործ
- 3) *բարդ* խնդիր - ցորենի *բարդ*
- 4) *բռի* մեջ պահել - *բռի* պահվածք

35. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) երկինք - *գետին* - Արաքս *գետին*
- 2) մեկ կապ *գայլուկ* - գորշ *գայլուկ*
- 3) մկան *թակարդ* - սիրո *թակարդ*
- 4) գորքի *գունդ* - խմորի *գունդ*

36. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) *երամակից* թռչուն - ձիերի *երամակից*
- 2) *դատել* հանցագործին - դատը *դատել*
- 3) *թզի* չիր - մի *թզի* չափ հող
- 4) գրքի *երես* - *երես* առնել

37. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) եռանկյան *էջ* - գրքի *էջ*
- 2) աղեկտուր *լալ* - *լալ* ու մարջան
- 3) մի *կաթ* արցունք - թարմ *կաթ*
- 4) *ծարավ* երեխա - *ծարավ* այգի

38. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) *խուլ* ծերունի – *խուլ* փողոց
- 2) *բարակ* թել - արագավազ *բարակ*
- 3) քեզ *համար* - *համար* մեկ
- 4) նորածն *հանդերձ* - ընտանյոք *հանդերձ*

39. Տրված նախադասություններում ընդգծված բառերից ո՞րն է մյուս երեքին համանուն (նախադասությունները կետադրված չեն) :

- 1) Անցել են դարեր դարեր **իսկ** իր կամքը դեռ խոսում է:
- 2) Ամպերն են թռչում կապույտ երկնքով **իսկ** շուրջը դաշտերն անծիր ու անծիր:
- 3) **Իսկ** Սմբատի սրտում արդյոք կա զգացում այդ աղջկա նկատմամբ:
- 4) Այդ դժվար հարցը հայրդ **իսկ** չի կարող լուծել:

40. Հետևյալ բառաձևերից ո՞րը համանուն *չունի*:

- 1) կապեր
- 2) գնդեր
- 3) ստեր
- 4) խոսեր

41. Ո՞ր տարբերակում համանունների բացատրության սխալ կա:

- 1) *մատյան* - գիրք, *մատյան* (գունդ)- հեծելագոր
- 2) *մեկնել* - մեկնաբանել, *մեկնել* - կարկամել
- 3) *կողակից* - ամուսին, *կողակից* - կողակ ձկից
- 4) *հորդ* - տեղատարափ, *հորդ* - քո հոր

42. Ո՞ր տարբերակում համանունների բացատրության սխալ կա:

- 1) *չկամ* - անբարյացակամ, *չկամ* - *կամ* բայի ժխտական խոնարհման բայաձև
- 2) *սլասլ* - ծնողի հայրը, *սլասլ* - կաթոլիկ եկեղեցու առաջնորդը
- 3) *տալ* - հանձնել, *տալ* - ամուսնու քույրը
- 4) *աներ* - ամուսնու հայրը, *աներ* - անել բայի ըղձական բայաձև

43. Ո՞ր շարքում համանուն *չունեցող* բառ կա:

- 1) անձուկ, դաշնակ, թառ
- 2) խոզուկ, մարտ, խատուտիկ
- 3) հազար, հանդերձ, կույս
- 4) կուռ, գառ, աղոտ

44. Ո՞ր բառն է ճիշտ բացատրված:

- 1) *միամորիկ* - միայն մայր ունեցող
- 2) *վարժապետ* - վարժարանի պետ
- 3) *քանքար* - տաղանդ
- 4) *քենակալ* - ոխակալ

45. Ո՞ր բառն է ճիշտ բացատրված:

- 1) *խափշիկ* - դեղձան
- 2) *մախաղ* - ասեղ, հերյուն
- 3) *մաքառել* - ոչխարների իրար մոտ հավաքվելը
- 4) *անտունի* - ժողովրդական հին երգի տեսակ

46. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *ակնակապիճ* - աչքի փոսիկ, *աղամորդի* - մարդ արարած
- 2) *անպաճույճ* - առանց զարդարվելու, *քամքիշ* - լուր բերող
- 3) *այտուց* - ուռուցք, պալար, *այսպանել* - նախատել, անարգել
- 4) *բախտակ* - ձկան տեսակ, *գրգամուլ* - փափուկ կյանք սիրող

47. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *երկարաճիտ* - երկար վիզ ունեցող, *խնվասան* - իմ ուժերի չափով
- 2) *հեղին* - հույների հին անունը, *սրդողել* - բարկանալ, նեղվել
- 3) *քարակ* – որսկան շուն, *ործաքար* - ամուր քար
- 4) *հեթանոս* - կռապաշտ, *արամբի* - սև ձի

48. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *ախտալլուկ* - հիվանդությունից տանջված, *խավարտ* - շատ մութ
- 2) *պարույկ* - հարցական նշան, *լաջվարդ* - կապտագույն
- 3) *նշդարենի* - ծառի տեսակ, *վիրասպ* - խոր փոս
- 4) *օթոց* - անկողնու ծածկոց, *հակամետ* - հակված, տրամադիր

49. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *վաղորդայն* - այգ, առավոտ, *պարմանունի* - երիտասարդ աղջիկ
- 2) *հովատակ* - արուձի, *հոմանի* - սիրեկան
- 3) *սկեսրայր* - ամուսնու հայրը, *մեծատուն* - մեծ տուն
- 4) *հոպուպ* - երկար կեռ կտուցով թռչուն, *դժնդակ* - դաժան

50. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *նիզ* - մետաղյա ամուր ձող, *հովեկ* - գեփյուռ, մեղմ քամի
- 2) *հոլանի* - մերկ, բաց ուսերով, *խոնջանալ* - հոգնել
- 3) *եռտանի* - երեք ոտք ունեցող, *դերձան* - կարի թել
- 4) *դարակազմիկ* - դարաշրջան կազմող, նշանավոր, *մախաթ* - մեծ ասեղ

51. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *գրչակ* - վատ գրող, *գետնամած* - գետնին տարածված
- 2) *գինդ* - ականջօղ, *խմաստակ* - խելացի մարդ
- 3) *գրտնակ* - խմորը բացելու գլանաձև փայտ, *այոջ* - էգ ուլ
- 4) *ալմաստ* - թանկարժեք քար, ադամանդ, *կողակ* - ձկան տեսակ

52. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *այգեբաց* – լուսաբաց, *այլուր* - մեկ ուրիշ տեղ
- 2) *բաղարջ* - առանց թխմորի հաց, *բաղեղ* - փաթաթվող բույս
- 3) *բաղդատել* - համեմատել, *ահյակ* - ձախ
- 4) *կոհակ* - ալիք, *քեռայր* - քրոջ ամուսին

53. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *կուսյր* - ձյութ, *կուռք* - պաշտամունքի առարկա
- 2) *բռնագրոսիկ* - բռնի գրոսանքի գնացող, *վարկ* - պատիվ
- 3) *դեղձան* - շեկ գույնի, *հրավերք* - ճաշկերույթ
- 4) *հրասպարակել* - հայտարարել, *մրահոն* - սև հոնքեր ունեցող

54. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *հորջորջել* – մեկի մասին վատ արտահայտվել, *եքամ* - թռչունների խումբ
- 2) *կենվոր* - վարձով ապրող, *կտտանք* - չարչարանք, տանջանք
- 3) *աղյուս* - կավից պատրաստված շինանյութ, *կտավատ* - վուշի սերմը
- 4) *կոթնել* - արմունկով հենվել, *այրի* - ամուսինը մահացած կին

55. Աջ շարքի բացատրությունները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:

- | | |
|------------|---------------------|
| ա. թեզանիք | 1. ապահով, խաղաղ |
| բ. քուրջ | 2. ուշադիր, սևեռուն |
| գ. անքույթ | 3. շորի փեշ |
| դ. անքթիք | 4. հնամաշ զգեստ |
| ե. քղանցք | |

- 1) ա - 3, բ - 4, գ - 1, դ - 2
- 2) բ - 4, գ - 1, դ - 2, ե - 3
- 3) բ - 4, գ - 2, դ - 1, ե - 3
- 4) ա - 3, բ - 4, գ - 2, դ - 1

56. Տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը փոխաբերական իմաստով չի գործածվել:

- 1) կապույտ արյուն
- 2) հպարտ լեռներ
- 3) դեղձան մազեր
- 4) ծով համբերություն

57. Տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը փոխաբերական իմաստով չի գործածվել:

- 1) վարդագույն երագ
- 2) սև մտքեր
- 3) սպիտակ անուրջներ
- 4) կարմիր աղյուս

58. Տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը փոխաբերական իմաստով չի գործածվել:

- 1) դառը ճշմարտություն
- 2) խոցող հայացք
- 3) թունոտ պատասխան
- 4) կծու տաքդեղ

59. Տրվածներից ո՞րը, ավելանալով *խոսք* բառին, չի արտահայտի փոխաբերական իմաստ:

- 1) ծանր
- 2) կեղտոտ
- 3) կցկտուր
- 4) մահացու

60. Տրվածներից ո՞րը, ավելանալով *զիշեր* բառին, չի արտահայտի փոխաբերական իմաստ:

- 1) մահահոտ
- 2) խավարչտին
- 3) ամենակուլ
- 4) դավաճան

61. Ընդգծված բառերից քանի՞սն են գործածվել փոխաբերական իմաստով.

ոսկի ձեռքեր, *թթու* դեմք, *քար* լուրջություն, *սառը* պատերազմ, *մաքուր* հոգի, *ծանր* արկղ, *կծու* խոսք, *կեղտոտ* միտք, *խոզ* բնավորություն, *սուր* հիշողություն:

- 1) բոլորը
- 2) ինը
- 3) ութը
- 4) յոթը

62. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*:

- 1) Ո՞նց է ժպտում իմ հոգին
Չարին, բարուն, - ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:
- 2) Քանի՞ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տվել,
Լույս տալով եմ սպառվել:
- 3) Պատասխան տուր ինձ,
Մատնի՜չ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը
Քաջ չէր ու սիրուն...
- 4) Հիմի բացել են հանդես
Երգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի ծղրիղներ.
Ո՞վ է հիմի լսում ձեզ:

63. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*:

- 1) Գիշեր է իջել. լռել են բոլոր
Աղմուկները չար, խոսքերը պատիր:
- 2) Մնաս բարյավ, բայց միշտ հիշիր,
Որ քեզ շատ եմ կարոտել,
Եվ տեսության ժամի համար
Չմոռանաս աղոթել:
- 3) Ես մի ճամփորդ եմ մթնում մոլորված,
Ու հոգնած սիրտըս դարձել է խոնարհ:
- 4) Ես լուռ կթաղեմ իմ ցավը միակ,
Զվարթ կժպտամ բախտավորի պես:

64. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *կա*:

- 1) Հեռվից կապտավուն սարերն այնքան պարզ էին երևում, որ կարելի էր համրել նրանց բոլոր ձորակները:
- 2) Լինե՛ր, այնպես լինե՛ր, որ ինքը հնձվոր լինե՛ր, նրանց արտը հնձեր, Մոնան հաց բերեր իրեն:
- 3) Միրհավն էր. հանգիստ քուջուջ անելով փոխում էր արնագույն տոտիկները:
- 4) Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում:

65. Տրված հատվածներում ընդգծված բառերից ո՞րը փոխաբերական իմաստով գործածված չէ:

- 1) Կապույտ լեռների լանջերի վրա
Մուգ անտառներն են մեղմօրոր **նիրհում**:
- 2) Ու մութը քանի գնաց, ծանրացավ,
Միրտըս հուսաբեկ **լալիս է** տխուր:
- 3) Լուսնյակ գիշերին **շրջում են** անքուն,
Ցավերըս անգութ սիրտս են կեղեքում:
- 4) Վիշտըս **հալվեց**, արցունք հոսեց,
Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր:

66. Ո՞րը գլուխը լցնել դարձվածքի իմաստներից չէ:

- 1) մեկին որևէ արարքի դրդել
- 2) լիքը, մինչև վերջ լցնել
- 3) սովորել, յուրացնել
- 4) սովորեցնել, ուսուցանել

67. Ո՞րը բևեռը փռել դարձվածքի իմաստներից չէ:

- 1) պաշտպանել
- 2) հանգստանալ
- 3) հովանավորել
- 4) տարածվել

68. Ո՞րը աստծու կրակ դարձվածքի իմաստներից չէ:

- 1) դաժան, անողորմ
- 2) չարաճճի, շարժուն
- 3) ցավ, պատիժ
- 4) անշեջ հուր

69. Ո՞րը արյունը ջուր դառնալ դարձվածքի իմաստներից չէ:

- 1) սարսափելի վախենալ
- 2) արյունահեղությունը սովորական բան դառնալ
- 3) խիստ զայրանալ
- 4) ազգակցական կապերը վերանալ

70. Ո՞րը բերան քաց անել դարձվածքի իմաստներից չէ:

- 1) դժգոհություն արտահայտել
- 2) վատահոբյունը կորցնել
- 3) սկսել խոսել
- 4) սպառնալու նայել

71. Ո՞րը գլուխը կախ դարձվածքի իմաստներից չէ:

- 1) ամոթահար
- 2) հեզ, խոնարհ
- 3) վշտից կռացած
- 4) ուրիշի գործերին չխառնվող

72. Ո՞րն է *մեջք ունենալ* դարձվածքի ճիշտ բացատրությունը:

- 1) ամրակազմ լինել
- 2) նրբագեղ լինել
- 3) հովանավոր ունենալ
- 4) բաժին ունենալ

73. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) *արև ծագել* - երջանիկ կյանք սկսվել
- 2) *արթուն աչքերով* - սթափ կերպով
- 3) *բարևը մոռանալ* - մոռացկոտ լինել
- 4) *բաքոսի տաճար* - գինետուն

74. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) *առաջին ծիծեռնակ* - նախակարապետ
- 2) *առաջին շարքերում* - մի բանի ակտիվ մասնակից
- 3) *առաջին ձեռքից* - առաջին պատահած մարդուց
- 4) *առաջին ջութակ* - գլխավոր դեմք

75. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) *երեսի ջուր* - ամոթի զգացում
- 2) *երեսի վրա թողնել* - թողնել պառկած
- 3) *ջրի երես հանել* - բացահայտել
- 4) *երես ծռել* - նվաստանալով խնդրել

76. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) *աչք ծակել* - նախանձ առաջացնել
- 2) *աչք փակել* - շտեմնելու տալ
- 3) *աչքը արյուն կոխել* - սպառնալ
- 4) *աչքը կաշել* - քնել

77. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *արյունը ջուր դառնալ* - սահմռկել, *աչքերը փակել* - մեռնել
- 2) *աչքը ջուր կտրել* - կարոտով, անհամբերությամբ սպասել, *անձյուն ձմեռ* - անճարակ մարդ
- 3) *գլխարկը թեք դնել* - նորածն հագնվել, *գլխին տալ* - զղջալ
- 4) *ժամավաճառ լինել* - իզուր ժամանակ վատնել, *երեսից կախվել* - թախանձել

78. Ո՞ր տարբերակում են համապատասխանում դարձվածքները և դրանց իմաստները:

- | | |
|-----------------------|-------------|
| 1. արյունը գլխին խփել | ա. համոզվել |
| 2. լեզուն բռնվել | բ. հանձնվել |
| 3. քարը փեշից թափել | գ. զայրանալ |
| 4. զենքերը վայր դնել | դ. կարկամել |

- 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

79. Բառակապակցություններից ո՞րը դարձվածային իմաստ չունի:

- 1) աչքով անել
- 2) աչքը մտնել
- 3) աչքից ընկնել
- 4) աչքը տրորել

80. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) տունը քանդել, կարապի երգ, կատվի դրախտ
- 2) ձեռնոց նետել, երկու ոտքով կաղալ, սպիտակ ջարդ
- 3) երկու տիրոջ ծառա, գլուխը յուղել, սառույցը շարժվել
- 4) սպիտակ ագռավ, սև կաշաղակ, ծեր աղվես

81. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:

- 1) Նա ամեն կիրակի եկեղեցի է գնում, մոմ վառում՝ հույս ունենալով արժանանալու երկնային արքայությանը:
- 2) Երկնքի աստղերը կկողոպտեի վարձատրելու համար այն մարդուն, ով ինձ մոռանալ կտար իմ անցյալը:
- 3) - Բավական է մորդ երեսից կախվես, դասերդ սովորիր, - բարկացավ հայրը:
- 4) Այդպես էլ հարցը լուծում չստացավ, և Մուրեմը հայտնվեց երկու քարի արանքում:

82. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ատաղձագործը շիկացած երկաթը դրեց սալին, որ սկսի իր ամենօրյա աշխատանքը:
- 2) Նշտարը, ինչպես և վիրաբուժական մյուս գործիքները ախտահանվեցին:
- 3) Բրուտանոցը լեփ-լեցուն էր կավե թասերով, որոնք աչքի էին ընկնում ազգային զարդանախշերով:
- 4) Նրա մեղանշումները նոր դժբախտություններ բերեցին արքայական տոհմին:

83. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Պատահողոված թարփը դժվարացնում էր ձկնորսի աշխատանքը:
- 2) Բամբիշը ներկայացավ թագավորական տան անդամներին իր նոր սանրվածքով:
- 3) Այդ շաղափն այլևս չէր գործածվում պատ ծակելու համար:
- 4) Գրաստը ցեղական էր և իշխանի ամենասիրելին:

84. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:
- 2) Դժվար էր առանց սարսուռի նայել հողածածկ այդ խողերի մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
- 3) Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:
- 4) Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:

85. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ֆիզիկոսը Օքսֆորդի համալսարանից հրավեր էր ստացել մասնակցելու միջազգային գիտաժողովին:
- 2) Բազմազբաղ լինելու պատճառով ընկերս հազվագյուտ է ամառանոց գալիս:
- 3) Կողմերի անպատասխանատվության և անփութության հետևանքով այդքան կարևոր պայմանագիրը լուծարվեց:
- 4) Յոփ ու շվայտ կյանքով ապրող որդիները վերջնականապես սնանկացրին իրենց հորը:

86. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Հորեղբայրս հայտնի որտղ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
- 2) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
- 3) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներհուն աշակերտներին:
- 4) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:

87. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

պատուզա, մողա, գաստրոլ, մոզաիկա:

- 1) հանգիստ , ժամանակակից, ելույթ, բնանկար
- 2) դադար, նորաձևություն, հյուրախաղ, խճանկար
- 3) ընդմիջում, նորույթ, թատրոն, քանդակ
- 4) սպասում, արդիականություն, ներկայացում, հավաքածու

88. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

լիդեր, լոզունգ, լոմբարդ, սայթ:

- 1) ղեկավար, կոչ, պահոց, արժանիք
- 2) հետևորդ, խոսնակ, դրամանիշ, տպիչ
- 3) առաջնորդ, կարգախոս, գրավատուն, կայքէջ
- 4) վկա, խրատ, դրամապանակ, վկայական

89. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

ֆիլիալ, ֆորում, կոնկուրս, սուվերեն:

- 1) կրպակ, հրապարակ, մրցանակ, թագավորական
- 2) մասնաճյուղ, համաժողով, մրցույթ, ինքնիշխան
- 3) բաժին, սկահակ, փոխզիջում, բանաձև
- 4) գրասենյակ, համակարգ, առաջնություն, կարգավիճակ

90. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

միսիա, սիստեմ, ռեալիստ, ֆունկցիա:

- 1) գալուստ, կառուցվածք, իրատես, գործուն
- 2) սպասելիք, համալիր, իրական, գործառնություն
- 3) նպատակ, համախումբ, իսկություն, գործողություն
- 4) առաքելություն, համակարգ, իրապաշտ, գործառույթ

91. Տրված բառերից ո՞րը կազմությամբ պարզ չէ:

- 1) հրաման
- 2) խրամատ
- 3) պատգամ
- 4) հրահանգ

92. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) հրաժեշտ, խարիսխ, կորիզ, ապուխտ
- 2) դշխո, ներբան, ներկա, սնդիկ
- 3) երաժիշտ, համբավ, համարձակ, դարման
- 4) տկար, բժիշկ, դրվագ, սաղավարտ

93. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) հեքիաթ, դժնի, գլխարկ, սկիզբ
- 2) նաժիշտ, դանակ, վարունգ, վախճան
- 3) սնգույր, աղի, սկահակ, սխտոր
- 4) դեղձան, ստերջ, գավաթ, սեպուհ

94. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) քաղաք, եղջյուր, երիտասարդ, լուսնկա
- 2) աղիք, եղեգն, խավար, խոժոռ
- 3) գրպան, արդուկ, կանաչ, կատակ
- 4) դշխո, փափուկ, խախուտ, կանոն

95. Նշված բառերից քանի՞սն են կազմությանը պարզ.

դժբախտ, հատիկ, կապիկ, նամակ, գնդակ, հրապարակ, առաջ, լաջվարդ, կառք, դժխեմ:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

96. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է յ-ն արմատական հնչյուն:

- 1) թեյից, Ալեքսեյին, խոյահարել, Միքայել
- 2) Սերգեյից, Կարոյի, բայական, հայելի
- 3) գործունյա, լեռնային, արդյոք, աղյուս
- 4) մեքենայորեն, խնայել, կաթսայատուն, Նոյեմբար

97. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) ականավոր
- 2) ականակիտ
- 3) ականատես
- 4) ականապատ

98. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) սնամեջ
- 2) սնանկ
- 3) սնունդ
- 4) սնոտի

99. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) գաղտնաձածուկ
- 2) ծխածածկույթ
- 3) ծակուծուկ
- 4) ծածկաթերթիկ

100. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) հրացան
- 2) աքցան
- 3) աղցան
- 4) ցիլուցան

101. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) թզենի
- 2) թզուտ
- 3) թզուկ
- 4) թզաչիր

102. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) հնոտի
- 2) հնոց
- 3) հնավանդ
- 4) հնագետ

103. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) արջամուկ
- 2) արջասպ
- 3) արջապար
- 4) արջասպան

104. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:

- 1) բարձրուղեշ, հայրենադարձ, հուշարձան
- 2) հարցասեր, տարեդարձ, խրձածկ
- 3) կարեվեր, ազեվազ, ուսումնատենչ
- 4) պնդողակ, սնապարձ, հպանցիկ

105. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:

- 1) կրավոշի, թիավարել, տղամարդ
- 2) անասնապահ, մորաքույր, մտահայեցություն
- 3) ավարառու, գնդասեղ, կուսակցական
- 4) կետորսանավ, պլեծուփ, մշտադալար

106. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:

- 1) յուրովսանն, բազմահնար, սալջարդ
- 2) քմահաճ, բնութագիր, շքահանդես
- 3) դիպաշարային, հայրենադավ, երագահան
- 4) բնավեր, վաղանցիկ, դեսպանատուն

107. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավանկ:

- 1) արյունահեղ, հնամենի, եռոտանի, հիմնադրել
- 2) արդարադատ, հնադարյան, սնահավատ, լրտես
- 3) խառնաշփոթ, կաթնակեր, կարգապահ, հյուրասեր
- 4) կենսատու, լայնարձակ, ծածկագրություն, թխակն

108. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավանկ:

- 1) ծովահեն, ընդդիմադիր, որդեսպան, չորքոտանի
- 2) թանկարժեք, տնտեսվարող, երկդիմի, երթևեկություն
- 3) երդմնազանց, նույնանիշ, ակնահաճո, շրջանավարտ
- 4) շրջնոլիկ, հաղորդակցություն, կպրապատ, բարակիրան

109. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավանկ:

- 1) շահամոլ, կառավարում, չարաշահել, բծախնդիր
- 2) շահագրգռել, մանրագնիկ, վերնաշապիկ, տեղատվություն
- 3) վաղանցիկ, անմեղսակից, ինքնուսույց, փոշեկուլ
- 4) կոփամարտ, ալեկոծ, կենսաժպիտ, սահադաշտ

110. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավանկ:

- 1) չվացուցակ, միջօրեական, միահավասար, քվեատուփ
- 2) կուսակալ, լեզվաոճական, քրճագգեստ, պարզերես
- 3) պերճաշուք, բարենպաստ, օգտագործվել, տեղափոխել
- 4) հեծելագոր, միջնադարյան, արծաթահնչյուն, հեռատեսություն

111. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է բազմավանկ:

- 1) բազմագրադ, պատմվածաշար, փոշեկուլ
- 2) որդեսեր, մանրախնդիր, դրույքաչափ
- 3) ծամծմված, ծնրադիր, սկզբնապատճառ
- 4) ջրօրհներ, ուղեվճար, կնճռապատ

112. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է բազմավանկ:

- 1) նկարակալ, ջարդուփշուր, երախտամոռ
- 2) վարչակազմ, արծվաբույն, կարոտախտ
- 3) հավատափոխ, ծաղկափթիթ, ճամփաբաժան
- 4) կարկտաբեր, բուրումնալից, աշխարհագրոր

113. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է բազմավանկ:

- 1) մաքրաջրել, ծայրաստիճան, ծածկանուն, ծաղկաշղթա
- 2) մեղադրանք, խաչեղբայր, լուսանկարչական, կենսաժպիտ
- 3) հյուսիսարևելյան, գեղարվեստական, ոսկեդեղձան, մշտադալար
- 4) ծովածավալ, կիսախավար, չնաշխարհիկ, պարտաճանաչ

114. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է բազմավանկ:

- 1) ծանրակշիռ, խորագնիկ, բարեխնամ, խնկածաղիկ
- 2) ծանոթագրություն, ատենադպիր, գաղտնաձածուկ, ռազմաճակատ
- 3) մեծաշնորհ, քաղցրօրոր, մելամաղձոտ, մեղրամիս
- 4) մեծապատիվ, միահամուռ, նվիրատվություն, գեղագանգուր

115. Տրված բառերից ո՞րն է կազմությանը բարդ:

- 1) տիկնիկ
- 2) կրկնակոշիկ
- 3) լուսատուիկ
- 4) բռնագրոսիկ

116. Տրված բառերից ո՞րը կազմությանը բարդ չէ:

- 1) թրաշուշան
- 2) հաղթաբազուկ
- 3) դաշունահարված
- 4) ամպածածկ

117. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:

- 1) շքերթ, շնչակտուր, բարբառ, իրապաշտ
- 2) քաջամարտիկ, տրտմաշուք, փափկասուն, տնանկ
- 3) պարագիծ, դասվար, ականակիր, կրծոսկր
- 4) վերջնարկ, հաշմանդամ, ընչագուրկ, արքայազարմ

118. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:

- 1) գետեգր, հեռատես, արտոնագիր, սխտոր
- 2) բանբեր, մտամոլոր, դժբախտ, հանրահավաք
- 3) ոսկրախտ, հեռագիր, ինչևէ, գրասեղան
- 4) ջրմուղ, կաթոգին, հերոսաբար, խնկաբույր

119. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են կազմությանը բարդ:

- 1) ջլաբազուկ, պարուրած, որսատուրակ, ձյունապսակ
- 2) աշնանածաղիկ, հստակամիտ, ներբողագիր, հրուշակավաճառ
- 3) նկուղահարկ, կանխագուշակ, ջերմուկաբույժ, ծիրանավառ
- 4) ստնտու, սոխակաձայն, արծվաքիթ, կռունկերամ

120. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են կազմությանը բարդ:

- 1) ներբանակաշի, նշտարած, նախանձախնդիր, ամենաթով
- 2) անվանատառ, անկյունագիծ, աստղափրփուր, պերճիմաստ
- 3) արձակագիր, անրջահյուս, արմավահյութ, արճնափայլ
- 4) կանթեղալույց, սոսնձապատ, արոտամարգ, մրցադահլիճ

121. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հողակապով:

- 1) արջաորս, բազմափորձ, բազմատարր, բարգավաճ
- 2) բյուրասքանչ, բազկարձակ, որդեսեր, տնտեսագետ
- 3) բարձրատոհմ, բարձիթողի, բարյացակամ, բեռնանավ
- 4) բանակատեղ, բառապաշար, բարեբնույթ, բարձրանիստ

122. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հողակապով:

- 1) շողավարդ, շողարձակ, շնորհաշատ, շուշանաբույր
- 2) մանածաթել, մայրապետ, միամիտ, մինուճար
- 3) նորափթիթ, առանձնապես, շեշտակիր, ակամանետ
- 4) ձերբակալել, կառավարել, անասուն, փափկասուն

123. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:

- 1) գառնարած, առաջընթաց, մսադաց, աղեկտուր
- 2) գօրուզիչեր, գերեվարել, շաքարավազ, լեռնաշխարհ
- 3) հացթուխ, անընդմեջ, ագեվազ, լրջմիտ
- 4) ձկնկիթ, նրբերանգ, արևհատ, ձյունառատ

124. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:

- 1) նամակագիր, վերարկու, տնօրեն, կուսանոց
- 2) զբոսայգի, ջրաղաց, լուսամփոփ, վիպասան
- 3) ծովեզր, սևերես, գնդաձև, բարեհոգի
- 4) երթևեկ, ունկնդիր, գինետուն, սաղավարտ

125. Ո՞ր շարքում հոդակապով բառ կա:

- 1) բնաշխարհիկ, մականուն, ցողառատ, աչառու
- 2) բնավեր, սևուտուզ, շաքարավազ, թանապուր
- 3) շանթարգել, գետնանուշ, բռնարարք, արևառ
- 4) դառնանուշ, ջրարբի, շարիշար, առևտուր

126. Ո՞ր շարքում հոդակապով բառ չկա:

- 1) գործակցում, գրտնակում, զգացում, գոյացում
- 2) սնանկություն, աղաման, հուզառատ, հարևանցի
- 3) գուլպայագործ, թիկնաթոռ, անալի, դասավարտ
- 4) սպիտակարյուն, դավադիր, երկնառաք, դարեդար

127. Ո՞ր շարքում հոդակապ չունեցող բառ կա:

- 1) միջակոտոր, մենատնտես, մեծակոհակ, մաքրահոգի
- 2) մրահոն, մարտահրավեր, մահճակալ, մահաճառ
- 3) միջամտել, հռչակագիր, հրապարակ, հրաբողբոջ
- 4) ճրագակալ, ճապաղախուս, ճանանչափայլ, հողածին

128. Ո՞ր շարքում հոդակապ չունեցող բառ կա:

- 1) հոգնաբեկ, հոգետանջ, մեծաքանչ, հզորագոր
- 2) հետաքրքիր, հետամնաց, հետայսու, հետաքնին
- 3) հայտանշան, հայկազարմ, աղեբորբ, աղերսախառն
- 4) աղոթագիրք, աղյուսագույն, աղմկալից, աղավնեկտուց

129. Ո՞ր բառում *-ուց* ածանց չկա:

- 1) դեղնուց
- 2) այտուց
- 3) կտուց
- 4) նեղուց

130. Ո՞ր բառում *-իք* ածանց չկա:

- 1) կարծիք
- 2) աղիք
- 3) չարիք
- 4) տանիք

131. Ո՞ր բառում *-ուկ* ածանց չկա:

- 1) փափուկ
- 2) նորելուկ
- 3) հանելուկ
- 4) բանուկ

132. Ո՞ր բառում *-ակ* ածանցը փոքրացուցիչ իմաստ *չունի*:

- 1) ծովակ
- 2) կղզյակ
- 3) նավակ
- 4) գրչակ

133. Ո՞ր բառում *-(ա)ցի* ածանցով կազմված բառը «*որևէ տեղի բնակիչ*» իմաստը *չունի*:

- 1) լեռնցի
- 2) փաստացի
- 3) հարավցի
- 4) սևանցի

134. Ո՞ր շարքում *առ* - նախածանց *չունեցող* բառ կա:

- 1) առինքնել, առաջ, առկախ, առմիշտ
- 2) առանցք, առտնին, առափնյա, առայժմ
- 3) առջև, առևտուր, առնչվել, առնմանում
- 4) առավել, առարկել, առէջ, առանձին

135. Տրված բառերից քանի՞սն ունեն *-ակ* վերջածանց.

հպատակ, քառյակ, սայիտակ, սևակ, հովատակ, քանակ, պարտիզակ, ծիծեռնակ, կոչնակ, կտակ:

- 1) բոլորը
- 2) ութը
- 3) վեցը
- 4) չորսը

136. Շարքերից քանիսու՞ն նախածանց *չունեցող* բառ կա:

- չբեր, չտալ, չխոսկան, չունևոր
- տարբեր, տարկետում, տարհանել, տարասեռ
- պարբերություն, պարփակ, պարագլուխ, պարականոն
- նախերգ, նախաբան, նախատել, նախօրոք

- 1) ոչ մեկում
- 2) մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

137. Ո՞ր շարքում վերջածանց ունեցող բառ կա:

- 1) ապերասան, անքնին, մակնիշ, նախագուշակ
- 2) անվեհեր, ամենահատակ, առհավետ, նախաբազուկ
- 3) անբույթ, անասան, ապերջանիկ, անապահով
- 4) անանջատ, ներդաշնակ, մակդիր, անապակ

138. Ո՞ր շարքի չէ բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:

- 1) ձգան, կայան, կծան, շարան
- 2) քարոտ, խնկահոտ, յուղոտ, խավոտ
- 3) ցանցկեն, ծակոտկեն, լուսեղ, հոնեղ
- 4) գողոն, գործոն, թափոն, ծամոն

139. Ո՞ր շարքի չէ բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:

- 1) պատահար, կերպար, կտցար, տիպար
- 2) անթացուպ, անտերունչ, անմեռուկ, անբասփր
- 3) խոյակ, վրիպակ, դասակ, սուզակ
- 4) դյուրին, նրբին, անմեկին, խորին

140. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր:

- 1) ձողիկ, աճուրդ, կաթոգին, ելարան
- 2) կտրոն, կպրագույն, կայծակ, խարույկ
- 3) փրկագին, անցյալ, փողք, սառույց
- 4) կանուխ, աղերսագին, թավուտ, վերջին

141. Ո՞ր շարքում միայն մեկ ածանց ունեցող բառ կա:

- 1) ազգայնական, ամենադյուրիշ, անտարբեր, անտեսում
- 2) անանձնական, բանակային, առողջություն, անվերադարձ
- 3) գրաբարյան, չխոսկան, անտրամադիր, անհարկի
- 4) անհուսալի, անմիջական, անօրինակ, անմնացող

142. Ո՞ր շարքում միայն մեկ ածանց ունեցող բառ կա:

- 1) անգիտակ, ներկայություն, անձավային, անդադրում
- 2) անհաճո, անհամահունչ, անցումային, անհագորդ
- 3) անառիկ, անենթակա, թռչուն, անկարևոր
- 4) անասուն, անզգայուն, անընդհատ, անիրական

143. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն երկու ածանց:

- 1) անքանակ, անփարատելի, շրջանային, անարժան
- 2) անդանակ, առածգական, աշխատանքային, արդարացիորեն
- 3) առանձնապես, ապաշխարանք, անարդյունավետ, բաղդատական
- 4) ապացուցում, ապխտել, առանցք, արգելակում

144. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն երկու ածանց:

- 1) մակբայական, համաստորադաս, տարաշխարհիկ, բարձրաշխարհիկ
- 2) տձևություն, երևութական, տարեվերջյան, տարարժույթ
- 3) անըստզուտ, տարկետում, վերավաճառք, հատկանշական
- 4) անտեղյակ, տարաբնույթ, ամենախելացի, նամականի

145. Ո՞ր բառում է -ական վերջածանցով գոյական կազմվել:

- 1) քաղաքական
- 2) մտավորական
- 3) ուսանողական
- 4) տնտեսական

146. Ո՞ր բառում է *-եղեն* ածանցով ածական կազմվել:

- 1) հրեղեն
- 2) հրուշակեղեն
- 3) սպիտակեղեն
- 4) բանջարեղեն

147. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ և նոր բառ կազմել *-ոց* վերջածանցը (առանց երկրորդ ածանցի):

- 1) երկարավիզ
- 2) թիկնաթոռ
- 3) լուսամուտագոգ
- 4) ուսաղիք

148. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ *-մունք* ածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

- 1) ավարառու
- 2) հիմնարկեք
- 3) համեմել
- 4) անասնաբույժ

149. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ և նոր բառ կազմել *-յան* վերջածանցը (առանց երկրորդ ածանցի):

- 1) բուրաստան
- 2) արնանման
- 3) հոգեհանգիստ
- 4) հոգեզալուստ

150. Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ատ* վերջածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի) .

զանգամաշկ, կիսամյակ, հաստաբուն, ամրակուռ, կավածեփ, քնաթաթախ, սպիկար, ձյունափայլ, արևավառ, հոգեառ:

- 1) իննի
- 2) ութի
- 3) հինգի
- 4) երեքի

151. Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ունք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).

պարասպություն, ծաղկավաճառ, բուրավետ, մասնագետ, կնամեծար, գարնանացան, զգայարան, սկանսպատ, մանրավաճառ, բարձրատոհմիկ:

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) չորսի
- 4) հինգի

152. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդաձանցավոր:

- 1) վճարունակ, ցայգալույս, միջնորմ
- 2) ընչաքաղց, հետաքննիչ, գործուղում
- 3) անհեռատես, շանթարգել, մեղմահնչյուն
- 4) բնօրրան, լռակյաց, բարեկեցիկ

153. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդաձանցավոր:

- 1) բնօրրան, ածխահանք, դիտարժան, տնտեսություն
- 2) յուրօրինակ, տարկետում, վիպասան, տանտիրուհի
- 3) բնութագիր, արևայրուք, պարփակել, խոսքարվեստ
- 4) տափօղակ, տրտմաշուք, խոտհարք, երեսունչորս

154. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդաձանցավոր:

- 1) ռազմերգու, ջղաձգորեն, ընչագրկում, երկերեսանի
- 2) միաձուլում, մեղսունակ, ուսումնասեր, նույնահնչյուն
- 3) թիկնոցավրան, սպիրտայրոց, յուղաքսուք, նավթապահեստ
- 4) արյունագեղում, հաղթաբազուկ, աչառու, նեղաչք

155. Ո՞ր բառն է հապավում:

- 1) հրահանգ
- 2) տնտեսագետ
- 3) գործավար
- 4) տնտեսվար

156. Ո՞ր բառն է հապավում:

- 1) բնականոն
- 2) բնակմակերես
- 3) գեղասահք
- 4) գնանկում

157. Ո՞ր բառը հապավում չէ:

- 1) տեխնոնում
- 2) տնտեսաշվարկ
- 3) մարզխորհուրդ
- 4) մարզափայտ

158. Ո՞ր բառը հապավում չէ:

- 1) ֆիզարձակուրդ
- 2) ժողատարան
- 3) ժողովրդավար
- 4) սոցմրցում

159. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:

- 1) գյուղթղթակից, մուլտֆիլմ, բնակվարձ, ֆիզմաթ
- 2) ջրմուղ, սոցհարցում, խնայողամարկդ, ուսմասվար
- 3) դրկից, պետապահովագրություն, Եվրախորհուրդ, ԿԲ
- 4) շինաղբ, մարզկենտրոն, բուժքույր, գաղթօջախ

160. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:

- 1) արհմիություն, դասղեկ, ԱԱԽ, էլցանց
- 2) երիտբերականներ, ԼՂՀ, տնտեսաշվարկ, տնտեսուհի
- 3) գիտարշավ, ջրցան, կուսբեկնածու, ԿԳՆ
- 4) քաղաքաշտպանություն, ձիարշավ, կազմկոմիտե, հէկ

161. Ո՞ր շարքում հապավում չկա:

- 1) տեղանուն, լրտես, ինքնուս, չարքաշ
- 2) երկբևեռ, պատկից, պետկրկես, ջրշուն
- 3) փղոսկր, մարգպետ, կուրսղեկ, խոտհունձ
- 4) գետանց, վերիուշ, քաղբյուրո, շուրջկալ

162. Տրված բառերից քանի՞սն են հապավումներ.

հանրահավաք, փոխխոսնակ, զինուժ, քաղծառայող, քաղհան, բնապահպան, ռազմաքաղաքական, շրջայց, ներուժ, օրենսգիրք:

- 1) բոլորը
- 2) յոթը
- 3) երեքը
- 4) երկուսը

163. Տրված բառերից քանի՞սն են հապավումներ.

խնայքանկ, արտգործնախարար, տեխզնում, կազմբաժին, պետառևտուր, պատքարտուղար, հեռատեսիլ, ֆիննախ, աշխարհասփյուռ, մանկիտրի:

- 1) բոլորը
- 2) ինը
- 3) ութը
- 4) յոթը

164. Տրված հապավումներից ո՞րն է սխալ գրված:

- 1) աէկ
- 2) ԲՈՒՀ
- 3) ԲՈՀ
- 4) զագս

165. Ո՞ր շարքում հապավումների բոլոր տեսակներից կան:

- 1) գիտքարտուղար, Պետդումա, երիտշարժում
- 2) զագս, դասղեկ, Քանաքեռիէկ
- 3) պետհամարանիշ, ուսխորհուրդ, զինգրքույկ
- 4) սոցքարտ, սանհանգույց, բուժֆակ

166. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) նախագահ - *նախ*՝ ածանց, *գահ*՝ արմատ, *ա*՝ հոդակապ
- 2) նախանձավառ - *նախանձ*, *վառ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 3) նախնադար - *նախ*՝ ածանց, *դար*՝ արմատ, *ա*՝ հոդակապ
- 4) մեծարգո - *մեծ*, *արգ*՝ արմատներ, *ո*՝ ածանց

167. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) ճամփաբաժան - *ճամփա, բաժ*՝ արմատներ, *ան*՝ վերջածանց
- 2) հրագանգուր - *հուր, գանգուր*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 3) մոխրագույն - *մոխիր, գույն*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 4) միջնապատ - *միջին, պատ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ

168. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) նամակադրոշմ - *նամակ, դրոշմ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 2) ներգոյական - *գո*՝ արմատ, *ներ, ական*՝ ածանցներ
- 3) մոլորակաձիթ - *մոլորակ, ձիթ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 4) համատրամաչափ - *չափ*՝ արմատ, *համ(ա), տրամ*՝ նախածանցներ, *ա*՝ հոդակապ

169. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) ճտքակոշիկ - *ճիտ, կոշիկ*՝ արմատներ, *ք*՝ ածանց, *ա*՝ հոդակապ
- 2) ծաղկահասակ - *ծաղիկ, հաս*՝ արմատներ, *ակ*՝ վերջածանց, *ա*՝ հոդակապ
- 3) ծածկախորհուրդ - *ծածուկ, խորհ*՝ արմատներ, *ուրդ*՝ վերջածանց, *ա*՝ հոդակապ
- 4) հետնամուտք - *հետն, մուտ*՝ արմատներ, *ք*՝ վերջածանց, *ա*՝ հոդակապ

170. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) հեղուկազրկում - *հեղ, զուրկ*՝ արմատներ, *ուկ, ում*՝ վերջածանցներ, *ա*՝ հոդակապ
- 2) սննդամթերք - *սուն, մթեր*՝ արմատներ, *ուրդ, ք*՝ վերջածանցներ, *ա*՝ հոդակապ
- 3) ստնտվություն - *ստու, տու*՝ արմատներ, *ություն*՝ վերջածանց
- 4) հետաքննիչ - *հետ, քնն*՝ արմատներ, *իչ*՝ վերջածանց, *ա*՝ հոդակապ

ԲԱԺԻՆ 3 ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ընդգծվածներից ո՞րը գոյական չէ:

- 1) Սարոյանը, թեև գրում էր անգլերեն, իրեն հայ գրող էր համարում:
- 2) Դասարանում բանաստեղծություն գրող երկու աղջիկ կար. մեկը Մարիամն էր:
- 3) Միջակ լրագրողներ էլ կան, որոնք իրենց չկայացած գրող են կարծում:
- 4) Այսօր քչերը գիտեն, որ հանճարեղ գրող Անտոն Չեխովը նաև բժիշկ էր:

2. Ընդգծվածներից ո՞րը գոյական չէ:

- 1) Հաջողությամբ հանձնեց քննությունները և դարձավ բժշկական համալսարանի ուսանող:
- 2) Վերջերս էր ստացել պետական ծառայողի կարգավիճակ:
- 3) Բարետես մատուցողը ստեպ-ստեպ մոտենում էր նորաստեղծների սեղանին:
- 4) Թեև իրական ծնող ազգը ազնիվ վրիժառուների պակաս չի կարող ունենալ:

3. Տրված բառերից քանի՞սը գոյական չեն.

գարուն, խեցգետին, ամիս, ատյան, չտես, ոսկե, ընդվզում, թվական, գիշերային, շարական, տնական, խոստում:

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) երկուսը
- 4) մեկը

4. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:

- 1) սրճեփներ, կադրեր, ֆիդայիներ, օրհներգեր
- 2) գրասերներ, կարմրախայտեր, հացատներ, սկիզբներ
- 3) գրաշարներ, երկրապահներ, պատճեններ, շարասյուներ
- 4) համերգավարներ, ոտնաձայներ, ճարտասաններ, այտոսկրեր

5. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգնակի թիվն է կազմվում –եր վերջավորությամբ:

- 1) անձ, սենյակ, դրամարկդ, հուն
- 2) տուն, գարուն, գիրք, հագուստ
- 3) թռչնաբույն, կարգ, դուստր, որսաշուն
- 4) բառատետր, անվաղող, որմնաղիբ, հանքահոր

6. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգնակի թիվն է կազմվում –եր վերջավորությամբ:

- 1) սպա, հանքահոր, հեռագիր
- 2) եզրակար, շարասյուն, շտաբ
- 3) կնքամայր, ժանր, օրհներգ
- 4) տոնաձառ, հացաբույս, թիկնապահ

7. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում –եր վերջավորությամբ:

- 1) հոգեբույժ, դրամատուն, շարասյուն, եզրակար
- 2) ենթաճյուղ, աստղաբույլ, նոթատետր, հողմացույց
- 3) եզրագիծ, զարդատուփ, միլիոնատեր, զուգերգ
- 4) երկրամաս, հետագիծ, հացաբույս, տավղահար

8. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:

- 1) տոնացույց, որդեգիր, կաթնասուն, մեներգ
- 2) նավավար, հետախույզ, անցաթուղթ, սառցահատ
- 3) օրապահ, սրունք, գրաբեր, արքայադուստր
- 4) հանքավոր, պատճեն, ջերմաչափ, դասալիք

9. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:

- 1) դասընկեր, նախամարդ, խճաքար, ժամացույց
- 2) օդաչու, ուղևոր, բեռնակիր, սպունգ
- 3) խցանահան, գիսաստղ, թվաշարք, տեղաբնակ
- 4) դերբայ, ամսաթիվ, պատմաբան, երևանցի

10. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.

բնագիր, նշանագիր, ընծայագիր, ամբաստանագիր, վերջնագիր, տակագիր, դաշնագիր, լրագիր, մանկագիր, խորագիր:

- 1) երկուսի
- 2) մեկի
- 3) հինգի
- 4) վեցի

11. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.

ասպացույց, նշանացույց, ուղեցույց, կողմնացույց, տարեցույց, նստացույց, աստիճանացույց, ժամանակացույց, հարացույց, գորացույց:

- 1) բոլորի
- 2) ութի
- 3) մեկի
- 4) երկուսի

12. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.

զանգակատուն, ցախատուն, անտունի, իջևանատուն, դրամատուն, մաքսատուն, գրավատուն, դիվանատուն, խաղատուն, սրճեփ:

- 1) երկուսի
- 2) ութի
- 3) չորսի
- 4) վեցի

13. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.

պարերգ, ընթացակարգ, հանքահոր, գծանավ, գրաստ, կոճղ, բերդակալ, գլխատառ, շոու, թռչնորս:

- 1) երկուսի
- 2) չորսի
- 3) վեցի
- 4) ութի

14. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.

մայրամուտ, ջերմաչափ, բնաբույժ, կուսակալ, աստղագետ, անտառահատ, հարկահան, հերակալ, կարգախոս, կարթածող:

- 1) մեկի
- 2) չորսի
- 3) վեցի
- 4) ոչ մեկի

15. Տրվածներից ո՞րը հավաքական գոյական չէ:

- 1) երկրագործություն
- 2) արծաթեղեն
- 3) աշխատավորություն
- 4) նամականի

16. Գոյականներից քանի՞սն են հավաքական.

կանաչեղեն, անարգանք, ուսանողություն, գորք, խորհրդապաշտություն, դեղորայք, բանջարեղեն, կանայք, ավագանի, հիշողություն:

- 1) չորսը
- 2) վեցը
- 3) յոթը
- 4) ութը

17. Ո՞ր շարքում ներքին հոլովման ենթարկվող բառ չկա:

- 1) վանահայր, սառցալեռ, աշուն
- 2) ծնունդ, գարուն, անկյուն
- 3) հանգիստ, մականուն, սեր
- 4) շարժում, դաշտամուկ, դոփյուն

18. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:

- 1) գարուն, մուկ, հղկում, մանուկ
- 2) արյուն, աշուն, ձուկ, քաջություն
- 3) մոտեցում, լեռ, սյուն, անուն
- 4) անկյուն, գառ, ամառ, երդում

19. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:

- 1) ուրբաթ, կեսօր, վաղը, ժամանակ
- 2) ցերեկ, իրիկնամուտ, ամիս, առավոտ
- 3) երեկ, գիշեր, տարի, ժամ
- 4) ամառ, մահ, շաբաթ, ձմեռ

20. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ու* հոլովման:

- 1) անկողին, գինի, լուցկի, վազել
- 2) այգի, Թբիլիսի, օղի, կաղին
- 3) կիրակի, ամուսին, աղախին, բարդի
- 4) պատանի, որդի, պսակ, գարի

21. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ենթարկվում *m* հոլովման:

- 1) ապակի, բարդի, թզենի, ոզնի
- 2) ծաղկափոշի, թերակղզի, հավաքատեղի, երթուղի
- 3) լուցկի, մատանի, հայորդի, մորի
- 4) մարդ, կառուցել, ամուսին, անկողին

22. Ո՞ր շարքում ոչ հոլովման չենթարկվող բառ կա:

- 1) դասընկեր, մորաքույր, տանտիկին, սկեսուր
- 2) կալվածատեր, սկեսրայր, տալ, աներ
- 3) երեցկին, տեգր, պարտատեր, բուժքույր
- 4) բաժնետեր, հարսնաքույր, գուգընկեր, հողատեր

23. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ենթարկվում ներքին հոլովման:

- 1) նուռ, կնքահայր, տուն
- 2) անուն, շարասյուն, լիություն
- 3) փոստատուն, աստվածամայր, մանուկ
- 4) անկյուն, գարուն, որսաշուն

24. Շարքերից քանիսի՞ ոչ բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:

- մանուկ, ծագում, սառցալեռ, անուն
- քաղաքադուռ, դիմում, աշուն, երդում
- հեռագրասյուն, գարուն, ծագում, ուղեբեռ
- ամառ, ձգտում, շնածուկ, նորոգում

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

25. Բառերից քանի՞սն են ենթարկվում *ա* ներքին հոլովման.

մրրկածյուն, գիտություն, դաշտամուկ, դերանուն, շարժում, ձմեռ, բազմանկյուն, արյուն, հնչյուն, անկում:

- 1) երկուսը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) յոթը

26. Բառերից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.

նուռ, գալուստ, խաչեղբայր, Գրիգորենք, գթություն, ուղղանկյուն, հենասյուն, հանքահոր, ազնվամորի, մասնատում:

- 1) ութը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) երեքը

27. Ո՞ր շարքում հոլովական սխալ ձև չկա:

- 1) կայսերի, հարության, մանկան, սիրո
- 2) Մանկան, դուստրի, Լոռու, Համբարձումի
- 3) մեծատունի, ծոռան, սգո, կաղինի
- 4) հորեղբոր, տալոջ, Սոչիի, վայրկյանվա

28. Ո՞ր շարքի բոլոր գոյականները որոշիչ հոդ ունեն:

- 1) տղան, գործին, աղջկան
- 2) մահվան, քահանան, ոստրեն
- 3) պատճեն, քվեն, աշտեն
- 4) լեռան, աբեղան, մարդուն

29. Ո՞ր շարքի բոլոր բառերը հոդ չունեն:

- 1) պատճեն, գայիսոն, կարկին, հանդ
- 2) վրձին, հոգուդ, բագին, սառը
- 3) թատրոն, դեղատուն, հարս, գինին
- 4) պարադոքս, գիրքս, ներս, բերդ

30. Ո՞ր նախադասության մեջ որոշիչ հոդի գործածության սխալ կա:

- 1) Այս երիտասարդն սկսնակների մեջ ամենաշնորհալին է թվում:
- 2) Աղջիկը Աշոտի հետ ծանոթանալուց հետո ինքնամփոփ էր դարձել:
- 3) Դպիրները խոնարհ շարվել էին դահլիճի դռան մոտ՝ վեհափառի աջն համբուրելու համար:
- 4) Սուրհանդակն շտապում էր ժամ առաջ հասնելու ամրոց:

31. Նշված գոյականներից քանի՞սն են դրված որոշյալ առումով.

ծվեն, պարեն, աշտեն, հյուլեն, պատճեն, ոստրեն, քերծեն, ցորեն, գեհեն, երեն:

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) յոթը

32. Նախադասություններից քանիստ՞ն որոշիչ հոդի գործածության սխալ կա:

- Իմաստունն զգուշությամբ փակեց աչքերը և հրաժեշտ տվեց կյանքին:
- Ահագնադղորդ ծափերը անմիջապես խախտեցին դահլիճի քար լռությունը:
- Այդ պահին պարեկն եկավ իշխանի մոտ և հաղորդեց թշնամու գալստյան մասին:
- Չորականի աչքերն հաղթության բերկրանքից փայլում էին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

33. Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:

- 1) Մինչև հիմա հիշում եմ մորս արցունքները:
- 2) Գիշերս կարևոր հանդիպում ունեմ:
- 3) Այդ արարքը վայել չէր քաջարի զինվորիդ:
- 4) Այս տարի լույս տեսավ վերջին վեպս:

34. Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:

- 1) Շնորհի՛ր կրկին ողորմությունդ լքվածիս անօգ,
Ամենապարզև տերդ բոլորի...
- 2) Մի ծաղիկը ծիածան չէ, յոթ գույնով եմ ես ցնծում,
Ես մեղուն եմ... Ողջ ազգերը ծաղիկներս են ծաղկոցում:
- 3) Թո՛ղ թափառիկ հովերը պիղծ, մարմնիդ ճամփով մի՛ գնա,
Վերադարձի՛ր սրտիդ ճամփով, որ ողջ սիրտս քեզ մնա...
- 4) Կարծես շատ է քիչ աշխարհիս հողը,
Որ մարդիկ մեռնում ու հող են դառնում:

35. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- 1) Հայրենիքիս ջուրը ամենաքաղցրն է:
- 2) Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ:
- 3) Գրողներս պարտավոր ենք լինել առաջին շարքերում:
- 4) Ձեզ տեսա, ու միտքս եկան հազար ու մի հուշեր:

36. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- 1) Սրբազան, թող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի դողանջը:
- 2) Մակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարզկամ քեզնից համառ թշվառիս, Զո աղերսով քեզ պիտի պաղատեմ...
- 3) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:
- 4) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:

37. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- 1) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 2) Մեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
- 3) Մռայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
- 4) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:

38. Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդ կա:

- 1) Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտդ զգո՛ւյշ դիր հողին»:
- 2) Աշխարհումս իմն դուն իս:
- 3) Վերջերս հանդիպեցի իմ հին ծանոթին:
- 4) Ուսանողներդ խորհրդանշում եք երկրի ասպազան:

39. Նախադասություններից քանիստ՞ում ստացական հոդ կա:

- Հոգուդ կրակը թեժ պիտի պահես,
Եղանակները վաղ են ցրտելու:
- Մի օրավար կյանքս անցավ
Անձրևի տակ ու կայծակի:
- Այն աչքերը, որ չեն լացել,
Բան չեն տեսել աշխարհումս:
- Հույսը միայն մոտս մնաց,
Մոտս մնաց անուշ մոր պես:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

40. Նախադասություններից քանիստ՞ն դիմորոշ հոդ կա:

- Մենք մեզ սամումից խլել ենք, Թափվել ու թոշնել ենք, և սակայն Ինքներս մեր միջից ծլել ենք:
- Բայց ես այս աշխարհում Բախտավոր եմ, քանզի Բռնակալն եմ խոսքիս, Խղճիս՝ թիապարտը:
- Երեխաներն ենք բոլորս մի տան, Ողջո՛ւյն քեզ, հրա՛ջք հավիտենության:
- Ի՛նչ երջանիկ պահեր էին, Ոտքերիս տակ սարեր էին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

41. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ածական չէ:

- 1) Արարչագործ աստղի առաջ **Վշտոտ** սիրտս բացեցի:
- 2) Բաղերը **վայրի** թռան շվարած. Ո՞վ է արշավում մռայլ գիշերով:
- 3) Եվ քո **քարացած** բռունցքում հիմա Ես սուրն եմ դնում ահեղ ճշմարտի:
- 4) Ու կռունկների քարավանը նորից **Անուշ** կարկաչով գարունն է բերում:

42. Ո՞ր նախադասության մեջ ածական կա:

- 1) Վիճակի անորոշությունից քահանան, որ մշտապես հուսադրում էր ուրիշներին, ինքը կորցրել էր ինքնավստահությունն ու վճիռ կայացնելու կարողությունը:
- 2) Ճեմարանից այդ տարի նույնպես հրավեր չեկավ, և օգոստոսի վերջին գյուղի արդեն ջարդված, ճռռացող սայլը տեղ Մուքիասին ու Վահանին տարավ Թիֆլիս:
- 3) Այս անգամ հայրը ուր գնար, տղային տանում էր հետը, իսկ Թիֆլիսն իր՝ հրաշքի նմանվող կյանքով շարունակում էր զարմացնել տասներկուամյա տղային:
- 4) Արամի հետ ապրող տղաները մտերմաբար էին վերաբերվում Վահանին, նույնիսկ Նիկողոսը, որ առանձնանում էր ժլատությամբ, իր կողպած սնդուկից հաճախ միրգ էր հանում և հյուրասիրում նրան:

43. Ո՞ր նախադասության մեջ գոյականաբար գործածված ածական կա:

- 1) Ատում եմ, ավաղ, և հայրենիքը՝ պերճ արտավայր հարուստների ցովի ...
- 2) Միքում եմ աչքերիդ տխրությունը խորին, Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ ...
- 3) Աղբյուրները հնչում են ու անց կենում, Ծարավները տենչում են ու անց կենում ...
- 4) Եվ հավիտյան էլ մնացին քնած՝ Դավին անտեղյակ, ցավին անտարբեր ...

44. Տրվածներից քանի՞սն են ածականներ.

կարկաչյուն, ժանտ, ընտրանի, մայիսյան, վարդագույն, գեղանի, քարաշեն, հնագույն, արտաքուստ, ամբողջովին:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

45. Տրվածներից քանի՞սն են ածականներ.

վաղորդայն, մանուշակ, արծաթե, պարզ, բռունցք, աշխատանք, բարի, լուսե, աշխատանքային, մարմարե, հմայք, մոտեցում:

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) հինգը
- 4) վեցը

46. Ածականներից քանի՞սը համեմատության աստիճաններ չունեն .

կարևոր, անաղարտ, արտասովոր, բոքիկ, ճաղատ, ասպաշնորհ, կտղ, ամուրի, պճնամուղ, համր:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

47. Ո՞ր շարքի բոլոր բառերն են թվականներ:

- 1) քառամյա, քառասնական, քառորդ
- 2) իննասուններորդ, հիսնյակ, չորս հինգերորդական
- 3) երկուական, միլիոն, ութսունչորս
- 4) վեցուկես, տասնավոր, տրիլիոն

48. Բառերից քանի՞սն են թվականներ.

մեկ հինգերորդ, վեցհարկանի, վեցական, հինգ տասնորդական, հարյուրամյա, վեց-վեց, քսաներեքերորդ, միլիոնավոր, երեսունական, միլիարդ:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) յոթը
- 4) ութը

49. Ո՞ր նախադասության մեջ թվականի գրության սխալ կա:

- 1) Գրիգոր Լուսավորիչը վաթսուհինգ օր քրիստոնեություն է քարոզում դարձի եկած Տրդատին:
- 2) Մշո «Ճառընտիրի» մի կեսը կշռում է տասնինգ կիլոգրամ, մյուսը՝ քսանութ կիլոգրամ:
- 3) Միջնադարի բանաստեղծ Ֆրիկը ապրել է տասներեքերորդ դարի երեսունական թվականներից մինչև տասնչորսերորդ դարի առաջին քառորդը:
- 4) Ավանդությունն Անիի եկեղեցիների թիվը հասցնում է հարյուր մեկի:

50. Ո՞ր շարքում թվականի գրության սխալ չկա:

- 1) 2-ական, 5-րդ, քսաներեքերորդ
- 2) 30-րդ, տասերկու, հարյուր վեց
- 3) 1-ին, քսանհինգ, 60-երորդ
- 4) հազար հարյուր մեկ, 19-րդ, ութ-ութ

51. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:

- 1) նույնքան, ինչքան, փոքր-ինչ, ոմն
- 2) մի քանի, ոչ ոք, ամենայն, մինչդեռ
- 3) համայն, իրենք, ինչ-ինչ, միմյանց
- 4) ինչ որ է, որոշ, քանիեքորդ, այստեղ

52. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:

- 1) այսինչ, մի քանի, մեկը, քառորդ
- 2) ինչու, ոչ ոք, որպեսզի, մյուս
- 3) որպիսի, սույն, ողջ, ոմն
- 4) ով, նույնպիսի, ոչինչ, բազմիցս

53. Դերանուններից քանի՞սը հոգնակի թիվ չունեն.

սա, որևէ, որտեղ, դու, ինչ, ով, յուրաքանչյուրը, ոչ ոք, ոմն, երբ, նա:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

54. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են կազմությամբ պարզ:

- 1) ինքներս, սա, որևէ
- 2) որքան, ուր, ինչ
- 3) որոշ, այլ, բոլոր
- 4) որ, ինչպես, այս

55. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են կազմությամբ պարզ:

- 1) այս, ոմն, մյուս, ուրևէ
- 2) բոլոր, իրար, ամենը, ուրիշ
- 3) յուրաքանչյուր, մի քանի, նույն, սրանք
- 4) որոշ, այլ, միմյանց, մեկմեկու

56. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են կազմությամբ բարդ:

- 1) նույնպիսի, այսքան, միևնույն, ամենքը
- 2) այդքան, որևէ, որչափ, քանիսը
- 3) երբևէ, այդչափ, որտեղ, ոչ մի
- 4) ոչինչ, ոչ ոք, ամեն ինչ, մյուս

57. Ո՞ր շարքում հոլովվող դերանուն կա:

- 1) ինչ-ինչ, քանի, այնպես
- 2) նույնչափ, ինչպես, ինչու
- 3) մի, այս, ոմն
- 4) ուր, ոչ ոք, ողջ

58. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվող:

- 1) դուք, սա, ողջ, ամենքը
- 2) ինքը, ինչ, ով, միմյանց
- 3) դրանք, այստեղ, այսպես, ոչ մեկը
- 4) ոմն, իրենք, յուրաքանչյուր ոք, մենք

59. Ո՞ր շարքում չհոլովվող դերանուն կա:

- 1) դա, երբ, ովևե, մենք
- 2) ամենքը, բոլորը, ես, ինքը
- 3) յուրաքանչյուրը, սրանք, իրենք, իրար
- 4) նրանք, ինչ, ով, սա

60. Ո՞ր շարքում չհոլովվող դերանուն կա:

- 1) մենք, դա, ինչ
- 2) այստեղ, ինքը, նրանք
- 3) որոնք, ոչ մի, դուք
- 4) իրենք, միմյանց, ոչ ոք

61. Ո՞ր շարքի դերանուններից ոչ մեկը չի հոլովվում:

- 1) ինքներս, ովքեր, ինչպես, որտեղ
- 2) ամեն ոք, ոչ մեկը, ինչ-որ, ողջ
- 3) յուրաքանչյուր ոք, ոմն, ամեն մի, ուր
- 4) իրար, այսպես, ինքդ, երբևե

62. Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն կա:

- 1) Իմ վրայի բծերը ցույց տալուց առաջ մաքրի՛ր ձեռքերդ:
- 2) Սույնով հայտնում ենք մեր շնորհակալությունը Ձերդ մեծությանը՝ մեր հրավերն ընդունելու համար:
- 3) Գործարանի ամբողջ բանվորների շրջանում տարածվում էր ըմբոստության ալիքը:
- 4) Ոչ մեկը չէր հասկանում՝ ինչն էր նրա գայրույթի պատճառը:

63. Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն չկա:

- 1) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլք:
- 2) Հասկանու՞մ եք, ոչ մեկ չփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու անօգ:
- 3) Չգիտեմ՝ ո՞րդ կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:
- 4) Ոչնչից և ոչ ոքից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անձնական թիկնապահից:

64. Ո՞ր շարքի բոլոր բառերն են որոշյալ դերանուններ:

- 1) ամեն, ողջ, յուրաքանչյուր, որերորդ
- 2) որևիցե, ամբողջ, բոլոր, ամեն մի
- 3) ամենքը, ամեն ոք, համայն, ամենայն
- 4) մի քանիսը, ամեն մեկը, յուրաքանչյուր ոք, ամեն ինչ

65. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ցուցական դերանուններ:

- 1) մյուս, սույն, նույնչափ, այնտեղ
- 2) նույն, այսպիսի, այդչափ, որպիսի
- 3) միևնույն, որչափ, այսքան, սրանք
- 4) դա, այս, այնտեղ, ինչպիսի

66. Ո՞ր նախադասության մեջ ցուցական դերանուն կա:

- 1) Աստված գիտե, թե ինչ արավ,
Իրար տվեց, իր մեջ առավ
Խուֆն ու խոռոչը:
- 2) Ամպրոպ է խմում քամին,
Հեզում է, ում պատահի,
Ծառերը բռնում են դրան:
- 3) Բեզ բախտն ուր էլ տարավ,
Մտքով քո տանն էիր:
- 4) Քամին մի ամբողջ աշուն է տարել,
Ամբողջ աշխարհ է շուռ տվել քամին:

67. Ո՞ր շարքում են միայն ցուցական դերանուններ:

- 1) այստեղ, ահա, նույն, սա
- 2) սրանք, իրենք, այսքան, այդպես
- 3) այդ, նույնպիսի, սույն, մյուս
- 4) այնչափ, ահավասիկ, միևնույն, այս

68. Ո՞ր շարքում անձնական դերանուն կա:

- 1) ոմանք, դրանք, ովքեր, ամեն ոք
- 2) ով, ամեն մի, ոչ ոք, յուրաքանչյուր ոք
- 3) մեկը, ոմն, ո՞ւմ, ամենքը
- 4) սա, ամեն մեկը, իրենք, ո՞րը

69. Ո՞ր տարբերակում հարաբերական դերանուն չկա:

- 1) Այս իմ հրաշք աշխարհն է, ուր
Գլխիվայր են ծառերն աճում:
- 2) Էլ չեմ հավատում այդ ջինջ աչքերին
Եվ խորունկ ձայնիդ նվագին քնքուշ,
Որ հնչում էր միշտ այնքան մտերիմ:
- 3) Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում
Որն է լավ, ո՞րը՝ վատ:
- 4) Կար մի դյութական ուրիշ ժամանակ,
Երբ նրա կանչի հրաշքին հլու
Ես թողնում էի օրերս մենակ:

70. Ո՞ր շարքի բառերից և բառաձևերից ոչ մեկը չի կարող գործածվել որպես բայ:

- 1) երդում, շարժում, մոտեցում
- 2) զարգացում, ընկալում, անկում
- 3) անցում, հերոսացում, ծալում
- 4) խոստում, հիացում, զգացում

71. Ո՞ր շարքում է խոնարհման բայ կա:

- 1) հագեցել, ծուլանում, մոտեցավ, մեծացել
- 2) ելավ, կխորանա, բարձրանում, խունացած
- 3) մոնչացող, հերոսացել, փութացող, զվարճանում
- 4) զայրացել, շողալու, լիացած, հպարտանում

72. Ո՞ր շարքի բոլոր բայերն են *է* խոնարհման:

- 1) եկել է, տեսած, վագում են, նստած
- 2) կերավ, փախչում է, տարանք, սևացել
- 3) կանգնում են, ծիծաղող, հագավ, առնում
- 4) մտանք, հասած, սուրում են, տառապած

73. Ո՞ր շարքի բոլոր բայերն են *է* խոնարհման:

- 1) հոգնած, սիրող, կարդում է, ծովի
- 2) կանչում, հեռացիր, չեն թռչում, զարգացող
- 3) ներկած, չի մեռնի, սկսիր, թեյելու էր
- 4) գովում էր, կգրոսնեն, հիացել ենք, ուղղված

74. Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:

- 1) մոնչում են, տենչում էինք, հոգացել են
- 2) որսացե՛ք, մուրում են, մխիթարեցին
- 3) ողբացին, կաղում էր, առավ
- 4) դարձել է, կորան, մոռացե՛ք

75. Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:

- 1) մոտեցրեց, հագած, դարձավ, բազմանում են
- 2) կհեռանամ, գնալու է, հագեցավ, ծխացող
- 3) բարձրացնեի, կարդում է, չի հակասում, մոռացիր
- 4) արբեցնող, փախած, զգացող, կհմտանա

76. Ո՞ր նախադասության մեջ *ա* խոնարհման բայ կա:

- 1) Ուռենու տակ տխուր նստել էր Լիլիթը՝ նակատը բազուկներին հենած:
- 2) Ամեն օր նայում է աշխարհին և ամեն օր զարմանում, կարծես առաջին անգամն է տեսնում աշխարհը:
- 3) Տեսավ Մսրա աշխարհի հնագեղ հրաշքները և կապույտ ծովերի ծփուն բյուրեղը:
- 4) Մարդս խանձարուրից մինչև գերեզման անպարտելի հույսերով ձգտում է երջանկության՝ առանց ըմբռնելու՝ ինչ է այն:

77. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) ամրապնդում է, ավերեցին, կորավ, գալիս են
- 2) վայելե՛ք, տասնապատկել են, ա՛ռ, թվացող
- 3) հեռանամ, եկել է, կխոսի, ապացուցել
- 4) ըմբռնեցին, թիավարում ենք, կժամանեն, իմաստավորում են

78. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) կանգնել, փռչոտել, օգնել, բռնել
- 2) վատնել, փշրտել, երկրպագել, խաղալ
- 3) նմանվել, շնորհել, հավատալ, գոջալ
- 4) թարգմանել, վիճարկել, ուշանալ, մնալ

79. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) վերակառուցել, արտահայտել, սառչել, մեծանալ
- 2) կանչել, ննջել, շնչել, սրբագրել
- 3) ջարդել, հուզվել, հոգալ, գալ
- 4) ցատկոտել, լուսավորել, ավարտել, ծամել

80. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սուկածանցավոր:

- 1) հասնել, սառչել, ուրանալ, հոգնել
- 2) համընկնել, փախչել, պրծնել, մոտենալ
- 3) հանգչել, կառչել, կպչել, սառչել
- 4) մտնել, ընկնել, խրտնել, բուսնել

81. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սուկածանցավոր:

- 1) կմտնենք, հագել է, ունեցած, կանգնել
- 2) օտարացած, հանգավ, կառչելու, դիպել է
- 3) առել է, ընկերացող, պրծնել, իջավ
- 4) երկնչել, սառչել, հզորացած, պարծեցել

82. Ո՞ր շարքում սուկածանցավոր բայ չկա:

- 1) հանձնել, հեծնել, հանդգնել, սփրթնել
- 2) հանգչել, հնչել, ճանաչել, ներշնչել
- 3) խայտալ, մեռնել, շորորալ, վրնջալ
- 4) մթագնել, պճնել, խրտնել, կանգնել

83. Ո՞ր շարքում սուկածանցավոր բայ չկա:

- 1) մարտնչել, կառչել, մթնել, բռնել
- 2) զարթնել, պոկոտել, հանգչել, փախցնել
- 3) կարկաչել, մոլեզնել, ալրվել, մտնել
- 4) ցատկոտել, մերձենալ, խայտալ, դեղնել

84. Ո՞ր շարքի բոլոր բայերն ունեն բազմապատկական ածանց:

- 1) պատառոտել, ճանկոտել, համառոտել
- 2) ծեծկոտել, կապոտել, փշրտել
- 3) մկրտել, ցատկոտել, նստոտել
- 4) ժանգոտել, կոխկոտել, կտրտել

85. Ո՞ր շարքում բազմապատկական բայ չկա:

- 1) օժտել, ճխտել, բտել, կարոտել
- 2) մկրատել, անջատել, շաղակրատել, կտրատել
- 3) մաղձոտել, ցատկոտել, աղտոտել, կնճռոտել
- 4) պրպտել, խախտել, ցեխտել, խոչընդոտել

86. Բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի).

մոլեզնել, խոցոտել, իմանալ, հեռանալ, խելագարվել, գովաբանել, մեկնել, փառաբանել, մոռնալ, հորատել:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

87. Ո՞ր նախադասության մեջ բայի կազմության սխալ ձև կա:

- 1) Հայոց թագավորները որևէ գործ ձեռնարկելիս Անահիտ աստվածուհուց էին հովանավորություն հայցում:
- 2) Խռովություններին միջամտում է Աստղիկը՝ խնդրելով դադարացնել կռիվները:
- 3) Միհրի անունից է ծագում հայոց հեթանոսական հին սրբավայրերի ընդհանուր կոչումը՝ մեհյան:
- 4) Հնում Սպանդարամետին նույնացրել են հունական Դիոնիսիոսի կամ Բաքոսի հետ:

88. Բայերից քանի՞սն են կազմված գոյականներից.

երջանկանալ, քարանալ, մերձենալ, տիրանալ, աքլորանալ, չորանալ, ընկերանալ, ծիծաղել, լրջանալ, հզորանալ:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

89. Ո՞ր բառակապակցության մեջ չեզոք սեռի բայ կա:

- 1) քայլել բոբիկ ոտքերով
- 2) մանկությունը հիշել
- 3) խլացնել շառաչը
- 4) գրկել որդուն

90. Ընդգծվածներից ո՞րը ներգործական սեռի բայ չէ:

- 1) Խաչքարերը **կանգնեցնում էին** սրբավայրերում, գերեզմանատներում, մեծ ու փոքր ճանապարհների եզրերին:
- 2) Ռուս իմաստասեր Կոզմա Պրուտկովն ասել է. «Պտուղը **վայելելիս** հիշի՛ր ծառի արմատները»:
- 3) 393 թվականին Մեսրոպ Մաշտոցի ձեռքով **աշխարհ է եկել** հայերեն ձեռագիր առաջին մատյանը:
- 4) Օտարերկրացիները միայն մեր Մատենադարանում կարող են **տեսնել** իրենց հեղինակների կորած բնագրերի հնագույն թարգմանությունները:

91. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան, Նորից թովում է ինձ ոսկե հեռուն:
- 2) Եվ տեսնում էի՝ զմրուխտ շորերով Մի նավ էր սահում օրոր ու շորոր:
- 3) Հայրենի գետի զմրուխտ ավերին Մեր հին տնակն է կքել մենավոր:
- 4) Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր Կերտել են շքեղ կոթողներ հավերժ:

92. Նախադասություններից քանիստ՞ն են ներգործական սեռի բայ կա:

- Ուսումնաստենչ երիտասարդները օտար համալսարաններում էին մեղմացնում իրենց ուսման ծարավը:
- Այս թանկագին ձեռագիրը մեզ է հասել հազարամյա պատմության խորքերից:
- Նախորդ դարերում այս ու այնտեղ առկայծած որմնանկարչությունը փոքրեց Տաթևում և Անիի տաճարներում:
- Կան նաև ուրիշ հանգամանքներ, որոնք հիմնավորապես մերժում են Գլաձորը Թանահատում տեղադրելու վարկածը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

93. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը կրավորական սեռի բայ:

- 1) Մնացողները կծիկ են դառնում
Թրջվելու վախից
Եվ կամաց-կամաց բներն են քաշվում:
- 2) **Գծված** գլուխս ասիս մեջ առել,
Նստել արածիս վարձին եմ նայում:
- 3) Սովերները **խեղդվում են** շոգից,
Բարդիները մրսում են:
- 4) Երկնքում բամբյուն ու բոց,
Երկնքում կայծ ու կռիվ,
Բախվում են խորթ ու խռով
Ամպերը խռիվ-խռիվ:

94. Ներգործական կառուցվածքի ո՞ր նախադասությունը չի կարող փոխակերպվել կրավորական կառուցվածքի:

- 1) Քաղաքի դարպասների մոտ մարդիկ դառնապես ծաղրեցին նրան:
- 2) Այսօր նրա բարեկամ եղնիկներն ու այծյամներն անգամ նկատեցին իրենց բարեկամի զայրացկոտ հայացքը:
- 3) Երեխաները լուռ լսում էին ջրերի ձայնը:
- 4) Նա գիտեր բազում հեքիաթներ:

95. Նախադասություններից քանիստ՞ն չեզոք սեռի բայ կա:

- Հողն արևի տակ բոց էր բռնել ու ավելի էր շիկանում:
- Օդի մեջ ծովային թռչունների հատու կանչերն են սավառնում:
- Փողոցով շարժվում է վանականների թափոթը:
- Մանրանկարիչները նկարագարում էին սուրբ գրքեր, ժամանակագրություններ, ասպետական վեպեր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

96. Պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Ներգործական սեռի բայերը պահանջում են ուղիղ խնդիր լրացում:
- 2) Կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործականներից **չ** ածանցով:
- 3) Չեզոք սեռի բայերը պահանջում են ներգործող անուղղակի խնդիր:
- 4) Բայի սեռը արտահայտում է գործողության և առարկաների տարբեր հարաբերություններ:

97. Ո՞ր շարքի բոլոր դերբայներն են անորոշ:

- 1) հպարտանալ, խաղացել, դողացնել, խոցոտել
- 2) հասել, հանգչել, կորցնել, չորանալ
- 3) ծիծաղել, ուրախացրել, ուռչել, պոկոտել
- 4) պարծենալ, մոտեցնել, իմացվել, լինել

98. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) թռել, ավլել, կորել, ընկել
- 2) խոխոջել, մլավել, աղալ, ծամթել
- 3) գթալ, արագանալ, իմանալ, ծանոթանալ
- 4) գդալ, պսաղալ, սովորել, հեկեկալ

99. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) բղավել, խրախուսել, փախել, գրել
- 2) տնկել, ընկել, գտնել, լուսաբանել
- 3) թափթփել, ծիծաղել, հմտանալ, կարմրել
- 4) իջնել, դարձել, ցնծալ, երկմտել

100. Ո՞ր շարքում միայն անորոշ դերբայներ չեն:

- 1) մագլցել, կարեկցել, հայցել, գերազանցել
- 2) անցել, բռնակցել, շրջանցել, նվազակցել
- 3) զեկուցել, խցել, գառանցել, գրանցել
- 4) թափանցել, ընթերցել, գոցել, կցել

101. Ո՞ր շարքում սխալ բայաձև չկա:

- 1) աշխատեցնել, հաջողացնել, կորել է, տուժող
- 2) հանգչող, մզեցված, սովորեցնել, ուռչում է
- 3) թարմացնող, փախնել, հիշեցրին, սառչում է
- 4) խոսած, ծիծաղող, կպած, բուրել

102. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) սխալ, նվալ, աղալ, խաղալ
- 2) ծխալ, գուլալ, նազել, հալել
- 3) մեծանալ, լիանալ, ափսոսալ, զլանալ
- 4) գթալ, գդալ, թվալ, վխտալ

103. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) սկսել, գրվել, հեռանալ, թռել
- 2) փախել, նայել, խաղալ, զարգանալ
- 3) հազել, սիրել, հմայվել, աղալ
- 4) սրբել, ջարդվել, կոխկոտել, տեսնել

104. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ կա:

- 1) Վաղուց է փախել աշխարհն իր հունից,
Սեկ էլ ե՞րբ է նա իրեն գտնելու:
- 2) Թափվել ու թռչնել ենք, և սակայն
Ինքներս մեր միջից ծլել ենք:
- 3) Բուժել է պետք ժամանակին,
Հոգալ է պետք
Ժամանակի կարիքները:
- 4) Երբ որ նշան են բռնել թիկունքիդ,
Քո զգաստությունն էլ իմաստ չունի:

105. Ո՞ր շարքում անորոշ դերբայ չկա:

- 1) հավատացել, խաղացել, գործակցել, ջանացել
- 2) ցնցել, գնացել, անսացել, եռացել
- 3) որսացել, գոռացել, գթացել, ժպտացել
- 4) թարմացել, հղփացել, տողանցել, մեղմացել

106. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:

- 1) Ինձ ելնելու սարեր կան դեռ...
- 2) Գյուղ էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
- 3) Ես չգիտեմ՝ վաղվա խաչերի մեջ
Մեր խաչն ով է արդյոք շալակելու...
- 4) Կյա՛նք տխուր հովիտ՝ հավիտյան լալու:

107. Ո՞ր շարքում անորոշից ձևով տարբերվող վաղակատար դերբայ չկա:

- 1) նստել, մտել, ստել, ավարտել
- 2) ողողել, թողել, խճողել, սքողել
- 3) վայելել, ելել, այցելել, խլել
- 4) վարգել, երգել, հարգել, նորոգել

108. Ո՞ր շարքում անորոշից ձևով տարբերվող վաղակատար դերբայ չկա:

- 1) աքտրել, կորել, տոչորել, գլորել
- 2) բախել, փախել, շաղախել, խիզախել
- 3) խրախուսել, բուսել, հյուսել, տարակուսել
- 4) սովորել, ձևավորել, մտորել, ոգևորել

109. Ո՞ր շարքում վաղակատար դերբայ չկա:

- 1) պատճառել, առել, սպառել, թափառել
- 2) կպել, ընպել, պարպել, հպել
- 3) խցկել, ընկել, ցատկել, փրկել
- 4) մեռնել, ելնել, թողնել, լինել

110. Ո՞ր շարքի չ բոլոր բառերն են հարակատար դերբայներ:

- 1) նստած, կարդացած, մոտեցրած, տեսած
- 2) ընկած, գրած, կերած, հեռացած
- 3) շնորհած, ամոթխած, կարոտած, մոռացած
- 4) տպագրված, հռչակված, տարածված, հաշված

111. Ո՞ր շարքի չ բոլոր բառերն են հարակատար դերբայներ:

- 1) մեռած, ժամանած, հռչակված, անիծված
- 2) ներկած, վարկած, հանգած, հուզված
- 3) ոգևորված, կուտակված, սրբված, պոկված
- 4) ժամանած, իմացած, քերած, կազմված

112. Ո՞ր շարքի չ բոլոր բառերն են հարակատար դերբայներ:

- 1) հպարտացած, բնակված, անցած, նկատված
- 2) համախմբված, հյուրասիրված, ոգևորված, որոշված
- 3) կատարված, հակահարված, հպարտացած, տպված
- 4) գտած, խաչված, տառապած, վաստակած

113. Ո՞ր նախադասության մեջ հարակատար դերբայ չկա:

- 1) Հիմա արդեն ոչ ոքի համար ամեղծված կամ հայտնություն չէ Հայկի ու Խալդի նույնությունը:
- 2) Գլածորի բարձր դպրոցն էին ընդունվում, այսօրվա լեզվով ասած, միջնակարգ կրթություն ստացած լավագույն երիտասարդները:
- 3) Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի վիթխարի սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով:
- 4) «Պարզատումարը» տոմարացույց է և ունի երազահան ու աստղագուշակություններ, որոնք նման են «Աղթարքի» պարունակածին:

114. Նախադասություններից քանիստ՞ում է ընդգծվածը հարակատար դերբայ:

- Բախտի կռանը կամքն է թեև, բայց **դիպվածն** է տիրական...
- Ծովափի կինը կարճ **խուզած** մազեր ուներ:
- Այդ կինն այդպես էլ **ամեղծված** մնաց նրա համար:
- Հեղինակը բավական ընդարձակ **հավելված** էր կցել իր աշխատությանը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

115. Ո՞ր դերբայը չի կարող դառնալ ժամանակի պարագա.

- 1) անորոշ
- 2) ենթակայական
- 3) հարակատար
- 4) համակատար

116. Նախադասություններից քանիստ՞ում է ընդգծվածը հարակատար դերբայ:

- **Մթամած** երկնքում երբեմն փայլատակում էր կայծակի շեղբը:
- Բուրմունքից **արբեցած** մի բզեզ քնել էր առէջքների մեջ:
- **Խորովածը** ճաշակելուց հետո շարունակեցին ճանապարհը:
- **Խաշնարած** այդ ցեղը այդպես էլ մնում է քաղաքակրթության մայրուղու եզրին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

117. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթակայական դերբայներ:

- 1) վազող, խաղող, հմայող, լսող
- 2) նկարող, տեսնող, հասնող, գնահատող
- 3) սիրող, ահուդող, կարկաչող, ստացող
- 4) հնչող, գրավող, խուսափող, խոսափող

118. Ո՞ր շարքի մչ բոլոր բառերն են համակատար դերբայներ:

- 1) երգելիս, խոսելիս, կարդալիս, խաղալիս
- 2) ընկնելիս, նայելիս, վազելիս, ուտելիս
- 3) աշխատելիս, մշակելիս, կատարելիս, մաքրելիս
- 4) ջրելիս, ասելիս, ասուլիս, հիշելիս

119. Ո՞ր շարքի բոլոր բառերն են համակատար դերբայներ:

- 1) ավետելիս, ավետիս, հնձելիս, ջրելիս
- 2) նվագելիս, բժշկելիս, նվիրելիս, կառուցելիս
- 3) աշխատելիս, կատարելիս, կգաքիս, էտելիս
- 4) ողջունելիս, չվելիս, օազիս, քանդելիս

120. Տրված ենթակայական դերբայներից ո՞րն է նաև գոյական:

- 1) թափառող
- 2) վերցնող
- 3) հաղթող
- 4) ընտրող

121. Ո՞ր շարքում են միայն անկախ դերբայներ:

- 1) թրթռացող, վախեցած, հագել, փախչելիս
- 2) կարողացել, հարստացնելով, կպած, ստուգվող
- 3) գայրացնել, կռացող, երթևեկելիս, ծուլացած
- 4) արտասանի, թովուացող, գտած, քնեցնելիս

122. Դերբայներից ո՞րը չի կարող հոլովվել:

- 1) համակատարը
- 2) ենթակայականը
- 3) անորոշը
- 4) հարակատարը

123. Ո՞ր շարքում դերբայական սխալ ձև կա:

- 1) փթթած, նստած, խոսացած, աճած
- 2) ծխող, ծխացող, մարմրող, սրբսրբացող
- 3) ջնջելիս, ջոկելիս, գգալիս, հոգնելիս
- 4) հաջողեցնել, թարմացնել, նստեցնել, սովորեցնել

124. Ո՞ր նախադասության մեջ բայաձևի գործածության սխալ կա:

- 1) Ջուրը ծառերի տակ կապելուց հետո Լառ-Մարգարը պատկում էր շվաքի տակ և աչքերը կիսախուփ անում:
- 2) Ջուրը կապելուց նա ջրի հետ էլ գնում էր, մինչև ջուրը այգուն հասներ:
- 3) Փողոցի լորենու սաղարթները շոշափելուց Լևոնը մեծ հաճույք էր գգում:
- 4) Մարգարը ծիրանի կորիզները տանելուց առաջ բավական մտածեց:

125. Նշվածներից ո՞րն է կախյալ դերբայ (ձևաբայ):

- 1) մոտեցրել
- 2) վախեցած
- 3) ջերմանալ
- 4) թռչելիս

126. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անկատար դերբայ (ձևաբայ):

- 1) աշխատում, եփում, լվանում, վագում
- 2) խոստում, փայլեցնում, երդում, հմայում
- 3) ցատում, թոթովում, եռում, հաղորդում
- 4) լիացնում, ուտում, զարդարում, մրսում

127. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վաղակատար դերբայ (ձևաբայ):

- 1) հեռացել, ունեցել, գտնել, փախել
- 2) թռել, մոտեցել, մեռել, հագել
- 3) սիրել, հասցնել, տեսել, փակցրել
- 4) վարժեցրել, սառչել, թողել, սևացել

128. Ո՞ր շարքում ընդգծվածներից ոչ մեկը անորոշ դերբայ չէ:

- 1) գրելու էր, հեռանալու է, պատրաստվում է նվաճելու, եկել է երգելու
- 2) կարդալու գիրք, ասելու էի, չէի մոտենալու, հիշելու դեպք
- 3) գոջալու էին, խուսափելու է, չի մոռանալու, գրավելու ենք
- 4) եկել է վրեժ լուծելու, չի կարողանալու, երգելու ցանկություն, չեն հասնելու

129. Ո՞ր շարքում ընդգծվածներից ոչ մեկը անորոշ դերբայ չէ:

- 1) գնում են հաղթելու, չափելու ժամանակ, չի պրծնելու
- 2) հաղթելու ցանկություն, չէիր բացակայելու, ուտելու ընթացքում
- 3) եկել է պատմելու, անցնելու ճամփա, հետ չի դառնալու
- 4) չենք ենթարկվելու, նվաճելու եք, չի տեսնելու

130. Ո՞ր նախադասության մեջ ժխտական դերբայ (ձևաբայ) կա:

- 1) Երբ անտեղի հարց չեն տալիս, սուտ պատասխան չեն ստանում:
- 2) Չէր անցնում այդ փողոցով, որ պատահաբար չհանդիպի Աստղիկին:
- 3) Մենավոր իմ սիրտ, մոլորված թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
- 4) Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս:

131. Ո՞ր նախադասության մեջ ժխտական դերբայ (ձևաբայ) կա:

- 1) Մի՛ դատիր, որ չդատվես:
- 2) ... Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:
- 3) Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ
Թե չլինեին ընկեր, բարեկամ...
- 4) Քեզ երբեք սիրտս չի մոռանա,
Իմ մաքուր, առաջին իմ անուրջ:

132. Ո՞ր նախադասության մեջ ժխտական դերբայ (ձևաբայ) կա:

- 1) Մի՛ հավատա ստվերներին, հենվի՛ր միայն քեզ վրա....
- 2) Ես չեմ կամենա ողջունել մարդկանց,
Նրանց սեղանից պատառ չեմ կտրի:
- 3) Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում
Ինձ վրա իշխող ոչ մի զորություն:
- 4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք...

133. Ժխտական դերբայը ո՞ր եղանակի կազմությանն է մասնակցում:

- 1) ըղձական
- 2) սահմանական
- 3) հրամայական
- 4) ենթադրական

134. Ո՞րը պարզ դիմավոր ձև չէ:

- 1) չէր պատմում
- 2) պիտի աչքը մտնեք
- 3) մի՛ կերեք-խմեք
- 4) գլուխ տվեց

135. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) հոգնում էր, չէր տեսնի, գնալու եմ, թռավ
- 2) գնացիր, սովորիր, գտել է, չի խոսում
- 3) գիտեմ, չեմ գնալու, խոսեցրիք, մտանք
- 4) տեսնեմ, հասնում էր, փախչում էին, եկան

136. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) գրեց, հեռանա, անցա, մտածեցի
- 2) ասելու էր, տեսավ, մտել է, առ
- 3) հասնում է, ուշացավ, գիտեր, սիրեց
- 4) պիտի նկատի, մոտեցրել էր, հագրի, տեսնում է

137. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) տպել է, հեռում էր, չեմ գոջա, գտավ
- 2) երգեմ, բաժանեցիր, մատուցելու է, չարչարեցին
- 3) բուժվելու էր, սխալվել է, հնչում էին, թռավ
- 4) նստում է, արշավեց, չէր ուզի, չի հանդգնելու

138. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) արտասվեցինք, ճանաչեր, հարցրել է, ունեմ
- 2) գալիս էի, զվարճանում եք, չի խառնվի, ներկայացրին
- 3) արժեմ, բարձեցի, վախեցրել են, լալիս էին
- 4) մոռանար, տնկեցինք, սովորեցնում է, գիտեի

139. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) թռել է, հիշում էր, չգար, եկավ
- 2) լալիս է, եղավ, չեմ բերի, բերելու եմ
- 3) գիտեմ, ունեմ, չեմ գալու, գրել եմ
- 4) չուզեց, գրեմ, փախել էինք, հիշելու է

140. Նախադասություններից քանիստ՞ում սահմանական եղանակի բայաձև կա:

- Սարի հետևում շողերը մեռան,
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ:
- Աստղերն են ժպտում լուսեղեն նագով,
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
- Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի,
Միրտդ կճշա, արդյոք ո՞ր ես, կա՞ս:
- Ես չգիտեմ՝ ո՞ր եմ տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

141. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված անցյալ կատարյալ ժամանակով:

- 1) սիրենք, չդրեցի, թռավ, տվեց
- 2) նայեց, զարգացրու, տեսավ, գտան
- 3) հագավ, մեծացար, առանք, հասաք
- 4) մոտեցրի, չեմ թռչի, գրեցիք, աղաց

142. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ կա:

- 1) հանգավ, դրիր, հեռացվեցին
- 2) տվեցինք, զգուշացրեցի, մոռացար
- 3) խոսեցին, դիպան, վերցրի
- 4) թանք, բերեցին, կանգնեցին

143. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ ձև կա:

- 1) ասացինք, լվացին, հանգչեց, ուրախացան
- 2) թռան, ընկերացա, կորցրինք, կոտրատեցիր
- 3) մոտեցանք, եղաք, կերան, հարցրի
- 4) պոկոտեցի, կորանք, դիպավ, հագեցա

144. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի բայաձև կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Մոռանալ մոռանալ ամեն ինչ
Ամենին մոռանալ
Չսիրել չխորհել չափստալ
Հեռանալ:
- 2) Թող շուրջս փռվի անանց լռություն
Թող ինձ չհիշեն թող ինձ մոռանան:
- 3) Իմ գերեզմանին դուք չմոտենաք
Հարկավոր չէ ինձ ոչ ծաղիկ ոչ սուգ:
- 4) Այսօր եղիր քրոջ պես
Անչար մաքուր և գթոտ:

145. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի կազմության սխալ ձև կա:

- 1) Ինձ անլաց թաղեցե՛ք, ինձ անխոս թաղեցե՛ք.
Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անասհման:
- 2) Ասացե՛ք, արդյոք նա էլ թախծո՞ւմ էր,
Արդյոք տրտո՞ւմ էր նա էլ ինձ նման:
- 3) Կորի՛, գնա՛, էլ աչքիս չերևաա:
- 4) Ուրախ սրտով դուք ձեր սերը
Վայելեցե՛ք անթառամ:

146. Արգելական հրամայականի ձևերից քանի՞սն են սխալ.

մի՛ խոսիր, մի՛ հեռացեք, մի՛ք մոտենա, մի՛ հավատա, մի՛ խառնվի, մի՛ կոտորեցեք, մի՛ տար, մի՛ կարծեք, մի՛ փախեք, մի՛ թող:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

147. Ո՞ր շարքում ըղձական եղանակի բայաձև չկա:

- 1) չի հարցնի, չխոսես, կբացվի, երգիր
- 2) կաս, լինում է, չեմ գնա, ասում ենք
- 3) լինեի, ունեմ, չգնային, տեսնենք
- 4) չես ասի, նստի, կորչում է, կգա

148. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ըղձական եղանակով:

- 1) չբերեմ, չեմ բերի, չգրեիր, խոսեմ
- 2) չուզեր, չուզեց, կարդայինք, մոտենային
- 3) բերեմ, ունեմ, հարցնեմ, ասեմ
- 4) չգայի, ընդունվի, հարգեր, լավեին

149. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:

- 1) կուտեմ, չեմ սուզվի, կաշխատենք, ջանա
- 2) կապրենք, կուտակենք, կտեսնի, կուշանա
- 3) կգաս, չի աղոթի, կամայանա, կընկերանային
- 4) կշտամբեց, կայրի, կուղարկի, չի ուղղի

150. Ո՞ր շարքի ոչ բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:

- 1) կերգեմ, կխոսի, կաղաս, կայրեր
- 2) կարդուկեն, կոշտացնի, կուղեմ, կարդարանա
- 3) կանվանեն, կարժևորվի, կխրխնջա, կուսանի
- 4) կառաքեմ, կառաջարկեմ, չեմ գժվի, կայցելես

151. Ընդգծվածը ո՞ր եղանակի բայաձև է:

*Այսօր **գրանք** իրարու,
Խեղճ լինենք ու չամաչենք:*

- 1) հրամայական
- 2) ըղձական
- 3) սահմանական
- 4) ենթադրական

152. Տրված նախադասության ստորոգյալը ի՞նչ ժամանակաձևով է արտահայտված:

*Նա ունեի խորունկ, երկնագույն աչքեր,
Բնրուշ ու տրտում որպես իրիկուն:*

- 1) ըղձական անցյալ
- 2) անկատար անցյալ
- 3) անցյալ կատարյալ
- 4) ենթադրական անցյալ

153. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ.
Տխուր երեկոն զարկել է վրան:
- 2) Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ:
- 3) Եվ ես արթնացա խնդության ցավից.
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում:
- 4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողեք, որ հանգչի իմ սիրտը հոգնած:

154. Շարքերից քանիստ՞ում անկանոն բայ կա:

- թեքվել, սառչել, թողնել, մոռանալ
- զարկել, հյուսել, ցանկալ, գերել
- հանգչել, կառչել, ուտել, իջնել
- գնալ, լինել, տանջել, մարել

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

155. Նախադասություններից քանիստ՞ում մեկից ավելի անկանոն բայ կա:

- Մինչև ես բարձր կանչեցի և ձիու սանձից բռնած՝ վագեցի սանդուղքի կողմը, պապս արդեն թափ էր տալիս փեշերը:
- Երբ փոթորիկ էր լինում և մրրիկ, նա տեսնում էր Լիլիթին իր մոտով շեշտակի անցնելիս:
- Եվ փոքրիկ թուղթը, որ շորի մեջ ամուր փաթաթելուց հետո տատս դրեց սնդուկի մեջ, մեզ համար դարձավ և՛ ամենից թանկը, և՛ ահավորը:
- - Հուր-հավիտյան պարտական մնաս, թե պատասխան ստանալիս չգաս և իմ գերեզմանին իմաց չտաս,- ասել էր նա վերջին լուսաբացին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

156. Ո՞ր շարքում պակասավոր բայ կա:

- 1) լքել, առնել, իմանալ, ելնել
- 2) լվալ, հուզվել, ուտել, տեսնել
- 3) դնել, բռնել, անել, հագնել
- 4) բխել, կորչել, լալ, դառնալ

157. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայի՝ խոնարհման կանոններից շեղվող ձև կա:

- 1) Մթնածոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:
- 2) Միրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ գյուղում:
- 3) Որքա՞ն մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է մեր դպրոցում:
- 4) Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը. տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին:

158. Անկանոն բայերից քանիսի՞ տվյալ ձևերն են շեղված խոնարհման կանոններից.

ասա՛, առանք, բերում է, թողեցի, եղել է, կդառնա, կերան, ելնում էին, դրել եք, տեսա:

- 1) իննի
- 2) ութի
- 3) վեցի
- 4) հինգի

159. Անկանոն բայերից քանիսի՞ր տվյալ ձևերը ունեն կանոնավոր կազմություն.

տե՛ս, անելու եք,ասում են, առե՛ք, դառնալու են, վեր կացան, չանես, տո՛ւր, եկել է, կթողնեք:

- 1) բոլորի
- 2) ութի
- 3) վեցի
- 4) չորսի

160. Ձևաբանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Լուսինը մի անհամբեր երեխա է եղել. մի օր, երբ մայրը խմոր է շաղախում, լալով գալիս է, մորից հաց ուզում, իսկ մայրը խմորոտ ձեռքով զայրացած ասպտակում է լուսնին, անիծում, որ նա երբեք չկշտանա:

- 1) **եղել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
- 2) **լալով** - անորոշ դերբայ, գործիական հոլով
- 3) **զայրացած** - ածանցավոր բայ, հարակատար դերբայ
- 4) **անիծում** - անկատար դերբայ, **ե** խոնարհում

161. Ձևաբանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Մեր առաջին գրական աղբյուրները հաղորդում են, որ Աշտիշատի մեհյանները կործանելով՝ նրանց տեղերում նոր հավատի սրբարաններ են կառուցել քրիստոնյա դարձած մեր նախնիները:

- 1) **հաղորդում են** - **ե** խոնարհում, ներգործական սեռ
- 2) **կործանելով** - պարզ բայ, ներգործական սեռ
- 3) **կառուցել են** - ներգործական սեռ, սահմանական եղանակ
- 4) **դարձած** - **ա** խոնարհում, ներգործական սեռ

162. Ձևաբանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Միքայելը շատ անգամ էր պարծեցել իր ընկերների մոտ, թե հոր մահից հետո այնքան է ծախսելու, որքան ոչ որ դեռ չի ծախսել, ու այսօր իմանում է, որ դեռ պետք է սպասել:

- 1) **պարծեցել էր** - վաղակատար անցյալ
- 2) **ծախսելու է** - ապակատար ներկա
- 3) **իմանում է** - անկատար ներկա
- 4) **պետք է սպասել** - հարկադրական ապառնի

163. Ձևաբանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Մի օր մեղմաշունչ մի քամի, բարձունքներից ներքև սահելով, իջավ ոսկեալիք Նեղոսի ափերը և մի դեռատի արմավենու ոտքերի տակ փռվեց հեկիկ:

- 1) **սահելով** - անորոշ դերբայ
- 2) **իջավ** - ներգործական սեռ
- 3) **արմավենու** - **ու** հոլովում
- 4) **փռվեց** - սահմանական եղանակ

164. Չևարանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Ես տեսնում եմ, որ կյանքը մշտնջենական անհաշտ մաքառման մեջ է մահի դեմ, և իմ բոլոր իղձերը, աղբյուրների պես իրար հյուսվելով, ընթանում են մի հունով:

- 1) **որ** - ստորադասական շաղկապ, **մշտնջենական** - անժամանակ
- 2) **մաքառման** - **ան** արտաքին հոլովում, **մեջ** – հետադիր կապ
- 3) **իմ** - անձնական դերանուն, **բոլոր** - անորոշ դերանուն
- 4) **իրար** - փոխադարձ դերանուն, **հյուսվելով** - անորոշ դերբայ

165. Ո՞ր շարքում են միայն մակբայներ:

- 1) գողեգող, ավանդաբար, այնպես, լիովին
- 2) վաղը, ցմահ, առհավետ, երբևիցե
- 3) ամենուրեք, դեսուդեն, ներքև, սարն ի վեր
- 4) բոլորովին, այնչափ, քանիցս, հաճախ

166. Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակբայներ:

- 1) ամբողջովին, դժբախտաբար, բերանքսիվայր, ի դեպ
- 2) եռակի, կիսով չափ, ցավոք սրտի, զօրուգիշեր
- 3) առանձնապես, բազմիցս, արտաբուստ, մասամբ
- 4) հանկարծ, անընդհատ, այնուհանդերձ, ստեպ-ստեպ

167. Ո՞ր շարքում մակբայ չկա:

- 1) անիրավ, իրավունք, իրավաբանորեն, իրավական
- 2) ազգային, ազգովի, ազգական, ազգատյաց
- 3) սակարան, սակագին, սակավաջուր, սակավ առ սակավ
- 4) պարտական, պարտապան, պարտառու, պարտավորված

168. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակբայ:

- 1) Կինը նստել էր օջախի **առաջ**, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին:
- 2) Անգղջալի **առաջ** գնա, ինչ որ լինի, թող լինի:
- 3) Չարթնում էր Պետին, տան **առաջ** հոսող առվակի ջրում երեսը լվանում:
- 4) Քանի՜ - քանիսն անցան քեզ պես, քեզնից **առաջ**, քո **առաջ**:

169. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակբայ:

- 1) Ես **էլ**, երբ դեռ ջահել էի քեզ նման, Երբ դեռ հոգիս թևեր ուներ երագի, Փնտրում էի իմ երագի աղջկան....
- 2) **էլ** քեզ չեմ սիրում, մի՛ նայիր այդպես....
- 3) Դուք **էլ** ինձ հետ ձեն տվեք, Իմ դարդերի թայ սարեր:
- 4) **է՛լ** գող փիսո, **է՛լ** քաչալ շուն, Բանը հասավ դիվանբաշուն:

170. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակբայ:

- 1) **Ատելու չափ** սիրի՛ր մարդկանց, բայց լավություն միշտ արա:
- 2) Գյուղից **բավականաչափ** հեռացել էինք, երբ մանր անձրև սկսվեց:
- 3) Ծառն **այնքան** էր բարձրացել, որ հասնում էր սենյակիս պատուհանին:
- 4) **Որքա՛ն** ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել....

171. Նախադասություններից քանիստ՞ում է ընդգծվածը մակբայ:

- Լինե՛ր **հեռու** մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն:
- **Հեռու** երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում:
- Թե ինչպես հանկարծ նա գնաց **հեռու**,
Էլ չի դառնալու, էլ չի դառնալու:
- Եվ թողնում էի օրերս մենակ
Եվ այս աշխարհից սլանում **հեռու**:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

172. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են տեղի մակբայներ:

- 1) ամենուրեք, այլուր, շուրջը, դուրս
- 2) ներս, դռներուռ, ներքուստ, տեղից տեղ
- 3) ընդառաջ, տեղ-տեղ, ցած, տնետուն
- 4) վերև, դեմ դիմաց, հեռու, դեսուդեն

173. Ո՞ր նախադասության մեջ տեղի մակբայ կա:

- 1) Էն ձորի միջին ահա մի տնակ:
Էնտեղ էս գիշեր Սաբոն է մենակ:
- 2) Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխույժ երգերով:
- 3) Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը:
- 4) ...Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝
Նայում է ներքև՝ սիրտը սևակնած:

174. Ո՞ր նախադասության մեջ ձևի մակբայ կա:

- 1) Կծերն ուսած՝ թովռալով՝
Ջուրն են իջնում աղջիկներ....
- 2) Էն ո՞ւմ յարն է նստած լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում....
- 3) Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,
Թե՛ դրա օրը լացով անց կենա....
- 4) Միրտս էլ միշտ վիա՛կ, սիրտս էլ միշտ մո՛ւթ,
Ի՞նչ կա, չգիտեմ, իմ առջև պահված....

175. Ո՞ր նախադասության մեջ ժամանակի մակրայ կա:

- 1) Նախիրը տուն քշելիս մի իրիկուն նա գյուղում անսովոր իրարանցում տեսավ:
- 2) Մյուս առավոտը տավարը տանելիս Պետին սիրտ չարեց կալերի կողմը նայելու:
- 3) Գյուղում այլևս նրան չէին նկատում:
- 4) Այդ ժամանակ նրան թվում էր, թե վաշտապետը դիտմամբ է զենք տվել իրեն:

176. Տարբերակներից որո՞ւմ կապ չկա:

- 1) հանձին տնօրենի
- 2) դեպքերի կապակցությամբ
- 3) իբրև հոգեբան
- 4) միասին գնալ

177. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը կապ:

- 1) Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է **հավասար**:
- 2) Արամին **հավասար** մրցակից ներկայումս չկա:
- 3) **Հավասար** քայլով չափում էր ճամփան
Այն քարավանը ոլոր ու մոլոր:
- 4) Մարզիկների ուժերը **հավասար** էին. ծանր մարտ էր սպասվում:

178. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը կապ:

- 1) Լիներ **հեռու** մի անկյուն...
- 2) Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ
Հեռվից անթիվ ձեռքերով:
- 3) Չեզ հետ եմ, բայց միշտ **հեռու** եմ, **հեռու**,
Ես ունեմ թովիչ մի առանձնարան:
- 4) Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալիս, կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհից **հեռո՞ւ**, լազուր կանարում:

179. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը կապ չէ:

- 1) **Մինչև** ե՞րբ պիտի շարունակվի այս ամենը:
- 2) **Մինչև** առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա:
- 3) **Մինչև** գյուղից հեռանալը որոշեց այցելել նաև տարեց ուսուցչին:
- 4) **Մինչև** վերջին րոպեն ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:

180. Ո՞ր նախադասության մեջ կապ կա:

- 1) Ով պատմություն ունի, չի կարող հետ չնայել:
- 2) Առաջ գիտեի, հիմա չգիտեմ:
- 3) Տարիներ հետո քեզ տեսա նորից:
- 4) Մինչև չտեսնես, չհավատաս:

181. Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Առանց ընկճելու երկրի թշնամուն՝ Նրա սուրը երբեք չի մտել պատյան:
- 2) Ես գիտեմ՝ մի օր պիտի չքանաս Որպես մի երազ՝ չծնված բնավ:
- 3) Բայց վառվում է դեռ մեր ակոթներում Հինավուրց ուխտի կրակը անշեջ:
- 4) Բախտը ինձնից թռավ, գնաց Վերջալույսի շողերի մեջ:

182. Նշվածներից քանի՞սն են կապ.

դիմաց, ընդդեմ, հնուց, միջև, բացառությամբ, արդեն, վերջապես, վերաբերյալ, հոգուտ, դեռ:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

183. Ո՞ր շարքի բոլոր կապերն են նախադրություններ:

- 1) օրոք, հանդերձ, նայած, փոխարեն
- 2) մինչ, առ, դեպի, իբրև
- 3) ինչպես, առթիվ, պես, մասին
- 4) համար, ներքո, հանդեպ, հանձին

184. Տրված կապերից քանի՞սը կարող են դրվել կապվող բառից և՛ առաջ, և՛ հետո.

մասին, ի դեմս, միջև, հակառակ, առթիվ, անկախ, որպես, բացի, համար, մինչև:

- 1) վեցը
- 2) հինգը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

185. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
- 2) Այնպես էին խառնել ամեն ինչ, սատանան իսկ գլուխ չէր հանի:
- 3) Հենց գարունը բացվի, կտեղափոխվենք:
- 4) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:

186. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Մեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:
- 2) Իսկ Արարատյան դաշտում բերքահավաք է:
- 3) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:
- 4) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:

187. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ գործածություն կա:

- 1) Թեև շատ էր ծերացել Սաադին, այնուամենայնիվ նրա հոգին երազի աչքերով տեսնում էր աշխարհի չքնաղ իրերը:
- 2) Եթե մահը չլիներ, ապա չէին լինի հիվանդություն և ծերություն, քաղց ու կախաղան:
- 3) Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակն ու տարածությունը, սակայն ես հզոր եմ, անմահ:
- 4) Դրսում իրար պատահելիս ոչ միայն բարևում էինք, այլև ջերմ գրկախառնվում:

188. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ գործածություն կա:

- 1) Թե ես Արա Գեղեցիկն եմ, դու Նվարդս չես:
- 2) Ուզում եմ, որպեսզի միշտ ծաղկի իմ երկիրը:
- 3) Դու պետք է նրանց օգնեիր, այլ ոչ թե սպասեիր, որ նրանք դա խնդրեին:
- 4) Ես որ քեզ չհիշեմ, դու ինձ չես հիշի:

189. Ո՞ր շարքում են միայն ստորադասական շաղկապներ.

- 1) նույնպես, նայած թե, քան թե, որպեսզի
- 2) չնայած, որովհետև, մինչև, քանի որ
- 3) եթե, կամ թե, հենց, նախքան
- 4) սակայն, թեպետ, քանի որ, այնինչ

190. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) **Թե** Կարինե Զոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում Ասեք նրան Չարենցն ասավ մնաս բարով մնաս բարով:
- 2) Մոնան մանկության առվակի ջրերն էր կարոտել **թե** պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին Դիլան դային չիմացավ:
- 3) Լինել **թե** չլինել այս է խնդիրը:
- 4) Այս քամին է թափում աշնան չոր սաղարթը **Թե** օդի է թափվում իմ բնրած ուղեղին:

191. Ո՞ր տարբերակում ստորադաս նախադասությունը գլխավորին միացած չէ ստորադասական շաղկապով:

- 1) Ով եկել էր գյուղից հեռու, Նա թողել էր հողը խոնավ...
- 2) Իմաստուն խոսքեր սովորեցի ես, Որ հրապուրեմ գործքամբ մթին:
- 3) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար, Ջգալ, որ դու կաս և լինել հեռու:
- 4) Եթե սեր չկա, ինչի՞ համար Պիտի չարչարվեմ չար աշխարհում:

192. Շարքերից քանի՞սում համադասական շաղկապ կա:

- քանի որ, հենց, կամ, որպեսզի
- մինչդեռ, եթե, որովհետև, սակայն
- բայց, նախքան, չնայած, քան
- թեպետ, իսկ, թե, մինչև

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

193. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը վերաբերական:

- 1) **Ո՛չ** տրտունջ, **ո՛չ** մրմունջ սգավոր Հեռացի՛ր մոռացի՛ր ինձ հավետ:
- 2) **Ո՛չ**, չես կարող, ինձ չես կարող մոռանալ:
- 3) **Ոչ** իր մեղքով հայտնվել էր ծանր կացության մեջ:
- 4) **Ո՛չ** մի ծաղկով գարուն կգա, **ո՛չ** մի գույնով՝ ծիածան:

194. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի:
- 2) Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր:
- 3) Կտրիճ սիրտս գերի մնաց սև աչքերին, էլ ի՞նչ երգեմ:
- 4) Ա՛խ, ո՞ր էր թե գեթ մի աստղիկ ինձ ժպտար:

195. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Այցի՛ր, գոնե երագս բեր, գեթ երագով մուրագի
Ինձ այս գիշեր մենակ մի՛ թող թեկուզ այցով երագի:
- 2) Արի, եղբայ՛ր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն:
- 3) Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՛ն:
- 4) Ո՛նց է ժպտում իմ հոգին
Չարին, բարուն, ամենքին:

196. Ո՞ր նախադասության մեջ վերաբերականը պիտի տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ախր ես ինչպես վեր կենամ գնամ:
- 2) Բարձրացնում եմ բազուկդ ահա
Որպես ռխակալ օձն անապատի:
- 3) Հայրենիքը հիրավի մարդու մեծագույն սրբություններից է:
- 4) Միգուցե միասին կարողանանք հարցը լուծել:

197. Բառերից քանի՞սն են վերաբերականներ.

հիրավի, արդյոք, այո, դեռևս, թերևս, ահա, սուկ, այլ, ցավոք, գոնե:

- 1) ութը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) բոլորը

198. Ընդգծվածներից քանի՞սն են վերաբերականներ:

- **Արդյոք** ո՞ր ես դու ... Ա՛խ, **արդյոք** դու, որ
ճանապարհների հեռուն ես մաշում:
- Շողացին, ժպտացին, էլ չկան,
Էլ չկան պատրանքները սիրուն:
- Մի փրկություն կա միայն,
Լուկ մի ճանապարհ:
- Աշխարհից ես չեմ տրտնջում.
Չե՞ որ բոլորն են տանջվում:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

199. Շարքերից քանիսի՞նչ ոչ բոլոր բառերն են վերաբերական:

- ի դեպ, անտարակույս, ըստ երևույթին, չլինի թե
- երանի, ինչ խոսք, գոնե, ահավասիկ
- ապա, դժբախտաբար, բարեկամաբար, իբրև թե
- ով գիտի, իսկապես, հազիվ թե, հոգեպես

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

200. Բառերից քանի՞սն են հաստատական վերաբերական.

անշուշտ, թերևս, անտարակույս, անկասկած, ինչևիցե, այնուհանդերձ, միայն, արդյոք, ինչ խոսք, մինչև իսկ:

- 1) երկուսը
- 2) չորսը
- 3) վեցը
- 4) ութը

201. Բառերից քանի՞սն են կոչական ձայնարկություններ.

թո՛ւհ, տը՞զզ, հե՛յ, հարա՛յ, ա՛յ, վա՛խ, փիշի՛-փիշի՛, ո՛ւֆ, քը՛շշ, սլա՛հ, տո՛:

- 1) չորսը
- 2) վեցը
- 3) ութը
- 4) տասը

ԲԱԺԻՆ 4 ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Գաշաը խոր նիրհել էր:
- 2) Վա՛յ, ընկնում եմ:
- 3) Այժմ անձրևում է:
- 4) Սենյակում չաղմկե՛լ:

2. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ուշ գիշեր է:
- 2) Լույսը շուտով կբացվի:
- 3) Երեխաներ, մի՛ վազեք:
- 4) Վերջապես խախտվեց լռությունը:

3. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ինձ չեն հասկանում:
- 2) Անահիտը վախից կանգ առավ:
- 3) Սենք կապոցները վերցրինք:
- 4) Բոլորը գլուխ էին պահում:

4. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Զինվել ենք ժամանակին:
- 2) Վասակի դավաճանության հարցը վիճելի է:
- 3) Դիշտն այսօր դա է:
- 4) Հրամանը կատարված է:

5. Ո՞րը պարզ համառոտ նախադասություն չէ:

- 1) Նշմարվում էր ճշմարտությունը:
- 2) Սենք կոկորդ էինք պատռում:
- 3) Գտնվեց լուծումը:
- 4) Մշտապես դժգոհում է:

6. Ո՞րը պարզ համառոտ նախադասություն չէ:

- 1) Փաստն անտեսված է:
- 2) Գործը գլուխ եկավ:
- 3) Նոր հետևություններ արվեցին:
- 4) Կյանքը զարմանալի է:

7. Բաղադրիչ նախադասություններից քանի՞սն են համառոտ:

Մի պահ Ատոմը քարացավ, անկարող եղավ միանգամից ըմբռնել՝ ինչ կատարվեց, և, անշուշտ, կարկամեց, որովհետև զգաց, որ վիճակը անելանելի է:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) հինգը

8. Նախադասություններից քանի՞սն են համառոտ:

- Սրտապնդիչ էր նախարարի խոսքը:
- Սուրը չափտի բարձրանա մեզ վրա:
- Իրոք, կախարդական է բնությունը:
- Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

9. Նախադասություններից քանի՞սն են ընդարձակ:

- Կկոտորեն հայրենիքն ուրացողներին:
- Ուրեմն ելի՛ր, ժողովո՛ւրդ:
- Հասել է օրը կենաց ու մահու կռվի:
- Մենք ենք դուրս գալու թշնամու դեմ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

10. Բաղադրիչ նախադասություններից քանի՞սն են ընդարձակ:

Վարդանն զգում էր (1), որ ինքը հողապաշտ է (2), որովհետև հող հայրենին իր համար միայն հող չէր (3), և սարսափում էր(4), երբ հանկարծ մտածում էր (5), որ այն վտանգված է (6):

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) հինգը

11. Նախադասություններից քանի՞սն են պարզ:

- Նամակը տուն բերելով՝ մի քանի անգամ մանրազնին կարդացի՝ ամեն անգամ միտքս կենտրոնացնելով դասընկերներիցս որևիցե մեկի վրա:
- Որսկանի ձեռքից փախած, բայց կարեվեր խոցված՝ եղջերուն վայր էր ընկել:
- Հենց դա, համոզված եմ, եղավ մեր բաժանման հիմնական պատճառը:
- Լռելյայն կարողում էի նրա նամակը, ու իմ՝ անքնությունից կարմրած աչքերից գլոր-գլոր թափվում էր արտասուքը:

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) երկուսը
- 4) մեկը

12. Հետևյալ քառյակում քանի՞ բաղադրիչ նախադասություն կա:

*Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,
 Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
 Մարը եղավ կնքահայրս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
 Ու կնքողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:*

- 1) չորս
- 2) հինգ
- 3) վեց
- 4) ութ

13. Հետևյալ քառյակում քանի՞ բաղադրիչ նախադասություն կա:

*Ամեն անգամ Քո տվածից երբ մի բան ես Դու տանում,
 Ամեն անգամ երբ նայում եմ, թե ինչքա՞ն է դեռ մնում,
 Չարմանում եմ, թե ո՞վ Շոայլ, ինչքա՞ն շատ ես տվել ինձ,
 Ինչքա՞ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:*

- 1) հինգ
- 2) վեց
- 3) յոթ
- 4) ութ

14. Նախադասություններից ո՞րն է թերի:

- 1) Աշուն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
 Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ:
- 2) Մեզ է, անձրև է, մշուշ է
 Իմ այգում մերկ:
- 3) Ո՞վ կվառե ոսկեվառ
 Երազ ու հույս:
- 4) Եվ քաղցր է լինել քո կամքի գերին:

15. Ո՞ր նախադասությունն է անդեմ:

- 1) Չխմբվե՛լ, ցրվե՛լ:
- 2) Մինչև քեզ նեղություն չտաս, ուրիշին լավություն չես կարող անել:
- 3) Մարտի վերջին օրերն էին:
- 4) Քաշում են տնից, քաշում են դռնից,
 Ու չես իմանում՝ որ կողմը թռչես:

16. Ո՞ր նախադասությունն է անդեմ:

- 1) Լռություն կա Կաքավաբերդի գլխին:
- 2) Առարկե՞լ, չհավատա՞լ նրան:
- 3) Սարերում այս տարի վաղ ցրտեց:
- 4) Արմենին կանչում են վարչությունից:

17. Նախադասություններից քանի՞սն են անդեմ:

- Ի՞նչ հրաշալի աչքեր, ի՞նչ գրավիչ դեմք, բայց գունատ ու տխուր, ինչպես մարմարե անդրի:
- Ահա մեր գետը, մեր գուլալ գետը:
- Փողոցում լռություն էր ու թանձր խավար:
- Խմե՛լ, խմե՛լ, հագենա՛լ, կյա՛նք առնել...

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

18. Տրված հատվածներից քանիստ՞ում անդեմ նախադասություն կա:

- Այս ցուրտ երկրի անհայտում անհուն
Ընկնել, կորչել և ննջել հավետ:
- Նորից անձրև՝, մշո՛ւշ, ա՛մպ,
Թախի՛ծ անհուն, տխրա՛նք հեզ:
- Իմ խաղաղ երեկոն է հիմա
Մեղմալույս, և՛ տխուր, և՛ անուշ:
- Արդյոք կժպտա՞ս, լուսեղեն երագ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

19. Տրված հատվածներից քանիստ՞ում անվանական անդեմ նախադասություն կա:

- Անուժ ցավի ցուրտ կապար...
Մահացողի տխուր կյանք.
Անմխիթա՛ր, անսպա՛ռ
Վհատության հեկեկանք...
- Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման:
- Ոսկե տեսիլնե՛ր, անուրջների լո՛ւյս:
- Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

20. Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Վարդի մուրաբան պատրաստում են թեյի վարդից:
- 2) Կռվով քաշվել՝ աջակողմյան լեռնակիրճը:
- 3) Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ:
- 4) Ծխելն արգելվում է:

21. Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Երկու օր շարունակ անձրևում է:
- 2) Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
- 3) Մուրաբայի վարդը իր ցողունից առանձնացվում է թարմ վիճակում:
- 4) Ահա մեծ քաղաքի լքված ծայրամասերից մեկի թաղը:

22. Ո՞ր տարբերակում անենթակա նախադասություն կա:

- 1) Լռենք միայն մի մեղմող
Լռությունով ու հանգչենք:
- 2) Մութ է հոգիս հոգնաբեկ,
Թախիծով լի և անհույս:
- 3) Մռայլ գիշերն է լռում,
Խավար գիշերն ամենուր:
- 4) Միրեցի, յարս տարան,
Յարա տվին ու տարան:

23. Տրվածը ինչպիսի՞ր նախադասություն է:

*Սև գիշեր, և՛ հուշեր, և՛ խոհե՛ր անհամար,
Մոռացված երազներ, շուշաններ թառամած:*

- 1) թերի
- 2) անվանական անդեմ
- 3) բայական անդեմ
- 4) անենթակա

24. Տրվածը ինչպիսի՞ր նախադասություն է:

Ի՞նչ ես գազազում, իմ վիրավոր սիրտ:

- 1) բայական անդեմ
- 2) անենթակա
- 3) թերի
- 4) անվանական անդեմ

25. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Այդ հիշողությունները պեկոծում էին Գարեգինի **հոգին**:
- 2) Նրա **սիրտը** հաճելիորեն թրթռաց ինչ-որ քաղցր հիշողությունից:
- 3) Ասես հետմիջօրեի անդորրության մեջ անտառի խուլ **խշշուցն** եմ լսում:
- 4) Բերանքսիվայր ըմբռշխնում եմ գետի սառնահամ **ջուրը** և չեմ կշտանում:

26. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Դողողջ **ձեռքերը** ծնկներին դրած՝ խոսում էր ծերունական բարակ ձայնով:
- 2) Իրիկնանում է. քաղաքում կամաց-կամաց զարթնում է երեկոյան **աղմուկը**:
- 3) Իմ հպարտության առարկան վայելչագրության **տետրն** է:
- 4) Մի՞թե **ընկեր** կարող է համարվել նա, ով լքել է քեզ դժվար պահին:

27. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) **Տնօրեն** Հակոբյանի և այցելուի միջև սկսվեց մի հետաքրքիր բանավեճ:
- 2) Փոքրիկն անզգուշորեն կայավ սեղանին և **բաժակը** կտորեց:
- 3) Ապրել ազնիվ, աշխատել նվիրումով, օգտակար լինել մարդկանց. **սրանք** էին ավագ ընկերոջս կարգախոսները:
- 4) Կախարդական մի **շղթա** կա երկնքում
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու:

28. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Քո ոտքերի վրա դու կբերես **հետքեր**,
Ո՛վ գիտես, ինչպիսի՛ արահետների:
- 2) Եվ կոպերիդ ներքո շռայլությամբ վերջին
Արևը իր **բույրը** կվառնե:
- 3) Գնում ես դեպի **հեռուները** վսեմ:
- 4) Քո ռունգերից, քո սրտից, քո հետքերից հառնած՝
Մեզ կողջունեն **օրերդ**:

29. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Մենյակը լուսավորվեց՝ ի հայտ բերելով հինավուրց արվեստի նրբաճաշակ **զարդարանքները:**
- 2) Արդեն **ճրագալույց** էր, երբ իշխանը հասավ ամրոցի հարավարևմտյան դռանը:
- 3) Լինում էին **վայրկյաններ**, երբ նա ուզում էր հեռանալ, անհայտության մեջ մոռացվել:
- 4) Դա մի նեղիկ **սենյակ** էր, որտեղ խոնավության պատճառով ոչ մի վանական չէր ապրում:

30. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Ուրիշ բլբուլ կգա, կմտնի **քաղը:**
- 2) Իսկ ժամանակը՝ որպես հավերժական երգիչ, Կշռնջա անմահական **քառեր:**
- 3) Քսանամյա **որդին** շտապով ապրանքը դարակներից թափում էր մի տոպրակի վրա:
- 4) Երբ մտավ շուկա, խանութպանների եռուզեռում մի **անկարգություն** նկատեց:

31. Ո՞ր նախադասության ընդգծված բառը ենթակա չէ:

- 1) **Մա** արդեն խոցում էր նրա սիրտը:
- 2) Հաճի **մարդ** պահել էր հուզմունքը:
- 3) Վեր բարձրացրեց խոնարհած **գլուխը** և խելագարի պես նայեց շուրջը:
- 4) **Երկը** ներկայացնում է Առաջին համաշխարհային պատերազմի փոքր դրվագներից մեկը:

32. Ընդգծվածներից քանի՞սը ենթակա չեն:

- **Հայաստան** են ասում, Երկնքի համ ու բույրից Հարբում է հողը նորից:
- Գնամ **բնաշխարհն** իմ բարձրագմբեթ, Մտնեմ վիհավոր կիրճերը նրա:
- Ա՛խ, ինչքա՛ն **գոհեր** ենք տվել, Որ պահենք այս հողը մի բուռ:
- Գնամ մարդկանց մոտ իմ բնաշխարհի, **Որոնք** դեռ հողում արմատներ ունեն:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

33. Ո՞ր նախադասության մեջ գոյականի ուղղական հոլովով արտահայտված որոշիչ չկա:

- 1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շուկը մնաց, Եվ ծաղիկները այդ սուրբ շուկով իմ սիրտը լցրին:
- 2) Աստղերն են ժպտում լուսեղեն նագով, Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
- 3) Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով:
- 4) Կախարդ լուսնի հրապուրող շողի պես Դու ժպտացիր գուրգուրանքով սեթևեթ:

34. Ո՞ր տարրերակում ածականով արտահայտված ենթակա կա:

- 1) Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ,
Թե չլինեին ընկեր, բարեկամ:
- 2) Պառկել է ծառի սավերն անշունկ,
Մեջքին է ընկել թաց գետնի վրա:
Խեղճը կմրսի:
- 3) Մարգարեներ են բոլոր հասկերը,
Հասկը չի քնում, անքուն է հասկը ...
- 4) Եվ ոչինչ հարկավոր չէր ինձ,
Հերիք էր լինելդ:

35. Հատվածներից քանիստ՞ն դերանունով արտահայտված ենթակա կա:

- Անկասկածելի թիվը նշեցե՛ք այն կանոնների,
Ինչից մենք հաճախ հասունացել ենք:
- Ով մեզնից հաղթող դուրս գա, թող նա էլ իր հետ տանի աղջկան:
- Ի՞նչ է սպասում այս մոլորակին,
Ի՞նչ պատասխանես...
- Մարիամ, դու լսո՞ւմ ես,
Տեսնո՞ւմ ես, Մարիամ...

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) չորսում

36. Նախադասություններից քանիստ՞ն դերանունով արտահայտված ենթակա կա:

- Բոլորը, մեծ հաղթության լուրն առնելով, շտապում էին Դ-վին:
- Հեռվից նայողին այնպես էր թվում, թե ոչինչ չի պատահել այդ գյուղերին:
- Ընդհանուր ցնծության մեջ նրա հաղթության լուրը էլ ավելի բարձրացրեց ուրախության ալիքը:
- Մեկը ներս բերեց ոսկեգօծ աշտանակը և դրեց պերճաշուք պատվանդանի վրա:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

37. Նախադասություններից քանիստ՞ն դերբայով արտահայտված ենթակա կա:

- Նախորդ օրը սրահում կատարվածը բոլորին շփոթեցրել էր:
- Նրանք չիմացան, թե ինչու էր զայրացել պատերազմի աստվածը:
- Տախտակամածը ամբողջովին ծածկված էր ձկան թեփուկներով:
- Դաշտում կանգնածները դառն արտասուք էին թափում իրենց տիրոջ մահվան համար:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

38. Հատվածներից քանիստ՞ում դերբայով արտահայտված ենթակա կա:

- Պատիվդ պահող չկա,
Մասրենի՛, բարի՛ մասրենի:
- Տեսնես ո՞ւմ էր հարկավոր
Այսքան ապրելս:
- Երբ հերկածիս համար
Ինձ հատուցող չկա,
Էլ խոսյանն ու խութը
Ինչպե՞ս հերկեմ:
- Լռած զանգ է կյանքս,
Ես՝ ավերակ վանքս,
Էլ աղոթող չունեմ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

39. Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Նրա մոտ նստածը մանկահասակ, նազելի, սիրունատես երիտասարդ մի կին էր: *(ածական)*
- 2) Դրանք իրարից բոլորովին անջատված հայկական գավառներն էին: *(դերանուն)*
- 3) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին, անթափանց անտառները: *(գոյական)*
- 4) Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը: *(դերբայ)*

40. Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Ամեն ինչ դարձել է անցյալ: *(անորոշ դերանուն)*
- 2) Իմ տխուր հոգում ծագում է ոսկի
Ճաճանչը հուստ հարատև կյանքի: *(գոյական)*
- 3) Մանուկ պահելը ծանր է ավելի: *(անորոշ դերբայ)*
- 4) Անդարձ կորել է սրտիս խնդումը,
Թունոտ մի մեզ է իջել հոգում իմ: *(գոյական)*

41. Ո՞ր շարքի բոլոր դերանունները կարող են կատարել ենթակայի պաշտոն:

- 1) դուք, այսպես, սրանք, որը
- 2) դա, ոմն, ինքդ, ամենքը
- 3) նրանք, միմյանց, յուրաքանչյուրը, ես
- 4) սա, ով, ոչ ոք, ամեն մեկը

42. Ընդգծված նախադասություններից որո՞ւմ պարզ ստորոգյալ կա:

- 1) **Այդ երաժշտության համար նրա խելքը գնում էր:**
- 2) **Ես արդեն արթուն էի,** և զգացի, թե ինչպես մայրս ծածկեց ինձ վերմակով:
- 3) Պարզվեց, որ **հայրս ու Հակոբը մանկության ընկերներ էին:**
- 4) **Աշխարհը շատ է անարդար,** և մենք չենք կարող գապել մեր ցավը:

43. Ո՞ր նախադասության մեջ պարզ ստորոգյալ չկա:

- 1) Երբ տնօրենը ներս մտավ, ոտքի կանգնեցինք ու մեր կեցվածքով մեղմեցինք նրա զայրույթը:
- 2) Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի մարտիկների սխրանքները պիտի ոգեշնչեն մեր սերունդներին այնքան ժամանակ, քանի դեռ մեր սրտում մխում է հայոց ցեղասպանության ցավը:
- 3) Թուրքական պատմագրությունը վերաշարադրում է անցյալը, ծառայեցնում իր տերության շահերին:
- 4) Հայրը շատ ուրախ էր, որ իր դուստրը երջանիկ է:

44. Նշվածներից քանի՞սը կարող են գործածվել որպես պարզ ստորոգյալ.

կերպզեմ, գայիս ենք, բարձրանամ, պիտի փակեն, հաղորդող է, կհամոզվես, տալիս է, մի՛ աղոթեք, շարունակելու է, շնջաց:

- 1) հինգը
- 2) յոթը
- 3) ութը
- 4) ինը

45. Հատվածներից քանիստ՞ն է պարզ ստորոգյալը բայի բաղադրյալ ժամանակաձևով արտահայտված:

- Գետնով տան ինձ, թե վեր թոցնեն, Իմ մշտական տեղում եմ ես:
- Օվկիանոսները ելնում են ափից Եվ պատառոտում իրենց անխնա:
- Այստեղ է լացել իմ մայրը Մորմոքը և իր օրորը:
- Որպես արքան այն՝ մանուկ Արան, Չեմ դավաճանի իմ Նվարդին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

46. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Հեռու ես, անհաս, իմ լուսե՛ր երազ:
- 2) Ծաղիկներն ահա քնքուշ փակվեցին, Բացվեցին երկնի ծաղիկներն անհաս:
- 3) Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցե՛ք, Որ խաղաղ ու հանդարտ մահանան:
- 4) Նորից կթողնեն քաղաքն աղմկոտ Ու ճամփա կընկնեն հավետ միայնակ:

47. Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Եվ չափազանց զգո՛ւյշ եմ ես, Նույնիսկ վախկոտ:
- 2) Սիրում են նրանք իրենց հայրենիքի չքնաղ բնությունը:
- 3) Մենք ականջալուր էինք մեր մեծերի իմաստուն գրույցին:
- 4) Այդ պահին մենք հպարտ էինք ու չէինք կարողանում զսպել մեր հիացմունքը:

48. Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Նրա համար թանկ էին ընկերոջ դեմքը, ձայնն ու քայլածքը, անգամ սովորություններն ու բնավորությունը:
- 2) Ասում էր, որ արդեն ուրախ է և հանգիստ:
- 3) Նա կարոտ էր բարի խոսքի, ջերմ վերաբերմունքի և արժանի էր գնահատվելու:
- 4) Վերջապես ձեռք բերեցինք նոր դասագրքերը և պիտի բարեխղճորեն պատրաստվենք քննություններին:

49. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Դրանցից մի քանիսի կեղևը շատ կարծր էր, իսկ երկուսինը՝ ուռած:
- 2) Ինքը կիմանաս այդ ամենը, երբ ծնողներիդ կտակած կարողությունը ձեռք բերես:
- 3) Մենակ էի ես,
Ինձ հետ էիր դու:
- 4) Իմ հիմնական գործն այսուհետև բոլորին լսելն է ու նրանց ցանկությունները կատարելը:

50. Ստորոգելին ի՞նչ խոսքի մասով է արտահայտված:

Ջրվեժն օրնիբուն անբուն է:

- 1) բայով
- 2) գոյականով
- 3) դերանունով
- 4) ածականով

51. Տարբերակներից քանիստ՞ում գոյականի ուղղական հոլովով դրված ստորոգելի կա:

- Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան աղամանդներով, շքեղ գինդերով:
- Մենությունն է իմ սերը հիմա, երկինքն աստղաբեր՝ վրանս հայրական:
- Եվ քղանցքներից կախ էին ընկնում և աչքերի մեջ Աբու-Լալայի Շադ էին տալիս բուռերով փոշի:
- Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ, ազգեր, սերունդներ՝ անցնող քարավան:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

52. Ո՞ր տարբերակում է ստորոգելիի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Աչքերդ կապույտ են
Իմ Վանա ծովի պես: *(ածական)*
- 2) Մենք բոլորս, բոլորս
Մանուկներ ենք որք: *(որոշյալ դերանուն)*
- 3) Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հեռու: *(հարակատար դերբայ)*
- 4) Միևնույն են ինձ Հյուսիս թե Հարավ,
Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում: *(ցուցական դերանուն)*

53. Ընդգծվածներից քանի՞սն են գոյականական անդամի լրացումներ:

- **Աշնանամուտի** ջրերը **բարակ**
Նորից մասուր են բերում սարերից:
- **Իրար** շալակած իջնում են սարից
Խուլ, խորհրդավոր, **մթնած** սարերը:
- Գազանների մոտ **հացի** կնստեմ, ողջույնը կառնեմ **բորենիների**:
- Ելավ քաջ Գավիթ՝ **իշխան** Սասունա,
Կռիվ խոյացավ ի Մարա վրա:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) հինգը
- 4) վեցը

54. Ո՞ր նախադասության մեջ առարկայի հատկանիշ ցույց տվող դերանուն կա:

- 1) Արդյոք որտե՞ղ պիտի հանգչի
Գլուխս անտուն, քափառական:
- 2) Իրար գիրկ ընկան անհուն կարոտով
Եվ համբուրվեցին երկար ու երկար:
- 3) Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նագով են փակվում:
- 4) Անձրևի նման լալիս են անվերջ
Այն հնչյունները մեղմ ու միաձայն
Պատի հետևում և իմ հոգու մեջ:

55. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայով արտահայտված որոշիչ կա:

- 1) Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե հավքը լագուրի վրա միայնակ սահող ամպի կտորի հետ է խաղում:
- 2) Կարծես սյունի վրայից նայողը Անդուն չէր, այլ անմարմին մի խրտվիլակ:
- 3) Ծրագի շուրջը նստողների սովերները թրթռում էին պատերի վրա:
- 4) Պատմագիրը նայեց հաղթողներին, որոնց փառքի մասին առասպելներ էր հորինել:

56. Տարբերակներից որո՞ւմ որոշիչ կա:

- 1) մեղմորեն օրորել
- 2) հանդարտ խոսել
- 3) այդչափ վազել
- 4) այնքան կարոտ

57. Ընդգծվածներից ո՞րն է որոշիչ:

- 1) **Մեղմ** ու սիրագին ժպտում էր նա ինձ
Օտար կողմերում, այն ճամփի վրա:
- 2) **Դժկամ** նայում են ժայռերը խոժոռ,
Տխուր խաղում են ալիքները ժիր:
- 3) Ես կգամ, երբ դու կլինես **տրտում**,
Երբ երազներդ հավետ կմեռնեն:
- 4) Կանգնած եմ նորից **ահեղ** անտառում
Մութ ուղիների բաժանումի մոտ:

58. Ո՞ր նախադասության մեջ գործիական հոլովով արտահայտված որոշիչ կա:

- 1) Այդ թագավորի օրոք են կատարվել նման վայրագություններ:
- 2) Նա մեծ համբերությամբ էր լսում յուրաքանչյուրին և իր բարի խորհուրդները տալիս:
- 3) Նա մեծ ախորժակով էր ուտում բրնձով փլավը:
- 4) Կամրջով անցնելիս նա սիրում էր հետևել ջրերի խաղաղ ընթացքին:

59. Ո՞ր նախադասության մեջ թվականով արտահայտված որոշիչ կա:

- 1) Տասնյակ հազարավոր մարդիկ էին խմբվել ամբողջ շուրջը:
- 2) Մեր հավաքականի եռակի չեմպիոնի ոտքը վնասվել էր:
- 3) Առաջին մրցանակը ստացավ տարիքով ամենափոքրը:
- 4) Մենք երկուսով կարողացանք հաղթահարել այդ դժվարությունը:

60. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված որոշիչ կա:

- 1) Ջմրուխտյա երգեր, երազներ շքեղ
Գարնան վարդի հետ եկան, գնացին:
- 2) Է՛յ դու, ջահել, հպա՛րտ հասակ,
Անցար ոսկի ամպի պես:
- 3) Այս ձորերում ամեն ինչից
Օրորոցի հոտ է գալիս:
- 4) Ի՞նչ ես գազազում, իմ վիրավո՛ր սիրտ,
Որ գազազում ես, ի՞նչ պիտի անես:

61. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված որոշիչ կա:

- 1) Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
- 2) Կմոռանամ հեռվի աղմուկը ահեղ,
Կզգամ համբույրը ուրիշ օրերի:
- 3) Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան:
- 4) Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լույսեր դժգունակ:

62. Նախադասություններից քանիստ՞ում դերանունով արտահայտված որոշիչ կա:

- Նա մի մարդու հանդիպեց, որը ճանաչել էր իր հորը:
- Հանկարծ նկատեց, որ նույն էջը կարդում է չորրորդ անգամ:
- Նման մարդու հետ չէր կարելի այդպես վարվել:
- Նա իրեն այդպես չէր դրսևորի այլ հանգամանքներում:

- 1) երկուսում
- 2) չորսում
- 3) մեկում
- 4) երեքում

63. Ո՞ր շարքի բոլոր դերանունները կարող են կատարել որոշիչի պաշտոն:

- 1) ամեն, այս, ինչպիսի, ով
- 2) ոչ մի, բոլոր, ոմն, մենք
- 3) մյուս, ոչ մի, սույն, ամեն
- 4) սա, այդպիսի, միևնույն, ողջ

64. Ո՞ր շարքի դերանուններից ոչ մեկը չի կարող կատարել որոշիչ պաշտոն:

- 1) սա, ոչ որ, ինքս, երբ
- 2) դու, որ, ինչպես, ովքեր
- 3) որքան, երբևէ, իրենք, որոշ
- 4) այլ, ամենքը, այդպես, ով

65. Ո՞ր նախադասության մեջ է անորոշ դերբայը որոշիչ:

- 1) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար...
- 2) Այդ քաղաքում այլևս տեսնելու բան չկար:
- 3) Մահվան մասին մտածելու համար ժամանակ չկա:
- 4) Գալիս էին իրենց հարգանքը մատուցելու հոբելյարին:

66. Ո՞ր դերբայը նախադասության մեջ չի կարող կիրառվել որպես որոշիչ:

- 1) հարակատարը
- 2) համակատարը
- 3) անորոշը
- 4) ենթակայականը

67. Հատվածներից քանիստ՞ում դերբայով արտահայտված որոշիչ կա:

- Չարտասանված տխուր խոսքեր,
Որ դողում եք անպատասխան:
- Ընդմիջտ օրհնեցի անհատակ ուղին,
Ուր փարոսում ես դու, քաղցր պատրանք:
- Հիվանդ քնքշությանը երկինք է պարզում
Մեռնող ծաղիկը իր բույրը վերջին:
- Կազմ ու պատրաստ սպասում են
Մոտիկ ժամին մրցության:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

68. Հատվածներից քանիստ՞ում հարակատար դերբայով արտահայտված որոշիչ կա:

- Այս եղած-չեղած մեղաց աշխարհում,
Հնուց իր ուղին շեղած աշխարհում,
Իմաստունների թիվն այնքան է շատ,
Որ իմաստությունն էլ իմաստ չունի:
- Կռունկներ՝, ո՞ր եք գնում,
Ինձ թողած, այդ ո՞ր, կռունկներ:
- Մենք իրար աչքով արինք,
Շիկնեցինք, մնացինք շիկնած:
- Ախ քաշեմ, ավաղ կանչեմ
Փուչ անցած օրերիս համար:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

69. Հատվածներից քանիստ՞ն ենթակայական դերբայով արտահայտված որոշիչ կա:

- Մի լո՛յս բերեք հոգնած ու հեզ
Ճամփա պահող ճրագներից:
- Երբ հերկածիս համար
Ինձ հատուցող չկա,
Էլ խոսանն ու խութը
Ինչպե՞ս հերկեմ:
- Նստեցե՛ք հով անեմ շոգին,
Մրգերս քաղեցե՛ք մեկ-մեկ,
Տնկողիս ողորմի՛ տվեք:
- Տեսնես ի՞նչ էին ասում իրար
Մեռնող արևը սարերն ի վեր
Եվ ճերմակ մութը ձորերն ի վար:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

70. Ո՞ր տարբերակում բառակապակցությամբ արտահայտված որոշիչ կա:

- 1) Վայում է քամին. ցուրտ, ձմեռնամուտ,
Չոր տերևները շուրջս է դիզում:
- 2) Հայրենի գետի գմբուխտ ավերին
Մեր հին տնակն է կքել մենավոր:
- 3) Խոսեցին անցած-գնացած օրերի մասին,
Ապա քուն մտան անհոգ, բախտավոր:
- 4) Հուր-հավքերից՝ թևերն արծաթ,
Ինձ կպատմեն ոսկի հեքիաթ:

71. Ընդգծվածներից ո՞րն է հատկացուցիչ:

- 1) Միայն հայ վանականն էր, որ առանց **ծածկոցի** ամբողջ գիշեր պայքարել էր ալիքների դեմ:
- 2) Ծերունին ասես **նավի** հետ տարուբերվում էր մտքերի ծովում:
- 3) Հիվանդն աչքերը բացեց և իր առջև տեսավ մի անծանոթ **երիտասարդի**:
- 4) **Մոմի** թրթռուն լույսը դեպի իրեն ձգեց ասես հենարան փնտրող նրա հայացքը:

72. Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ չկա:

- 1) Նրան և ընտանիքին զարդարում էր առաքինի լինելը:
- 2) Կաղնի տնկելիս պապը երևի պատկերացրել էր դրա այժմյան վեհությունն ու գեղեցկությունը:
- 3) Ծառի տակ հավաքվածները քննարկում էին այդ օրվա իրադարձությունները:
- 4) Դու պիտի հնչես, հնչես հաղթական, Իմ հի՛ն հայ լեզու՝ բարձր ու սրտաբուխ:

73. Ընդգծված բառերից քանի՞սն են հատկացուցիչ:

- Հիշյալ լեռների հսկայական **շրջանակի** մեջ երևում էր ընդարձակ դաշտավայրը:
- Բոլորի հայացքներն իսկույն շրջվեցին **պատանի** երաժշտի կողմը, որի հայտնությունը չափազանց անսպասելի էր:
- **Լոտոսների** առէջներում մարգարիտներ էին ցոլում:
- **Չեր** ակունքներն են գտել ժեռ քարերի արանքում:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

74. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված հատկացուցիչ կա:

- 1) Ողջ հին աշխարհը նախատեսել էր նրա գալուստը:
- 2) Սպասողական լռությունը խզող այդ դեղձանիկների աշխույժ դայլայլը լռեց հյուրերի ոտնաձայներից:
- 3) Սրբազանի բացման խոսքը բոլոր հավաքվածների սրտերը լցրեց հուզմունքով:
- 4) Արծաթյա գավաթների լիահնչյուն ընդհարումները խլացնում էին խոսակցության ձայները:

75. Ո՞ր նախադասության մեջ դերբայով արտահայտված հատկացուցիչ կա:

- 1) Ամրոցի մատույցներին հասնողների ականջներին հասան ինչ-որ տարօրինակ ձայներ:
- 2) Նրանց շփումները հարևան մշակույթների հետ բազմապատկվում էին օրեցօր:
- 3) Պատմության ամենից լուսաճաճանչ մտքի հնոցում ծնված հոմերոսյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են:
- 4) Վերջապես նրա հայացքը կանգ առավ գրառումների քսանյոթերորդ էջի պարբերության վրա:

76. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայով արտահայտված հատկացուցիչ կա:

- 1) Իմ հեռավոր, հեռու սարահովիտ,
Երգս ոտքերն ընկներ արարողիդ:
- 2) Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ
Լույսի խոտուտից զարթնած սարերը:
- 3) Ով գնաց, գնաց, էլ ետ չի գալու,
Եկողներին էլ խորհուրդ չեն տալու
Փնտրել անհնարն ու անկարելին:
- 4) Ավա՛ղ, ինչո՞ւ նույնն է նաև
Մեզ բաժանող ամբարտակը:

77. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Շեներն ու գյուղակներն իրար միացնող խճողված ճանապարհների հազիվ ընդգծված եզրերին քամին կուտակել էր ծիածանի բոլոր գույները:
- 2) Թափված տերևները մայրամուտին տեղ-տեղ կարմրին էին տալիս թվում էր կրակներ էին վառվում մրգաթափ դաշտում բլուրների վրա:
- 3) Առվակների ոլորքով կանգնած բարդիները մեղմ օրորվում էին ինչպես խմբապարի հավաքված աղջիկներ:
- 4) Նրա իմ վաղեմի ծանոթի հետ իջևանել էի երկրաբանների վրանում:

78. Նախադասություններից քանիստ՞ն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- Հագրոն առավ իր միակ հարազատին աղջկան և քարայծի արահետներով հոգնած գնաց հարավի կողմը:
- Հարևան կտուրների վրայից տների պատշգամբներից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը:
- Մեր գյուղի մասին խոսելիս այժմ էլ օրերի մշուշից ելնում է իմ առջև մեր հին տունը:
- Ահա մեր գետը մեր գուլալ գետը կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ հաշվել:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

79. Ո՞ր նախադասության մեջ բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ծերունի մի դերվիշ ճակատն արևատ եկավ որ սփինքսից հարցումներ անի:
- 2) Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
- 3) Այս գեղգեղանքը սիրավատ սրտի մի ամբողջ հեքիաթ էր մի դյուբական հեքիաթ ծաղիկների բույրով ներդաշնակված:
- 4) Մի աղջիկ իր ընկերուհիների հետ անցավ իբրև մի թարմագեղ գարուն:

80. Նախադասություններից քանիստ՞ն բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- Այդ մի մատղաշ ու խարտյաշ եղնիկ էր խորունկ սև ու ջինջ աչքերով նուրբ թարթիչներով եղնիկ:
- Մեկ-մեկ ուշադիր նայում էր սարերին հեռու անտառներով փաթաթված:
- Եղնիկը գիտեր որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխան ծնվել է այդ հեռու անտառներում:
- Երբ գրկում էի նրան այդ նագելի էակին նրա վճիտ աչքերի մեջ տեսնում էի մի թախծալի կարոտ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

81. Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ուրախանում էր իբրև խաղով տարված մի երեխա սակայն հոգու խորքում անհուսության ստվերներն էին խտացած:
- 2) Շշմջում էին մարինջները որպես թե կանանց մետաքսե քղանցքների սարսուռները լինեին:
- 3) Կայսրը որպես երկնքի որդի հավակնում էր կարծել թե իրավունք ուներ տիրելու ինչպես մարդկային տարերքին այնպես էլ բնությանը:
- 4) Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:

82. Ընդգծվածներից ո՞րը բայական անդամի լրացում չէ:

- 1) Բայց հուշերիս մեջ նայում ինձ **դարձյալ**,
Ժպտում եմ **դարձյալ** աչքերը քո ջինջ:
- 2) Ու ես չասացի **ոչ ոքի** ոչինչ,
Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ:
- 3) Դակատագիրն ինձ շարտեց հարավ,
Իսկ **քո** երազը քեզ հյուսիս տարավ:
- 4) Ուղեկցում է ահր մահվան
Մեզ ծննդյան պահից:

83. Ո՞ր տարբերակում բայական անդամի՞ դերանվամբ արտահայտված լրացում չկա:

- 1) Որտե՞ղ որոնեմ երջանկություն սուտ
Եվ ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:
- 2) Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր
Խոսքերով ինձ մի՛ դյութեք:
- 3) Որքան էլ գիշերն ահավոր իջնի,
Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դնելու,
Հարազատ հող ես չեմ գտնելու:
- 4) Ո՞ր երկրի սրտում թախի՞ծ կա այնքան,
Եվ այնքան ներում՝ ո՞ր երկրի սրտում:

84. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ուղիղ խնդիր:

- 1) Մենք հոգնեցինք **ամենքին** անտեղի սպասելուց:
- 2) **Լիճն** ասես հրդեհվել էր վերջալույսի շողերից:
- 3) Մենք լսեցինք Կոմիտասի մի քանի **ստեղծագործություններ**:
- 4) Վերջապես մեծ դժվարությամբ հասանք **տուն**:

85. Ո՞ր տարբերակում ընդգծվածը ուղիղ խնդիր չէ:

- 1) Եվ հոգիս **աչքերը** սրբում,
Մթափված կանգնում է կողքիս:
- 2) Ձեռքերիս հետ նրա մեջ
Միրտս էլ լվանամ,
Առաջվա պես մաքրվեմ և ազնվանամ:
- 3) Երբ **Հայաստան** են ասում,
Քարն արթնանում է քնից:
- 4) Եվ **աստղերը** երկնքից
Ականջիդ քան են ասում:

86. Տարբերակներից քանիստ՞ում դերանունով արտահայտված ուղիղ խնդիր կա:

- Գնամ նրանց մոտ, խառնվեմ նրանց,
Մարդահոտ առնեմ, սիրեմ բոլորին:
- Ա՛խ, ինչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր են անում,
Որ միլիոն տարվա մեր ծուխը կտրեն:
- Թե՛ ձեզ չլքենք ու մեզ հավատանք,
Կչքվի ստվերն այս անելության:
- Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը
Հասկի ստվերում ննջած մրջյունը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

87. Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:

- 1) Նրանք մի պահ լուռ անցնում էին կաղնու և մասրենու թփերով եզերված սայլուղին:
- 2) Անասուններին շինականները ստիպված ջրում էին տանը:
- 3) Ժայռի կատարին փրթում է ճերմակազգեստ մասրենին:
- 4) Նա սկսեց հետևել խանութպանի ձեռքի շարժումներին:

88. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված հանգման անուղղակի խնդիր կա:

- 1) Հեկեկում է այդ երգը այնտեղից
Եվ ձուլվում է արդեն իմ հոգուն:
- 2) Նա ինձ մոտեցավ քնքուշ,
Փայփայող սիրո խոսքերով:
- 3) Եվ աղոթեց նա հիվանդ որդուն,
Օրհնեց երկնային ուղիս դժվար:
- 4) Քանի դեռ կա այսպիսի
Մաքուր մի գետակ,
Ձեր մաքրության հանդեսին
Պիտի հավատար:

89. Ո՞ր տարրերակում վերաբերության անուղղակի խնդիր կա:

- 1) Օվկիանոսները ելնում են ափից
Եվ պատառոտում իրենց անխնա:
- 2) Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու,
Ցավերը ինձնից դեռ հեռու էին:
- 3) Պատմում են անցած արհավիրքներից,
Պատմում են գալիք հարսանիքներից:
- 4) Իրենց անգիր պատմություններով
Ինձ անէության սարսափից խլում
Ու հանձնում են ինձ:

90. Ո՞ր տարրերակում պարագա չկա:

- 1) Որտեղի՞ց եկանք և ո՞ր ենք գնում,
Երեկ չկայինք, վաղը չենք լինի:
- 2) Ինչո՞ւ ապշած են, լճակ,
Ու չեն խայտար քո այակք:
- 3) Եվ ծվլլաց աշխարհով մեկ
Լույսը առավոտի:
- 4) Օրը գնաց հավասարվեց
Հազար տարվա մեռելների:

91. Ո՞ր շարքի բոլոր դերանունները կարող են կատարել պարագայի պաշտոն:

- 1) որքան, այդպես, երբ, դրանք
- 2) այդչափ, ինչպես, երբևէ, ոչ ոք
- 3) այսքան, ինչո՞ւ, այնպես, ուր
- 4) այստեղ, նույնքան, ինչպես, ոչ մի

92. Ո՞ր շարքի դերանուններից ոչ մեկը չի կարող կատարել պարագայի պաշտոն:

- 1) սա, այսպիսի, դուք, այսքան
- 2) բոլոր, ոչինչ, ինչպես, մեկը
- 3) ուր, մյուս, նույնպիսի, նա
- 4) որոշ, ոչ մի, ամբողջ, ամեն ոք

93. Ո՞ր նախադասության մեջ ձևի պարագա կա:

- 1) Ասում են, թե միանգամից կյանքում ոչինչ չի կատարվում:
- 2) Փերիները սարի գլխին հավաքվեցին գիշերով:
- 3) Պիտի նրանց հոգու համար
Մոմեր վառեմ ոսկեղեղին:
- 4) Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն
Պատուհանիս առաջ երկար ժամեր...

94. Հատվածներից քանիստ՞ում մակբայով արտահայտված պարագա կա:

- Կարոտներս էլ վեր են կենում,
Խումբ-խումբ գնում, նստոտում են:
- Միշտ ինձ կհիշեն,
Երբ մտնեն անտառ:
- Վաղուց է փախել աշխարհն իր հունից,
Վաղուց է խրտնել ինքն իր անունից:
- Ես գնամ նորից ինձ որոնելու
Ճրագով, մոմով, կայծակի լույսով:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

95. Ո՞ր տարբերակում կապային կառույցով արտահայտված պարագա կա:

- 1) Թող գեթ մի օր ապրեի,
Բայց ապրեի ջրի պես:
- 2) Այնպես են գալիս, այնպես են գնում,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:
- 3) Էլ կածանը քեզ չի տանի
Աղոթարան սարը:
- 4) Իսկ երագները աչք էին փակում,
Երբ որ լուսաստղը աչքը բացում էր:

96. Ո՞ր տարբերակում է սխալ նշված պարագայի տեսակը:

- 1) Թռչելի թրջված հավքի հետևից
Եվ չբռնելի մինչև իրիկուն: *(ժամանակի պարագա)*
- 2) Քթիցս կարծես ծուխ է բարձրանում,
Ինչո՞ւ է կորածն այսքան քաղցրանում: *(նպատակի պարագա)*
- 3) Իմ ներբանները նվում են հիմա,
Ու ես տխրում եմ **չափից ավելի**: *(չափի պարագա)*
- 4) Հրամայե՛ք, որ քարանամ
Եվ **ձեզ նման** բոլոր, բոլոր
Մերունդներին ընկերանամ: *(ձևի պարագա)*

97. Ընդգծվածներից ո՞րը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) **Մի ակնթաթք չանցած** հիվանդը կարկառեց ձեռքերը և գրկեց աստվածուհու ծնկները:
- 2) Ադամը որ հեռվում կանգնած հափշտակված նայում էր Լիլիթին **սիրտ առնելով** մոտեցավ նրան:
- 3) Գնաց լճափ, թափառեց պուրակներում **պրպտելով ամեն թուփ ու մացառ**:
- 4) Մինչդեռ Ադամը շնչասպառ վազում է **շուտով հասնելու գեղեցիկ քարերի ճորը**:

98. Նախադասություններից որո՞ւմ դերբայական դարձված չկա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Տիեզերքի ամենատես աչքից վատ արարքներդ ծածկելու համար չես կարող պատսպարվել ոչ ծովի անդունդներում ոչ լեռների խորին վիհերում:
- 2) Իմաստունը նորից իջավ մարդկանց մեջ ճշմարտություն պատգամելու աշխարհին:
- 3) Զօրուգիշեր երկար ճանապարհ կտրելով հոգնած հասավ նա Բուխարայի պարիսպներին:
- 4) Բանաստեղծը տեսավ թե ինչպես է ժողովուրդը գլուխ տալով ողջունում մեծատունին:

99. Նախադասություններից որո՞ւմ միջադաս դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նայում էր փողոցին պատշգամբի բազրիքին կոթնած և հանկարծ նկատեց մոտեցող կառքը:
- 2) Չիբուխյուլից զարտուղի ճանապարհով փախուստ տալով Կամսարյանը հապճեպ հասավ Թիֆլիս:
- 3) Նա գրում էր երկար անշտապ մոռացած դեպի լուսաբաց թեքվող խավարի մասին այլևս չլսելով գիշերային ձայների արձագանքը:
- 4) Տղան կանգնում էր ժայռի գլխին պարսատիկը թափով պտտում և քարը զարկված ագռավի պես թալտալով ընկնում էր ձորը:

100. Տրված նախադասության մեջ քանի՞ դերբայական դարձված կա (նախադասությունը կետադրված չէ):

Անակնկալի գալով մի պահ ընկրկում ենք բայց իսկույն ևեթ կառչելով քարերից ու մացառներից ոգի առնելով մղվում ենք առաջ երգելով ու կատակելով:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

101. Ընդգծված դերբայական դարձվածն ի՞նչ պաշտոն է կատարում:

Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի՝ հինգական զույգ որմնասյուներով՝ հաստատված ամուր պատվանդանի վրա:

- 1) ձևի պարագայի
- 2) որոշչի
- 3) պատճառի պարագայի
- 4) հիմունքի պարագայի

102. Ընդգծված դերբայական դարձվածն ի՞նչ պաշտոն է կատարում:

Հասնելով Բերդասարի ստորոտին՝ իշխանը դանդաղեցրեց արագ սլացող ձիերի ընթացքը:

- 1) ձևի պարագայի
- 2) պատճառի պարագայի
- 3) ժամանակի պարագայի
- 4) նպատակի պարագայի

103. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:

Հարսանիքների ժամանակ նորելուկ ու նշանավոր աշուղների հետ մրցում էին նաև տեղացիների մեջ հայտնի հորովել երգողները:

- 1) որոշիչ
- 2) ուղիղ խնդիր
- 3) ստորոգելի
- 4) ենթակա

104. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:

Շիրվանզադեի բնավորության բացասական գծերից մեկը ուրիշ գրողների արժանիքները ճանաչելն էր:

- 1) պատճառի պարագա
- 2) որոշիչ
- 3) ենթակա
- 4) ստորոգելի

105. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:

Այս գործիչը Հայաստանի արվեստի օրերի առիթով Մոսկվա այցելածների խմբում էր:

- 1) հատկացուցիչ
- 2) հանգման անուղղակի խնդիր
- 3) ստորոգելի
- 4) որոշիչ

106. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:

Ռուբեն Չարյանը օր առ օր գրի էր առել վերջին քառասուն տարում մեր արվեստի մեծերից տեսածն ու լսածը:

- 1) ենթակա
- 2) ուղիղ խնդիր
- 3) որոշիչ
- 4) հատկացուցիչ

107. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:

Սևադա իշխանն իր ուրախությունը դստեր բոլոր իղձերը կատարելն էր համարում:

- 1) ենթակա
- 2) ստորոգելի
- 3) ուղիղ խնդիր
- 4) որոշիչ

108. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:

Ամեն երեկո ծերունիները նստում էին տանիքներին և պատմում հին-հին քաջերից:

- 1) անջատման անուղղակի խնդիր
- 2) ներգործող անուղղակի խնդիր
- 3) վերաբերության անուղղակի խնդիր
- 4) պատճառի պարագա

109. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:

*Վայրի աղավնին՝ կուրծքը վիրավոր,
Ընկել էր մենակ աղբյուրի եզրին:*

- 1) բուն բացահայտիչ
- 2) հատկացուցիչ
- 3) որոշիչ
- 4) մասնական բացահայտիչ

110. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:

Մեր՝ երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից, ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:

- 1) մասնական բացահայտիչ
- 2) հատկացուցիչ
- 3) որոշիչ
- 4) բուն բացահայտիչ

111. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է (նախադասությունը կետադրված չէ):

Մեր միտքը կիզոող արեգակի առաջ հալչում է, ցնդում որպես անձրևի կաթիլ:

- 1) բուն բացահայտիչ
- 2) որոշիչ
- 3) ձևի պարագա
- 4) մասնական բացահայտիչ

112. Ընդգծված ածականը նախադասության ի՞նչ անդամ է:

*Հատակից քար ես հանում,
Մաքուր է այնքան,
Քարից բուրմունք ես առնում
Կարմրախայտ ձկան:*

- 1) որոշիչ
- 2) ձևի պարագա
- 3) ստորոգելի
- 4) ենթակա

113. Բացառական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:

*Եվ հառաչեցին լեռները ցավից,
Անեծք ժայթքեցին հրաբուխներով:*

- 1) ներգործող անուղղակի խնդիր
- 2) անջատման անուղղակի խնդիր
- 3) պատճառի պարագա
- 4) վերաբերության անուղղակի խնդիր

114. Գործիական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:

*Համր քայլերով դարերն են անցնում,
Արտույտը երգում է իր գովքը գարնան:*

- 1) ժամանակի պարագա
- 2) ներգործող անուղղակի խնդիր
- 3) միասնության անուղղակի խնդիր
- 4) ձևի պարագա

115. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է անորոշ դերբայը:

*Ես գնամ նորից՝ ինձ որոնելու
Ճրագով, մոմով, կայծակի լույսով:*

- 1) որոշիչ
- 2) հատկացուցիչ
- 3) նպատակի պարագա
- 4) հանգման անուղղակի խնդիր

116. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:

*Վհաստ սոսկումի տանջանքով կզգաս,
Որ որոնածդ բնավ չես գտնի:*

- 1) ենթակա
- 2) հանգման խնդիր
- 3) ստորոգելի
- 4) ուղիղ խնդիր

117. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:

*Հոգնած նայում եմ ճամփաներին,
Մերմնացանները չդարձան տուն:*

- 1) ձևի պարագա
- 2) ստորոգելի
- 3) որոշիչ
- 4) պատճառի պարագա

118. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է ենթակայական դերբայը:

*Մեզ սիրողներին մենք մինչև անգամ
Չենք էլ կամենում բարի լույս ասել:*

- 1) ուղիղ խնդիր
- 2) վերաբերության անուղղակի խնդիր
- 3) հանգման անուղղակի խնդիր
- 4) հատկացուցիչ

119. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է ենթակայական դերբայը:

Հայոց մշակութային գանձերի վրա եկող պատուհասները ո՛չ նորություն էին, ո՛չ էլ զարմանալի:

- 1) բացահայտիչ
- 2) ստորոգելի
- 3) որոշիչ
- 4) ձևի պարագա

120. Շարահյուսական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:

*Գևորգ իշխասնը, տեսնելով Գոռին՝ որդուն, որը, գլուխը մի կոճղի հենած, անուշ քնով քնած էր,
կանգ առավ նրա գլխի վերևում:*

- 1) **որդուն** - բուն բացահայտիչ
- 2) **գլուխը** - ենթակա
- 3) **անուշ** – որոշիչ
- 4) **նրա** - հատկացուցիչ

121. Ո՞ր տարբերակում է նախադասության ընդգծված անդամի պաշտոնը սխալ նշված:

- 1) Երբ կհոգնես, կգազազես **աշխարհից**,
Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից: (*անջատման անուղղակի խնդիր*)
- 2) Ես ու դու էլ շղթայված ենք **իրարու**,
Կարոտավառ երագում ենք միշտ իրար: (*հանգման անուղղակի խնդիր*)
- 3) Երկնքում անուրջ աստղեր կվառես,
Կլցնես հոգիս անուշ **երագով**: (*ներգործող անուղղակի խնդիր*)
- 4) Չմռան գիշերն է մեղմորեն ընկնում
Եվ մեծ քաղաքի **դեմքը** մշուշում: (*ուղիղ խնդիր*)

122. Նախադասության նշված անդամներից ո՞րը չի կարող արտահայտվել գործիական հոլովով:

- 1) ձևի պարագան
- 2) ժամանակի պարագան
- 3) միջոցի անուղղակի խնդիրը
- 4) հանգման անուղղակի խնդիրը

123. Նախադասության ի՞նչ անդամ չի կարող լինել հարակատար դերբայը:

- 1) որոշիչ
- 2) ձևի պարագա
- 3) տեղի պարագա
- 4) ենթակա

124. Նախադասության նշված անդամներից ո՞րը կարող է արտահայտվել ենթակայական դերբայով:

- 1) ձևի պարագան
- 2) ժամանակի պարագան
- 3) որոշիչը
- 4) պարզ ստորոգյալը

125. Ենթակայական դերբայը ի՞նչ պաշտոնով հանդես գալ չի կարող:

- 1) բացահայտչի
- 2) որոշչի
- 3) ստորոգելիի
- 4) պարզ ստորոգյալի

126. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Այսօր էլ, երբ լսում եմ նրա երգը, իմ աչքի առաջ կանգնում է նա՝ իր թախծոտ դեմքով, միշտ ստեղծագործական ապրումներով լի, միշտ երգով հմայված իր սրտով:

- 1) ժամանակի պարագա
- 2) մասնավորող բացահայտիչ
- 3) ենթակա
- 4) որոշիչ

127. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Արտառոց է ինձ համար, երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի, իսկ ներկայացումը՝ նրանից ստացված հագուստի հետ:

- 1) ժամանակի պարագա
- 2) ստորոգելի
- 3) ենթակա
- 4) պայմանի պարագա

128. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Ընկերներին հուսահատ կանչի արձագանքը մինչև օրս չարչրկում է ինձ, ինչպես չհանգած խղճի խայթոն է խոցոտում ընտանեթող հոր սիրտը:

- 1) ժամանակի պարագա
- 2) չափ ու քանակի պարագա
- 3) ձևի պարագա
- 4) որոշիչ

129. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Հանձնիր իշխանին, ինչ որ գրի ես առել այդ վաղեմի անցքերի մասին:

- 1) ենթակա
- 2) ստորոգելի
- 3) ուղիղ խնդիր
- 4) որոշիչ

130. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Նրանք՝ այդ մարդիկ, որ աշխարհի չորս ծագերից եկել հավաքվել էին, պիտի հետևեին ցլամարտության հանդեսներին:

- 1) բացահայտիչ
- 2) որոշիչ
- 3) ենթակա
- 4) ուղիղ խնդիր

131. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որի՞ երկրորդական (ստորադաս) նախադասությունն է ենթակա:

- 1) Ով քաղաքից էր հեռացել, Նա թողել էր մշուշը ծեր:
- 2) Ու գիտեմ հիմա՝ մի սովորական Աղջիկ էիր դու՝ նման ամենքին:
- 3) Մի՞թե արժանավորը նա չէր, ով քեզ փրկեց կործանումից:
- 4) Չեմ կարող մոռանալ, թե ինչպիսի տխուր ու աղերսող աչքերով էր մեզ նայում վիրավոր եղնիկը:

132. Նախադասություններից քանիսու՞մ խնդիր երկրորդական (ստորադաս) նախադասություն կա:

- Եկավ նա, ում բոլորը կարոտով սպասում էին:
- Օգնիր նրան, ով կարիքն ունի քո օգնության:
- Հանկարծ հիշեցի փոքրիկ տղային, որը փայլում էր իր արտասովոր ընդունակություններով:
- Նրանք, ովքեր պայքարում են սփյուռքում հայի հայ մնալու համար, արժանի են դրվատանքի:

- 1) բոլորում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) մեկում

133. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները ու նրանց երկրորդական նախադասության բնույթները:

1. Հենց որ գրիչ են վերցնում ձեռքս, աչքերս շաղվում են:
2. Ասես մարդը չէր, որ երգում էր այդ հորովելը, այլ մայր բնությունը:
3. Մեր հորովելներն ամենահնադարյան երգերից են, որ առհասարակ ստեղծել է մարդը:
4. Այդ փաստաթուղթը հենց այն էր, ինչ գրվել էր երկու հարյուր տարի առաջ՝ դեռևս պարսից իշխանության օրոք:

- ա. ենթակա
- բ. ստորոգելի
- գ. որոշիչ
- դ. ժամանակի պարագա

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
- 4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա

134. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները ու նրանց երկրորդական նախադասության բնույթները:

1. Այն, ինչ արել են մինչև հիմա, նախաբանն է մի մեծ գործի:
2. Նրան շատ էր վշտացրել այդ տարի մեր լեռներում եղած ասեղ երկրաշարժը, որ հուշարձաններ էր կործանել:
3. Մի օր գնացի մեր պետական պատմական թանգարան, որ պրոֆեսոր Լիսիցյանին տեսնեմ:
4. Ջորյանի կինը՝ տիկին Սաթենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թեև ինձ չէր ճանաչում:

- ա. նպատակի պարագա
- բ. ենթակա
- գ. զիջման պարագա
- դ. որոշիչ

- 1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

135. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները ու նրանց երկրորդական նախադասության բնույթները:

1. Մակբեթի իշխելու տենչանքը տիտանական ընդգրկումներ ունի, որոնք սովորական մահկանացուի չափերով չեն չափվում:
2. Սուսերամարտը Իտալիայում հարգի է այնքան, որքան մեզանում ֆուտբոլն է տարածված:
3. Նրա դերակատարումները կմնան անկրկնելի, մինչև մեր բեմերում հայտնվի մի նոր Չարիֆյան:
4. Ես չեմ հանդուրժում, երբ որևէ մեկը հետապնդում է ինձ:

- ա. ժամանակի պարագա
- բ. չափ ու քանակի պարագա
- գ. որոշիչ
- դ. ուղիղ խնդիր

- 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
- 2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

136. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները ու նրանց երկրորդական նախադասության բնույթները:

1. Չնայած լավ գիտակցում էր իր բացառիկ արժանիքները, երբեք չհպարտացավ դրանցով:
2. Ես չէի սպասում, իշխան, որ դու պիտի կշտամբես ինձ դաշինք կազմելուս համար:
3. Վրաց թագավորը դիտմամբ ուշացել էր Գ-անձակում, որ մեր թագավորի հետ միասին նույն օրը մտնի Գարդման:
4. Երկրում մի անկյուն չկար, որ ենթարկված չլիներ հրեշավոր ավերածության:

- ա. հանգման անուղղակի խնդիր
- բ. զիջման պարագա
- գ. որոշիչ
- դ. նպատակի պարագա

- 1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 2) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

137. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:

- 1) Նախկին կասկածները հանկարծ տեղի տվին մի վստահության, որ կարծես հենց նույն բույսերն էին ծնվեց յուր մեջ դեպի բարի դայակը:
- 2) Առաջին փորձերից արդեն երևաց, որ թատերական աշխարհ է մուտք գործել արվեստի մի իսկական մվիրյալ:
- 3) Մեր գորբերից մի քանի գունդ շուտով պիտի հասցնենք թագավորին, քանի որ ներքին գավառներում ասպտամբություն է ծագել:
- 4) Պահապանները, ի նշան խոհեմության, նիզակները խոնարհեցին այնքան, որ դրանց սուր ծայրերը կպան գետնին:

- ա. որոշիչ
- բ. չափ ու քանակի պարագա
- գ. պատճառի պարագա
- դ. ենթակա

- 1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
- 2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ

138. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

- Արքայորդին ամենագեղեցիկն էր այն երիտասարդներից, ովքեր երբևէ խնդրել են իմ դստեր ձեռքը: (*որոշիչ*)
- Գրաշարներին պարտադրվել էր, որ անմիջապես սկսեն նրա նոր գործի շարվածքը: (*ուղիղ խնդիր*)
- Չնայած մեր «հանճարեղ հայր» Ստալինը դժոխքում էր արդեն, բայց մեր արյան մեջ մտած սարսափը չէր լքում մեզ: (*զիջման պարագա*)
- Մորդ դուր չէր եկել այն, որ իշխանը ընտրության իրավունքը թողել էր քո կամքին: (*ստորոգելի*)

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

139. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ք երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

- Փքուն, գեղեցիկ բառերի սիրահար հեղինակն ինձ հիշեցնում է գավառացի հարուստ կնոջ, որ գեղեցկության համար բոլոր մատները զարդարում է մատանիներով: *(ուղիղ խնդիր)*
- Անդրանիկ Ծառուկյանին շատ լավ հայտնի էր, որ թշնամի բանակների բաժանված հայերն իրար հոշոտում են հանուն իրենց շահերի: *(ենթակա)*
- Տխուր հուշերի հորձանքը վանելու համար Թումանյանը խոսք բացեց այն հերոսական կռիվների մասին, որ մի ժամանակ վարել էր Լոռու գյուղացիությունը պարսիկների ու լեզգիների դեմ: *(վերաբերության անուղղակի խնդիր)*
- Այն օրերին, երբ Թիֆլիսի բոլոր հայ տղամարդկանց լցրին բանտերն ու աքսորեցին, ձերբակալվածների հարազատները հանգիստ չէին տալիս Թումանյանին: *(որոշիչ)*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

140. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ք երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

- Որքան էլ մեծ վստահություն ուներ բերդակալի հանդեպ, թագուհին այնուամենայնիվ կարգադրել էր նրան բանալիները դրակ բերել: *(զիջման պարագա)*
- Դայակի շուրթերից լսելով այն, ինչ որ ինքն արդեն ստույգ իմացել էր, տիրուհին կրկին անձնատուր եղավ տխուր խորհրդածությունների: *(ուղիղ խնդիր)*
- Ժամանակի իշխանությունը չէր արտոնել, որ ակադեմիայի դահլիճում նշվի նախկին դաշնակցականի հոբելյանը: *(ենթակա)*
- Մտաբերո՞ւմ ես այն օրը, երբ դու և մեծ իշխանուհին վերադարձաք Խաչենից: *(որոշիչ)*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

141. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ք երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

- Չեռքի այդ շարժումը նշան էր, որ ստորոտում գտնվողներն սկսեին վերելքը: *(հատկացուցիչ)*
- Գրեթե չէի հավատում, որ երբեմնի վտիտ ու փխրուն այդ աղջնակը այդքան շնորհալի մի դերասանուհի է դարձել: *(ուղիղ խնդիր)*
- Յավալի է, որ այդ տաղանդավոր դերասանը այդպես էլ չբացահայտեց իր ստեղծագործական կարողությունն ամբողջությամբ: *(ենթակա)*
- Իշխանը հիշեց այն երանելի օրը, երբ ինքն առաջին անգամ ոտք դրեց այդ տան շենին: *(որոշիչ)*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

142. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ք երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

- Պատմաբան այդ տիկնոջը զարմացրեց այն, որ կրոնների վերաբերյալ այդքան խոր ու հիմնավոր գիտելիքներ ունեն: *(ուղիղ խնդիր)*
- Առավել արդարացի կլինեն, եթե ներկայի փոքրիկ վշտերը մեղմացնեինք անցյալի քաղցր հիշողություններով: *(սլայմանի սլարազա)*
- Հաստատվեց ծովափնյա մի փոքրիկ քաղաքում, որտեղ երիտասարդ տարիներին ուսուցչություն էր արել հայրը: *(տեղի սլարազա)*
- Նպատակս այն էր, որ այդ ուղևորության ընթացքում այցելեմ նաև օդեսացի ընկերուհուս: *(ստորոգելի)*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) ոչ մեկի

143. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Նա շատ էր տխրում, որ հնարավորություն չուներ մշտապես բնակվելու բնության այդ խաղաղ անկյունում: *(սլատճառի սլարազա)*
- 2) Նահապետ Քուչակի քերթությունը ապացուցում է, որ մեր ժողովուրդն ընդունակ է կենսուրախության ու մեծ թռիչքների: *(ուղիղ խնդիր)*
- 3) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից բաժանվել էր նա պատանության տարիներին: *(անջատման անուղղակի խնդիր)*
- 4) Նրանք ծանոթացան այն օրը, երբ Աստղիկը կայարան էր գնացել՝ ամուսնուն դիմավորելու: *(որոշիչ)*

144. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Գրում էր դժվարությամբ, կարծես գրչի ճռնչյունով փորագրում էր պղնձի վրա: *(ձևի սլարազա)*
- 2) Պետք չէ աջակցել նրան, ով արվեստի մեջ ընտրում է թույլ դիմադրության ճանապարհը: *(հանգման անուղղակի խնդիր)*
- 3) Կատարվեց այն, ինչին սպասում էին արդեն մի քանի օր: *(հանգման անուղղակի խնդիր)*
- 4) Հայաստանում գրագետ մարդ չմնաց, որ կարդացած չլիներ այդ ոգեշունչ հոդվածը: *(որոշիչ)*

145. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Մարյանը, թեև ծնվել է Ռուսաստանում, ծնողների կողմից հայրենասիրական ոգով է դաստիարակվել: *(զիջման սլարազա)*
- 2) Ինչ որ ապրել էր սիրիայան հեռավոր աքսորավայրում, հիշում էր ամենայն մանրամասնությամբ: *(ենթակա)*
- 3) Օ՛, թագուհիս, մի՞թե քո սիրելի դայակը ծերացել է այնքան, որ այլևս ոչ մի բանի պիտանի չէ: *(չափի սլարազա)*
- 4) Հայտնի ինձ՝ ինչն է խանգարում արքայորդու ամուսնությանը իշխան Սևադայի դստեր հետ: *(ուղիղ խնդիր)*

146. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Նա սկսեց յուր հաղթական արշավանքները, նախքան թշնամին կհարձակվեր: *(ժամանակի պարագա)*
- 2) Իշխանն այլևս չի պարծենա, որ իր դուստրն է հայոց արքունիքի միակ զարդը: *(վերաբերության անուղղակի խնդիր)*
- 3) Մտաբերում եմ այն երջանիկ վայրկյանը, երբ առաջին անգամ ներկայացա թագավորին: *(որոշիչ)*
- 4) Այդ իշխաններից շատերը հակառակ էին, որ Աշոտ Երկաթը ամուսնանար քեզ հետ, թագուհիս: *(հանգման անուղղակի խնդիր)*

147. Նախադասություններից քանիստ՞ում են ընդգծված անդամները կապակցված խնդրառությամբ:

- Լուսաթաթախ սպասումի մեջ ինչ-որ **խռովք էր պատել** Մարանին:
- **Միքում եմ** աչքերիդ **տխրությունը** խորին:
- Այդ վայրկյանին մտքումս **անիծեցի** երջանիկ **երգչուհուն**:
- **Լևոնին հայտնեցի** Լուիզայի ուղևորության մոտալուտ ժամանակը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

148. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Հուզմունքով մտանք վանքի ներքին բաժինը:
- 2) Նա տեր չէր կանգնում իր սեփականությանը, կարծես հյուր լիներ:
- 3) Նրա վտիտ մարմինը ցնցվում էր ընդհատ ու խզված շնչառությունից:
- 4) Դռան շեմում անշարժ կանգնած՝ նայում եմ մորս գունատ դեմքին:

149. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Գայանե մորաքույրս, արցունքն աչքերին, լսում էր բժշկի բացատրությունները:
- 2) Երիտասարդը սիրում է հանգստանալ ծովի ափում:
- 3) Չնայած չափազանց թույլ լինելուն՝ մայրս դանդաղ վեր կացավ անկողնուց:
- 4) Հանկարծ կանգ առա՝ նրա հետ խոսելու անդիմադրելի ցանկությամբ համակված:

150. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ տեսա:
- 2) Լուսնյակ գիշերներին հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին:
- 3) Գնահատում եմ արածդ և անչափ երախտապարտ եմ քեզնից:
- 4) Մի անգամ Մարգարը ինձ մոտ խոսեց օտարության մեջ գտնվող որդուց:

151. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Անգղերը թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարում:
- 2) Մի պառավ շինական ձեռնափայտով ավազի վրա նշաններ էր գծում, նշանների հետ փորփրում գլխով անցածը:
- 3) Ես երբեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը լեռնային մի գյուղում:
- 4) Աշխարհի չար ու բարուց անտեղյակ, միամիտ երեխաներ էինք:

152. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) -Ես դեռ Ձեր փաստաթղթերի հետ չեմ ծանոթացել, եկե՛ք վաղը,- ասաց տնօրենը:
- 2) Սրտով խաղաղ եմ ես հիմա ու խոհերով հստակ, մաքուր:
- 3) Նա միանգամայն անվարժ էր մարդկանց շողոքորթելու արհեստում:
- 4) Ես կխորհեմ ձեր ասածների մասին և կանեմ անհրաժեշտը:

153. Նախադասություններից քանիստ՞ում խնդրառության սխալ կա:

- Երբ բոքիկ ոտքերով քայլում էր առվի կողքով, բահով ճումերն առվից դեն էր գցում:
- Անտառն աստիճանաբար խտանում էր, և հանդիպում էինք հաստաբուն ծառերի:
- Գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, իմ վրա:
- Արահետը վերջացավ և անտառի խորքում խառնվեց ավելի լայն ու փափուկ ճանապարհի:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

154. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Կա և՛ թախիժ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, վերջապես կա և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:
- 2) Նրա ելույթից հետո ժողովուրդը մի պահ քարացած մնաց, ապա հանկարծ զարթնեց որոտընդոստ ծափերի մի տեղատարափով:
- 3) Արաբական Սիացյալ Էմիրությունները կազմավորվել է 1971 թ. դեկտեմբերին և գտնվում է Պարսից ծոցի հարավային ափերին:
- 4) Թումանյանին՝ որպես հյուրընկալ տանտիրոջ ու անգուգական սեղանակցի, շատերն են ճանաչում, բայց երևի ոչ բոլորը գիտեն խաչի հայտնի պատմությունը:

155. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Մերձալպյան և ալպյան գոտիներում մի քանի տեսակի թռչուններ կա՝ արծիվ, անգղ, լեռնային հնդկահավ և այլն:
- 2) Իր մակերևույթի ինքնատիպ ձևով և հարուստ բուսականությամբ աչքի է ընկնում Ալպերը:
- 3) Պեղումների ժամանակ գտնվել են բազալտե գեղեցիկ սկահակներ, որ զարմացնում են քարի մշակման տեխնիկայով:
- 4) Հայկական գրանիտը՝ որպես բարձրորակ նյութ, լայն կիրառություն ունի քանդակագործության մեջ:

156. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Նրա բազմաթիվ հորերից բխող նավթը՝ խեղդում, և գործարանի ծուխը կուրացնում էր նրանց աչքերը:
- 2) Շիրվանգաղեի պարթև հասակը, հպարտ կեցվածքը այդ վայրկյանին մի տեսակ անշուք թվաց:
- 3) Սի կողմում կանգնած էր մեռնողի կինն աղջկա հետ, մյուս կողմում՝ որդիները:
- 4) Ամեն ինչ փոխվում ու նորոգվում էր տենդագին թափով:

157. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Ալիմյանին՝ որպես քաղաքի առաջին միլիոնատեր, սանձարձակ ծաղրում էին, զրպարտում, սակայն միայն հետևից:
- 2) Ամենքս լալիս էինք և արտասովախառն ձայներով պատմում մեռնողի տանջանքների մասին:
- 3) Ո՛չ Սմբատը, ո՛չ մյուս որդիները իրավունք չունեին իրենց բաժին ժառանգությանը տիրանալու, եթե չկատարեին հոր պատվիրանները:
- 4) Տան ընդարձակ բակում խռնվել էր խեղճերի ահագին բազմություն:

158. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Թող իմ մասին քո ունեցած որոշ հիշողություններ չխամբեցնեն ուրախությունդ:
- 2) Ինձ է հասնում այն ծովայինների երգը, որոնք պատրաստվում են ափ հանել իրենց նավակները:
- 3) Մեր նկարների մի մասը մրցություն հաղթող ճանաչվելուց հետո ուղարկվեցին Պրահա:
- 4) Ողջ գյուղն անհամբերությամբ սպասում էր նրանց, ովքեր հաղթանակով էին վերադառնում պատերազմից:

159. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Նոյից հետո հավատացյալ ընտանիքներով առավել փայլում են Աբրահամ, Իսահակ և Հակոբ նահապետները:
- 2) Քեզ հայտնի է մարդկային ոգու զարմանահրաշ պահանջները:
- 3) Ամեն ինչ նրա թույլ բնավորությունից էր, և անհրաժեշտ էր, որ միշտ ինչ-որ մեկը հսկեր նրան:
- 4) Եթե կարողանայիր մի փոքր թափանցել հոգուս խորքերը, ապա կտեսնեիր, որ նմանօրինակ վարվեցողությունն ինձ հատուկ չէ:

160. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Կարծում եմ, որ մեր կյանքում մշտապես միանում են ճակատագիրն ու կամքի ազատությունը:
- 2) Իսկ դա էլ հենց առողջության և ուժի նշաններն են՝ բնության ամենաքնքրուշ պարզակները:
- 3) Իմ ունեցածի մի զգալի մասը կորավ այդ գիշեր, երբ ես այդքան անփույթ էի ոչ միայն իմ անցյալի ու ներկայի, այլև ապագայի նկատմամբ:
- 4) Եվ բնական էր, որ նրա մտքերը, ցանկություններն ու ձգտումները կենտրոնանում էին միայն մի մտքի շուրջ:

161. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Ամերիկայի Միացյալ Նահանգները առայժմ չեն ընդունել հայոց ցեղասպանությունը հաստատող որևէ փաստաթուղթ:
- 2) Բայերը գործողություն ցույց տվող բառերն են:
- 3) Շումերը հասակակից է հային:
- 4) Կայսերը մեծ շուքով դիմավորեցին:

162. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Մութն ընկնելուն պես եկան Աշոտն ու Օհան ապերը, պատմեցին օրվա ամենավառ դեպքերը:
- 2) Ես չէի կարողանում սթափվել պատահածից հետո, սակայն ձիապանի խոսքերը ինձ անսպասելիորեն զգաստացրեց և մղեց նոր ձեռնարկումների:
- 3) Մեր հայացքներն իրար հանդիպեցին, փոքրիկ աղջիկն ինչ-որ բաներ ասաց, իսկ բազմությունը լուռ լսում էր:
- 4) Ձյան վրա մնացել էին վաղ առավոտյան խփված գայլի հետքերն ու արյան շիթեր:

163. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Երբ մենք բարձրանում էինք, Ալպերը ծածկված էին ձյան հաստ շերտով:
- 2) Մեծ ջանքեր պահանջվեց, մինչև հիշողությանս մեջ հայտնվեցին ծանոթ մեղեդիների փշրանքները:
- 3) Դժվարությամբ, բայց հնարավոր դարձան արգելքների վերացումը:
- 4) Վասակի դավաճանության հիմնահարցը վիճելի է թե՛ պատմագրության, թե՛ բանասիրության մեջ:

164. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Կարելի է ներկայացնել նրա հոդվածը, ուր կա զարմանալի բանաստեղծական տողեր:
- 2) Այսօր կորոշենք՝ ինչպես պիտի ընթանա մեր հետագա գործողությունները:
- 3) Որպես բարոյական դաս՝ գրողի ստեղծագործություններում հիշատակվում է հայ հայրենասեր փափկասուն տիկնայք:
- 4) Նա բացեց իր աշխարհը հույզերի, որ իրենից հետո կոչվեց և կոչվելու է իր իսկ անունով՝ դուրյանական:

165. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Նրանց միշտ, ամենուրեք և հաստատապես պետք է պատճառն ու նպատակը:
- 2) Լույսի շուրջը պտտվում են թիթեռնիկները, իսկ բաց պատուհաններից ինձ են հասնում ծաղիկների բուրմունքը:
- 3) Ազատ հայրենիք և ազատ մարդ. ահա Նալբանդյանի գաղափարախոսությունը:
- 4) Կան մարդու գոյության իմաստը քննող բազում հետաքրքիր ֆիլմեր, որոնցից առանձնանում են «Կորուսյալները»:

166. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Ժողովուրդը ցնձագին բացականչություններով դիմավորեց իրենց սպարապետին:
- 2) Որպես մարդ՝ նա հարզված էր, բայց որպես բժիշկ՝ նրան այնքան էլ չէին սիրում:
- 3) Ուղեգրի արժեքի մեջ մտնում է նաև նախաճաշն ու ընթրիքը:
- 4) Մարիամը դստեր ու թոռների հետ հաճախ էր լինում թատրոնի սրճարանում:

167. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Ես չեմ պատրաստվում հրաժարվել իմ ընկերներից, չնայած ամեն ինչ ինձ համար արդեն վերջացել են:
- 2) Հիշողությունն ինձ խանգարում է ընդունելու ուրիշ մեկին:
- 3) Ամեն մեկը չեն կարողանա այդպես արտահայտել իրենց մտքերը:
- 4) Բոլոր տները և հիվանդանոցը ներկված էր սպիտակ գույնով և զարմացնում էր իրենց մաքրությամբ:

168. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Գործակալությունում ընդունվում է տոմսերի նախնական պատվերներ:
- 2) Երբ ընկա, ակնոցներս կոտրվեց:
- 3) Ստուգումներին կմասնակցեն կա՛մ Հակոբը, կա՛մ Եվան:
- 4) Ամեն մի ծառ ու թուփ ծանոթ էր Դիլան դայուն:

169. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Վերջին ամիսներին նրա մազերը ծածկվեց ճերմակով, և ներքին մի ձայն հանդարտության կոչ արեց:
- 2) Բո հոգու մեջ եղած ամեն լավ բան իր արտացոլումը կգտնի իմ բանաստեղծություններում:
- 3) Աշխատողների կեսը անհասկանալի պատճառներով չէին ներկայացել անսպասելի հրավիրված ժողովին:
- 4) Նրանք համոզված էին, որ իրենց գեղեցիկ հաղթանակից ոչ ոք ոչինչ չեն կորցնի:

170. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Որպեսզի հասկանալի լինի ասածներս, հարկավոր է համբերատար լսել:
- 2) Երգիչների կեսը ներկայացան բավականին ուշացումով և տեղիք տվեցին հանդիսականների արդարացված դժգոհության:
- 3) Ծաղիկների զգլխիչ բույրը դեռ երկար կխենթացներ նրանց, եթե չփակեին պատուհանները:
- 4) Ինձ՝ որպես լավագույն ասմունքող, հրավիրեցին մասնակցելու տոնական համերգին:

171. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Մեզ անհրաժեշտ էին բոլոր հանգամանքների և բոլոր մանրամասների ստուգումների արդյունքը:
- 2) - Մեզ իբրև ճշտապահ ծառայողներ, ուշ թե շուտ կնկատեն և կխրախուսեն, - հուսադրում էր Գևորգը հավաքվածներին:
- 3) Մտատանջությունների վերջին հյուլեն միանգամից և ամբողջությամբ անհետացավ նրա հոգուց:
- 4) Իմ բոլոր մտքերն ու հույզերը դարձել է մի միացյալ ցանկություն, և ես այլ բանի մասին չեմ կարողանում մտածել:

172. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Բայց քո տարակուսանքն ու պոռթկումն այնքան բնական էր, որ ես ամենևին չփորձեցի քեզ հանգստացնել:
- 2) Տերյանի պոեզիան մենության, թախժի տրամադրություններով են հեղեղված:
- 3) Շաբաթ օրերը այնտեղ ահագին մարդ է հավաքվում, հանդիսավոր պարեր է լինում, և յուրաքանչյուրն իր պարընկերոջն է փնտրում:
- 4) Գրողի պատմվածքները զետեղված են մի բանի ժողովածուներում:

173. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Այս շարքի բանաստեղծությունները հայրենասիրական դաստիարակության լավագույն օրինակն է:
- 2) Թե ինչ կխոսեն մարդիկ, ինչ հեռություններ կանեն, ինձ բոլորովին չեն հետաքրքրում:
- 3) Բազում սայթաքումներից ու կորուստներից հետո ես վերջապես հասկացա, որ ամեն ինչից չէ, որ ես պատրաստ եմ հրաժարվելու:
- 4) Իմ օրերը հոսում է վերին աստիճանի միապաղաղ ու ձանձրալի:

174. Նախադասություններից քանիստ՞ն համաձայնության սխալ կա:

- Հանքային ջրերի մի մասը երկրի ներքին ջերմության շնորհիվ շատ տաք է:
- Ամեն ինչ՝ բույսերը, թռչունները, մարդը, կազմում են կենդանի բնությունը:
- Բաբելոնում կավից պատրաստվում էր ամանեղեն, ջրաղացքարեր, սեղաններ:
- Օշականում կատարվող Թարգմանչաց տոնի արարողությանը մասնակցում է ողջ ժողովուրդը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

175. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ կա:

- 1) Մթնածորում սկսվեց անհավասար մի կռիվ մարդու և գազանի միջև:
- 2) Աղմուկից դողրաց անտառը, դեղին տերևներից ցողի խոշոր կաթիլները մետաղի ծանրությամբ ընկան խազալի վրա:
- 3) Միանգամայն անսպասելի կերպով ձորի կողմից քաղաք մտան չորս ձիավորներ:
- 4) Ապա կռացավ, դժվարությամբ շալակեց չորացած ցողունների կապը և հոգնած ոտքերը հուշիկ ծերունու քայլերով փոխեց դեպի այգու դուռը:

176. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ կա:

- 1) Երբ վերջին հնչյունները թրթռալով մարեցին գերեզմանային լռության մեջ, հանդարտ արտիստը հեռացավ բեմից:
- 2) Ամեն ոք շտապում էր դեպի կուլիսներ՝ անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը:
- 3) Որքան այդ հնչյունները դյուրիչ էին, այնքան գեղեցիկ ու հմայիչ էր ինքը՝ Անտոնիո Բոնավինին:
- 4) Նրա բարեկազմ հասակը, հրացայտ աչքերը, դեմքը արևառ, ճակատը հանճարեղ մի սքանչելի ներդաշնակություն էին կազմում նրա ջութակի մոզական հնչյունների հետ:

177. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ չկա:

- 1) Մի քանի կետերում հապճեպ քարաբեկորներ կուտակեցին՝ թշնամուն հարվածելու համար:
- 2) Մուշեղը հոգաց այն ամենը, ինչ որ կարևոր էր թշնամուն հանկարծահաս դիմակայելու համար:
- 3) Սկզբում նա ձեռքը վերցրեց ուղտի դեղնավուն կաշվով պատած նեղ ու երկարուկ տետրը:
- 4) Կանաչության թմրաբեր բույրերով հագեցած օդից և երկար ժամանակ պառկած լինելուց հաճելի նա քայլում էր մի գլխապտույտով:

178. Նախադասության մեջ ի՞նչ կարգի սխալ կա:

Նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգ մարդուց:

- 1) խնդրառության
- 2) համաձայնության
- 3) շարադասության
- 4) բառագործածության

179. Նախադասության մեջ ի՞նչ կարգի սխալ կա:

Երգչին՝ որպես աշխարհ տեսած մարդ, հանդիսատեսը դիմավորեց բուռն ծափահարություններով:

- 1) բառագործածության
- 2) խնդրառության
- 3) համաձայնության
- 4) շարադասության

180. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Փոլադյանը այնքան կարողություն ուներ, իրեն կարող էր թույլ տալ ցույի ու շվայտ կյանք վարել:

- 1) քանի որ
- 2) որպես
- 3) եթե
- 4) որ

181. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Նա ակնդեռ հետևում էր գետի ընթացքին, թե էր այն գալարվում լերկ, մռայլատես գմբեթարդ բլուրների միջև:

- 1) որտեղ
- 2) երբ
- 3) ինչպես
- 4) ինչու

182. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Քանի որ կայծակը կաղնուն ավելի հաճախ է խփում, ուստի կայծակի ժամանակ պատասպարվելու տեղ պետք է հեռու մնալ կաղնուց:

- 1) փնտրելուց
- 2) փնտրելուն պես
- 3) փնտրելիս
- 4) փնտրելով

183. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

..... պարոն Վարազդատը նոր գործի է անցել, նրան ոչ մի կերպ չեմ կարողանում տեսնել:

- 1) Քանի դեռ
- 2) Երբ
- 3) Ինչ
- 4) Հենց

184. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Անհեթեթություններ դուրս մի՛ տուր, չես կարող որևէ խելացի բան ասել:

- 1) թե չէ
- 2) ինչպես
- 3) թե
- 4) ինչքան

185. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Մարդը նրա, ու թեև առաջվա նման գուրկ էր արտահայտությունից, սակայն աչքերը նման էին վիրավոր աչքերի:

(1. հեռանալ, 2. եղնիկ, 3. դիտել, 4. դեմք)

- 1) 1, 2, 4, 3
- 2) 3, 1, 4, 2
- 3) 3, 2, 1, 4
- 4) 1, 4, 2, 3

186. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

*Հեզնանքով, որ արդեն երեխայի լացին, որ այս կատարյալ անդորրը չէ
 ո՛չ քնելու, ո՛չ էլ արթուն համար:*

(1. բավական, 2. մտածել, 3. մնալ, 4. կարոտել)

- 1) 2, 3, 1, 4
- 2) 4, 3, 1, 2
- 3) 2, 1, 3, 4
- 4) 2, 4, 1, 3

187. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

*Ծերունին էր ու հյուծված, այտերը էին խոր, իսկ ձեռքերը ծածկված էին
 թուխ*

(1. նիհարել, 2. բիծ, 3. կնճիռ, 4. ակոսել)

- 1) 1, 4, 3, 2
- 2) 1, 4, 2, 3
- 3) 3, 4, 2, 1
- 4) 4, 1, 2, 3

188. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

*Չկար ո՛չ, ո՛չ թուփ, ո՛չ խոտ. կար միայն զարհուրելի ու տհարկու, որըէր
 առաջացնում մարդու*

(1. ամայություն, 2. ծառ, 3. սիրտ, 4. սարսափ)

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 1, 4, 3
- 3) 4, 2, 1, 3
- 4) 2, 4, 1, 3

189. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

*Նա երկու մասի բաժանեց. մի մասը փաթաթեց բողբյա կտորի մեջ և պահեց
 դուրս գցված մի տակ, մյուսը նորից մեջ լցրեց:*

(1. ժայռ, 2. ոսկի, 3. հավասար, 4. պարկ)

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 4, 1, 3
- 3) 2, 3, 1, 4
- 4) 4, 3, 1, 2

190. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Արևելյան մի ' փոշոտ փողոցի ստվերոտ մեկում, շոգին մի ծերուկ դերվիշ:

(1. միջօրե, 2. քաղաք, 3. պատկել, 4. անկյուն)

- 1) 4, 2, 3, 1
- 2) 4, 2, 1, 3
- 3) 2, 4, 1, 3
- 4) 2, 4, 3, 1

191. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Հնդկական առածը «..... լեզուն առյուծ է. եթե, քեզ կպաշտպանի, եթե թողնես, քեզ»:

(1. կապել, 2. հոշոտել, 3. դու, 4. ասել)

- 1) 1, 4, 2, 3
- 2) 2, 3, 4, 1
- 3) 4, 3, 1, 2
- 4) 4, 1, 2, 3

192. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Ես Արաքսի, իսկ քիչ հեռվում՝ ուղիղ դիմաց, Արարատն է՝ մեր մեծ որբն ու տարագիրը:

(1. ես, 2. պատմություն, 3. թափառել, 4. ափ)

- 1) 3, 2, 1, 4
- 2) 3, 2, 4, 1
- 3) 3, 4, 1, 2
- 4) 1, 4, 3, 2

193. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

..... վերականգնում կամ վերանորոգում ենք կիսաքանդ վանքերը՝ դրանք մեր քարե հիշողության արթուն մասունքները, բայց մի՞թե Վարդանի կաղնին պատմական հուշարձան չէր:

(1. ժողովուրդ, 2. ես, 3. տնկել, 4. համարել)

- 1) 2, 3, 4, 1
- 2) 2, 3, 1, 4
- 3) 2, 4, 1, 3
- 4) 2, 4, 3, 1

194. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

..... անց կաղնին տասպալվել էր՝ հետ տանելով ու բնության հրաշք հուշարձանը:

(1. պատմություն, 2. ստեղծել, 3. տարի, 4. ինքը)

- 1) 3, 1, 2, 4
- 2) 2, 4, 3, 1
- 3) 3, 4, 1, 2
- 4) 2, 1, 4, 3

195. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

..... հոր՝ Բրոնտի դեմ Չևսի մեծ հաղթանակի պատվին հույները օլիմպիական ՝ զոհաբերություններով և մարզական մրցաշարերով:

(ինքը, տանել, սկիզբ դնել, տոնակատարություն)

- 1) Իրեն, տարած, սկիզբ դրեցին, տոնակատարություններին
- 2) Իր, տարվող, սկզբնավորեցին, տոնակատարություններ
- 3) Իր, տարած, սկիզբ դրեցին, տոնակատարություններին
- 4) Իրենց, տարվող, սկիզբ դրեցին, տոնակատարությունների

196. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

Գերմանացի Նեյմանն «Հայերը» գրքում առանձին Նապոլեոնի մարշալներից ՝ Մյուրատին (վերջինիս հայրը դարաբաղյան արմատներ ուներ), որը նաև Նապոլեոնի փեսան էր:

(անդրադառնալ, ինքը, գլուխ, մեկը)

- 1) նրա, գլուխներում, անդրադառնալով, մեկը
- 2) իրեն, գլխով, անդրադառնալով, մեկին
- 3) նրա, գլխում, անդրադարձել է, մեկը
- 4) իր, գլխով, անդրադարձել է, մեկին

197. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

«Հաննիբալյան երդում» արտահայտությունը, որ նշանակում է հավատարիմ մնալ որևէ, առաջացել է Հաննիբալի՝ տասը տարեկանում հորը տված երդումից, նա հավատարիմ մնաց Հռոմին թշնամի իր

(սկզբունք, որը, լինել, խոստում)

- 1) սկզբունքի, որով, է լինելու, խոստմանը
- 2) սկզբունքին, որից, է լինելու, խոստումներին
- 3) սկզբունքի, որով, լինելու, խոստմանը
- 4) սկզբունքների, որին, կլինի, խոստումներով

198. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

Երկար հմայված, ու ՝ լեռը կարդում է, ցանկանում շոյել գլուխս: (նայել, թվալ, միտք, ճերմակել)

- 1) նայել եմ, թվացել է, մտքում, ճերմակած
- 2) կնայեմ, կթվա, ճերմակ, մտքերով
- 3) պիտի նայեմ, կթվար, մտքերս, ճերմակ
- 4) նայում եմ, թվում է, մտքերս, ճերմակող

199. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

«Կրակից շագանակներ հանել» արտահայտությունն Լաֆոնտենի «Կապիկն ու կատուն»....., որտեղ կատուն, թաթերը , կրակից հանում է շագանակը, իսկ կապիկը՝

(առաջանալ, առակ, վառել, վայելել)

- 1) առաջացավ, առակում, վառող, վայելում է
- 2) առաջ է եկել, առակից, վառում է, վայելում
- 3) առաջանում է, առակով, վառած, վայելում է
- 4) առաջացել է, առակից, վառելով, վայելում

200. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

Ըստ լեզենդի՝ Եղիա մարգարեն ճանապարհ պիտի հարթեր համար դեպի Աստված, և նրա լեռները, և հարթ ճանապարհ պիտի բացվեր, բայց մարգարեի ծայնն անպատասխան

(հրեա, կանչ, իջնել, մնալ)

- 1) հրեայի, կանչերից, իջել էին, է մնում
- 2) հրեայի, կանչերով, կիջնեին, մնում է
- 3) հրեաների, կանչին, իջել էին, մնում է
- 4) հրեաների, կանչով, պիտի իջնեին, է մնում

201. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:


Չինական առածում «Հնարավոր՝ մարդ համեստ առանց իմաստության, սակայն հնարավոր չէ, որ իմաստուն լինի առանց

(ասել, եմ, լինել, համեստություն)

- 1) ասում էին, են, լինի, համեստության
- 2) ասված է, է, լինելով, համեստության
- 3) ասել է, է, լինեք, համեստությամբ
- 4) ասվում է, է, լինի, համեստության


202. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Իսկ ես, որ հիացած էի նրա տեսքով և ուժով, ամեն երեկո իմ բաժին հացի կեսը տալիս էի նրան, հետևում նրա լարված շարժումներին, որպեսզի անուշադրության չմատնեմ նրա որևէ խոսք կամ շարժում:




203. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Ինչքան էլ պապս ստիպեց, չասացի, թե ինչ էր եղել, և գիշերը մորեղբայրս համբուրեց ինձ ու ասաց, որ կամաց-կամաց իսկական տղամարդ եմ դառնում:




204. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Հենց այդ ժամանակ լրացավ իմ յոթ տարին, և բոլորը միանգամից գլխի ընկան, որ ես մեծ մարդ եմ դառնալու, որովհետև գիշերները նայում էի լեռան գագաթին, որի վրա ասես աստղեր էին թափվում:




205. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

*Թե խենթ լեզուս անունդ տա,
Ես կսեղմեմ ատամներով,
Որ հնչյուն իսկ չշշնջա:*




206. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Իսկ ձմեռները քաղաքի աշխույժն ավելանում էր նրանով, որ թագավորն իր ամբողջ արքունիքով տեղափոխվում էր Դ-վին և ապրում էր միջնաբերդում մինչև գարնան կեսերը՝ լիարժեք վայելելով իր հանգիստը:




207. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Նրանց ուսանող որդին՝ Արամը, որ վաղուց Մոսկվայում էր ապրում, և որից երկու տարուց ավելի լուր չունեին, Ռոստովից հեռագրել էր, թե գալիս է:




208. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Այնքան փոշի կա այստեղ, որ իրենք հեշտությամբ կարող են վարակվել ու հիվանդանալ, ուստի պնդում էր, որ շուտափույթ հեռանան այդ վայրից և ապրեն ավելի ապահով ու մաքուր մի վայրում:




209. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Մեր ուսուցչուհին դասարան մտավ պղտոր, շփոթ հայացքով՝ փորձելով մի կերպ աշխարհագրություն դասավանդել, բայց զգաց, որ չի կարողանում, ուստի և մեզ խնդրեց դասն անցկացնել:




210. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Թեև գետն արդեն կես էր եղել և սպառնում էր շուտով մի առվակ դառնալու, սակայն գյուղացիք շարունակեցին ծիծաղել երևակայական վիշապի վրա և ջրի նվազելը համարեցին որևէ բնական պատճառի արդյունք՝ բացարձակ չանհանգստանալով ոչ մի բանից:




211. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Մեր արևը սպիտակ գույնի է, ուժեղ դեղնավուն երանգ ունի, բայց երբ տաքրալուծում ենք նրա ճառագայթներից մեկը, տեսնում ենք, որ այն բաղկացած է յոթ գույներից և չի կարող ավելին ունենալ:




212. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Քանի որ օրիորդը մեծ հակում ուներ դեպի գիտությունը, ուստի և նա, մի պահ անգամ չվարանելով, ուշադրությամբ սկսեց դիտել կատարվող և կրկնվող այն փորձերը, որոնց վկան էր դարձել ինքը:




213. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Քարտեզի վրա հակված Աննան փնտրում էր այն վայրը, ուր կարող էինք թաքնվել, և այդ անորոշության մեջ այնպիսի հաճույք էր գգում, որ ձևացնում էր, թե չի կարողանում որևէ որոշում կայացնել:




214. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Այո՛, նայիր նրանց, մտածիր նրանց մասին, ում լափում է ձանձրոյթը, և որոնց հեռուներն է տանում մի վիշտ, որին ոչ որ հաղթել չի կարող:




215. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Առաջին օրերը կարծում էի, որ նա ներում չի ստանա, բայց կարեկցության բուռն զգացումս թույլ չէր տալիս ինձ, որ մեղադրեի նրան:




216. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Շատ անգամ ճակատամարտեց նա, շատ անգամ հաղթող դուրս եկավ, բայց մի անգամ՝ մի դժբախտ օր, անսկնկալի եկավ. կիրճի մեջ շրջապատվեց թշնամու խմբերով:




217. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Երբ մի անգամ նրա մոտ մտա, նա կռացել էր մի հին կոշիկի վրա, որը սեղմել էր ծերացած ծնկների մեջ, և կրունկին մեխեր էր խափում:




218. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Ես ասացի, որ նորություն չունեմ, և սկսեցի զննել սենյակը, որ մի շատ աղքատիկ, անգարդ և նույնքան էլ մութ սենյակ էր:




219. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Ես չվախեցա, որովհետև շունը հանգիստ նայում էր ինձ, և երևում էր, որ վրաս հարձակվելու ոչ մի միտք չունի:




220. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Երբ դասաժամը վերջացավ, և աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն:




221. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Միասին կարդում էինք, միասին զրոսնում, և անհավատալի չպիտի լինի, եթե ասեմ, որ գրեթե միասին ու միևնույն ձևով էինք խորհում միևնույն բանը:




222. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Չափազանցված գուցե թվա, եթե ասեմ, որ այդպիսի մի գեղեցկուհի ո՛չ տեսել էի, ո՛չ երագել:




223. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:




- 1) Ես տեսել եմ Տիգրանի այն նկարը, որտեղ սուրբ Թովմասը մատը դրել է Քրիստոսի վերքի վրա, և հաճախ մտածել եմ այն մասին, որ սերը Աստծու նկատմամբ մարդու ունեցած հավատի հետ համեմատելու դեպքում ես կարող էի ասել, որ նման եմ այդ սրբին:
- 2) Ես դողում էի այն մտքից, որ չլինի թե նրա մեջ դեռ պահպանված լինի նախկին վախը, և նկատում էի, որ իմ մեջ կատարվող փոփոխությունները կարող էին նրան կասկածամիտ դարձրած լինել, փոխած լինել հիմնովին:
- 3) Ես չէի կարողանում ուշադրությունս կենտրոնացնել՝ տեսնելու, թե ինչ է կատարվում բեմի վրա և սրահում. այնքան վշտացած էի, որ, այսպես ասած, ապրում էի միայն ինձնով, և արտաքին աշխարհը չէր ազդում զգայարաններիս վրա:
- 4) Նա պետք է որ ինձ ճանաչեր դեմքով և, բացի այդ, եթե նույնիսկ չճանաչեր, երբ մարդ տեսնում է մեկ ուրիշի՝ իրեն մոտենալը, պարտավոր է նրան գեթ սպասել:

224. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Ինչպե՛ս կարելի է տենդագին, վաղանցիկ հիացումները գերադասել առավել կամ գունագեղ իրերից, ինչպե՛ս կարելի է հուսախաբ կամքի աղետները գերադասել անկաշկանդ շարժվելու հաճույքից՝ գերծ ժամանակի և տարածության կապանքներից:
- 2) Ո՛չ, Դուք պայմանագիր եք ստորագրել, և դա հուշում է՝ ինչ է լինելու:
- 3) Ես այդ արտասովոր ուժին հրամայում եմ՝ ինձ համար բոլոր ուրախությունները միաձուլի մեկ ուրախության մեջ:
- 4) Բայց այս գողտրիկ զանձերը, դեռատի աղջկա այս հարստությունը, գեղեցկության այս ամբողջ պերճանքը ասես կորչում էին ինձ համար՝ հիշեցնելով իմ վաղաժամ ծերությունն ու տկարությունը:

225. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Այն ժամանակ, երբ այս անվեհեր հյուրերը տեղավորվեցին դուքսի սեղանի մոտ, Ռաֆայելը, որ երեկ ճաշից հետո ինչ-որ պատրվակով դուրս էր եկել, զգուշությամբ չքացել, ներկայացավ հանդիսավոր դեմքով:
- 2) Դուք կսարսափեիք, երբ տեսնեիք այս մարդկային դեմքերը, հառաչանք կարճակեիք, երբ հոգնած աչքերով ձեզ դիմավորեին նրանք, ում դուք անսահման կարոտել էք:
- 3) Հյուրերը, որոնք ցանկանում էին կամաց-կամաց ցրվել, ծանր հառաչանք արձակեցին. նրանք զգացին, որ իրենց թևերն ու ոտքերը թմրել են, և սաստիկ թուլություն են զգում:
- 4) Նա, որ այդքան փորձառու էր, բանակցությունները վարում էր բացառիկ վարպետությամբ, և չնայած խորամանկությանն ու փորձին՝ Փիլոնը ստիպված էր հստակ ու կոնկրետ պայմաններ հանձն առնել, որպեսզի դիմացինն իրեն խաբված չզգա:

226. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Մեր ժողովրդի երզն այնքան հարուստ է ու գունագեղ, որ հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին:

- 1) Մեր ժողովրդի երզը հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին հարուստ ու գունագեղ լինելու շնորհիվ:
- 2) Մեր ժողովրդի երզը հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին՝ լինելով հարուստ ու գունագեղ:
- 3) Մեր ժողովրդի երզը հարուստ է ու գունագեղ անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին հիացնելու չափ:
- 4) Անգամ օտար արհեստավարժ արվեստագետներն են հիանում մեր ժողովրդի երգով նրա հարուստ ու գունագեղ լինելու շնորհիվ:

227. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ այն մարդը, որ ճանապարհին հանդիպել էր մեզ:

- 1) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր այն մարդը՝ ճանապարհին մեզ հանդիպածը:
- 2) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր ճանապարհին մեզ հանդիպած մարդը:
- 3) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ ճանապարհին մեզ հանդիպած մարդը:
- 4) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսողը նա էր՝ ճանապարհին մեզ հանդիպած մարդը:

228. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Սաթյանը ոգևորված պատմում էր այն մասին, որ ինքը մտադրություն ունի ստեղծելու «Մխիթար սպարապետ» օպերա:

- 1) Սաթյանը ոգևորված պատմում էր «Մխիթար սպարապետ» օպերա ստեղծելու իր մտադրության մասին:
- 2) Սաթյանը ոգևորված պատմում էր «Մխիթար սպարապետ» օպերա ստեղծելու՝ իր ունեցած մտադրության մասին:
- 3) Սաթյանը ոգևորված պատմում էր իր՝ «Մխիթար սպարապետ» օպերա ստեղծելու մտադրություն ունենալու մասին:
- 4) Սաթյանի ոգևորված պատմությունը իր՝ «Մխիթար սպարապետ» օպերա ստեղծելու մտադրություն ունենալու մասին էր:

229. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Իմ սիրելի ուսուցիչը, որ բնավ առնչություն չունեք գրականության հետ, մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:

- 1) Գրականության հետ բնավ առնչություն չունեցող իմ սիրելի ուսուցիչը մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:
- 2) Իմ սիրելի ուսուցիչը, բնավ առնչություն չունենալով գրականության հետ, մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:
- 3) Իմ սիրելի ուսուցիչը, չնայած գրականության հետ բնավ առնչություն չունենալուն, մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:
- 4) Պ. Դուրյանի հատորյակը մի օր ինձ հանձնած իմ սիրելի ուսուցիչը բնավ առնչություն չունեք գրականության հետ:

230. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Նրանց հատկապես նյարդայնացնում էր, որ ազգությամբ լեհ Բոգդան Գեմբարսկին հայ ազգային վերազարթոնքի շեփորահարը էր դարձել:

- 1) Նրանց հատկապես նյարդայնացնում էր հայ ազգային վերազարթոնքի շեփորահարը դարձած Բոգդան Գեմբարսկու՝ ազգությամբ լեհ լինելը:
- 2) Նրանց հատկապես նյարդայնացնում էր ազգությամբ լեհ Բոգդան Գեմբարսկու՝ հայ ազգային վերազարթոնքի շեփորահարը դառնալը:
- 3) Նրանց հատկապես նյարդայնացնողը ազգությամբ լեհ Բոգդան Գեմբարսկու՝ հայ ազգային վերազարթոնքի շեփորահարը դառնալն էր:
- 4) Նրանց հատկապես նյարդայնացնում էր հայ ազգային վերազարթոնքի շեփորահարը դարձած, ազգությամբ լեհ Բոգդան Գեմբարսկին:

231. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Նա խորապես հիասթափված էր, որ երիտասարդ հեղինակները պատերազմի օրերին զբաղվում էին իրենց անձնական նեղ խնդիրներով:

- 1) Նա խորապես հիասթափված էր պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զբաղվող երիտասարդ հեղինակներից:
- 2) Երիտասարդ հեղինակների՝ պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զբաղվելը խորապես հիասթափեցնում էր նրան:
- 3) Նա խորապես հիասթափված էր երիտասարդ հեղինակներից՝ պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զբաղվելու պատճառով:
- 4) Նա խորապես հիասթափված էր երիտասարդ հեղինակների՝ պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զբաղվելուց:

232. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Եթե հայ զինվորը կռվի դաշտում վերք է ստացել, հայ կնոջ պարտավորությունն է դարձանել նրան:

- 1) Հայ կնոջ պարտավորությունն է դարձանել կռվի դաշտում վերք ստացած հայ զինվորին:
- 2) Հայ զինվորի՝ կռվի դաշտում վերք ստանալու դեպքում հայ կնոջ պարտավորությունն է դարձանել նրան:
- 3) Կռվի դաշտում վերք ստանալու դեպքում հայ կնոջ պարտավորությունն է դարձանել հայ զինվորին:
- 4) Հայ զինվորի՝ կռվի դաշտում վերք ստանալու դեպքում հայ կնոջ պարտավորությունը նրան դարձանելն է:

233. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Սիրո շղթաները այն ամենաձանր կապանքներն են, որոնք զսպում են տղամարդու փառասիրական ձգտումները:

- 1) Տղամարդու փառասիրական ձգտումները զսպող ամենաձանր կապանքները սիրո շղթաներն են:
- 2) Սիրո շղթաները տղամարդու փառասիրական ձգտումները զսպող ամենաձանր կապանքներն են:
- 3) Սիրո շղթաները տղամարդու փառասիրական ձգտումները զսպող կապանքներից ամենաձանրն են:
- 4) Տղամարդու փառասիրական ձգտումները զսպող սիրո շղթաները նրա ամենաձանր կապանքներն են:

234. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Սերը շատ անգամ արագորեն մարում է, որովհետև ծնված է լինում կարեկցությունից:

- 1) Սիրո՝ շատ անգամ արագորեն մարելու պատճառը կարեկցությունից ծնված լինելն է:
- 2) Կարեկցությունից ծնված սերը շատ անգամ արագորեն մարում է:
- 3) Սերը շատ անգամ արագորեն մարում է կարեկցությունից ծնված լինելու պատճառով:
- 4) Արագորեն մարող սերը շատ անգամ ծնված է լինում կարեկցությունից:

235. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Այդ նույն նավը, որ ժամանակին փրկության լաստ էր դարձել ինձ համար, վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:

- 1) Ժամանակին ինձ համար փրկության լաստ դարձած նավը վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:
- 2) Ինձ նորից նույն դժոխքը վերադարձնող նավը ժամանակին փրկության լաստ էր դարձել ինձ համար:
- 3) Այդ նույն նավը, ժամանակին ինձ համար փրկության լաստ դառնալով, վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:
- 4) Ժամանակին ինձ համար փրկության լաստ դարձած այդ նույն նավը վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:

236. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Աշխարհում հազվագյուտ են այդպիսի մարդիկ, որոնք բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չեն ակնկալում:

- 1) Աշխարհում հազվագյուտ են բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չակնկալող այդպիսի մարդիկ:
- 2) Աշխարհում հազվագյուտ են բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չակնկալող մարդիկ:
- 3) Բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չակնկալողները աշխարհում հազվագյուտ մարդիկ են:
- 4) Աշխարհում այդպիսի հազվագյուտ մարդիկ բարեգործություն են կատարում՝ երախտագիտություն չակնկալելով:

237. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Այդ անհաջողությունը պատճառ դարձավ, որ թագավորը նոր պատերազմի պատրաստություն տեսնի:

- 1) Այդ անհաջողության պատճառով թագավորը նոր պատերազմի պատրաստություն էր տեսնում:
- 2) Այդ անհաջողությունը թագավորի՝ նոր պատերազմի պատրաստություն տեսնելու պատճառ դարձավ:
- 3) Նոր պատերազմի պատրաստություն տեսնելը թագավորի անհաջողության պատճառ դարձավ:
- 4) Այդ անհաջողությունն էր թագավորի՝ նոր պատերազմի պատրաստություն տեսնելու պատճառը:

238. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Այդ մարդը, որ արտաքուստ այնքան գորեղ և աննկուն էր երևում, մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ուներ:

- 1) Այդ մարդը, մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ունենալով, արտաքուստ գորեղ և աննկուն էր երևում:
- 2) Այդ մարդը, չնայած արտաքուստ այնքան գորեղ և աննկուն լինելուն, մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ուներ:
- 3) Մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ունեցող այդ մարդը արտաքուստ գորեղ և աննկուն էր երևում:
- 4) Արտաքուստ այնքան գորեղ և աննկուն երևացող այդ մարդը մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ուներ:

239. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Ես, որ աշակերտել եմ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

- 1) Թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտած լինելով՝ հայրենիքում ես անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 2) Չնայած թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտած լինելուս՝ հայրենիքում ես անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 3) Ես՝ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտածս, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 4) Թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտելով հանդերձ ես հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

240. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Երգահանը սաստիկ վրդովվում էր, երբ գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորթ ու օտարամուտ տարրեր էր նկատում:

- 1) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորթ ու օտարամուտ տարրեր նկատելու պատճառով:
- 2) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորթ ու օտարամուտ տարրեր նկատելիս:
- 3) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ իր նկատած խորթ ու օտարամուտ տարրերից:
- 4) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորթ ու օտարամուտ տարրեր նկատելու դեպքում:

241. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Թագավորի այցելություններն Ուտիք այնքան հաճախակի դարձան, որ կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:

- 1) Թագավորի այցելություններն Ուտիք հաճախակի դարձան արքունիքի տիկնանց շրջանում կասկածներ արթնացնելու չափ:
- 2) Թագավորի այցելություններն Ուտիք հաճախակի դարձան՝ կասկածներ արթնացնելով արքունիքի տիկնանց շրջանում:
- 3) Թագավորի այցելություններն Ուտիք կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում՝ այնքան հաճախակի դառնալու պատճառով:
- 4) Թագավորի այցելություններն Ուտիք, այդքան հաճախակի դառնալով, կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:

242. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Աշոտ թագավորի հաղթանակներն այնքան ոգևորեցին իշխաններին, որ մոռացվեցին նրանց միջև եղած գժտությունները:

- 1) Իշխանների միջև եղած գժտությունները մոռացվեցին Աշոտ թագավորի հաղթանակներով նրանց ոգևորվելու շնորհիվ:
- 2) Աշոտ թագավորի հաղթանակներով ոգևորվելով՝ իշխանները մոռացան իրենց միջև եղած գժտությունները:
- 3) Աշոտ թագավորի հաղթանակները ոգևորեցին իշխաններին նրանց միջև եղած գժտությունները մոռացվելու աստիճան:
- 4) Իշխանների միջև եղած գժտությունները մոռացվեցին Աշոտ թագավորի հաղթանակներով նրանց ոգևորվելուց:

243. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Այդպես որոշեց թագուհին, հենց որ արքայորդին մտավ Գարդման:

- 1) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելու պահին:
- 2) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելուն պես:
- 3) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելու ժամանակ:
- 4) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելուց հետո:

244. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Հենց այն օրը, երբ տեսավ հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը, Արամը վճռեց բժիշկ դառնալ:

- 1) Հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելու օրը Արամը վճռեց հենց բժիշկ դառնալ:
- 2) Հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելով՝ Արամը վճռեց բժիշկ դառնալ:
- 3) Հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելուն պես Արամը վճռեց բժիշկ դառնալ:
- 4) Հենց հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելու օրը Արամը վճռեց բժիշկ դառնալ:

245. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Մենք, որ դրսից հենց նոր էինք եկել, հազիվհազ կարողացանք գսպել մեր ուր որ է պոռթկացող ծիծաղը:

- 1) Դրսից գալուն պես մենք հազիվհազ կարողացանք գսպել մեր ուր որ է պոռթկացող ծիծաղը:
- 2) Մենք, դրսից հենց նոր գալով, հազիվհազ կարողացանք գսպել մեր ուր որ է պոռթկացող ծիծաղը:
- 3) Մենք՝ դրսից հենց նոր եկածներս, հազիվհազ կարողացանք գսպել մեր ուր որ է պոռթկացող ծիծաղը:
- 4) Մենք՝ դրսից հենց նոր եկողներս, հազիվհազ կարողացանք գսպել մեր ուր որ է պոռթկացող ծիծաղը:

246. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) *Ճանապարհի եզրերին էլեկտրասյուներ կան, որ լույս են տանում լեռների ծալքերում ծվարած գյուղերին:*
Ճանապարհի եզրերին լեռների ծալքերում ծվարած գյուղերին լույս տանող էլեկտրասյուներ կան:
- 2) *Նկարիչը հորս միջոցով հավաքվածներին խնդրեց, որ հեռանան, գնան իրենց տները:*
Նկարիչը հորս միջոցով հավաքվածներին խնդրեց հեռանալ, գնալ իրենց տները:
- 3) *Շատերը չէին հավատում, որ Աղասի Խանջյանը ինքնասպանություն է գործել:*
Շատերը չէին հավատում Աղասի Խանջյանի՝ ինքնասպանություն գործելուն:
- 4) *Որքան կոպիտ ու առնական են մեր լեռները, այնքան քնքուշ ու մեղեդային են մեր լեռնցիների երգերը:*
Մեր լեռները կոպիտ ու առնական են մեր լեռնցիների երգերի քնքուշ ու մեղեդային լինելու չափ:

247. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) *Մենք ապրում ենք Գորիսի մեր խրճիթում, որ հայրս էր մի երկու տարի առաջ կառուցել:*
Մենք ապրում ենք մի երկու տարի առաջ հորս կառուցած Գորիսի մեր խրճիթում:
- 2) *Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը, որը ասք է մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին:*
Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը՝ մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին ասքը:
- 3) *Մեր քաղաքի մարդիկ, որոնք տակավին չեն մոռացել հողագործությունը, մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատողաշ ծառերին:*
Մեր քաղաքի՝ հողագործությունը տակավին չմոռացած մարդիկ մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատողաշ ծառերին:
- 4) *Ինչ որ կատարվեց տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում, անհնար էր նկարագրել:*
Տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում կատարվածը անհնար էր նկարագրել:

248. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) *Գրողներից ովքեր մտերմություն էին անում Ջորյանի հետ, գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:*
Գրողներից Ջորյանի հետ մտերմություն անողները գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:
- 2) *Ճանաչեց ինձ, նույնիսկ հիշեց իր խորհուրդը, որ տվել էր ինձ՝ սովորել, բարձրագույն կրթություն ստանալ:*
Ճանաչեց ինձ, նույնիսկ հիշեց սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու մասին ինձ իր տված խորհուրդը:
- 3) *Կարդում էր հանդարտ, մի այնպիսի ջերմությամբ, որ աննկատելի նվաճում էր ընթերցողին:*
Կարդում էր հանդարտ, ընթերցողին աննկատելի նվաճող մի ջերմությամբ:
- 4) *Թումանյանի հոբելյանը մի սովորական հանդես չէր, որ կատարվում է նշանակված օրը և հետևյալ օրն իսկ մոռացվում:*
Թումանյանի հոբելյանը նշանակված օրը կատարվող և հետևյալ օրն իսկ մոռացվող մի սովորական հանդես չէր:

249. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված պարզի:

- *Բեմադրվեց նաև Շեքսպիրի վերջին գործը՝ «Փոթորիկը», որ մեծ թատերագրի թողած մարգարեական ժառանգությունն էր նոր ժամանակներին:*
Բեմադրվեց նաև Շեքսպիրի վերջին գործը՝ «Փոթորիկը»՝ մեծ թատերագրի՝ նոր ժամանակներին թողած մարգարեական ժառանգությունը:
- *«Մակբեթի» մեջ Շեքսպիրը հանգում է այն գաղափարին, որ մարդու մեջ անհատթահարելի է փառամոլության ձգտումը:*
«Մակբեթի» մեջ Շեքսպիրը հանգում է մարդու մեջ փառամոլության ձգտման անհատթահարելի լինելու գաղափարին:
- *Կամքի թուլությունից չէ, որ Համլետը չի իրագործում իրեն պարտադրված անդրշիրիմյան հրամանը:*
Համլետի՝ իրեն պարտադրված անդրշիրիմյան հրամանը չիրագործելը կամքի թուլությունից չէ:
- *Շատ սիրող հայրը փչացնում է որդուն այնպես, ինչպես շատ վարար առվակը քշում-տանում է նորաբույս տունկը:*
Շատ սիրող հայրը փչացնում է որդուն շատ վարար առվակի՝ նորաբույս տունկը քշել-տանելու պես:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

250. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորի՝ ապարանքից ելնելուն:

- 1) Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորին, որ ելնելու էր ապարանքից:
- 2) Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, որ թագավորը ելնի ապարանքից:
- 3) Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, թե երբ է թագավորը ելնելու ապարանքից:
- 4) Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, որպեսզի թագավորը ելնի ապարանքից:

251. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Արքայորդին, այդ աղջկա կապանքներից ազատվելով, ավելի եռանդով սկսեց զբաղվել յուր հետաձգված գործերով:

- 1) Արքայորդին, որ ազատվել էր այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց զբաղվել յուր հետաձգված գործերով:
- 2) Երբ արքայորդին ազատվեց այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց զբաղվել յուր հետաձգված գործերով:
- 3) Արքայորդին, երբ ազատվեց այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց զբաղվել յուր հետաձգված գործերով:
- 4) Արքայորդին, այդ աղջկա կապանքներից ազատվելով, ավելի եռանդով սկսեց զբաղվել յուր այն գործերով, որոնք հետաձգվել էին:

252. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Մեծահամբավ ցլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:

- 1) Եթե մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 2) Երբ որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 3) Հենց որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 4) Կրկեսի անտարբեր ավազը կխմի մեծահամբավ ցլամարտիկի արյունը, երբ նա տապալվի:

253. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Թիֆլիսում պատշաճ ընդունելության չարժանանալով՝ դերասանների խումբը հիասթափված վերադարձավ Պոլիս:

- 1) Դերասանների խումբը, որը Թիֆլիսում պատշաճ ընդունելության չէր արժանացել, հիասթափված վերադարձավ Պոլիս:
- 2) Թիֆլիսում պատշաճ ընդունելության չարժանանալով՝ դերասանների խումբը վերադարձավ Պոլիս, քանի որ հիասթափված էր:
- 3) Քանի որ Թիֆլիսում պատշաճ ընդունելության չարժանացավ, դերասանների խումբը հիասթափված վերադարձավ Պոլիս:
- 4) Քանի որ դերասանների խումբը Թիֆլիսում պատշաճ ընդունելության չէր արժանացել, այն հիասթափված վերադարձավ Պոլիս:

254. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Հեղինեղուկ հանդիսատեսը իր պաշտամունքի առարկա կուռքի տապալումը տեսնելիս մոռանում է երեկվա իր հիացմունքը:

- 1) Հեղինեղուկ հանդիսատեսը իր պաշտամունքի առարկա կուռքի տապալումը տեսնելիս մոռանում է, որ երեկ հիանում էր նրանով:
- 2) Երբ հեղինեղուկ հանդիսատեսը տեսնում է իր պաշտամունքի առարկա կուռքի տապալումը, մոռանում է երեկվա իր հիացմունքը:
- 3) Եթե հեղինեղուկ հանդիսատեսը տեսնում է իր պաշտամունքի առարկա կուռքի տապալումը, նա մոռանում է երեկվա իր հիացմունքը:
- 4) Հեղինեղուկ հանդիսատեսը, երբ տեսնում է իր պաշտամունքի առարկա կուռքի տապալումը, մոռանում է երեկվա իր հիացմունքը:

255. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Բեմական ներքին շնորհից զուրկ այդ դերասանուհին մի կարճ ժամանակ աղմկեց մեր բեմերում մինչև իր արտաքին անհերքելի շնորհների խամբելը:

- 1) Այդ դերասանուհին, որ զուրկ էր բեմական ներքին շնորհից, մի կարճ ժամանակ աղմկեց մեր բեմերում մինչև իր արտաքին անհերքելի շնորհների խամբելը:
- 2) Բեմական ներքին շնորհից զուրկ այդ դերասանուհին մի կարճ ժամանակ աղմկեց մեր բեմերում, մինչև խամբեցին իր արտաքին անհերքելի շնորհները:
- 3) Այդ դերասանուհին աղմկեց մեր բեմերում մի կարճ ժամանակ մինչև իր արտաքին անհերքելի շնորհների խամբելը, քանի որ զուրկ էր բեմական ներքին շնորհից:
- 4) Բեմական ներքին շնորհից զուրկ այդ դերասանուհին աղմկեց մեր բեմերում մի կարճ ժամանակ, քանի որ խամբեցին իր արտաքին անհերքելի շնորհները:

256. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունն իրագործելու համար ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել:

- 1) Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել իրագործելու համար իմ մտադրությունը, որ այդ ստեղծագործության բեմականացումն էր:
- 2) Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել, քանի որ պիտի իրագործեի այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունը:
- 3) Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել, որպեսզի իրագործեի այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունը:
- 4) Ինձ տրամադրել էին պայմաններ, որոնք այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունն իրագործելու համար բացառիկ էին:

257. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում նույն այդ բարիքն արտադրողներին:

- 1) Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում այն մարդկանց, ովքեր արտադրում են նույն այդ բարիքը:
- 2) Ովքեր համայնապատկան բոլոր բարիքները կողոպտում են, երեսպաշտորեն փշրանքներ են նետում նույն այդ բարիքն արտադրողներին:
- 3) Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում նրանց, ովքեր արտադրում են նույն այդ բարիքը:
- 4) Բոլոր բարիքները, որ համայնքին են պատկանում, կողոպտում են և երեսպաշտորեն փշրանքներ են նետում նույն այդ բարիքն արտադրողներին:

258. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Չլինելով գրող կամ գրականագետ՝ Ռոմանոս Մելիքյանը իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:

- 1) Ռոմանոս Մելիքյանը, որը գրող կամ գրականագետ չէր, իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:
- 2) Չլինելով գրող կամ գրականագետ՝ Ռոմանոս Մելիքյանը հիանալի հասկանում էր գրական երկերը, քանի որ նուրբ ճաշակ և հոտառություն ուներ:
- 3) Թեև գրող կամ գրականագետ չէր, Ռոմանոս Մելիքյանը իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:
- 4) Չնայած Ռոմանոս Մելիքյանը գրող կամ գրականագետ չէր, իր հոտառությամբ և նուրբ ճաշակով նա հիանալի հասկանում էր գրական երկերը:

259. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողները հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը:

- 1) Ովքեր հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը, չէին վախենում բռնապետական իշխանության խարդավանքներից:
- 2) Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողներն էին, որ հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը:
- 3) Ովքեր չէին վախենում բռնապետական իշխանության խարդավանքներից, հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը:
- 4) Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողները նրանք էին, ովքեր հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը:

260. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նախ և առաջ իր բնակիչների անգուսպ և դյուրաբորբոք բնավորությամբ:

- 1) Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նախ և առաջ նրանով, որ իր բնակիչները անգուսպ և դյուրաբորբոք բնավորություն ունեն:
- 2) Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը նախ և առաջ հայտնի է, որովհետև նրա բնակիչները անգուսպ և դյուրաբորբոք բնավորություն ունեն:
- 3) Նախ և առաջ բնակիչների անգուսպ և դյուրաբորբոք բնավորությամբ հայտնի Կատանիա քաղաքն է, որ ապաստանել է Էթնայի ստորոտում:
- 4) Կատանիա քաղաքը, որ ապաստանել է Էթնայի ստորոտում, հայտնի է նախ և առաջ իր բնակիչների անգուսպ և դյուրաբորբոք բնավորությամբ:

261. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Նրա անունը լսելիս կամ նրան հիշելիս իմ սիրտը լցվում է գորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվությամբ:

- 1) Երբ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան, իմ սիրտը լցվում է գորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվությամբ:
- 2) Եթե լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան, իմ սիրտը լցվում է գորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվությամբ:
- 3) Իմ սիրտը գորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվությամբ է լցվում, քանի դեռ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան:
- 4) Իմ սիրտը գորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվությամբ է լցվում այն բանի շնորհիվ, որ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան:

262. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերն իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը վաստակելու նպատակով էին հաճախում Գարդման:

- 1) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերի՝ Գարդման հաճախելու նպատակն այն էր, որ իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը վաստակեն:
- 2) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը Գարդման էին հաճախում, որովհետև նպատակ ունեին վաստակելու իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը:
- 3) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը Գարդման էին հաճախում, որպեսզի վաստակեն իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը:
- 4) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերի՝ Գարդման հաճախելու նպատակն էր, որ վաստակեն իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը:

263. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

- 1) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան, որ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված հազվագյուտ մի մանուշակ է, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:
- 2) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը, քանի որ կիսովին ապականված է աշխարհիկ կեղծավորությամբ:
- 3) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակն է, որ այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:
- 4) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, որ կիսովին ապականված է աշխարհիկ կեղծավորությամբ, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

264. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև նրանից առաջ ու հետո ապրած քիչ հայտնի աշուղներով:*
Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև քիչ հայտնի աշուղներով, որ ապրել էին նրանից առաջ ու հետո:
- 2) *Սարերից իջնում էին հազարավոր քոչվորներ՝ իրենց խաշնարածության բարիքներով հեղեղելու Գորիսի մեծ տոնավաճառը:*
Սարերից իջնում էին հազարավոր քոչվորներ, որպեսզի իրենց խաշնարածության բարիքներով հեղեղեն Գորիսի մեծ տոնավաճառը:
- 3) *Նրա գրույցներից մեկի նյութը մեր հարուստներից շատերի անճաշակ հագնվելն էր:*
Նրա գրույցներից մեկի նյութն էր այն, որ մեր հարուստներից շատերը անճաշակ են հագնվում:
- 4) *Նվազախմբի ձայնը երկրաշարժի տպավորություն թողեց գորիսեցիներից հատկապես Շենում ապրողների վրա:*
Նվազախմբի ձայնը երկրաշարժի տպավորություն թողեց գորիսեցիներից հատկապես նրանց վրա, ովքեր Շենում էին ապրում:

265. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց Բակունց Ստեփան դայու տղայի՝ Ալեքսանդրի գրածը:*
Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց այն, ինչ գրել է Բակունց Ստեփան դայու տղան՝ Ալեքսանդրը:
- 2) *Գուսանական ու ժողովրդական երգեր լսելու համար Մաթյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն:*
Մաթյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն, որպեսզի գուսանական ու ժողովրդական երգեր լսեր:
- 3) *Նա գրաճանաչ էր դարձել 1921-ին՝ վեց տարեկանը դեռ չլրացած:*
Նա գրաճանաչ էր դարձել 1921-ին, երբ վեց տարեկանը դեռ չէր լրացել:
- 4) *Թռուցիկը պատմում էր դեկավարներից մեկի՝ Թիֆլիսում ինքնասպան լինելու մասին:*
Թռուցիկը պատմում էր դեկավարներից մեկի մասին, որը Թիֆլիսում ինքնասպան էր եղել:

266. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Այդ երեկոյի ժամանակ՝ բոլոր արտահայտվողների՝ ելույթներն ավարտելուց հետո, մենք ընկերներով մոտեցանք Թումանյանին:*
Այդ երեկոյի ժամանակ, երբ ավարտվեցին բոլոր արտահայտվողների ելույթները, մենք ընկերներով մոտեցանք Թումանյանին:
- 2) *Ինքնագործ թատերական խմբերի համար մեկ գործողությամբ պիեսներ գրելու պատվերներ էինք ստացել:*
Պատվերներ էինք ստացել, որ ինքնագործ թատերական խմբերի համար մեկ գործողությամբ պիեսներ գրենք:
- 3) *Գնացել էի Շինուհայր գյուղը՝ Դավիթ-Բեկի մասին զրույցներ հավաքելու:*
Գնացել էի Շինուհայր գյուղը, որ զրույցներ հավաքեմ Դավիթ-Բեկի մասին:
- 4) *Տղաներ, գոնե շնորհակալություն հայտնեք ձեզ շոր ու կոշիկ նվիրողին:*
Տղաներ, գոնե շնորհակալություն հայտնեք նրան, ով ձեզ շոր ու կոշիկ է նվիրում:

267. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Խորամանկ, խելացի և ճկուն դիվանագետ լինելով հանդերձ չկարողացավ ըմբռնել իշխանական դավերի տրամաբանությունը:*
Չնայած խորամանկ, խելացի և ճկուն դիվանագետ էր, չկարողացավ ըմբռնել իշխանական դավերի տրամաբանությունը:
- 2) *Դարասկզբին այդ մարդու անունն անբաժան էր մեր մտավորականներից, հատկապես ազգային կյանքով հետաքրքրվողներից:*
Դարասկզբին այդ մարդու անունն անբաժան էր մեր մտավորականներից, հատկապես նրանցից, ովքեր հետաքրքրվում էին ազգային կյանքով:
- 3) *Պոլսում Փափագյանին խնդրել էին մասնակցել թուրքական թատրոնի ստեղծման ուղղությամբ իրենց ձեռնարկումներին:*
Պոլսում Փափագյանին խնդրել էին մասնակցել իրենց ձեռնարկումներին, որոնք ուղղված էին թուրքական թատրոնի ստեղծմանը:
- 4) *Ոճրի հանդեպ աշխարհիս հզորների անտարբեր լինելուց նոր ոճիրներ են ծնվում:*
Նոր ոճիրներ են ծնվում նրանից, որ աշխարհիս հզորները անտարբեր են ոճրի հանդեպ:

268. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Դեզդեմոնա խաղալու էր Արուսը՝ իր արտաքին շնորհներով ու ներքին անգնահատելի տվյալներով այդ դերին հարմար եկող միակ դերասանուհին թատրոնում:*
Դեզդեմոնա խաղալու էր Արուսը, որը իր արտաքին շնորհներով ու ներքին անգնահատելի տվյալներով այդ դերին հարմար եկող միակ դերասանուհին էր թատրոնում:
- 2) *Մամուլը ոչինչ չէր կարող մերժել այդ հրապուրիչ մեկենասուհիներին՝ իր գոյությամբ պարտական լինելով նրանց ամուսինների նյութական օժանդակությանը:*
Մամուլը ոչինչ չէր կարող մերժել այդ հրապուրիչ մեկենասուհիներին, քանի որ իր գոյությամբ պարտական էր նրանց ամուսինների նյութական օժանդակությանը:
- 3) *Այդ ժամանակամիջոցում մասնակցեցի թատրոնի՝ դեպի Սիցիլիա կատարած ուղևորությանը:*
Այդ ժամանակամիջոցում մասնակցեցի այն ուղևորությանը, որ թատրոնը կատարեց դեպի Սիցիլիա:
- 4) *Դժվարությամբ համոզեցի Սկրտիչ Չանանին հետաձգել իր վաղեմի ցանկության իրագործումը:*
Դժվարությամբ համոզեցի Սկրտիչ Չանանին, որ հետաձգի իր վաղեմի ցանկության իրագործումը:

269. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին.

- Մի՞թե չեք ճանաչում նրան, որ ներս եք թողել. նա մի անգամ ինձ խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:

- 1) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում նրան, որ ներս են թողել. ինքը մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:
- 2) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում նրան, որ ներս են թողել. նա մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:
- 3) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե իրենք չեն ճանաչում նրան, որ ներս են թողել. նա մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:
- 4) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում իրեն, որ ներս են թողել. նա մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:

270. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Բժիշկն ասում է թագավորին.

- Թագավորն ասլրած կենա, ես ուզում եմ, որ դու քո պալատում մի սենյակ տաս ինձ, որ ասլրեմ, և ոչ ոք էլ ինձ մոտ չմտնի, նույնիսկ դուք՝ պալատականներդ:

- 1) Բժիշկն ասում է թագավորին, որ ինքն ուզում է, որ նա իր պալատում մի սենյակ տա իրեն, որ ասլրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:
- 2) Բժիշկն ասում է թագավորին, որ նա ուզում է, որ իր պալատում մի սենյակ տա իրեն, որ ասլրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:
- 3) Բժիշկն ասում է թագավորին, որ ինքն ուզում է, որ նա իր պալատում մի սենյակ տա նրան, որ ասլրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:
- 4) Բժիշկն ասում է թագավորին, որ ինքն ուզում է, որ ինքն իր պալատում մի սենյակ տա նրան, որ ասլրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:

271. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Ո՛չ, անկարելի է, - պատասխանեց ծերունին տղային. - եթե թողնեմ, էլ երբեք չեմ տեսնի աղջկաս, դու էլ մնա՛ մեզ մոտ և շուտով կմոռանաս քո տխուր երկիրը:

- 1) Ծերունին տղային պատասխանեց, որ անկարելի է. եթե թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան, ինքն էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա նրա տխուր երկիրը:
- 2) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե թողնի, էլ երբեք չի տեսնի նրա աղջկան, նա էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
- 3) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե ինքը թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան, նա էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
- 4) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է, եթե նա թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան, նա էլ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:

272. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Չավակներս, - ասաց հայրը, - ես չգիտեմ, թե երբ կհասնի իմ վերջին օրը, դրա համար էլ ուզում եմ որոշել, թե ինչ բաժին է ստանալու ձեզնից ամեն մեկը իմ մահից հետո:

- 1) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:
- 2) Հայրն ասաց իր զավակներին, որ նա չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու իրենցից ամեն մեկը իր մահից հետո:
- 3) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի նրա վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:
- 4) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ նա ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու ձեզնից ամեն մեկը իր մահից հետո:

273. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Դիմելով մեզ՝ կինն ասաց.

- Երեխաներ, դուք հանգիստ նստե՛ք, ու եթե քուններդ տանի, քնե՛ք, իսկ մենք մի քիչ փայտ հավաքենք և երբ գործներս ավարտենք, կգանք, ձեզ կտանենք տուն:

- 1) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ մենք հանգիստ նստենք, ու եթե քուններս տանի, քնենք, իսկ նրանք մի քիչ փայտ հավաքեն և երբ գործերն ավարտեն, կգան, մեզ կտանեն տուն:
- 2) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ մենք հանգիստ նստենք, ու եթե քուններս տանի, քնենք, իսկ իրենք մի քիչ փայտ հավաքեն և երբ իրենց գործերը ավարտեն, կգան, մեզ կտանեն տուն:
- 3) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ դուք հանգիստ նստեք, ու եթե քուններդ տանի, քնեք, իսկ իրենք մի քիչ փայտ հավաքեն և երբ գործներն ավարտեն, կգան, մեզ կտանեն տուն:
- 4) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ նրանք հանգիստ նստեն, ու եթե քունները տանի, քնեն, իսկ իրենք մի քիչ փայտ հավաքեն և երբ գործներն ավարտեն, կգան, նրանց կտանեն տուն:

274. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Ես առողջությունս չեմ կորցրել, ոչ էլ կարողությունս, - պատասխանում է ձեզ վաճառականը և ավելացնում է, - այսօր համբերե՛ք, վաղը կպատմեմ, և ամեն ինչ կիմանաք:

- 1) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
- 2) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ նա իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
- 3) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքն իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերենք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
- 4) Վաճառականը պատասխանում է ձեզ ու ավելացնում, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:

275. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Արծիվն ասում է Դիվանային.

- Ո՛վ բարի մարդ, ես խոսք տվի, որ քեզ այն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ էլ սիրտդ ուզի, ես կկատարեմ:

- 1) Արծիվն ասում է Դիվանային, որ նա խոսք տվեց, որ նրան այն լավությունը կանի, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ էլ սիրտը ուզի, ինքը կկատարի:
- 2) Արծիվն ասում է Դիվանային, որ ինքը խոսք տվեց, որ նրան այն լավությունը կանի, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ էլ նրա սիրտը ուզի, ինքը կկատարի:
- 3) Արծիվն ասում է Դիվանային, որ ինքը խոսք տվեց իրեն, որ այն լավությունը կանի, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ էլ սիրտդ ուզի, ինքը կկատարի:
- 4) Արծիվն ասում է Դիվանային, որ ինքը քեզ խոսք տվեց, որ կանի այն լավությունը, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ էլ սիրտդ ուզի, նա կկատարի:

276. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Լուիզան, նայելով հյուրին, ասաց.

- Պարո՛ն, կգարմանաք, եթե ես ասեմ, որ այժմ ընկերս ստեղծում է անծանոթ դերասանի համար փառք մեր քաղաքում:

- 1) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ նա կգարմանա, եթե ինքն ասի, որ այժմ իր ընկերը ստեղծում է անծանոթ դերասանի համար փառք իրենց քաղաքում:
- 2) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ պարոնը կգարմանա, եթե նա ասի, որ այժմ իր ընկերը ստեղծում է անծանոթ դերասանի համար փառք իրենց քաղաքում:
- 3) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ ինքը կգարմանա, եթե նա ասի, որ այժմ իր ընկերը ստեղծում է անծանոթ դերասանի համար փառք իրենց քաղաքում:
- 4) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ նա կգարմանա, եթե ինքն ասի, որ այժմ նրա ընկերը ստեղծում է անծանոթ դերասանի համար փառք իրենց քաղաքում:

277. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Վարդան, - ասաց տղան, երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, - հիմա ես նորից կարող եմ քեզ հետ ծով դուրս գալ. նրանք մեզ օգնեցին, որ մի քիչ փող վաստակենք:

- 1) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղան ասաց Վարդանին, որ հիմա ինքը նորից կարող է նրա հետ ծով դուրս գալ. իրենք նրանց օգնեցին, որ մի քիչ փող վաստակեն:
- 2) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղան ասաց Վարդանին, որ հիմա ինքը նորից կարող է նրա հետ ծով դուրս գալ. նրանք իրենց օգնեցին, որ մի քիչ փող վաստակեն:
- 3) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղան ասաց Վարդանին, որ հիմա ինքը նորից կարող է նրա հետ ծով դուրս գալ, նրանք մեզ օգնեցին, որ մի քիչ փող վաստակենք:
- 4) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղան ասաց Վարդանին, որ հիմա նա նորից կարող է իր հետ ծով դուրս գալ. նրանք իրենց օգնեցին, որ մի քիչ փող վաստակեն:

278. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

-Ես քեզ չեմ կանչել հանդիմանելու համար, - ասաց պրոֆեսորը Գոհարին և ժպտալով ավելացրեց. - ես ուզում եմ քեզ հայտնել մի բան, որին դու տեղյակ չես:

- 1) Պրոֆեսորը Գոհարին ասաց, որ ինքը նրան չի կանչել հանդիմանելու համար, և ժպտալով ավելացրեց, որ նա ուզում է նրան հայտնել մի բան, որին նա տեղյակ չէ:
- 2) Պրոֆեսորը Գոհարին ասաց և ժպտալով ավելացրեց, որ ինքը նրան չի կանչել հանդիմանելու համար, ինքն ուզում է նրան հայտնել մի բան, որին ինքը տեղյակ չէ:
- 3) Պրոֆեսորը Գոհարին ասաց, որ ինքը նրան չի կանչել հանդիմանելու համար, և ժպտալով ավելացրեց, որ ինքն ուզում է նրան հայտնել մի բան, որին նա տեղյակ չէ:
- 4) Պրոֆեսորը Գոհարին ասաց, որ նա իրեն չի կանչել հանդիմանելու համար, և ժպտալով ավելացրեց, որ նա ուզում է իրեն հայտնել մի բան, որին ինքը տեղյակ չէ:

279. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

-Արմեն ջան, սիրելիս, ես ոչինչ չեմ խնայել քո ուսման համար, - ասաց մայրը և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, - միանգամայն վստահ եմ՝ դու հայտնի իրավաբան ես դառնալու:

- 1) Մայրն ասաց սիրելի Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
- 2) Մայրն ասաց Արմենին և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար և միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
- 3) Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
- 4) Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ միանգամայն վստահ է, որ ինքը հայտնի իրավաբան է դառնալու:

280. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Դիմելով Լիլիթին՝ Արմենը հարցրեց, թե ինչու է նրա գեղեցիկ դեմքը տխուր, ապա ավելացրեց, որ գնալով հզորանում է իր սերը նրա նկատմամբ:

- 1) - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր, - դիմելով Լիլիթին՝ Արմենը հարցրեց, ապա ավելացրեց, - գնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:
- 2) Դիմելով Լիլիթին՝ Արմենը հարցրեց, ապա ավելացրեց. - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր. գնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:
- 3) - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր, - դիմելով Լիլիթին՝ հարցրեց Արմենը, ապա ավելացրեց, - գնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:
- 4) - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր, - Լիլիթին դիմելով՝ հարցրեց Արմենը, ապա ավելացրեց, - գնալով հզորանալու է իր սերը քո նկատմամբ:

281. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին, որ իրենք բոլորը գիտեն, թե ինչպես վարվեն իրենց ունեցածի հետ. գնանք, իրենց հանգիստ թողնենք և նրանց ոչինչ չպատմենք:

- 1) Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին. - Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք ձեր ունեցածի հետ. գնացե՛ք, մեզ հանգի՛ստ թողե՛ք և նրանց ոչինչ չպատմե՛ք:
- 2) Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին. - Դուք բոլորդ գիտեք, թե ինչպես վարվեք ձեր ունեցածի հետ. գնացե՛ք, մեզ հանգի՛ստ թողե՛ք և նրանց ոչինչ չպատմե՛ք:
- 3) - Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք մեր ունեցածի հետ. գնացե՛ք, մեզ հանգի՛ստ թողե՛ք և նրանց ոչինչ չպատմե՛ք, - պատասխանեցին մեզ հարուստի ժառանգները:
- 4) Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին. - Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք մեր ունեցածի հետ. գնացե՛ք, իրենց հանգի՛ստ թողե՛ք և նրանց ոչինչ չպատմե՛ք:

282. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Տանտերն ինձ պատասխանեց, որ ես ինքս եմ կատակասերը. ինքը երեկ հավատաց իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ ես այսօր չեմ ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորս իրեն ծաղրում ենք:

- 1) Տանտերն ինձ պատասխանեց. -Դու ինքդ ես կատակասերը. ինքը երեկ հավատաց քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- 2) Տանտերն ինձ պատասխանեց. -Դու ինքդ ես կատակասերը. ես երեկ հավատացի քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- 3) Տանտերն ինձ պատասխանեց. -Ես ինքս եմ կատակասերը. ես երեկ հավատացի քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- 4) - Դու ինքդ ես կատակասերը. նա երեկ հավատաց իր փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք, - պատասխանեց ինձ տանտերը:

283. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան, որ քանի որ նա իրեն նվեր է ուզում տալ, թող նվիրի մի պարկ ոսկի, որ իր կյանքի մնացած մասը իր կնոջ ու իր երեխաների հետ ապրի առանց կարիքի և նրանից ոչինչ չխնդրի:

- 1) Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան.
- Քանի որ դու ինձ նվեր ես ուզում տալ, նվիրի՛ր մի պարկ ոսկի, որ կյանքիս մնացած մասը կնոջս ու երեխաներիս հետ ապրեմ առանց կարիքի և քեզնից ոչինչ չխնդրեմ:
- 2) Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան.
- Քանի որ նա ինձ նվեր է ուզում տալ, թող նվիրի մի պարկ ոսկի, որ իմ կյանքի մնացած մասը կնոջս ու երեխաներիս հետ ապրեմ առանց կարիքի և նրանից ոչինչ չխնդրեմ:
- 3) - Քանի որ դու իրեն նվեր ես ուզում տալ, նվիրի՛ր մի պարկ ոսկի, որ իր կյանքի մնացած մասը իր կնոջ ու երեխաների հետ ապրի առանց կարիքի ու քեզանից ոչինչ չխնդրի,- մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ ասաց պալատականը նրան:
- 4) Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան.
- Քանի որ նա ուզում է իրեն նվեր տալ, թող նվիրի մի պարկ ոսկի, որ իր կնոջ և երեխաների հետ ապրի առանց կարիքի ու նրանից ոչինչ չխնդրի:

284. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Կինն ասաց բժշկին, որ իր ամուսինը ծանր հիվանդ է, թող զա և նայի. իրենք աղքատ մարդիկ են. բոլորը մերժել են իրենց:

- 1) - Բժիշկ, նրա ամուսինը ծանր հիվանդ է, ե՛կ և նայի՛ր. նրանք աղքատ մարդիկ են. բոլորը մերժել են նրանց, - ասաց կինը:
- 2) Կինն ասաց բժշկին.
-Նրա ամուսինը ծանր հիվանդ է, ե՛կ և նայի՛ր. իրենք աղքատ մարդիկ են. բոլորը մերժել են իրենց:
- 3) Կինն ասաց.
-Բժիշկ, ամուսինս ծանր հիվանդ է, ե՛կ և նայի՛ր, մենք աղքատ մարդիկ ենք. դուք բոլորը մերժել եք մեզ:
- 4) Կինն ասաց.
-Բժիշկ, ամուսինս ծանր հիվանդ է, ե՛կ և նայի՛ր. մենք աղքատ մարդիկ ենք. բոլորը մերժել են մեզ:

285. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Դուք պատասխանեցիք նավապետին, որ սպասել չեք կարող, և ավելացրիք, որ նա թողնի դասալիքին իր տեղում ու զբաղվի ձեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք ձեզ:

- 1) Դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք.
-Սպասել չենք կարող, Դուք թողե՛ք դասալիքին իր տեղում ու զբաղվե՛ք մեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք ձեզ:
- 2) - Նավապետ, սպասել չենք կարող, - դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք, - Դուք թողե՛ք դասալիքին իր տեղում ու զբաղվե՛ք նրանց մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք նրանց:
- 3) - Սպասել չենք կարող, - պատասխանեցիք դուք նավապետին և ավելացրիք, - Դուք թողե՛ք դասալիքին իր տեղում ու զբաղվե՛ք մեր մեկնումով, որովհետև նրանք պետք է դիմավորեն մեզ:
- 4) - Սպասել չենք կարող, - դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք, - թողե՛ք դասալիքին իր տեղում և զբաղվե՛ք ձեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք նրանց:

286. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Պատանհին ասաց Թոմին, որ իրենք պետք է աչալուրջ լինեն, քանի որ թշնամու երկրում են, և իրենց ընկերներին իրենք կասեն, որ Հարրիսը իրենց դավաճանեց, որպեսզի նրանք զգույշ լինեն:

- 1) Պատանհին ասաց.
-Թո՛մ, մենք պետք է աչալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և իրենց ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի նրանք զգույշ լինեն:
- 2) Պատանհին ասաց Թոմին.
-Մենք պետք է աչալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և մեր ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի նրանք զգույշ լինեն:
- 3) Պատանհին ասաց Թոմին.
-Մենք պետք է աչալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և իրենց ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի իրենք զգույշ լինեն:
- 4) - Մենք պետք է աչալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և նրանց ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի դուք զգույշ լինեք, - ասաց պատանհին Թոմին:

287. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Թոմն ասաց պարոն Ջոնին, որ իրենք պետք է շարունակեն առաջ գնալ, որովհետև չեն կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և իրենց ընկերները կկորցնեն իրենց հետքը:

- 1) Թոմն ասաց.
-Պարո՛ն Ջոն, մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և մեր ընկերները կկորցնեն մեր հետքը:
- 2) Թոմն ասաց պարոն Ջոնին.
-Մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և նրանց ընկերները կկորցնեն մեր հետքը:
- 3) - Մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և իրենց ընկերները կկորցնեն իրենց հետքը,- ասաց Թոմը պարոն Ջոնին:
- 4) Թոմն ասաց.
-Պարո՛ն Ջոն, դուք պետք է շարունակեք առաջ գնալ, որովհետև չեք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և մեր ընկերները կկորցնեն մեր հետքը:

288. Ո՞ր նախադասության մեջ Լ-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ոստիկանները ժամանեցին կեսօրին և ամբողջ գյուղը տակնուվրա անելուց հետո հայտնաբերեցին Մարգարին:
- 2) Երեք օր է բացակայում են տնից և մենակ են թողել երկու անչափահաս երեխաներին:
- 3) Նա զգում էր որ այլևս չի տեսնելու արդեն հարազատ դարձած այդ մարդուն և սիրտը ցավում էր կորստի գիտակցությունից:
- 4) Մենք շատ բան ենք կորցրել պատմության քառուղիներում և կորցրածը գտնելու համար դեռ շատ պիտի դեգերենք:

289. Ո՞ր նախադասության մեջ Լ-ից առաջ ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Պարսպապատերին հապշտապ երևացին զինվորներ զենքերը պատրաստ պահած և հարձակման նշան արեցին:
- 2) Հայտնվեց կարճ ու գնդիկ մի գորական կորովի շարժումներով և գնաց եկվորներին ընդառաջ:
- 3) Բոլորը հոգնատանջ էին և ամեն ինչից երևում էր արագաերթ էին կտրել երկար ու ձիգ ճանապարհը:
- 4) Հանկարծ փայլատակեց ինչ-որ լույս և շրջակայքը լուսավորեց:

290. Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Տասներեքերորդ դարում օրըստօրե փթթող Անի քաղաքում Անանիա անունով մի իշխան էր ապրում:
- 2) Ստեպ-ստեպ կանգ էինք առնում ու շունչ առնելով շարունակում վերելքը:
- 3) Ջրերի վրա նեղ արահետներին շարագուշակ լռություն էր իջել:
- 4) Իմ սիրելի բանաստեղծներից են Տերյան Թումանյան Չարենց:

291. Ո՞ր նախադասության մեջ բութ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հայ գիրը ի մի հավաքեց մեր ցիրուցան մասնիկները ինչպես սրինգը գառնուկներին կամ լաստը նավաբեկյալներին:
- 2) Վաղուց մարել են այն ծափերը որոնք ի պատիվ Արտավազդ արքայի հեղինակած թատերախաղի դրողում էին Արտաշատի հոյակերտ կամարների տակ:
- 3) Օվկիանոսներ և մայրցամաքներ կամրջելով հայ գրերը իրար կապեցին մեր աշխարհասփյուռ հատվածները և բերին հանգուցեցին մայր հայրենիքին:
- 4) Մեսրոպյան գիրն էր որ պահեց պահպանեց մեր ոգին այն ամենը ինչ բարձրացնում է մեզ բոլոր բարձրերին հավասարեցնելով:

292. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ջմրուխտյա ջրին բազմած այս գեղադիր քաղաքում հեքիաթային է ամեն ինչ շքեղ արմավենիները գմբեթարդ ու հոյաշեն պալատները ծովի մակերևույթին դանդաղընթաց սահող մակույկները:
- 2) Պատանու աչքերը կարմրած էին ամբողջ գիշեր չէր քնել:
- 3) Դառնությամբ սրտի կսկիծով խորհում էր իր վիճակի մասին չէ որ ինքը թատրոն պիտի գնար ու ժառայառ այդ ծերունու հետ:
- 4) Այդ գիշեր քնել չկարողացավ նաև իշխան Կամսարականը շարունակ մտածում էր Անգեղաց իշխանիկի մասին:

293. Ո՞ր նախադասության մեջ բացահայտչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Երախտապարտ ժողովուրդը իմաստուն մի բնագրով զգաց ու ճանաչեց Մեսրոպի Հացեկաց գյուղի հողից ծնված իր գավակի սխրանքը բարձրացրեց նրան ու սրբացրեց դարերի մեջ:
- 2) Այդ տարի սփյուռքահայության ամենաբազմամարդ կենտրոններից մեկում Բեյրութում էր տեղի ունենում մշակութային փառատոնը:
- 3) Մեծ շուքով դիմավորեցին հայրենիքից եկածներին մի խումբ գրողների ու արվեստագետների և տեղավորեցին քաղաքի բարձրակարգ հյուրանոցներից մեկում:
- 4) Ահա և Բյուրականի աստղադիտակը հսկայական մի աչք ուղղված տիեզերական անհունին:

294. Ո՞ր նախադասության մեջ բացահայտչից հետո ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ութսունվեցի հոկտեմբերին Բուենոս Այրեսի օդանավակայանում վայրէջք կատարեցինք մենք հայաստանցիներս և հյուրընկալվեցինք տեղի հայկական համայնքի կողմից:
- 2) Ուշ գիշերով Ռուսաստանի քաղաքներից մեկում Ռուստովում մի գարեջրատան մոտով էի անցնում երբ տեսա մի հայ բանաստեղծի:
- 3) Միայն Հայր Մարդպետը պալատի և թագավորական կալվածքների կառավարիչն էր կողմնակից պարսից արքայի հրավերն ընդունելուն:
- 4) Մուշեղը բերդակալը սակայն ավելորդ համարեց կանանց զրույցներին մասնակցելը:

295. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նրանք նահատակներ էին նրանց այրել էր կրակը խեղդել էր պղտոր Արաքսը խոցել էր բարբարոսի թուրը:
- 2) Տիկինը հրամայեց բարեվայելչորեն ընդունել հայոց մեծ հայրապետի որդուն տիկինը տանել չէր կարողանում հայրապետական տան մնացած անդամներին և հավուր պատշաճի պատվել:
- 3) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին անթափանց անտառները նրանց մեջ ապրող մարդիկ իրենց աշխարհի սահմաններից դուրս մի այլ աշխարհ չէին ճանաչում:
- 4) Հայոց գետերի հինգ մեծամեծ նահատակները իրենց վրա կամուրջներ չէին հանդուրժում աղամորդու ձեռքն ու հնարամտությունը դեռ անգոր էին գսպել նրանց:

296. Նախադասություններից քանիստ՞ում է շեշտը սխալ տեղում դրված:

- Ավտոբուսում չժխել:
- Պահպանել լռություն:
- Աղբ մի գցե՛ք շքամուտքում:
- Չթափել ջուրը:

- 1) երկուսում
- 2) մեկում
- 3) երեքում
- 4) չորսում

297. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Թուղթը գրված է, և ինչ որ գրված է՝ չի ջնջվի:
- 2) Մի պահ Ատոմը կարկամեց (անակնկալ էր ամեն ինչ) և անկարող եղավ միանգամից ըմբռնել՝ ինչ կատարվեց:
- 3) Երբ ձիավորն ընկավ, Արծվին նետվեց նրա վրա՝ իմանալու՝ ով էր:
- 4) Գիտեր՝ ուրիշ ճամփա չկար. միմիայն տանջանքների միջով անցնելով էր այրուծին փրկվելու:

298. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:

- 1) Նա, անակնկալի գալով, գրեթե ցնծաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել՝ անգամ աչքերը փակած:
- 2) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճոխ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր անց՝ կեսգիշերին, վերածվեց արբշիռ գինարբուքի:
- 3) Ինչևէ, փաստն այն էր, որ պայթյունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ թողնելով այն անվնաս մնա, բայց դժոխային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայթյունից հրդեհ էր բռնկվել:
- 4) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քնել. նա ամեն կերպ ճգնում էր կռահել՝ այդ վատ բանը կատարվե՞լ է, թե՞ ոչ:

299. Նախադասություններից քանիստ՞ն են ճիշտ կետադրված:

- Ջգում էր, որ շուտով կորցնելու է գիտակցությունը և ճիգ թափելով հագիվ մնում էր ոտքի վրա:
- Որ երկրից էր ժամանել անձանոթը, ոչ որ չգիտեր:
- Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում գնալ դեպի քուռակը. վախենում էր իր ոտնաձայնի մեջ կորցնի թշնամու թաքուն ձայները:
- Եվ այստեղ ահա պարզվեց այն առեղծվածը, որ ոչ որ չէր կարողանում բացատրել՝ ո՛չ թագավորն ու սպարապետը, որ նայում էին, ո՛չ ինքը՝ իշխան Կամսարականը:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

300. Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Մարդը որ ամեն անգամ հայտնվում էր բեմում ներկայացնելու արտիստի անելիքը չհայտնվեց: Ծափերը բուռն ու պահանջող չէին դադարում: Վերջապես բեմ ելավ արտիստը կանգնեց բեմի կենտրոնում ժպիտներից ամենահրապուրիչը շուրթերին: Հանդիսականների արտիստի դեմքին գամված հայացքներում խտացավ անհամբեր սպասումը:

Արտիստն այս անգամ ընտրել էր տերյանական գոհարներից մեկը «Անդարձություն»:

- 1) դերբայական դարձված
- 2) բացահայտիչ
- 3) տրոհվող հատկացուցիչ
- 4) զեղչված ստորոգյալ

301. Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Ճանապարհի դեպի Գանձակ տանող հատվածում նրանք տեսան հայ-թուրքական բախումների սուկայի հետևանքները ամայացած բնակավայրեր կիսավեր տներ ծխացող ավերակներ: Ուղեկցորդը վազոն մտնելով խորհուրդ տվեց տղաներին չիջնեն գնացքից:

- 1) տրոհվող հատկացուցիչ
- 2) բացահայտիչ
- 3) բազմակի անդամներ
- 4) տրոհվող որոշիչ

302. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Հովհաննիսյանը (1) ի տարբերություն մյուսների (2) նոր կարգերից չէր բողոքում (3) նա միայն նեղվում էր այդ տարիքում գաղթական դառնալու համար: Քաղաքականությունից խոսք բացվելիս (4) փորձում էր Վահանից իմանալ (5) ինչ լուծում են տալու բոլշևիկները այս կամ այն հարցին: Այդ հարցերի մեջ ամենակարևորը թե նրա (6) և թե ընկերների համար իրենց ողբացյալ հայրենիքի Հայաստանի (7) ճակատագիրն էր: Երբ Վահանը (8) ամեն ինչ հուսադրող շեշտերով ներկայացնելով պարզաբանումներ էր անում (9) Հովհաննիսյանը քթի տակ ժպտալով (10) լսում էր:

- 1) 1, 2, 8, 9, 10
- 2) 2, 4, 5, 6, 7, 10
- 3) 1, 2, 4, 8, 9
- 4) 2, 3, 5, 7, 8, 10

303. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Չին սկսեց արածել իսկ ինքը սանձը բաց թողնելով (1) պառկեց խոտերին:

Անպոտ օր էր (2) և քամի չկար: Թույլ-թույլ ճողվում էին Փարվանայի ջրերը իսկ լեռնանցքի կողմից մառախուղի մի հսկա զանգված դանդաղ սահելով (3) շարժվում էր դեպի լճի (4) մեղմ զեփյուռից թեթևակի կնճռոտված կապտավուն մակերեսը:

Վահանը (5) խոտերին փկնած (6) նայում էր լճի փայլատ ջրերին (7) զգալով որ անցնում են այն հուսահատեցնող ընկճվածությունը (8) հոգու (9) այն անդուր նեղվածությունը (10) որ տանջում էին իրեն մոր հիվանդության լուրն ստանալու օրվանից սկսած:

- 1) 2, 3, 4, 7, 9
- 2) 1, 2, 3, 5, 6, 8, 10
- 3) 1, 4, 5, 7, 9
- 4) 2, 4, 6, 7, 8, 10

304. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Իմ հարևան իտալացի արտիստները (1) հրաժեշտ տալով մեզ (2) Մեծ պատի հենց առաջին օրն ուղևորվեցին իրենց հայրենիք: Այդ օրը տխրել էինք բոլորս (3) արդեն վարժվել էինք հարևաններիս: Հենց այդ օրը Լուիզան ինձ ասաց (4) թե ինքն էլ մեկ ամսից ուղևորվելու է իր հայրենիքը Իտալիա (5) և վերադառնալու է մեկ տարուց: Հարցը վճռված էր (6) մայրը վաղուց էր հաշտվել աղջկանից բաժանվելու մտքին: Երբ Լևոնին հայտնեցի Լուիզայի ուղևորության մասին (7) ինձ թվաց (8) լուրը նրա վրա մի առանձին տպավորություն չգործեց: Գուցե նրանից էր (9) որ այդ օրերին նա առհասարակ շատ տխուր էր (10) թախծոտ ու ինքնամոխի:

- 1) 2, 3, 5, 7, 8, 10
- 2) 1, 3, 4, 6, 8, 10
- 3) 2, 3, 4, 6, 7, 9
- 4) 1, 2, 4, 5, 7, 9, 10

305. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Շատ տարիներ առաջ (1) Վանա ծովի ափին ապրում էին մարդ ու կին (2) Գնելն ու Շահանդուխտը: Այդ բարի մարդիկ անփարատելի վիշտ ունեին (3) Աստված նրանց զավակ չէր պարգևում: Նրանք անապով դրացիների խորհրդին (4) գնացին ամենագորավոր սրբի (5) Գրիգոր Նարեկացու շիրմին (6) այցի և հրաշք կատարվեց (7) չանցած ինն ամիս (8) արու զավակ ունեցան: Ի մեծարումն սրբի (9) տղային անվանակոչեցին Գրիգոր:

- 1) 2, 5, 8, 9
- 2) 1, 2, 4, 6, 9
- 3) 2, 3, 5, 7
- 4) 1, 4, 5, 8

306. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Վահանը Մոսկվայից չհեռանալու պատճառ իսկապես ուներ (1) նա նամակով դիմել էր Էջմիածին (2) Գևորգյան ճեմարանի վարչությանը (3) խնդրելով (4) օգնել իրեն (5) մեկնելու արտասահման (6) մասնագիտության մեջ խորանալու: Մտածում էր (7) կրնդառաջեն անմիջապես և իր (8) Մոսկվայում մնալն անհրաժեշտ է:

Սակայն ճեմարանից եկավ մերժողական պատասխան և նա տեղի տալով Մուսաննայի խնդրանքին (9) մեկնեց Ստավրոպոլ:

- 1) 2, 3, 5, 6, 7, 8
- 2) 1, 2, 4, 6, 8
- 3) 2, 3, 4, 7, 8
- 4) 1, 2, 5, 6, 9

307. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Մելանագույն թեթև թիկնոցի մեջ պարուրված (1) աստվածային կեցվածքով (2) կանգնած էր Համլետը բեմի ծախակողմյան հատվածում (3) աչքերում արցունքի երկու խոշոր կաթիլ (4) որոնց դիպչելով (5) էլեկտրական լույսի շողերը բեկվում լցվում էին դահլիճ (6) ցրելով մութը: Հետո երբ բեմում եղած մարդիկ հեռացան (7) նա մոտենալով իր նման սևազգեստ մեկին (8) շնջաց վերջինիս ականջն ի վար Մարդ էր Հորացիո...

- 1) 1, 2, 3, 8
- 2) 1, 3, 5, 6
- 3) 2, 3, 5, 7
- 4) 2, 4, 5, 8

308. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Միջագետքի ավազուտներում (1) քաղցած ու բորիկ դեպի անհայտություն էին քայլում հայերի (2) թուրքական յաթաղանից հալածված (3) վերջին բեկորները: Թվում էր (4) փշրվեց այրվեց ամեն ինչ (5) հող հայրենիք հույս: Ծերունի ուսուցիչը (6) իր շուրջը հավաքելով ողջ մնացած հատուկենտ մանուկներին(7) ձեռնափայտով օտար ավազներին գծում էր մետրոպոլիս գրերը (8) ջանալով մանուկների հոգում դրոշմել դրանք (9) որպես վերապրումի թախան:

- 1) 1, 2, 3, 5, 7
- 2) 2, 4, 5, 8, 9
- 3) 1, 2, 4, 6, 7
- 4) 2, 3, 6, 7, 8

309. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Լուս Անջեղեսի արբանյակ քաղաքում (1) Փասադենայում հայերեն նոր թերթ էր հիմնվում (2) «Մասիս» (3) հիմնադրամ պիտի ստեղծվեր հրատարակության (4) նախօրոք հաշվարկված (5) ծախսերը հոգալու համար: Դրամական միջոցների (6) հայերի շրջանում կազմակերպված հանգանակությանը մասնակցեցին շատերը (7) ի թիվս նրանց յոթ-ութ տարեկան մի տղա(8) Հարություն Գրիգորյանը: Նա թերթին նվիրեց ութ դոլար այդ գումարը գոյացած պաղպաղակի և անուշեղենի համար տատիկի տված ցենտերից (9) դարձավ հիմնադրամի(10) մանկական մաքուր ձեռքերով դրված հիմնաքարը:

- 1) 1, 2, 6, 8, 10
- 2) 2, 4, 7, 8, 9
- 3) 1, 3, 4, 7, 10
- 4) 2, 3, 5, 6, 8

310. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Հազար ինը հարյուր մեկ թվականի հունվարի առաջին օրն էր (1) Նոր տարվա գիշերը: Մեծ-մեծ փաթիլներով ձյուն էր գալիս (2) տիեզերական խաղաղություն սփռելով շուրջքոլորը: Չգիտես (3) ինչու Չոհրապետ ու կինը հավատում էին (4) նոր դարը հետևում թողնելով հինը (5) բարություն և արդարություն է բերելու: Նրանք որոշեցին նոր դարը դիմավորել դրսում (6) լիովին հանձնվելով նրա բարեգթությանը: Մենակ չէին (7) հարևան տներից ևս մարդիկ կային: Թիթեռի թևերի նման օրորվելով (8) հանդարտ իջնում էին ձյան փաթիլները (9) գիշերային ձյունաշաղախ անդորրը բնության պարզևն էր մարդկանց (10) տրամադրելով նրանց նոր ակնկալիքների:

- 1) 2, 3, 4, 5, 7, 9
- 2) 1, 2, 4, 6, 8, 10
- 3) 1, 3, 5, 6, 7, 10
- 4) 2, 4, 6, 7, 9

311. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում միջակետ պիտի դրվի:

Այս նամակի հետք եզր ուղարկում են դրամական մի չեկ (1) երբ ծախսես երկու ֆրանկ (2) մի մոռացիր հիշեցնելք եզր որ երրորդը բունը չէ (3) այն պետք է պատկանի այն անձանոթին որն ունի դրա կարիքը: Իսկ դու կգտնես այդպիսի մեկին: Դու գիտես (4) ես շատ ժամանակ են անցկացրել կրկեսում և միշտ երկյուղ են գգացել լարախաղացների համար: Բայցք եզր պետք է ասես ճշմարտությունը (5) մարդիկ գետնի վրա ավելի անհաստատ են (6) քան լարախաղացները երբորոն լարի վրա: Գուցե այս գիշերք եզր կուրացնի մի թանկագին ադամանդի փայլը (7) հենց դա էլ կլինի քո անհուսալի պարանը (8) և քո անկումն անխուսափելի է: Ես կցանկանայի (9) հրաշք կատարվեր իսկապես հասկանալիոր այն բոլորը (10) ինչ ցանկացա ասելք եզր:

- 1) 2, 5, 6, 7, 9
- 2) 1, 3, 4, 6, 8
- 3) 1, 3, 5, 7
- 4) 3, 5, 8, 9, 10

312. Նախադասություններից քանիստ՞ում բութ պիտի դրվի:

- Խուլ աղմուկը մատնում էր պարիսպներով շրջապատված մայրաքաղաքի արևածագից սկսված եռուզեռը:
- Սպարապետը խանդաղատանքով նայեց իր բնօրրանին զգալով որ կարոտից այրվում է:
- Երեխաները լապտերները ձեռքերում վազվզում էին վառելով ու հանգցնելով:
- Օրիորդի հետի կինը որ երիտասարդ մի իշխանուհի էր նման իսկական դիցուհու վեր կացավ տեղից:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

313. Նախադասություններից քանիստ՞ում միջակետ պիտի դրվի:

- Բանաստեղծությունները խմբավորեց ըստ շարքերի «Մթնշաղի անուրջներ» «Հսկումի գիշեր» «Ոսկի հեքիաթ» և «Վերադարձ»:
- Երկրորդ շարքի վերնագիրը դարձյալ դուր չէր գալիս միստիկ ու չապրված ինչ-որ բան կար այդ «հսկում» բառի մեջ:
- Մատիտով վերևում գրեց «Գիշեր և հուշեր» ու այդպես թողեց մինչև տպագրության հանձնելը այդ ընթացքում կերևար որն է ավելի հարմար:
- Մի քանի գործեր արդեն տպագրված մամուլում չորեք ժողովածուի մեջ մտածեց որ թույլ են և շեղվում են ընդհանուր տրամադրությունից:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

314. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:

- Տասնվեց-տասնյոթ տարեկան մի պատանի, դուրս գալով դպրոցից և ստեպ-ստեպ շոշափելով գրպանի թանկարժեք պարունակությունը՝ հասունության վկայականը՝ դեզերում է Գյումրի քաղաքի հրապարակում:
- Տարտամ քայլերով անցնում էր նա հյուրանոցի առջևով և հանկարծ մուտքի մոտ շրջվելով՝ տեսավ շքամուտքից դուրս եկող մի մարդու՝ վիթխարի գամփռի շոթան ձեռքին:
- Մինչև թարգմանվեին Վահանից առգրավված գրքերը, մինչև ծանոթանային դրանց բովանդակությանը՝ ահագին ժամանակ կանցներ:
- Մենք ձեզ չենք վռնդում. եթե ցանկություն ունեք՝ կարող եք գիշերել ցախատանը,- ասել էր տանտերը՝ գլխով ցույց տալով բակի ցածրիկ շինությունը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

315. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:

- Դժվար է ասել՝ օրվա ծնունդն ու գեղեցկությունն ավետելո՞ւ, թե՞ մի այլ քանի շնորհիվ է քարակաքավը հնուց ի վեր սիրելի եղել հայ ժողովրդին:
- Արդեն մի քանի ամիս էր, Շիրվանզադեն պառկած էր հիվանդանոցում, և ասում էին, որ վիճակը այնքան էլ լավ չէ:
- Այդ պահին նկարչին թվում է՝ չէր հետաքրքրում արյունոտ թշնամու ոճրաբնի հրկիզումը, նույնիսկ մոտալուտ փրկության հույսը, որն իր հետ բերում էր առավոտը՝ պճնված հրակարմիր ցուլքերով:
- Երբ արդեն տաղտկալի նավագնացության հաջորդ շաբաթվա վերջն էր, նա հասավ Էվրոտասի գետաբերանը և ընկերոջ՝ Էնեսաի հետ, դուրս եկավ ափ՝ մի փոքր շրջելու:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) երկուսում
- 4) մեկում

ԲԱԺԻՆ 5 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

1. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Նրանք այլևս չէին ուզում աշխատել օրական 10-15 ժամ, ապրել քաղաքի հետնախորշերում, աներևակայելի կեղտի ու նեղվածքի մեջ:
2. Այդ օրը ամերիկյան Չիկագո քաղաքում բանվորները դուրս չեկան աշխատանքի:
3. 1886թ. մայիսի մեկն էր:
4. Մեկտեղ հավաքված՝ նրանք կապիտալիստներից պահանջեցին ութժամյա աշխատանքային օր, աշխատավարձերի բարձրացում և կենսապայմանների բարելավում:

- 1) 1, 2, 3, 4
- 2) 4, 1, 2, 3
- 3) 3, 2, 1, 4
- 4) 2, 4, 1, 3

2. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Այդ տառատեսակը, որը ստեղծվել է 1996 թվականին Մեթյու Բարտերի կողմից, կօգնի խուսափել կարճատեսությունից և «համակարգչային տեսողության» ախտանիշից. այն առաջանում է համակարգչի առաջ երկար ժամանակ անցկացնելուց:
2. Առողջապահական այդ պահանջներին բավարարում են մահ տառատեսակների լավագույն չափսերը՝ 10, 11, 12:
3. ԱՄՆ-ում գիտնականներին հաջողվել է որոշել տեսողության համար ամենաանվնաս տառատեսակը՝ «Verdana»-ն, որով ընթերցելիս մարդու աչքի մկանները ամենից քիչ են լարվում:
4. Գիտական նորույթի՝ տառատեսակի պատվիրատուն այժմ «Մայքրոսոֆթ» ընկերությունն է:

- 1) 1, 3, 2, 4
- 2) 4, 1, 3, 2
- 3) 3, 1, 2, 4
- 4) 3, 2, 1, 4

3. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Ապակին կոռոզիայի չի ենթարկվում, ուստի օգտագործվում է շշեր և տարաներ պատրաստելու համար: Սակայն այն, ցավոք, դյուրաբեկ է, այդ պատճառով շշերը պետք է հաստ լինեն, որպեսզի չկոտրվեն, դիմանան առօրյա գործածությանը:
2. Ապակի սկսել են պատրաստել ավելի քան 6600 տարի առաջ: Այն ստանում են ավազի, սոդայի և կրաքարի միաձուլումից: Օժտված լինելով մի շարք օգտակար հատկություններով՝ ապակին շատ հարմար հումք է որոշ բաներ արտադրելու համար:
3. Սակայն ապակին անփոխարինելի է, երբ կարևորվում են թափանցիկությունն ու ամրությունը, ինչպես, օրինակ, պատուհանի ապակու կամ լուսանկարչական ոսպնյակների արտադրությունում:
4. Նորագույն ապակիները պարունակում են մահ այլ բաղադրամասեր՝ գունավորելու և այնպիսի հատկությամբ օժտելու համար, ինչպիսին հրակայունությունն է: Այս նոր հատկությունների շնորհիվ էլ ավելի է ընդլայնվել ապակու գործածությունը՝ ընդգրկելով նոր ոլորտներ:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 4, 1, 2, 3
- 4) 2, 1, 3, 4

4. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Մարդաշատ հրապարակներում ու շուկաներում, հմայված ունկնդիրներով շրջապատված, հնչեցնելով կիֆարայի լարերը, Հոմերոսը, երգելու պես ծոր տալով, արտասանում էր իր պոեմները: Եվ ունկնդիրների առջև վերակենդանանում էին Իլիոնի (այդպես էին անվանում Տրոյա քաղաքը) և իրենց սևակող նավերով տրոյացիներին հնազանդեցնելու եկած հույների տասնամյա արյունահեղ պատերազմի հերոսական պատկերները:
2. Մեծ էր Հոմերոսի փառքը: Այդ պատճառով էր, որ հունական յոթ քաղաքներ վիճում էին նրա ծննդավայրը կոչվելու պատվին արժանանալու համար:
3. Էգեյան ծովի ալիքների նման սահուն հոսում էր հոմերոսյան երգը: Պոետի ժամանակակիցները հավատացած էին, որ նրա երգից ապառաժները կյանք են առնում, սանձահարվում են վայրի զագանները, և աստվածներն են, որ, նախանձից դրդված, կուրացրել են նրան:
4. Լեզենդները պատմում են, որ հազարամյակներ առաջ Հելլադայի քաղաքներով ու գյուղերով թափառում էր կույր ասացող Հոմերոսը: Նա լսում ու հիշողության մեջ էր պահում ժողովրդական ավանդությունները, ճակատամարտերի, նետաձգության մրցությունների պատմությունները, կիսաստված-կիսամարդ հերոսների քաջագործությունների մասին պատմող առասպելները: Հետագայում դրանց հիման վրա նա ստեղծեց «Իլիական» և «Ոդիսական» պոեմները:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 4, 1, 3, 2
- 4) 2, 1, 3, 4

5. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Գիտնականը սպիտակուցը կոչեց Կիբրա: Այն կարգավորում էր բջիջների բազմացման և մահացման, հյուսվածքներին աճի քիմիական ազդանշաններ փոխանցելու երևույթները:
2. Գենի աշխատանքի խախտման դեպքում, բացի օրգանների չափերի համամասնության խախտումներից, կարող են ձևավորվել քաղցկեղի օջախներ:
3. Կատարված հետազոտություններից կարելի է եեթադրել, որ հենց Կիբրան է որոշակի դեր կատարում «Հիպպո ուղի» կոչվող գենոմում (այն գործում է որպես արգելակման համակարգ մի խումբ սպիտակուցների դեմ)՝ միաժամանակ կարգավորելով տարբեր օրգանների չափերը:
4. Պտղաճանճի աչքերի մեջ հայտնաբերված սպիտակուցը, որը, ինչպես պարզվեց, կա նաև ուրիշ կենդանիների մոտ, Ջոն Հոփքինգի գիտախմբին թույլ տվեց մոտենալ կենդանի օրգանիզմների ներսում օրգանների «ճիշտ չափերի» ինքնաբերաբար ձևավորման առեղծվածին:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 4, 3, 1
- 4) 4, 1, 3, 2

6. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Կատարված դիտարկումների համաձայն՝ դրանցից ամենախոշորը՝ Յերերան, 7500 անգամ փոքր է Երկրից իր զանգվածով: Նրա շառավիղը 20 անգամ փոքր է Երկրի շառավիղից:
2. Սրանով էլ բացատրվում է այն տարօրինակ հանգամանքը, որ Երկիր մոլորակի վրա մարդը կարող է ցատկել 50 սմ, իսկ Վեստայում՝ 30 մ՝ անցնելով 15 մետր բարձրություն ունեցող ծառի վրայով:
3. Արևի շուրջ պտտվում են 9 խոշոր մոլորակներ՝ իրենց արբանյակներով: Բացի խոշոր մոլորակներից, կան և փոքր մոլորակներ՝ աստղակերպեր:
4. Յերերայի նման մոլորակների վրա ծանրության ուժը այնքան չնչին է, որ մարդը, հրվելով աստղակերպի մակերևույթից, կարող է թռչել, հեռանալ, ինչը բացառվում է Երկրի պարագայում:

- 1) 4, 3, 2, 1
- 2) 3, 1, 4, 2
- 3) 3, 4, 1, 2
- 4) 4, 1, 2, 3

7. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Հնուց ի վեր թեյով բուժում էին նաև մի շարք հիվանդություններ՝ ատամնացավ, աչքի հիվանդություններ, այրվածքներ և այլն:
2. Հետագայում պարզվել է, որ մեկ մարդուն ընկնող թեյի տարեկան գործածությամբ առաջին տեղը պատկանում է Անգլիային (4500 գրամ), նրանից հետո Կանադան է (1270 գրամ), այնուհետև՝ Հոլանդիան (770 գրամ), հետո՝ Ճապոնիան (680 գրամ):
3. Թեյը՝ որպես դեղաբույս, առաջին անգամ հայտնվեց Չինաստանում չորրորդ դարում: Երկու հարյուր տարի հետո չինացիները եզրակացրին, որ նրանից կարելի է ըմպելիք պատրաստել: Իսկ հազար տարի անց թեյով հրապուրվեցին նաև եվրոպացիները:
4. Թեյի բուժիչ հատկանիշների մասին իմանալով՝ առաջինը թեյը իրենց հայրենիք տարան պորտուգալացիները 1517 թվականին, այնուհետև հոլանդացիները՝ 1610 թվականին: Ռուսաստանում թեյի առաջին բաժակը վայելեցին 1638 թ., երբ Միխայիլ կայսերը Մոնղոլիայից նվեր բերեցին չորս փուֆ թեյ:

- 1) 1, 4, 2, 3
- 2) 3, 1, 4, 2
- 3) 3, 2, 1, 4
- 4) 2, 4, 3, 1

8. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Եվ, որ ամենահետաքրքրականն է, սրտի զարկերի հաճախականությունը վայրկյանում հասնում է քսան գույզի: Դրա շնորհիվ թռչունի սիրտը մեկ րոպեում մտնում է այնքան արյուն, որն առնվազն երկու անգամ գերազանցում է սեփական քաշը:
2. Հաստատված է նաև, որ, հակառակ գոյություն ունեցող տեղեկությունների, աղավնու մեջ ջերմության մոտ ութսուն տոկոսը կորչում է ջերմափոխանակության, այլ ոչ թե հեղուկի գոլորշիացման ճանապարհով: Դա շատ կարևոր է հեռավոր թռիչքների ժամանակ, քանի որ զգալիորեն նվազում է օրգանիզմի հեղուկազրկումը:
3. Դրանից հետո ստացվել են հետաքրքրական տվյալներ: Պարզվել է, որ թռիչքի ժամանակ աղավնու ջերմությունը հասնում է քառասունհինգ աստիճանի: Աղավնու էներգիայի ծախսը, ինչպես հայտարարել է դոկտոր Խարտը, թերևս ամենաբարձրն է կենդանիների աշխարհում:
4. Կանադայի հետազոտողների մի խումբ հինգ տարվա ընթացքում ուսումնասիրել է աղավնու թռիչքի ֆիզիոլոգիան: Դրա համար օգտագործվել են ընդամենը երեսունգրամանոց մանրիկ հաղորդիչներ, որոնք ամրացվել են թռչունների մեջքին:

- 1) 4, 1, 3, 2
- 2) 2, 4, 1, 3
- 3) 3, 4, 1, 2
- 4) 4, 3, 1, 2

9. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:

1943 թվականին, չունենալով ոչ սեփական կացարան, ոչ փող, Նյու Յորքի հյուրանոցներից մեկում իր մահկանացուն կնքեց «Էլեկտրատեխնիկայի պոետը»: Նա կյանքից հեռացավ լուռ ու աննկատ: Նրա անվան հետ բազմաթիվ լեգենդներ ու առասպելներ են կապված: «Մեծ մենակյացը» դեռ մանկության տարիներից իր ընդունակությունների խորհրդավորությամբ զարմացնում, անգամ վախեցնում էր իրեն շրջապատող մարդկանց: Մի անգամ նա մեծ դժվարությամբ կարողացավ տանը պահել իր հյուրերին, որոնք շտապում էին կայարան. ավելի ուշ հայտնի դարձավ, որ գնացքն աղետի է ենթարկվել:

Նա տեսնում էր մթության մեջ...

1884 թ. մեկնեց Ամերիկա՝ Թոմաս Ալվա Էդիսոնի մոտ: Նյու Յորք հասավ՝ գրպանում ունենալով 4 ցենտ և Էդիսոնին հասցեագրված մի նամակ. «Ես ճանաչում եմ երկու մեծ մարդկանց, որոնցից մեկը Գոյք էք, երկրորդը՝ այս երիտասարդը»... Բայց նա հեռացավ Էդիսոնից: Սնանկացած գիտնականն անգամ հրաժարվեց Նոբելյան մրցանակից, որը տրվել էր իրեն և Էդիսոնին, և այն ոչ մեկին չշնորհվեց:

Ասում էին, որ կյանքի վերջին տարիներին նրան հաջողվել է «մահվան ճառագայթներ» ստանալ: Տեսլան՝ 20-րդ դարի ամենատեղծվածային գիտնականներից մեկը, հավատացած էր, որ տիեզերքից ինչ-որ մեկի կողմից հաղորդվող ազդանշանները մարդիկ ի վերջո կվերծանեն, և, խորհելով այլմոլորակայինների հետ հաղորդակցվելու մասին, գրում է. «Հանուն պատմական այս մեծ առաքելության, հանուն նրա, որ իրականանա այս հրաշքը, ես իմ կյանքը կտայի»:

- 1) Իր մի արտառոց ունակության շնորհիվ Տեսլան մի անգամ փրկել է մարդկանց աղետի ենթարկվելուց:
- 2) Տեսլան խորհում էր տիեզերքից հաղորդվող ազդանշանների վերծանման մասին:
- 3) Սնանկացած գիտնականն անգամ հրաժարվեց Նոբելյան մրցանակից, որը շնորհվեց Էդիսոնին:
- 4) Տեսլան 20-րդ դարի ամենախորհրդավոր գիտնականներից էր և պատրաստ էր կյանքը տալու՝ իր այլմոլորակայինների հետ հանդիպելու երազանքն իրականացած տեսնելու համար:

10. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:

Եղջերուները կենդանիների մի մեծ խումբ են: Այդ խմբի մեջ մտնում են և՛ հյուսիսային եղջերուն, և՛ Եվրոպայի անտառների բնակիչը՝ այծյամը, և՛ հեռավորարևելյան ու սիբիրական մարայները, և՛ հյուսիսարևելյան վիթջինյան եղջերուները, և՛ որմզդեղներն ու եղնիկները:

Ամենահետաքրքիրը, թերևս, հյուսիսային եղջերուներն են: Նրանք հիանալի հարմարվել են դաժան պայմաններում ապրելուն: Օրինակ՝ ձմռանը ձյունների միջով քայլելը դժվար է. թաղվում ես ձյան մեջ, իսկ հյուսիսային եղջերուները չեն թաղվում, որովհետև նրանց լայն կճղակներն օգնում են ազատ տեղաշարժվելու թե՛ ձյան վրա, թե՛ ճահճուտներում:

Հյուսիսային եղջերուների բուրդը ևս առանձնահատուկ է: Մազաթելի հաստ միջուկը լցված է օդով, իսկ օդը լավ է պահպանում մարմնի ջերմությունը: Այդ պատճառով էլ նույնիսկ ուժեղ քամու ժամանակ մորթին եղջերուին հուսալիորեն պաշտպանում է ցրտից: Բոլոր տեսակի եղջերուների միայն արուններն են, որ եղջյուրներ ունեն, մինչդեռ հյուսիսային եղջերուների թե՛ արունները, թե՛ էգերը եղջյուրներ ունեն:

Հյուսիսային ժողովուրդները վաղուց ի վեր ընտանի եղջերուներ են բուծում, և դրանք հյուսիսի բնակիչների համար փոխարինում են թե՛ ոչխարին, թե՛ կովին ու ձիուն:

- 1) Չյան վրա քայլելուն հարմարված են միայն հյուսիսային եղջերուները, որովհետև նրանց կճղակները ավելի լայն են մյուս կենդանիների կճղակներից:
- 2) Բացի հյուսիսային եղջերուներից, այս խմբի կենդանիների միայն արունները եղջյուրներ ունեն:
- 3) Հյուսիսային եղջերուների մարմնի ջերմությունը պահպանվում է նրանց բրդի մազաթելի՝ օդով լցված հաստ միջուկ ունենալու առանձնահատկության շնորհիվ:
- 4) Գոյություն ունեն աշխարհագրական տարբեր վայրերում բնակվող, միմյանցից արտաքին տեսքով տարբերվող, ինչպես նաև ընտանի և վայրի տեսակների եղջերուներ:

ԲԱԺԻՆ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

1. Նշված հեղինակներից ո՞վ է ստեղծագործել միջին հայերենով:

- 1) Մխիթար Գոշը
- 2) Գրիգոր Նարեկացին
- 3) Խաչատուր Աբովյան
- 4) Միսաք Մեծարենցը

2. Ո՞ր հայերենով են գրված հետևյալ տողերը.

*Այի մը մոխի՛ր աճյունիս հետ, Հայրենի տուն,
Այի մը մոխի՛ր քո մոխիրեդ ո՛վ պիտ բերե,
Այի մը մոխի՛ր քու ցավե՛դ, քու անցյալե՛դ,
Այի մը մոխի՛ր, իմ սրտիս վրան ցանելու:*

- 1) միջին հայերեն
- 2) արևմտահայերեն
- 3) գրաբար
- 4) արևելահայերեն

3. Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

*Էրնեկ ես անոր կու տամ, որ առեր իւր եարն է փախեր.
Ոնց որ ըզկարմուջն անցեր, ջուրն ելեր, զկարմուջն է տարեր:*

- 1) արևմտահայերեն
- 2) միջին հայերեն
- 3) արևելահայերեն
- 4) գրաբար

4. Ո՞ր բարբառի հիմքի վրա է ձևավորվել գրական արևմտահայերենը:

- 1) Արարատյան
- 2) Մշո
- 3) Պոլսի
- 4) Կարնո

5. Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

*Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբույր մ'առի դարձյալ ես
Հանուն աստեղց ցիրևցան:*

- 1) արևմտահայերեն
- 2) միջին հայերեն
- 3) արևելահայերեն
- 4) գրաբար

6. Որ հատվածը ո՞ր հայերենով է:

ա. Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով.
Ոտիցն ի գնալ շողն ի կաթել առնոյր:

բ. ...Նարդոս, քրքում էր ինձ բերում,
Վարդ մանուշակ էր պարզևում,
Առավոտյան ցողն էր իջնում,
Ոսկեման շողն էր փայլում...

գ. Դու՛ն կըրակ, հաքածըդ կըրակ, վո՞ր մե կըրակին դիմանամ,
Հընդու դալամքարու վըրէն ծածկիլ իս մարմաշ, նագա՛նի:

դ. Պագըն որ դրամով լինի, չե՛մ իտար, թ՛աշխարհի աւերի,
Թէ ինձ մուրատով կուզես, եկո պա՛գ, հաւատդ անցանի:

1. գրաբար
2. միջին հայերեն
3. թիֆլիսահայ բարբառ
4. արևելահայերեն

- 1) ա-1, բ-4, գ-2, դ-3
- 2) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 3) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 4) ա-1, բ-4, գ-3, դ-2

7. Ո՞ր տարբերակը արևմտահայերենով չէ:

- 1) «Իր մեծ ու քայքայիչ տխրություններեն զատ Նարեկացին ունի նաև հիվանդագին մելամաղձություններ. աղերսարկու, միջանկյալ բացասականներու թախծությունը՝ որ հոս հոն մանիշակի պես կը նշուվե...»:
- 2) «Հոս պատկերի խիստ ու նկարչական ճշգրտությունը մը կա, իր մանրամասնություններուն ու ամբողջական ներկայացումին մեջ ալ՝ այնքան հուժկու և իրախնդիր՝ որ մասնությունը հրաշալի կերպով կ'անձնացնե...»:
- 3) «Վանականին քերթվածն է աս, պարզ, և սակայն ամբողջական հոգեբանությամբ մը, միատիկականության ցավագին վեպ մը, ուր կտեսնենք սիրով լեցված էակ մը՝ աստուծո տարփանքովը վառված, որ անոր մեծությունը կերգե...»:
- 4) «Ինչի՞ գեղինը չիմ մտնում էս սհաթիս: Էլ իմ տոլ ախչկերանց էրեսին վո՞նց պիտի մտիկ անիմ. դիփուռանց խոսելու պիտի դառնամ, դիփուռը մասխարա պիտի գցին ինձ, դիփուռը պիտի վրես ծիծաղին...»:

8. Տրվածներից ո՞րն է գրաբարով:

- 1) Երբ որ հոգոց ես կու հանեն,
գայ գուլ առնու հոգիս բերնիս:
- 2) Յամենայն ժամ աղաչանք իմ այս են՝
Ի մեղաց իմոց սուրբ արա զիս, Տեր:
- 3) Մարդ կայ, որ խօսի՝ շաքար կու ծամի,
Խելքըն՝ լայն ծով է և միտքն՝ գեամի,
Տեսնեն, որ չունի կուրտիկ դալամի,
Կասեն. «Լուռ, կացիր, գող և հարամի»:
- 4) Դովլաթն էլթիբար չունե, յիփոր կերթա իր շըբարով.
Լավ մարթն էն է՝ գըլուխըն պահե աշխարումըս էյթիբարով:

9. Որ հատվածը հայերենի ո՞ր տարբերակով է:

- 1. Մեղք իմ բազում են յոժ,
Ծանր են, քան զաւագ ծովու.
Քանզի քեզ միայնոյ մեղայ
Ողորմեա ինձ, Աստուած:
- 2. Կ'ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
Ու նեկտարիդ դողն ընայեմ ես անհագ.
Կ'ուզեմ որ մեռնին տիվ ու ժամանակ՝
Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր:
- 3. Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կըզոհվի:
- 4. Երեսդ է լուսնի նըման բոլորեալ տեսդ՝ արեգական.
Ոնց որ դու ելնես քալես, արեգակերպ կու փայլես:

- ա. արևմտահայերեն
- բ. արևելահայերեն
- գ. միջին հայերեն
- դ. գրաբար

- 1) 1-ա, 2-գ, 3- բ, 4-դ
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ

10. Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

*Իրիկվան մեջ, զյուղին քով,
Կմրմնջե գուռն ուռիին տակ շքեդ:
Չայն կլեցնե աղբյուրն երգովը բյուրեդ,
Աստղը՝ բյուրեդ արցունքով:*

- 1) արևելահայերեն
- 2) արևմտահայերեն
- 3) գրաբար
- 4) միջին հայերեն

11. Տրված բառահոդվածը բառարանի ո՞ր տեսակից է վերցված.

ՍՈՍՍՓ, ի, գ. 1. Տերևների՝ ճյուղերի՝ ցողունների օրորվելուց՝ շարժվելուց առաջացած մեղմ ձայնը, ստապ: 2. Չգետտի՝ շորեղենի ևն ծփանքից առաջացող մեղմ ձայնը, խշշոց, շրշյուն: 3. Չեփյուռի՝ մեղմ քամու խշշոց, շրշյուն: 4. փխբ. Շրշյուն, շշունջ, շշուկ:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

12. Հետևյալ բառարաններից որի՞ քնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

*ԵՐԿԱՆ (սեռ. ի, յետևաբար ի, ի-ա հլ.) «ջաղացք, ջաղացքի քար» ՍԳր., Կոչ., որից՝ երկանաքար Ղուկ. ժե 2
=Բնիկ հայ բառ հնիս. grawana-ձևից, որի մեջ –awa- տալով ա՝ ձևացրել է հյ. *կրան->երկան.
Սիւս, գնդ. asman «քար» բառի հետ, ճիշտ ինչպես սյրս. asma=հյ. երկին »*

- 1) ստուգաբանական
- 2) թարգմանական
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

13. Արևմտահայերենում սահմանական ներկան կազմվում է՝

- 1) ած մասնիկով
- 2) ում մասնիկով
- 3) կը մասնիկով
- 4) կու մասնիկով

14. Ո՞ր բարբառի հիման վրա է ձևավորվել գրական արևմտահայերենը:

- 1) Մարադայի
- 2) Պոլսի
- 3) Կարնո
- 4) Խոյի

15. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

ԴԱՍՍՎԱՆԴԵԼ, նր. 1.Որևէ առարկա կարդյալ ուսումնական հաստատությունում, դաս տալ: 2. Դասատու լինել, դասավանդումով զբաղվել:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

16. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

ԱՉԲԵՐԸ ԼԱՅՆ ԲԱՆԱԼ կամ ԼԱՅՆ ԲԱՅ ԱՆԵԼ,- 1. Մի անակնկալ բանի վրա զարմանալ, ապշել: Ոչինչ չհասկանալով՝ նա նա աչքերը լայն բացած նայեց նախագահին: 2.Լավ իմանալ, հասկանալ բանի էությունը: Մի կտորացած աչքերդ լայն բաց արա: 3. Ուշադիր հետևել: Աչքերդ լայն բաց, որ ամեն բան տեսնես:

- 1) հոմանիշների
- 2) դարձվածաբանական
- 3) բարբառային
- 4) բացատրական

17. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

*ՀԱՅ, ի, գ. 1. Ալյուրից թխած ամենօրյա ուտելիք: 2. Հացահատիկ (ցորեն, գարի): 3. Հացահատիկի արտեր: 8. փխր. Ապրուստ, սպրուստի միջոց:
-Հաց զցել՝ դնել-սեղան պատրաստել:*

- 1) ստուգաբանական
- 2) ուղղագրական
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

18. Տրված բառահոդվածը բառարանի ո՞ր տեսակից է վերցված.

ՀԱՄԱԿՐԱՆՔ, գ. 1. Համակրություն, հակում (հոգեկան), խանդաղատանք, գորով, կարեկցություն, (հնց.)՝ աղապատանք, կրակցություն (համակրական զգացմունք՝ վերաբերմունք): 2. Տես Սեր: 3. Տես Պաշտպանություն:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

19. Ո՞ր դարերում է միջին հայերենը եղել կենդանի լեզու:

- 1) 10 – 12-րդ դդ.
- 2) 12 – 16-րդ դդ.
- 3) 11- 17-րդ դդ.
- 4) 14 – 17-րդ դդ.

20. Նշված օտարազգի հայագետներից ո՞վ է «Հայ ժողովրդական դյուցազնավեպը» ուսումնասիրության հեղինակը.

- 1) Հ. Պետերմանը
- 2) Ֆ. Վինդիշմանը
- 3) Ֆ. Ֆեյդին
- 4) Ա. Սեյեն

21. Ո՞ր տողում նշված բոլոր ազգանուններն են պատկանում օտարազգի հայագետների:

- 1) Վավիլով, Պետրով, Լիխտենգոլց
- 2) Սեյեն, Մառ, Հյուբշման
- 3) Պետերման, Գողել, Բաուման
- 4) Կարստ, Ֆեյդի, Շնեյդերման

22. Ո՞վ է «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի հեղինակը:

- 1) Մ. Ավգերյան
- 2) Մ. Չամչյան
- 3) Բ. Կեսարացի
- 4) Մ. Սեբաստացի

23. Ո՞ր նախադասությունն է արևմտահայերեն:

- 1) Յերեկը պապս նստում էր դարպասի քարին կամ էլ պառկում բակի թախտին:
- 2) Նրա համար ամենից մեծ հաճույքը արտերն ու այգին ջրելն էր:
- 3) Պատուհանիս քով նստած՝ ուշադրությամբ կը նային դիմացի պարտեզը:
- 4) Չիերը հագեցել էին կանաչից և մեզ նման մեկնվել էին գարնան արևի տակ:

ԲԱԺԻՆ 7 ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

«Երբ պարսից պատանիները ետ էին դառնում, մերոնք անմիջապես հասնում էին նրանց հետևից և ինչպես փոթորիկ, որ անտառը տերևաթափ է անում, արագորեն նիզակներով նրանց վայր էին գցում ձիերից, դիակները երկրի երեսին փռում...»:

- 1) մակդիր
- 2) հակադրություն
- 3) համեմատություն
- 4) անձնավորում

2. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Եւ շա՛տ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:*

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) հանգ
- 4) չափազանցություն

3. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Հատաչում է ողջ աշխարհքը.
Կտրիճները քարացած,
Երազների մեջ են ընկնում՝
Էս աշխարհքից վերացած:*

- 1) համեմատություն
- 2) հանգավորում
- 3) հակադրություն
- 4) բաղաձայնույթ

4. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Հանգստի ժամին լինում է միշտ տանջահար, հոգնած,
Խրախճանքի մեջ՝ տխուր ու տրտում,
Դենքով միշտ ժպտուն, բայց մտքով խոցված,
Տեսքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ,
Արտաքուստ թեև ձևանում է հանգիստ, սփռվված,
Բայց արտասուքը լուռ վկայում է կսկիծը սրտի:*

- 1) հակադրություն
- 2) չափազանցություն
- 3) բաղաձայնույթ
- 4) համեմատություն

5. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոց է գործածված:

*Շուշանըն շողեր հովտին,
Շողշողեր դեմ արեգական...
Շուշանըն շաղով լըցեալ,
Շող շաղով և շար մարգարտով:*

- 1) բաղաձայնույթ
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

6. Տրված հատվածում նշված պատկերավորման-արտահայտչական միջոցներից ո՞րը գործածված չէ:

*Մանավանդ չէ՛ որ դու լույս ես ու հույս,
Իսկ ես խավար եմ ու հիմարամիտ.
Դու՛ փառաբանված բարի իսկություն,
Ես՛ ամեն ինչով չար ու ապիկար...
Դու՛ բարձրյալ, առանց հոգս ու վշտերի,
Ես՛ տազնապահար ու տաժանավոր.
Դու՛ վեր երկրային բոլոր կրքերից,
Ես անարգ կալ եմ ու գարշելի հող...*

- 1) հակադրություն
- 2) փոխաբերություն
- 3) հանգ
- 4) մակդիր

7. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոց է կիրառված:

*Եւ այս էր բան քո հրամանի,
Արդար, իրաւ դատատորի,
Որ մէկն ապրի տասրն տարի,
Մեկըն հարիւր, այլ՛ աւելի,*

- 1) հակադրություն
- 2) բաղաձայնույթ
- 3) համեմատություն
- 4) անձնավորում

8. Տրված հատվածում գեղարվեստական պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված:

*Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկնքի մթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:*

- 1) չափազանցություն
- 2) բաղաձայնույթ
- 3) հակադրություն
- 4) անձնավորում

9. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոց է գործածված:

*Մէկն ի պապանց՝ պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի,
Մէկին հազար ձի եւ ջորի,
Մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի,
Մէկին հազար դեկան ոսկի,
Մէկին ոչ փող մի պղղընծի,
Մէկին քեհեզ և ծիրանի,
Մէկին բրդդէ շալ մի չընկնի...*

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) անձնավորում

10. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Ինչի՞ց է, որ Հայաստանում
Ջրերը չեն հանգստանում,
Այլ քարեքար ընկած այսպես
Հնուց ի վեր, գժվածի պես,
Շառաչում են կիրճերն ի վար
Եվ ճչում են տազնապահար:*

- 1) բաղաձայնույթ
- 2) հանգ
- 3) համեմատություն
- 4) անձնավորում

11. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Սայաթ-Նովան ասաց՝ դարդըս կանց մե ճարրն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցր փառքըս, հիմի դարրն շատացիլ է.
Բըլբուլի պես էնդուր գու լամ՝ վաղթիս խարրն շատացիլ է.
Չի՛ն թողնում վախտին բացվելու՝ քաղերումեն բեզարիլ իմ:*

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) փոխաբերություն
- 4) չափազանցություն

12. Ընդգծվածներից ո՞րը մակդիր չէ:

- 1) **կարմիր** սարսուռ
- 2) **որբուկ** երազներ
- 3) **արծվակեռ** քիթ
- 4) **ճերմակ** գաղափար

13. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից ո՞րն է գործածված:

«Անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգետ են, մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք աստելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ...»:

- 1) չափազանցություն
- 2) բաղաձայնույթ
- 3) մակդիր
- 4) հակադրություն

14. Ընդգծվածներից ո՞րը մակդիր չէ:

- 1) *սպասման* հիվանդ
- 2) *ծաղկուն* ձյուն
- 3) *վարսաքափ* ուռի
- 4) *հնազույն* մագաղաթ

15. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված.

համեմատություն, շրջադասություն, մակդիր, անձնավորում:

*Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին.
Չարաճրճի ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղրնկեր մը՝ դրրան ետին մոռցրված...*

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

16. Տրված բոլոր նախադասություններում պատկերավորման-արտահայտչական միևնույն ո՞ր միջոցն է գործածված:

- «Չյունաջրի առվակների պես նրա երակներում արյունն ավելի էր եռում, և ծիծաղում էր, կոկորդային ձայներ հանում»:
- «Երեկոյան մութի մեջ նրանք ավելի հաղթամարմին էին, ինչպես գեր եզները»:
- «Մի հարկի տակ ութ տարի ապրել էին և այդ տարիներում վարժվել էին իրար, ինչպես ձին է վարժվում ախոռին»:
- Իսկ զրնգուն սուրմաները կայտառ կոհակների նման ծափ էին զարկում»:

- 1) համեմատություն
- 2) բաղաձայնույթ
- 3) փոխաբերություն
- 4) մակդիր

17. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Անպերով գոռաց երկինքը զարհուր,
Յավից անձրևը կարկուտի փոխվեց,
Անեծք կայծակեց ու լացեց անհույս,
Ու մնաց լուսինն աչքում երկնքի
Որպես մի շիթը սառած արցունքի:*

- 1) փոխաբերություն
- 2) համեմատություն
- 3) անձնավորում
- 4) հակադրություն

18. Ընդգծվածներից ո՞րը մակդիր չէ:

- 1) արևի **ջահել** համբույր
- 2) **անտուն** շրջնովիկ
- 3) **քույր** ջրեր
- 4) շոգը՝ **հակինթացած** խաղող

19. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Խոսելով իր անձնական հույզերի, թախծի կամ ուրախության մասին՝ բանաստեղծն արտահայտում է այնպիսի տրամադրություններ, որոնք հասկանալի ու հարազատ են շատերին, կարող են արձագանք գտնել նրանց հոգում: Բանաստեղծի մեծությունը չափվում է նրանով, թե որքանով լայն է այն հանրությունը, որի սպրաձն ու զգացածն է արտահայտում նա:

- 1) պաշտոնական
- 2) գիտական
- 3) գեղարվեստական
- 4) հրապարակախոսական

20. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Հրապարակախոսությունը գրավոր խոսքի մի տեսակ է, որի միջոցով հրապարակայնորեն (լրագրերով, հանդեսներով, երթեմն գրքերով) հանրությանը տեղեկացվում է հասարակական-քաղաքական, տնտեսական ու գիտամշակութային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների մասին, քննարկվում, վերլուծվում, քննադատվում ու արժևորվում են տվյալ ժամանակի հասարակական կյանքի կարևոր խնդիրներն ու երևույթները:

- 1) հրապարակախոսական
- 2) գիտական
- 3) գեղարվեստական
- 4) պաշտոնական

21. Գործառական ո՞ր ոճին են հատուկ.

խոսքի հանպատրաստից լինելը, անկաշկանդությունը, ոչ պաշտոնական բնույթը, խոսակիցների անմիջական մասնակցությունը հաղորդակցման գործընթացին:

- 1) գեղարվեստական
- 2) առօրյա-խոսակցական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

22. Տրված բառերը գործառական ո՞ր ոճին են հատուկ.

արձակ, դյուցազներգություն, դրամա, կերպար, կլասիցիզմ, հերոս, վիպակ, քերթված, քնարական, հայրեն, չափածո:

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) հրապարակախոսական
- 4) վարչական

23. Տրված բառերը գործառական ո՞ր ոճին են հատուկ.

արտառուչ, գլխիկոր, հեզասահ, դյուբիչ, անհաս, լազուր, հողեղեն, անվրդով, եղեմական, թովիչ:

- 1) գիտական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գեղարվեստական

24. Գործառական ո՞ր ոճին են հատուկ տրված բառերը.

ձեն, ախպեր, գլուխ տանել, թուշ, պոռշ, գլխի ընկնել, ճութ, քուր, գել, քեֆ:

- 1) գիտական
- 2) վարչական
- 3) առօրյա-խոսակցական
- 4) հրապարակախոսական

25. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Հնչերանգը բանավոր խոսքի անբաժանելի տարրերից մեկն է, լեզվաբան Շարլ Բալլի արտահայտությամբ՝ խոսքի մշտական մեկնաբանը: Հնչերանգը ոմանք համարում են բառի, ոմանք էլ՝ նախադասության անբաժանելի հատկանիշ, այնինչ հնչերանգը անբաժան է ոչ միայն բառից ու նախադասությունից, այլև խոսքից:

- 1) գեղարվեստական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

26. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Վահան Թեբեյանը անցել է գրական-գեղարվեստական կյանքի կեսդարյա ճանապարհ, որի ուղիղ կեսը՝ սփյուռքահայ շրջանում: Լինելով 20-րդ դարասկզբի արևմտահայ գրականության նշանավոր դեմքերից մեկը՝ նա իր գրական գործունեությամբ ու վաստակով դարձավ հավասարապես նաև Սփյուռքի գրող:

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) հրապարակախոսական
- 4) առօրյա խոսակցական

27. Գործառական ո՞ր ոճին է պատկանում հետևյալ հատվածը:

*Հարագատնեն ՚ր, աշխարհի չորս կողմը սփռված հայրենակարոտ եղբայրնե ՚ր ու քույրե ՚ր:
Հավատացե՛ք, որ կգա այն օրը, երբ համայն հայ ժողովուրդը կհավաքվի իր մայր հայրենիքում,
կհավաքվի առավել թափով ու խանդավառ՝ կառուցելու և ստեղծելու ավելի խաղաղված սրտով: Հայ
ժողովուրդը ապրել է, ապրում է, պիտի ապրի:*

- 1) առօրյա-խոսակցական
- 2) հրապարակախոսական
- 3) գիտական
- 4) վարչական

28. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

*Երևանի պետական համալսարանի 90-ամյա պատմության մեջ արժանի տեղ է զբաղեցնում նաև
մայր կրթօջախի հնագույն ամբիոններից մեկը՝ ԽՍՀՄ պատմության ամբիոնը:
Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողկոմի հրամանով 1930-1931 թթ. ուսումնական
տարում ԵՊՀ-ում անցկացված վերակազմավորման արդյունքում հիմնադրվեց Խորհրդային
Միության ժողովուրդների պատմության ամբիոնը: Նրա կազմավորման նպատակը, անշուշտ, չէր
սահմանափակվում զուտ պատմագիտական խնդիրներով ու ստանում էր քաղաքական
նշանակություն: Նորաստեղծ ամբիոնի առջև անմիջապես խնդիր դրվեց լուսաբանել բազմազգ
պետության մեջ ապրող ժողովուրդների պատմությունը, ջատագովել նրանց միջև բարեկամությունը,
որը կազմում էր երկրի քաղաքական դեկավարության պաշտոնական քարոզչության գլխավոր
ուղղություններից մեկը:*

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) պաշտոնական
- 4) հրապարակախոսական

29. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:

*... Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Մասրի մի թուփ է գլխիվայր բուսել,
Որ դալարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:*

- 1) հանգավորում
- 2) մակդիր
- 3) անձնավորում
- 4) չափազանցություն

ԲԱԺԻՆ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞րն պատմությունն է ժամանակագրական առումով Ազաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկի շարունակությունը:

- 1) Մովսես Խորենացու
- 2) Ղազար Փարպեցու
- 3) Փավստոս Բուզանդի
- 4) Եղիշեի

2. Ո՞րն է Եղիշեի ասույթներից:

- 1) «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով»:
- 2) «Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:
- 3) «Քաջերի սերունդները քաջեր են»:
- 4) «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ-Արամ-Տիգրան»:

3. Բառերի և բառակապակցությունների տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:

«Թեպետ եւ ենք ածու փոքր եւ թոտով յոյժ ընդ փոքու եւ եւ ընդ այլով յոլով անգամ թագատորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ»:

(1. արժանի գրոց հիշատակի, 2. զօրութեամբ տկար, 3. սահմանեալ, 4. նուաճեալ)

- 1) 4, 1, 3, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 1, 2, 3, 4
- 4) 4, 2, 3, 1

4. Տրված հատվածներից որո՞վ է սկսվում Մովսես Խորենացու «Ողբը»:

- 1) «Ո՞ր է այն գվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս... Ո՞վ պետք է այսուհետև հարգի մեր ուսումը, ո՞վ պիտի ուրախանա իմ՝ իր աշակերտի առաջադիմությամբ...»:
- 2) «Ողբո՛ւմ եմ քեզ, Հայո՛ց աշխարհ, ողբո՛ւմ եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը»:
- 3) «Վարդապետները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատվի արժանացած և ոչ թե Աստծուց կոչված, արծաթով ընտրված և ոչ թե Սուրբ Հոգով»:
- 4) «Մեզ տիրել են խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր ու դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ տալիս»:

5. Ո՞րն մահն է Մովսես Խորենացին ողբում՝ գրելով.

«Ո՞ր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը շեղվածների համար. ո՞ր է այն գվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ էր գրավում...»:

- 1) Հովսեփ Պաղնացու և Հովհան Եկեղեցիացու
- 2) Կորյունի և Դավիթ Անհաղթի
- 3) Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի
- 4) Վռամշապուռի թագավորի և Վարդան Մամիկոնյանի

6. Ողբալով բարեկարգությունից անշքացած հայ եկեղեցուն՝ ո՞ւմ հետ է համեմատում այն Մովսես Խորենացին իր «Ողբում».

- 1) մորը կորցրած զավակի
- 2) փեսայից զրկված հարսի
- 3) որդեկորույս մոր
- 4) որբևայրի կնոջ

7. Ի՞նչ առիթով է գրված Մովսես Խորենացու «Ողբը».

- 1) իր անհամար ու ծանր մեղքերի գիտակցման
- 2) Հայոց Արշակունի թագավորության ու կաթողիկոսության անկման
- 3) Աստծու մեծությանը ձգտելու և չհասնելու տառապանքի
- 4) Հայաստանի՝ 387 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանման

8. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է այժմեքի թաթ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա»:

- 1) «Վերք Հայաստանի», Խաչատուր Աբովյան
- 2) «Սամվել», Բաֆֆի
- 3) «Վարդանանք», Գերենիկ Գեմիրճյան
- 4) «Հայոց պատմություն», Մովսես Խորենացի

9. Ո՞ւմ մասին է.

«Նա սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, թե այնպես լավ շտապում է դեպի մավահանգիստը, իսկ ժուժկալող մարդը անապատ է փնտրում: ... Գնում է Գողթն զավատը և ասլրում մենակյացի կյանքով»:

- 1) Ասպրամի («Գևորգ Մարգարետունի», Մուրացյան)
- 2) Սամվելի («Սամվել», Բաֆֆի)
- 3) Մեսրոպ Մաշտոցի («Հայոց պատմություն», Մովսես Խորենացի)
- 4) Վանահոր («Հին աստվածներ», Լևոն Շանթ)

10. Ո՞րը Մովսես Խորենացու ասույթներից չէ:

- 1) «Զկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:
- 2) «Բազերի սերունդները քաջեր են»:
- 3) «Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»:
- 4) «Բազերի սահմանը իրենց զենքն է, որքան կտրի, այնքան էլ կտիրի»:

11. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

- ա. Զայլոց դիցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
- բ. Ի ստրկաց կարգի պահել
- գ. Կամ ծառայեցուցանելով
- դ. Եվ թշնամութիւն յավիտենական
- ե. Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել
- զ. Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիցազանց

- 1) ա, բ, գ, դ, ե, զ
- 2) գ, ա, գ, բ, դ, ե
- 3) ա, գ, գ, բ, ե, դ
- 4) ե, դ, գ, բ, գ, ա

12. «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Ես էստեղ նստեմ, կերուխում անեմ,
Մըսրա Սելիք Դավթին գերի՞ պահի:
Բա ամոթ չէ՞ մեզի...
Հացն ու գինին, տեր կենդանին,
Չուր էդա որք հետ չը բերեմ,
Էս բաժակ իմ բերան չ'ստնեմ:*

- 1) Արմաղանի
- 2) Զեռի Թորոսի
- 3) Խանդութի
- 4) Վերգոյի

13. Տրված հատվածը «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոստիժու գեղեցկությունն է պատկերում:

*Կ'իրիշկեմ՝ էնոր էղնգներ ռանդայով տաշած է.
Ա՛խ, հալա տգո՛, ռանդայով տաշած է...
Կ'իրիշկեմ՝ էրեսի կարմրություն նռան գինի է,
Ա՛խ, հալա տրգո, նռան գինի է...*

- 1) Ծովինարի
- 2) Խանդութի
- 3) Գոհարի
- 4) Դեղձուն-Ծամի

14. «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Օ՛, քուրե՛ր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի քուրություն եք արե,
Օ՛, մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերություն եք արե,
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով...*

- 1) Մեծ Սիերի
- 2) Զեռի Թորոսի
- 3) Դավթի
- 4) Սանասարի

15. «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էդավ քանց մասուր մի,
Ու գարին էդավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլներ էդտեղեն:*

- 1) Մեծ Սիերի
- 2) Զեռի Թորոսի
- 3) Դավթի
- 4) Փոքր Սիերի

16. Ասույթներից քանի՞սն են «Մասնա ծներ» էպոսից («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):

- «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով»:
- «Աշխարհ գութնի մոտ կը լիանա»:
- «Քաջերի սերունդները քաջեր են»:
- «Առյուծն առյուծ է, էղնի էգ, թե՛ որձ»:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

17. «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Մըսրա օջախ կանգնացուցես,
Հայու օջախ փչացուցես:*

- 1) Մառյեի
- 2) Իսմիլ Խաթունի
- 3) Բաղդադի Խալիֆայի
- 4) Մըսրա Մելիքի

18. «Մասունցի Դավիթ» էպոսում ինչո՞ւ է Դավիթի ձեռքի Խաչ պատերազմին սևանում:

- 1) Խոստացել էր փահլևաններին ամուսնացնելուց հետո շտապ դառնալ Խանդութի ու զավակի մոտ և ուշացել էր:
- 2) Երդվել էր յոթ օրից վերադառնալ Չմշկիկ Սուլթանի մոտ, որ կռվեն, և մոռացության էր տվել:
- 3) Հովիվներին խոստացել էր վանքից հարիսա բերել, բայց 40 ավազակների դեմ կռվի մեջ մտնելով՝ մոռացել էր:
- 4) Երդվել էր մարտի ելնել Պղնձե քաղաքի թագավորի թշնամիների դեմ և ազատել նրան հարկից, բայց խոստումը դրժել էր:

19. Ո՞ւմ ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Մի՛ գլորիր ինձ, երբ ընկած եմ ես,
Եվ մի՛ կործանիր անօգ զայթածիս,
Աստանդականիս մի՛ վանիր դարձյալ
Եվ մի՛ հալածիր տարագրվածիս...*

- 1) Գրիգոր Նարեկացու
- 2) Վահան Տերյանի
- 3) Եղիշե Չարենցի
- 4) Պարույր Սևակի

20. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Անկար հիվանդիս մի՛ մահացրու,
Մի՛ ծանրաբեռնիր թույլ ու տկարիս.
Մի՛ ավելացրու ծանր անուրներ թիկունքիս կարկամ,
Դառն հեծեծանքիս՝ նորանոր ողբեր:*

- 1) «Հին աստվածներ», Լևոն Շանթ
- 2) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 3) «Աբու-Լալա Մահարի», Ավետիք Իսահակյան
- 4) «Տաղ անձնական», Եղիշե Չարենց

21. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Բուրբում էր նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառի.
Չայնն էր մեղուշ, քաղցրանվագ:
Չարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում...*

- 1) «Ռավեննայում», Ավետիք Իսահակյան
- 2) «Մեղեդի ծննդյան», Գրիգոր Նարեկացի
- 3) «Fatum», Վահան Տերյան
- 4) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց

22. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի վերաբերյալ:

- Ջղջական, ապաշխարական բովանդակություն ունեցող գործ է:
- Հնչում է որպես հուզիչ ողբ:
- Նրանում փառաբանված են հայ կրթական, լուսավորական գործի նվիրյալները:
- Արտացոլում է մարդու մեղավորության գիտակցությունը և Աստծու ողորմությամբ մեղքերից ազատվելու բաղձանքը:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

23. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Մի՛ բազմապատկիր ցավս հեծության
Եվ մի՛ խոցոտիր վիրավորվածիս,
Մի՛ դատապարտիր արդեն պատժվածիս,
Բազմաչարչարիս մի՛ տանջիր նորեն...*

- 1) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 2) «Գանգատ», Ֆրիկ
- 3) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց
- 4) «Բիրբիական», Հովհաննես Շիրազ

24. Հեղինակներից քանի՞սն են ապրել ու ստեղծագործել Գրիգոր Նարեկացուց հետո:

- Ֆրիկ
- Ագաթանգեղոս
- Սայաթ-Նովա
- Նահապետ Բուչակ

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

25. Նշվածներից ո՞վ է Վարդան Այգեկցու ընտիր առակների մի փունջ վերածել աշխարհաբարի:

- 1) Հովհաննես Շիրազը
- 2) Ավետիք Իսահակյանը
- 3) Ակսել Բակունցը
- 4) Հովհաննես Թումանյանը

26. Ո՞ւմ ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Գիտես՞ս, մարմին եմք մըստդի,
Գեմ արձան չեմք ինչ պղղընձի,
Եղեգրն չեմք, կամ խոտ վայրի,
Որ խանձ արկեալ ես կըրակի...*

- 1) Գրիգոր Նարեկացու
- 2) Ֆրիկի
- 3) Նահապետ Քուչակի
- 4) Պետրոս Դուրյանի

27. Ֆրիկը, մեղադրելով ֆալափին (ճակատագրին)՝ մարդկանց նկատմամբ անհավասար, անարդար վճիռներ կայացնելու համար, նրան ի՞նչ է կոչում.

- 1) իրաւ դատավոր
- 2) ծուռ դատավոր
- 3) անգէտ հալետոր
- 4) արդար դատաւոր

28. Արվեստի ճշմարիտ երկերի համար անհրաժեշտ նախապայմանի ընդգծումը նշյալ ո՞ր գրողի կողմից է ստացել հետևյալ բնորոշումը.

«Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կուտայ».

- 1) Գրիգոր Նարեկացու
- 2) Ֆրիկի
- 3) Նահապետ Քուչակի
- 4) Սայաթ-Նովայի

29. Նշված հեղինակներից քանի՞սն են ապրել ու ստեղծագործել Ֆրիկից հետո:

- Գրիգոր Նարեկացի
- Նահապետ Քուչակ
- Սայաթ-Նովա
- Գազար Փարպեցի

- 1) բոլորը
- 2) երկուսը
- 3) մեկը
- 4) երեքը

30. Ո՞րը Նահապետ Քուչակի ստեղծագործություններից չէ:

- 1) «Թամամ աշխար պըտուտ էկա»
- 2) «Եկին ու խապար բերին»
- 3) «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ»
- 4) «Երեկ ցորեկով բարով»

31. Հայրեններից ո՞րն է կառուցված երկխոսության սկզբունքով:

- 1) «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»
- 2) «Եկին ու խապար բերին»
- 3) «Երեկ ցորեկով բարով»
- 4) «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ»

32. Նահապետ Քուչակի «Ժամ-ժամ զիմ դարիպությունս» հայրենում քնարական հերոսը ինչի՞ հետ իրեն չի համեմատում:

- 1) ջրի
- 2) նետի
- 3) աղեղի
- 4) կռունկի

33. Մայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

*Էրեզ լավ էր, քանց փուր էսօր, վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի ըլի. խաղերումեն բեզարիլ իմ:*

- 1) «Գուն է 'ն գրլխեն իմաստուն իս»
- 2) «Աշխարումս ա իս չիմ քաշի»
- 3) «Թամամ աշխար պրտուտ էկա»
- 4) «Աշխարս մե փանջարա է»

34. Մայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

*Մայաթ-Նովեն ասաց՝ դարդրս կանց մե ճարրն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցր փառքրս, հիմի դարրն շատացիլ է.
Բըրբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարրն շատացիլ է.
Չի՛ն թողնում վախտին բացվելու. քաղերումեն բեզարիլ իմ:*

- 1) «Աշխարումս ա իս չիմ քաշի»
- 2) «Թամամ աշխար պրտուտ էկա»
- 3) «Աշխարս մե փանջարա է»
- 4) «Գուն է 'ն գրլխեն իմաստուն իս»

35. Մայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

*Չըտեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունէն բաշ, նագանի,
Թէ խամ հաքնիս, թէ գար հաքնիս, կու շինիս դումաշ, նագանի,
Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նագանի:*

- 1) «Թամամ աշխար պրտուտ էկա»
- 2) «Աշխարս մե փանջարա է»
- 3) «Գուն է 'ն գրլխեն իմաստուն իս»
- 4) «Աշխարումս ա իս չիմ քաշի»

36. Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:

*Անմահական ջրրով լիքըն օսկե փրնջան իս ինձ ամա.
Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ գարբար վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛, է՛ նենց սպանե՛ սուլթան ու խան իս ինձ ամա:*

- 1) «Աշխարս մե փանջարա է»
- 2) «Թամամ աշխար պըտուտ էկա»
- 3) «Աշխարումս ա իս չիմ քաշի»
- 4) «Գուն է ն գըլխեն իմաստուն իս»

37. Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:

*Չըկա քիզ պես հուքմի-հեքիմ, դուն Բոստամի Չալ՝ թաքավուր.
Ասկըդ ասկերումըն գոված՝ համդ ունիս, գոգալ թաքավուր,
Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխըս արա տալ, թաքավուր,
Մըտիկ արա քու Ստեղծողին՝ նըհախս տիղ դագաք մի՛ անի:*

- 1) «Թամամ աշխար պըտուտ էկա»
- 2) «Աշխարումս ա իս չիմ քաշի»
- 3) «Գուն է ն գըլխեն իմաստուն իս»
- 4) «Աշխարս մե փանջարա է»

38. Բնութագրումներից ո՞րը նշված գրողներից ում է վերաբերում:

- | | |
|---|---------------------|
| ա. Միջնադարյան հայ սոցիալական քնարերգության սկզբնավորողն ու խոշոր ներկայացուցիչն է: | 1. Խաչատուր Աբովյան |
| բ. Միջնադարյան հայ տաղերգության վերջին խոշոր ներկայացուցիչն է: | 2. Վարդան Այգեկցի |
| գ. Սկիզբ է դրել առակավոր ճառի տեսակին: | 3. Սայաթ-Նովա |
| դ. Հայ նոր գրականության հիմնադիրն է: | 4. Ֆրիկ |

- 1) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 2) ա-4, բ-3, գ-1, դ-2
- 3) ա-4, բ-3, գ-2, դ-1
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

39. Նշվածներից ո՞րը Խաչատուր Աբովյանի ստեղծագործություններից չէ:

- 1) «Պարապ վախտի խաղալիք»
- 2) «Առաջին սերը»
- 3) «Գանգատ»
- 4) «Թուրքի աղջիկը»

40. Նշված գրողները հայերենի ո՞ր տարբերակով են ստեղծագործել:

- | | |
|---------------------|-------------------|
| ա. Ֆրիկ | 1. Թիֆլիսի բարբառ |
| բ. Սայաթ-Նովա | 2. գրաբար |
| գ. Ագաթանգեղոս | 3. միջին հայերեն |
| դ. Խաչատուր Աբովյան | 4. արևելահայերեն |

- 1) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 3) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 4) ա-3, բ-1, գ-4, դ-2

41. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» ո՞վ է ասում.

«-Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:

- 1) Կրեսոս թագավորը
- 2) Կրեսոսի որդին
- 3) Աղասին
- 4) ինքը՝ հեղինակը

42. Ո՞րն է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ենթավերնագիրը:

- 1) «Ողբ ազնվատոհմ գորապետի»
- 2) «Ողբ հայրենասիրի»
- 3) «Ողբ քաջագարմ հայրենասիրի»
- 4) «Ողբ Հայաստանի»

43. Նշվածներից ո՞րը Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» արժարժված գեղագիտական սկզբունքներից չէ:

- 1) աշխարհաբարով գրելը
- 2) գրականության բովանդակության խնդիրը
- 3) կյանքի բացասական երևույթները ծաղրով ներկայացնելու պահանջը
- 4) գրական հերոսի ընտրության հարցը

44. Ո՞ր իրադարձություններն են կազմում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պատմական առաջը:

- 2) հայ ժողովրդի պայքարը արաբական լծի դեմ 7-9-րդ դդ.
- 3) 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը
- 4) 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը
- 5) հայ ժողովրդի հերոսական պայքարը պարսկական բռնաճնշումների դեմ 5-րդ դարում

45. Խոսքերից ո՞րը Խաչատուր Աբովյանինը չէ:

- 1) «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագո՛ւյնը»:
- 2) «Էրեխե՛ք, ձեր ջանին մեռնին, ձեզ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին դուրբան»:
- 3) «Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնին, ձեր արևին դուրբան. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք»:
- 4) «Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնին, Հայոց ազգ, քո հողին մատաղ, Հայոց աշխարհ...»:

46. Ինչպիսի՞ վեպ է անվանել Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանին»:

- 1) Ժամանակակից
- 2) ազգային
- 3) պատմական
- 4) լուսավորական

47. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում Աղասին ինչպե՞ս է իմանում հոր՝ գնդանում բանտարկված լինելու մասին:

- 1) Հորեղբայր Ավետիքն է հայտնում:
- 2) Քանաքեռցիներն են լուր բերում:
- 3) Մոր ուղարկած նամակից է տեղեկանում:
- 4) Նազլուն է հայտնում նամակով:

48. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում ի՞նչ ճակատագրի է արժանանում Աղասու մայրը:

- 1) Անհայտ է:
- 2) Գաղթի ճանապարհին մահանում է:
- 3) Սվանդուլի խանը նրան էլ Թագուհու հետ տանում է իր տուն՝ նրանց հոգսը հոգալու:
- 4) Որդու թաղման ժամանակ ինքնասպան է լինում:

49. Ինչո՞վ է ավարտվում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի երրորդ գլուխը:

- 1) Հեղինակի՝ Երևանի բերդը գրաված ռուսական բանակի մեծարմամբ:
- 2) Քանաքեռի գերեզմանոցում երկու հոր և երկու որդու թաղմամբ:
- 3) Նազլուի՝ Աղասու շիրիմի վրա մահանալու դրվագով:
- 4) Խ. Աբովյանի՝ հանուն հայրենիքի ազատագրության նահատակված հերոսների հիշատակի օրհնությանմբ:

50. Նշվածներից ո՞վ Աղասու ընկերներից չէ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում:

- 1) Վաթոն
- 2) Մուսեն
- 3) Կարոն
- 4) Կոտանը

51. Տրված քանաստեղծական հատվածը ո՞ր հերոսի խոսքն է:

*Բարո՛վ մնաք, բարո՛վ, սարեր ու ձորեր,
Արվան ծաղկըներ, սիրուն աղբյուրներ,
Որ ինձ պահեցիք դուք էսքան օրեր,
Ա՛յ անմեղ հայեր, սիրուն աղջրկներ:*

- 1) Սարոյի («Անուշ», Հովհաննես Թումանյան)
- 2) Աղասու («Վերք Հայաստանի», Խաչատուր Աբովյան)
- 3) Դավթի («Մասունցի Դավիթ» համահավասար բնագիր)
- 4) Օհան ամու («Համբերանքի չիբուխը», Ավետիք Իսահակյան)

52. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից ո՞ւմ խոսքն է ներկայացված տրված հատվածում:

«Ես ի՞նչ գիտեմ՝ տերտերն ի՞նչ ա, ժամն՝ ինչ: Էդպես բաները էս հաստ գլխումը, հազար տարի էլ ասեմ, մեռնիմ, կտրիմ, ոտներս քարեքար տամ, տուն չի՛ գնալ, տո՛ւն: Պարտականը նա ըլի, որ ինձ կարդալ չի սովորցրել, ամա բանը մենակ կարդալումը չի: Ինչ կուզե ասեն, էս իմ կոպիտ գլխովը էնպես եմ կարծում. նհախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարտակ քնիլը հարամ ա: Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի»:

- 1) գյուղացի Հարությունի
- 2) Աղասու
- 3) տանուտեր Օհաննեսի
- 4) Մուսայի

53. Ո՞րը Սիբայել Նալբանդյանի ստեղծագործություններից չէ:

- 1) «Երկու տող»
- 2) «Առաջին սերը»
- 3) «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»
- 4) «Ապոլլոնին»

54. Ո՞րն է Միքայել Նալբանդյանի բանաստեղծություններից:

- 1) «Վազոդ ջրին»
- 2) «Աղասու խաղը»
- 3) «Գանգատ»
- 4) «Փողոցովդ ի վար կուգի»

55. Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծության մի հատվածն է մասնակի փոփոխություններով դարձել Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Իտալացի աղջկա երգը»
- 4) «Մանկության օրեր»

56. Տրված հատվածը Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:

*Ես պիտի դուրս գամ դեպ հրապարակ
Առանց քնարի, անգարդ խոսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:*

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Իտալացի աղջկա երգը»
- 4) «Մանկության օրեր»

57. Հատվածներից որը Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:

- | | |
|--|--|
| <p>ա. Մեր հայրենիք, թշվառ, անտեր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Յուր որդիքը արդ կանչում եմ
Հանել յուր վրեժ, քեն ու ոխ:</p> <p>բ. Գերության շղթան ինձ զգալի չէր,
Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.
Ձեզանից հետո ծանրացան նոքա,
Ո՛հ, անիծում եմ ես այն օրերը:</p> <p>գ. Մինչ գիշերը անհանգիստ,
Օրորոցում կապկապած՝
Լալիս էի անդադար՝
Մորս քունը խանգարած...</p> <p>դ. Լո՛ւռ կաց դու, քնա՛ր, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապոլո՛ն, հե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Ձոհ բերել կյանքը սիրած աղջկան:</p> | <p>1. «Մանկության օրեր»</p> <p>2. «Իտալացի աղջկա երգը»</p> <p>3. «Ազատություն»</p> |
|--|--|

- 1) ա-2, բ-1, գ-3, դ-1
- 2) ա-1, բ-3, գ-3, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-3, բ-2, գ-1, դ-2

58. Տողերի n-րդ դասավորությունն է ճիշտ:

- ա. Օրորոցում կապկապած
- բ. Մինչ գիշերը անհանգիստ
- գ. Մորս քունը խանգարած
- դ. Լալիս էի անդադար
- ե. Խնդրում էի նորանից
- զ. Բազուկներս արձակել
- է. Ազատությունը սիրել
- ը. Ես այն օրից ուխտեցի

- 1) ա, բ, գ, դ, ե, զ, ը, է
- 2) բ, ա, դ, գ, ե, զ, ը, է
- 3) գ, դ, ա, բ, ե, զ, ը, է
- 4) դ, գ, ա, ը, է, բ, ե, գ

59. Ո՞ր բառը կամ բառակապակցությունն է բաց թողած:

*Նայի՛ր նորան՝ երեք գույնով,
Նվիրական մեր նշան,
Թո՛ղ փողփողի թշնամու դեմ,
Թո՛ղ կործանվի*

- 1) Գերմանիան
- 2) Թուրքիան
- 3) Ավստրիան
- 4) մեր ախոյան

60. Պնդումներից n-րն է սխալ Միքայել Նալբանդյանի «Մանկության օրեր» բանաստեղծության քննարական հերոսի վերաբերյալ:

- 1) Ափսոսանքով է հիշում անդարձ անցած մանկության երջանիկ, անհոգ օրերը:
- 2) Տարիների հետ գիտությունը, մտածությունը, հասունացած բանականությունը ծանր խտեղով են պատում հերոսի սիրտը:
- 3) Աշխարհի անարդար դրվածքի, ազգի ստրկական կացության շուրջ մռայլ մտորումները հերոսը փորձում է փարատել քնարի սփոփիչ մեղեդիներով:
- 4) Կյանքի դառնություններ տեսած հերոսը ազգի փրկության հույսը կապում է Աստծու ողորմածության հետ:

61. Տրված հատվածը n-րդ բանաստեղծությունից է:

*Մորս կեսը, կեսի կեսը,
Գեթ երևեր մեր ազգում.
Բայց մեր կանայք... ո՛ւր Եղիշե,
Ո՛ւր մեր աիկնայք փափկասուն:*

- 1) «Իտալացի աղջկա երգը» (Միքայել Նալբանդյան)
- 2) «Իմ ցավը» (Պետրոս Դուրյան)
- 3) «Հայրենիքիս» (Ավետիք Իսահակյան)
- 4) «Որպես Լատերտի որդին» (Վահան Տերյան)

62. Տողերի n-րդ դասավորությունն է ճիշտ:

- ա. Գնա՛, թեև չեմ կարող գալ,
- բ. Բայց իմ հոգին՝ քեզ ընկեր
- գ. Ազգի սերը՝ քաջալեր
- դ. Գնա՛, եղբայր, աստված քեզ հույս

- 1) ա, բ, գ, դ
- 2) ա, բ, դ, գ
- 3) գ, դ, ա, բ
- 4) դ, գ, ա, բ

63. Ո՞ր բառը կամ բառակապակցությունն է բաց թողած:

*Ինչքան՝ մի թույլ էակ,
Պատերազմի գործերում
Կարե օգնել յուր եղբորը,
Ձանց չարեցի քո սիրուն:*

- 1) աղջիկ
- 2) կին մարդ
- 3) օրիորդ
- 4) մանուկ

64. Տողերի դասավորության n-րդ տարբերակն է ճիշտ:

- ա. Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն
- բ. Այլ եթե գոգո՛ւ ալ թափին
- գ. Բույլքն աստեղաց երկնքին
- դ. Նմանիլ չե՛ս կրնար դուն

- 1) ա, բ, գ, դ
- 2) բ, գ, դ, ա
- 3) գ, բ, դ, ա
- 4) գ, դ, ա, բ

65. Հատվածներից n-րդ Պետրոս Գուրյանի որ բանաստեղծությունից է:

- | | |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> ա. Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ: բ. Ո՛հ, կա՛յծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք՝ ապրի՛մ...
Ի՛նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՛մ... գ. Հող աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկները հող չեն թռմիր... դ. Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Յամաք գտնել աղբերքն համայր... | <ul style="list-style-type: none"> 1. «Իմ ցավը» 2. «Տրտունջք» 3. «Լճակ» 4. «Միրել» |
|---|--|

- 1) ա-4, բ-2, գ-3, դ-1
- 2) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 3) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

66. Ո՞րը Պետրոս Դուրյանի ստեղծագործություններից չէ:

- 1) «Գանգատ»
- 2) «Տրտունջք»
- 3) «Իմ ցավը»
- 4) «Միրել»

67. Հատվածներից որը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

- | | |
|---|---------------|
| ա. Ո՛հ, խորձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջագգեստ մը շրշեց իմ շուրջ: | 1. «Տրտունջք» |
| բ. Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե՛ր զիս,
Աստված, խոկն հըսկա փշրե՛ր հյուլեիս... | 2. «Իմ ցավը» |
| գ. Շատերը զիս մերժեցին.
«Զընար մունի սոսկ», - ըսին: | 3. «Միրել» |
| դ. Հեք մարդկության մեկ ոստը գոս
Հայրենիք մը ունիմ թըշվառ... | 4. «Լճակ» |

- 1) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 2) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

68. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

- ա. Ջիս կը պահես դողդողալով
- բ. Դարձյալ խորքիդ մեջ խրոռով
- գ. Ջի թհովե մ'ալ խորշոմիս
- դ. Լըճակ, դու ես թագուհիս

- 1) դ, գ, բ, ա
- 2) ա, բ, գ, դ
- 3) ա, բ, դ, գ
- 4) գ, դ, բ, ա

69. Տրված հատվածը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

*Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն ...*

- 1) «Լճակ»
- 2) «Տրտունջք»
- 3) «Իմ ցավը»
- 4) «Միրել»

70. Ինչպե՞ս է սկսվում Պետրոս Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունը:

- 1) բանաստեղծի՝ Աստծու հետ հանդուգն վեճով
- 2) քնարական հերոսի՝ ապրելու համար Աստծուն ուղղված թախանձագին աղերսանքով
- 3) քնարական հերոսի՝ Աստծուն ու Արևին ուղղված հրաժեշտի խոսքով
- 4) քրիստոնեական աղոթքով

71. Տրված հատվածը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

*Ես ուզեցի քրնարով մի
Լուկ սիրելի հոս, հոս դալկահար,
Պաշտել, գրկել միայն քրնար,
Սիրող էակ ճանչել զանի,
Ըստ իմ քրմաց լարել աղի
Եվ սրտակցիլ սիրողաբար:*

- 1) «Լճակ»
- 2) «Միրելի»
- 3) «Տրտունջք»
- 4) «Իմ ցավը»

72. Պնդումներից ո՞րն է ճիշտ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:

- 1) Բանաստեղծի վեճն է Աստուծու հետ:
- 2) Բանաստեղծի հավատարմության երդումն է հայրենիքին:
- 3) Նրանում զարգանում է փիլիսոփայական այն խոհը, թե կյանքի ու մահվան սահմանագծից է սկիզբ առնում անմահության գաղտնիքը:
- 4) Հասարակությունից օտարված անհատի դրաման է, որտեղ բնության շքնաղ մի բեկորը հանդես է գալիս որպես բանաստեղծի խռովահույզ սրտի հանգրվան:

73. Պնդումներից ո՞րն է սխալ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:

- 1) Նրանում լսվում են շրջապատի մարդկանց դառը խոսքերը բանաստեղծի խեղճ արտաքինի ու սրտի ցավի մասին:
- 2) Միրած աղջկա զգեստի շրշյունն անգամ հասնում է պատանուն, մաշում նրա սիրտը:
- 3) Բանաստեղծության տողերում երևում է հիվանդությունից ընկճված հուսահատ պատանին:
- 4) Մարդկային տառապանքին զուգորդվող լճակը ներկայացված է բնական մանրամասներով:

74. Ո՞ր շարքում Պետրոս Դուրյանի բանաստեղծություններից չկա:

- 1) «Միրելի», «Արևին», «Առաջին ծիլեր»
- 2) «Հյուղը», «Իմ ցավը», «Ջրտուրք»
- 3) «Միրերգ», «Ձոն», «Վայրկյան»
- 4) «Տխրություն», «Ձմրան պարզ գիշեր», «Տրտունջք»

75. Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:

*Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող մ'իր վրբան:*

- 1) «Արևին», Միսաք Մեծարենց
- 2) «Տրտունջք», Պետրոս Դուրյան
- 3) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 4) «Գանգատ», Ֆրիկ

76. Ո՞ր հատվածով է ավարտվում Պետրոս Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունը:

- 1) Ողջո՛ւյն քեզ, Աստված դողողջ էակին,
Շողին, փոթիթին, ավույն ու վանկին...
- 2) Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն ...
- 3) Թո՛ղ անեժք մ'ըլլամ ու կողող խրրիմ,
Թող հորջորջեմ քեզ. «Աստված ոխերիմ»:
- 4) Ո՛հ, կա՛յծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք, ապրի՛մ...
Ի՛նչ, երազե վերջ գրրկել ցուրտ շիրի՛մ...

77. Ո՞ր պարբերականին է աշխատակցել Բաֆֆին:

- 1) «Նոր-Գար»
- 2) «Ազդարար»
- 3) «Մշակ»
- 4) «Բազմավեպ»

78. Պնդումներից ո՞րն է սխալ Բաֆֆու վերաբերյալ:

- 1) Բաֆֆին գրել է նաև բանաստեղծություններ:
- 2) Բաֆֆին հայկական ռոմանտիզմի խոշորագույն դեմքերից է:
- 3) Հայ նոր գրականության հիմնադիրն է:
- 4) Բաֆֆին իր առաջին շրջանի երկերում պատկերել է պարսկահայերի կյանքը:

79. Ո՞ւմ խոսքն է.

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել մի մռայլ դասակարգի վրա, որ խավարի մեջ կեղեքում էր յուր գոհերին և անհազ վամպիրի նման ծծում էր նրանց արյունը»:

- 1) Միքայել Նալբանդյանի
- 2) Բաֆֆու
- 3) Ալեքսանդր Շիրվանզադեի
- 4) Ավետիք Իսահակյանի

80. Պատմական ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն են պատկերված Բաֆֆու «Մամվել» պատմավեպում:

- 1) IV դարի երկրորդ կես
- 2) V դարի վերջ
- 3) IX դար
- 4) X դար

81. Պնդումներից ո՞րն է սխալ Բաֆֆու «Մամվել» պատմավեպի վերաբերյալ:

- 1) Վեպը ունի առաջաբան, որտեղ հեղինակը շարադրում է պատմավեպ գրելու իր սկզբունքները:
- 2) Վեպի «Փակագծերի մեջ» հատվածը թեև անմիջաբար չի առնչվում վիպական գործողություններին, սակայն դարաշրջանի խոր վերլուծությամբ կարևոր դեր է կատարում վեպի բովանդակությունը հասկանալու համար:
- 3) Վեպն սկսվում է Արարատյան դաշտի առավոտի նկարագրությամբ:
- 4) Վեպի կենտրոնական գաղափարը հայրենասիրությունն է:

82. Ո՞ր պնդումն է սխալ Բաֆֆու «Մամվել» պատմավեպի հերոս Մերուժան Արծրունու վերաբերյալ:

- 1) Մերուժան Արծրունին թագավորական գահին է ձգտում նաև պարսից արքայի քրոջ՝ Որմիզդուխտի սիրուն արժանանալու համար:
- 2) Հարազատ ընտանիքը երես է թեքում Մերուժան Արծրունուց՝ ապարանքի մուտքի դռները փակելով նրա առաջ:
- 3) Մերուժանը մերժվում է Որմիզդուխտից՝ արժանանալով նրա արհամարհանքին:
- 4) Դավաճան Մերուժանին ներում է միայն մայրը, երբ որդուն դարձի բերելու անհաջող պատգամախոսությունից վերադարձածները հայտնում են, որ նա հիվանդ է:

83. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Եվ որպես Շապուհի կանանց հագուստն ու զարդերը նրան դուր էին գալիս, նույնպես դուր էր գալիս Շապուհի պաշտած կրոնը: Աշխատում էր նմանվել»:

- 1) Վասպուրականի տիկնոջը
- 2) Փառանձեմ թագուհուն
- 3) Սաթենիկին
- 4) Տաճատուհուն

84. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքն է.

«Նա մեռած է ինձ համար, ես կցավեմ նրա վրա, բայց երբեք չեմ ասիտաս: Նա այլևս իմ որդին չէ: Իմ որդիները, իմ սիրելի զավակներն են այն բազմաթիվ գերիները, որ այժմ շղթայակապ դրած են մեր առջև՝ պարսից բանակում»:

- 1) Վասպուրականի տիկնոջ
- 2) Վահանդուխտի
- 3) Տաճատուհու
- 4) Համազասպուհու

85. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Նա նայում էր որդու վրա ոչ թե իբրև ազատ, ինքնակամ անհատի վրա, այլ որպես մի հաջողակ միջոցի վրա, որով միայն ինքը պետք է փառավորվեր: Երբ որդին բարձր պաշտոնների կհասներ, երբ նա կփայլեր բարձր շրջաններում, այդ փայլը իրեն էր պատկանում, որովհետև որդին նույնպես իրեն էր պատկանում»:

- 1) Վասպուրականի տիկնոջը
- 2) Վահան Մամիկոնյանին
- 3) Փառանձեմ թագուհուն
- 4) Չարմանդուխտին

86. Ո՞ր դրվագով է սկսվում ԲաՖֆու «Մամվել» պատմավեպը:

- 1) Երկու սուրհանդակ, որոնցից մեկի ձին սևաթույր էր, մյուսինը՝ կապուտակ, իրարից ծածուկ շտապում էին դեպի Ռդական ամրոցը:
- 2) Մամվելը Արտասուքի աղբյուրի մոտ հանդիպում է Աշխենի հետ, նրան հավատարմության երդում տալիս:
- 3) Մերուժան Արծրունին հյուրընկալվում է իր հովիվներից մեկին:
- 4) Մամվելը այցելում է Մերուժանի բանակատեղին՝ հորը տեսակցելու:

87. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Խելագարի նման սիրում է թե՛ յուր թագավորին և թե՛ հայրենիքը: Այդ սերը լրացնում է նրա մեջ փորձի և հմտության պակասությունը: Քաջ է և համարձակ: Միրված է յուր հասարակությունից, և նրա ձայնին շատերը կհետևեն: Անկաշառելի է»:

- 1) Վասակ Մամիկոնյանին
- 2) Արշակ թագավորին
- 3) Մամվելին
- 4) Մերուժան Արծրունուն

88. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«...Շատ սիրված էր ժողովրդից: Նրա քաղցր ու մեղմ բնավորությունը, նրա անսահման գուրմ ու բարությունը թե՛ դեպի շինականը, թե՛ դեպի քաղաքացին նրա անձը պաշտելի էին կացուցանել: Նա չուներ ուրիշ նախարարական տների մեծամիտ երիտասարդների ո՛չ անգթությունը, ո՛չ էլ արհամարհանքը, որոնց աչքում իրենց ազնվարյուն նժույզը, շունը, քազեն ավելի արժանավորություն ունեին, քան թե ուամիկը»:

- 1) Մուշեղ Մամիկոնյանին
- 2) Մամվելին
- 3) Սահակ Պարթևին
- 4) Պապին

89. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Նրան՝ որպես անառակ որդու, թողնում էին դրսում. դա մի ծանր ապտակ էր նրա երեսին, դա մի դառն պատիժ էր նրա երեսին»:

- 1) Վահան Մամիկոնյանին
- 2) Հայր Մարդպետին
- 3) Մերուժան Արծրունուն
- 4) Մամվելին

90. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը:

«Հայրենասիրության հետ ունի փորձ և ընդարձակ հմտություններ պատերազմի գործերում: Դա մի սուկալի մարդ է: Պարսկաստանը շատ կշահեր, եթե մի ամբողջ գավառ անգամ նշանակվելու լինի նրա կյանքի վճարման համար որպես գլխազին: Լավ գորապետ և քաջ պատերազմող է և ոխերիմ թշնամի արհներին»:

- 1) Մուշեղ Մամիկոնյանին
- 2) Մամվելին
- 3) Մերուժան Արծրունուն
- 4) Վասակ Մամիկոնյանին

91. ԲաՖֆու «Մամվել» պատմավեպում ո՞ւմ մասին է Մերուժան Արծրունին ասում.

«Նա եկավ մեզ մոտ որպես նպատակի գոհ, և ես չեմ կարող չնախանձվիլ նրա անձնագոհության եռանդին, որ հատուկ է քարձր, քաջազնական ոգիներին»:

- 1) Փառանձեմ թագուհու
- 2) Մուշեղ Մամիկոնյանի
- 3) Մամվելի
- 4) Համազասպուհու

92. Խոսքերից որը ո՞ւմն է Րաֆֆու «Մամվել» պատմավեպում:

- ա. «...Ի՞նչը ձգեց ինձ այս թշվառ դրության մեջ, ի՞նչը հարկադրեց ինձ ուրանալ ամեն ինչ, ինչ որ նվիրական էր ինձ համար, և երկրպագություն տալ պարսից աստվածներին: Միայն դո՛ւ, քո սե՛րը միայն, ո՛վ Որմիզդուխտ»:
 - բ. «-Ծաղր, խիստ կծու կատակ...- բացականչեց բանտարկյալը խորին վրդովմունքով և վեր կացավ նստած տեղից: -Իմ աչքի առջև դրել են Հայաստանի գորությունը... նրա զինվորական և պատերազմական ներկայացուցչին... իմ աչքերի առջև դրել են այն հերոսին, որ մշտական սարսափի մեջ էր պահում ամբողջ Պարսկաստանը...»:
 - գ. «Երկու սիրելիներ դրած են իմ առջև. մեկը՝ վտանգի մեջ գտնվող հայրենիքը, մյուսը՝ վտանգի մեջ գտնվող կինը՝ դու: Երկուսն էլ ինձ համար հավասար չափով անգնահատելի են...»:
 - դ. «Իմ քաղաքացիները երես են դարձրել ինձանից. նրանք ինձ մեռած են համարում»:
- 1) ա-3, բ-1, գ-2, դ-3
 - 2) ա-3, բ-2, գ-1, դ-4
 - 3) ա-4, բ-2, գ-3, դ-4
 - 4) ա-4, բ-1, գ-3, դ-2

93. Րաֆֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքերն են.

«Ես ավելի համոզված եմ, որ այդ երկու դավաճաններին փայփայող պարսից Շապուհ արքան կրոնասեր մարդ չէ, նա քո հորը և քո քեռուն ուղարկում է ոչնչացնելու Հայաստանում քրիստոնեությունը և պարսից մոզերի ձեռքը տալու թե՛ մեր եկեղեցիները և թե՛ մեր դպրոցները»:

- 1) Աշխենի
- 2) Մեսրոպ Մաշտոցի
- 3) Տաճատուհու
- 4) Փառանձեմ թագուհու

94. Գրական ո՞ր հերոսի միտքն է.

«Մոզերով ու մոզպետներով է գալիս իմ հայրը... գալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրությունը, գալիս է պարսկացնելու մեզ... Թագավորությունը սպանեցին, այժմ պետք է սպանեն ազգությունը, կրոնը... Եվ իմ հայրը մի այդպիսի եղեռնագործության պիտի մասնակից լինի...»:

- 1) Զոհրակի (Գերենիկ Դեմիրճյան . «Վարդանանք»)
- 2) Մամվելի (Րաֆֆի. «Մամվել»)
- 3) Բաբիկի (Գերենիկ Դեմիրճյան. «Վարդանանք»)
- 4) Գոռ (Մուրացան. «Գևորգ Մարգալետունի»)

95. Րաֆֆու «Մամվել» պատմավեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Երբ Մուշեղ Մամիկոնյանը մեկնում է Բյուզանդիա, նրա բացակայության շրջանում Մամվելն է գլխավորում հայրենասիրական շարժումը:
- 2) Վեպի գործողություններում էական դեր է խաղում Ներսես Մեծը:
- 3) Տաճատուհուն ուրացության էին մղել կույր օտարասիրությունն ու փառասիրությունը:
- 4) Բուշանների արշավանքը Պարսկաստան Շապուհ արքային հարկադրում է հեռանալ Հայաստանից՝ աճապարելով Տիգրոն:

96. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում Մերուժան Արծրունու վերաբերյալ տրված պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Իսկական ռազմիկ է, առնական տեսքով, գեղեցիկ:
- 2) Երկար տարիներ ապրել է պարսից արքունիքի բարձր շրջաններում՝ յուրացնելով այդ ազգի կենցաղավարության ամենանուրբ ձևերը:
- 3) Նախճավանի կռվում նրա բանակը գլխովին ջախջախվում է, իսկ ինքը վիրավոր գերվում է Սամվելի և նրա կողմնակիցների կողմից:
- 4) Վիրավոր Մերուժան Արծրունին սպանվում է Արաքսի շամբուտներում Սամվելի ձեռքով:

97. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում ո՞վ է ասում Վահան Մամիկոնյանին.

«Ամոթ քեզ, որ ամոթալի գործերով արատավորում ես Մամիկոնյանների պայծառ հիշատակը: Թող այն օրը սև լիներ, երբ դու աշխարհ եկար... Թող քո մայրը քո փոխարեն մի կտոր քար ծնած լիներ և ոչ քեզ նման մի պատիժ ու պատուհաս հայոց երկրի համար»:

- 1) Վասպուրականի տիկինը
- 2) Համազասպուհին
- 3) Սամվելը
- 4) Փառանձեմ թագուհին

98. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր գլխում է Սամվելն իր հորն սպանում:

- 1) «Ուրացողը յուր տան շենքի վրա»
- 2) «Երկու սուրհանդակ»
- 3) «Արաքսի որոգայթները»
- 4) «Մեկը-արևմուտքում, մյուսը-արևելքում»

99. Ո՞ր շարքում են Բաֆֆու «Մամվել» պատմավեպի միայն հայրենասեր հերոսները:

- 1) Գարեգին իշխան, Համազասպուհի, Տաճատուհի
- 2) Արտավազդ, Համազասպ, Գրաստամատ
- 3) Հայր Մարդպետ, Ներսեհ իշխան, Վահանդուխտ
- 4) Հուսիկ, Մալխաս, Վահան Մամիկոնյան

100. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են ժողովրդի մարդիկ Բաֆֆու «Մամվել» պատմավեպում:

- 1) Արտավազդ, Հուսիկ, Գրաստամատ
- 2) Նվարդ, Արտավազդ, Համազասպ
- 3) Զավեն, Վահանդուխտ, Մանվել
- 4) Մալխաս, Արբակ, Մանի (Մանեճ)

101. Ո՞ր շարքի բոլոր հերոսուհիներն են միայն Բաֆֆու «Մամվել» պատմավեպից:

- 1) Համազասպուհի, Գոհար իշխանուհի, Շուշանիկ
- 2) Սաթենիկ, Վահանդուխտ, Տաճատուհի
- 3) Փառանձեմ թագուհի, Շահանդուխտ, Զվիկ
- 4) Զարմանդուխտ, Որմիզդուխտ, Սահականույշ թագուհի

102. Ովքե՞ր են այն «երկու նշանավոր տաղանդները» Բաֆֆու «Մամվել» պատմավեպում, որոնց մասին հեղինակը գրում է.

«Ո՞վ կարող էր մտածել, որ այդ գիշերվա ջերմ վիճարանություններից քսաներեք տարի հետո այդ երկու նշանավոր տաղանդները կկատարեին իրենց ուխտը և սկիզբ կդնեին հայոց մեծ յուսավորության ոսկյա դարին»:

- 1) Արշակ թագավոր և Ներսես Մեծ
- 2) Մամվել և Աշխեն
- 3) Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև
- 4) Մուշեղ Մամիկոնյան և Խաղ եպիսկոպոս

103. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր գլխում է պատկերվում Մամվելի և նրա սիրած աղջկա՝ Աշխենի հանդիպումը:

- 1) «Տարոնի առավոտը»
- 2) «Կնոջ խորհուրդը»
- 3) «Արաքսի որդայթները»
- 4) «Արտասուքի աղբյուրը»

104. Արտագերս ամբոցում ապաստանած Որմիզդուխտը ինչպե՞ս է վարվում Մերուժան Արծրունու հետ Բաֆֆու «Մամվել» պատմավեպում:

- 1) Խոստովանում է իր փոխադարձ սերը Մերուժանին:
- 2) Դրվատում է Մերուժանի դավաճանությունը:
- 3) Արհամարհանքով մերժում է Մերուժանի սերն ու թախանձանքները:
- 4) Ուրախանում է Մերուժանի փառասիրական պատրանքներից ու ղզկորում նրան:

105. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում ո՞վ է Շապուրի կանանցը անվնաս վերադարձնում Տիզրոն:

- 1) Ռշտունյաց Գարեգին իշխանը
- 2) Մամվելը
- 3) Մուշեղը
- 4) Դրաստամատը

106. Ո՞րն է Բաֆֆու «Մամվել» պատմավեպի առաջին գլուխը:

- 1) «Երեք երիտասարդ ուժեր»
- 2) «Երկու սուրհանդակներ»
- 3) «Գուժկան»
- 4) «Անուշ բերդը»

107. Ո՞րն է Բաֆֆու «Մամվել» պատմավեպի վերջին գլուխը:

- 1) «Պատմոս»
- 2) «Արտագերս»
- 3) «Մայրը»
- 4) «Ողական ամբոցը»

108. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը:

«Այդ գեղեցիկ կինը գերեց Մամվելի հոր սիրտը, այդ գեղեցիկը կապեց Մամվելի հորը թե՛ պարսից արքունիքի և թե՛ պարսից կրոնի հետ, և վերջապես, այդ գեղեցիկ կնոջ միջոցով Շապուրը որսաց Մամիկոնյան նախարարներից մի հավատարիմ զինակից»:

- 1) Տաճատուհուն
- 2) Որմիզդուխտին
- 3) Համազասպուհուն
- 4) Վահանդուխտին

109. Ո՞ւմ է ուղղված Բաֆֆու «Մամվել» պատմավեպի հերոս Մուշեղ Մամիկոնյանի խոսքը:

«...Քեզ համար խոսքի և խոստմունքի սրբություն չկա... Վարագագիր մատանիով աղ կնքեցիր դու, որ քո կրոնի մեջ ամենամեծ երդումն է, և ուղարկեցիր՝ կոչելով իմ հորը և նրա թագավորին քո մոտ՝ իբր հաշտության ուխտ դնելու, բայց տարար և վատությանը արտրեցիր: Անամո՞թ...»:

- 1) Վահան Մամիկոնյանին
- 2) Մերուժան Արծրունուն
- 3) Շապուհին
- 4) Հայր Մարդպետին

110. Տրվածներից ո՞րն է Բաֆֆու «Մամվել» պատմավեպի սկիզբը:

- 1) «Գիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա: Ամեն ինչ ընկղմվել էր խավարի մեջ: Միայն հեռուն ալիքավորված լեռներից դեպի վերև բացվում էր հանդիսավոր երկինքը՝ տենդային աստղերով առլեցուն»:
- 2) «Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե լեռան ետևում, և Տարոնը ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ: Ոչ մի աստղ այդ գիշեր չէր երևում: Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը...»:
- 3) «Լուսինը շտապով սահում էր դեպի Սիփանի բարձր գագաթները, որ ընկղմված էին խորին թախծալի մթության մեջ»:
- 4) «Փոթորկային գիշերին հաջորդեց գարնանային խաղաղ, հովասուն առավոտը: Ողական ամրոցը շրջապատող ծառագարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով»:

111. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքերն են.

«Աշխարհի բոլոր երանությունները չէին կարող այնպես մխիթարել ինձ, որպես այս խոսքը, որ թռավ քո շրթունքներից... Այդ խոսքը լցնում է իմ սիրտը մի սրբազան հայարտությանը, որ ես վայելում եմ հայոց քաջագնուհիներից ամենարժանիների սերը»:

- 1) Վահան Մամիկոնյանի
- 2) Մամվել Մամիկոնյանի
- 3) Մերուժան Արծրունու
- 4) Մուշեղ Մամիկոնյանի

112. Ո՞ր ստեղծագործության հերոսի խոսքերն են.

«Ու քանի որ փողը կա, մարդ չկա, քանի իմ ու քու կա, սեր ու խիղճ չկա: Էդտեղից էլ՝ հարուստ ու աղքատ, գրկող ու գրկվող, բանա ու արունհեղություն: Թուրքը կրսե. - «Կռիվն ուրտեղի՞ց է: - Մեկը կուտե, մեկ էլը կաշե. - կռիվն էդտեղից է»:

- 1) Հովհաննես Թումանյան, «Գիքորը»
- 2) Ավետիք Իսահակյան, «Համբերանքի չիբուխը»
- 3) Ակսել Բակունց, «Ծիրանի փողը»
- 4) Դերենիկ Դեմիրճյան, «Ավելորդը»

113. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքերն են.

«Դու մեղադրում ես իմ հայրերին, որ նրանք անխնա խորտակեցին, ոչնչացրին հինը, ավանդականը՝ նորը նրա տեղը հաստատելու համար: ...Բայց ամեն վերանորոգության սկիզբը այդպես է լինում: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը ևս այդպես վարվեց: Նա ոչ մի քար չթողեց քարի վրա: Դու մեղադրում ես իմ նախահորը՝ Լուսավորչին, որ Հայաստանը լցրեց հույն և ասորի վարդապետներով: ...Բայց նախահոր նպատակը երբեք այն չի եղել, որ օտարների ձեռքը տար հայի հոգևոր և մտավոր կրթությունը»:

- 1) Մեսրոպ Մաշտոցի
- 2) Սահակ Պարթևի
- 3) Մուշեղ Մամիկոնյանի
- 4) Հայր Մարդպետի

114. Ո՞ր տողում են ճիշտ համապատասխանեցված Բաֆֆու «Սամվել» պատմավեպի հերոսների և նրանց կանանց կամ հարսնացուների անունները (աջ շարքի տարբերակներից երկուսն ավելորդ են):

- | | |
|-------------|-----------------|
| 1. Մերուժան | ա. Նվարդ |
| 2. Մուշեղ | բ. Տաճատուհի |
| 3. Հուսիկ | գ. Վահանդուխտ |
| 4. Գարեգին | դ. Մաթենիկ |
| | ե. Շուշանիկ |
| | զ. Համագասպուհի |

- 1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
- 2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ
- 3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-գ

115. Ո՞ր պարբերականը չի խմբագրել Հակոբ Պարոնյանը:

- 1) «Մշակ»
- 2) «Մեղու»
- 3) «Եփրատ»
- 4) «Թատրոն»

116. Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի արտաքինի նկարագիրն է.

«Երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չկա: Հազիվ երեսուներկու տարեկան կը թվեր: ...Ուներ նաև երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մեջ կամ սգո նշան է և կամ չքավորության: Հագուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային»:

- 1) խմբագրի
- 2) բժշկի
- 3) բանաստեղծի
- 4) դերասանի

117. Ի՞նչ նպատակով էր Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր հերոս Աբիսողոմ աղան Տրապիզոնից եկել Պոլիս:

- 1) Ազգային ժողովում երեսփոխան ընտրվելու
- 2) ամուսնանալու համար հարուստ աղջիկ ընտրելու
- 3) հարազատներին տեսակցելու
- 4) մայրաքաղաքի մտավորականներին հովարանոր կարգվելու

118. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպում Աբիսողոմ աղան ինչո՞ւ է երկու ոսկի տալիս բանաստեղծին:

- 1) մուսայի գալը արագացնելու
- 2) բանաստեղծին արագ հեռացնելու
- 3) բանաստեղծի գայրույթը մեղմելու
- 4) խղճարով բանաստեղծին

119. Պոլիս մտնելուն պես նշվածներից առաջինը ո՞ւմ է հանդիպում Աբիսողոմ աղան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպում:

- 1) Մանուկ աղային
- 2) խմբագրին
- 3) լուսանկարչին
- 4) քահանային

120. Ով ո՞ր պարբերականին է աշխատակցել կամ ո՞ր հանդեսը խմբագրել:

- | | |
|-----------------------|-------------------|
| ա. Բաֆֆի | 1. «Հյուսիսափայլ» |
| բ. Միքայել Նալբանդյան | 2. «Նոր-Դար» |
| գ. Հակոբ Պարոնյան | 3. «Մեղու» |
| դ. Նար-Դոս | 4. «Մշակ» |

- 1) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 2) ա-2, բ-4, գ-3, դ-1
- 3) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

121. Պնդումներից ո՞րն է սխալ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի վերաբերյալ:

- 1) Աբիսողոմ աղան ուշադրությամբ և կլանված լսում է թաղականի ընտրության մասին Մանուկ աղայի պատմությունները:
- 2) Աբիսողոմ աղան իր «պատվավոր ազգային» լինելը հիմնավորելու համար խմբագրին թվարկում է իր ունեցածները:
- 3) Աբիսողոմ աղան առաջին անգամ էր եկել Պոլիս:
- 4) Աբիսողոմ աղան ուզում էր, որ իր կինը չպատականի ոչ «շատ աժան» դասին, լինի ճերմակ, երկար հասակով, մեջքը բարակ, բայց ոչ տկար:

122. Ո՞ւմ մասին է Աբիսողոմ աղայի խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպում.

«Ո՞վ է այս մարդը, հիմարանոցեն փախած ին՞նք է, թե հիմարանոց երթալու հիմար»:

- 1) Մանուկ աղայի
- 2) բանաստեղծի
- 3) բժշկի
- 4) դերասանի

123. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպում Աբիսողոմ աղան ե՞րբ է առաջարկում բժշկին իրեն քննել:

- 1) Երբ իմանում է, որ իր անունը լրագրերի մեջ պիտի հրատարակվի:
- 2) Երբ համոզվում է, որ բժիշկը միայն հարուստներին է բուժում:
- 3) Երբ հասկանում է, որ ինքը ծանր հիվանդ է:
- 4) Երբ իմանում է, որ բժիշկը Եվրոպայում է կրթություն ստացել:

124. Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսին է վերաբերում:

«Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե այ. Հ. Վարդուկյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուգես՝ քատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

- 1) բժշկին
- 2) Մանուկ աղային
- 3) Աբխտղոմ աղային
- 4) բանաստեղծին

125. Խոսքերից ո՞րը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսինն է:

- ա. «Ամեն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս. ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե իր երկանը. «Մեր աղջիկը սա Աբխտղոմ աղային տանք»:
- բ. «Թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան»:
- գ. «Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն. այս երեք դասեն ալ ծախու ապրանք ունիմ. հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեք և ինձի ըսեք՝ սա դասեն կուգեմ»:
- դ. «Ձեզիպեսներն կարգվելու են, որ ազգերնուս մեջ հարուստ տղայք շատնան: Աղվոր աղջիկ կը փնտռեք կոր եղեր... և ինչո՞ւ չփնտռեք. ես ալ ձեր տեղն ըլլայի նե ես ալ կը փնտռեի: ...Արդ, ես իմ ձեռքիս տակն ունիմ անանկ աղջիկներ, որ թե՛ աղվոր են և թե՛ հարուստ»:

- 1. տիկին Շուշան
- 2. քահանա
- 3. Աբխտղոմ աղա
- 4. Մանուկ աղա

- 1) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 2) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 3) ա-4, բ-2, գ-3, դ-3
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

126. Պնդումներից քանի՞սն են սխալ:

- Հակոբ Պարոնյանը հայ ամենամեծ երգիծաբանն է:
- Հակոբ Պարոնյանի «Բաղաքավարության վնասները» կենցաղային սյուժեների երգիծական նովելաշար է:
- Հակոբ Պարոնյանի «Ծիծաղը» ունի այլաբանական բնույթ:
- Հակոբ Պարոնյանը գրել է կատակերգություններ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

127. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպում ո՞ւմ մասին է ասվում.

«...Յուր արհեստն ալ սիրո միջնորդություն էր. այրերուն կին կը գտներ, կիներուն այր կը մատակարարեր և զանոնք իրարու հետ ամուսնացնելով յուր աշխատության վարձքը կընդուներ: Երբեմն ալ այրը կիներն կը գատեր և դարձյալ յուր աշխատության փոխարենը կատներ»:

- 1) խմբագրի
- 2) Մանուկ աղայի
- 3) տիկին Շուշանի
- 4) սսփրիչի

128. Ո՞ր գրողի խոսքն է.

«...Իսկ եթե ես նյութական մի փոքրիկ ապահովություն ունեցած լինեի և այդ մեքենական աշխատության փոխարեն գրական աշխատությամբ պարսպեի, քանի՜ հատորներ կունենայի այժմ: Գիտե՞ք ինչ մեծ վիշտ է այս ինձ համար»:

- 1) Բա.Ֆ.Ֆու
- 2) Ալեքսանդր Շիրվանզադեի
- 3) Մուրացանի
- 4) Վահան Տերյանի

129. Ո՞ր վեպը առաջաբան ունի:

- 1) «Մամվել» (Բա.Ֆ.Ֆի)
- 2) «Մեծապատիվ մուրացկաններ» (Հակոբ Պարոնյան)
- 3) «Գևորգ Մարգալեստունի» (Մուրացան)
- 4) «Զատո» (Ալեքսանդր Շիրվանզադե)

130. Ո՞րը Մուրացանի «Գևորգ Մարգալեստունի» վեպի գլուխներից չէ:

- 1) «Կույր վրիժառուն»
- 2) «Ջրից փախչողը կրակի մեջ»
- 3) «Բյուրականի առումը»
- 4) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»

131. Ո՞ր շարքի բոլոր գլուխներում են պատկերվում ռազմի տեսարաններ Մուրացանի «Գևորգ Մարգալեստունի» պատմավեպում:

- 1) «Հերոսի վախճանը», «Կույր աչքը կներե, կույր սիրտը չի ներիլ», «Այրիվանքում»
- 2) «Ծովամարտ», «Դ-վնո առումը», «Մի ծաղկով գարուն»
- 3) «Հին վշտերի վախճանը», «Վերջին թշնամու վախճանը», «Անակնկալ վախճան»
- 4) «Անհավատարմության հայտնությունը», «Երեք կետի վրա», «Անհանգիստ մարդը»

132. Մուրացանի «Գևորգ Մարգալեստունի» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.

«Ես չեի ցանկանալ չարագործի անուն վաստակել, բայց հանգամանքները չարագործ շինեցին ինձ: Այսուհետև ես չպիտի մտածեմ, թե ինչ է ասում աշխարհն ինձ համար. ես միայն մի մարդու պիտի հաշիվ տամ, դա իմ ներքին մարդը, իմ խիղճն է...»:

- 1) Աշոտ Երկաթի
- 2) Սահակ Սևադայի
- 3) Յիկ Ամրամի
- 4) Բերի

133. Մուրացանի «Գևորգ Մարգալեստունի» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Թագուհուն թագավորի հետ հաշտեցնելու, ապստամբ բոլոր իշխաններին դարձի բերելու Գևորգ Մարգալեստունու բոլոր ջանքերը պսակվում են հաջողությամբ:
- 2) Ասպրամի ինքնասպանությունից հետո Յիկ Ամրամը հեռանում է հայրենիքից:
- 3) Վեպում պատկերված են Բագրատունիների թագավորության շրջանի դրամատիկ իրադարձություններից:
- 4) Աշոտ Երկաթը սիրել էր Ասպրամին, բայց պետական շահի թելադրանքով ամուսնացել Սահականույշի հետ:

134. Խոսքերից ո՞րը Գևորգ Մարգարետունունը չէ Մուրացանի համանուն պատմավեպում:

- 1) «...Ես չեմ վերադառնալ այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հազարացին չհալածեմ հայրենի սահմաններից»:
- 2) «Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրենց մեջ հայրենիքի ուժը»:
- 3) «Անհանգիստ մարդ, որ ստեղծվել է հավիտյան թափառելու համար»:
- 4) «Ազգերի գորությունն ընտանիքի մեջ է, գորավոր է այն ազգը, որն ունի գորավոր ընտանիքներ, սիրով, միությանմբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ընտանիքներ»:

135. Ի՞ր պատիվը փրկելու համար ի՞նչ քայլի է դիմում Մարգարիտը Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայում:

- 1) Հեռանում է հայրական տնից:
- 2) Ինքնասպանություն է գործում:
- 3) Փախչում է Արտաշեսի հետ:
- 4) Եղբայրների օգնությամբ հորից վերցնում է փաստաթղթերը և տալիս Օթարյանին:

136. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպում ո՞ւմ մասին է ասվում՝ «ամայի դաշտում բուսած մի մանուշակ»:

- 1) Անտոնինա Իվանովնայի
- 2) Անուշի
- 3) Շուշանիկի
- 4) Մարթայի

137. Ո՞ր տարրերակում նշված հատկանիշներն են ընդհանուր Ալեքսանդր Շիրվանզադեի գրական հերոսներից Իսահակ Մարութխանյանի և Բագրատ Էլիզարյանի համար:

- 1) Երիտասարդ տարիներին տարվել են ազատամիտ հովերով:
- 2) «Ոսկի երիտասարդներ» են, որ վազում են էժան հաճույքների հետևից:
- 3) Օժտված են հերոսական գծերով և ունեն բարոյական վիթխարի ուժ:
- 4) Երազում են դառնալ ֆինանսական հսկա, փողի ուժով իշխել հազարավոր մարդկանց:

138. Համաձայն հոր կտակի՝ Սմբատը ե՞րբ կարող էր իր բաժին ժառանգությանը տեր դառնալ Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպում:

- 1) Երբ ամուսնանար Շուշանիկի հետ:
- 2) Երբ բաժանվեր կնոջից ու երեխաներից և հայկական եկեղեցու օրենքներով ամուսնանար հայ լուսավորչականի հետ:
- 3) Երբ լրանար նրա 36-ամյակը:
- 4) Հոր մահվան տարելիցից հետո:

139. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպում, համաձայն հոր կտակի, Միքայելը ե՞րբ կարող էր ստանալ իր բաժին ժառանգությունը:

- 1) հայրական գործերին տեր կանգնելուց հետո
- 2) միայն օրինավոր մարդ դառնալուց և հայ քրիստոնյա մի աղջկա հետ ամուսնանալուց հետո
- 3) Շուշանիկի հետ ամուսնանալուց հետո
- 4) Արշակին անբարոյական, շռայլ կյանքից դուրս բերելուց հետո

140. Ալեքսանդր Շիրվանզադեի ո՞ր հերոսի խոսքն է.

«19-րդ դարը, սիրելի՛ս, խաբեության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խաբում են ամենքը և ամենից ավել նրանք, որոնք ըմբոստանում են խաբեության դեմ... Փո՛ղ, փո՛ղ, փո՛ղ: Նա է աշխարհի հավատը, սերը, աստվածը... Զոնը քիչ է, խլի՛ր հարևանիցդ, ընկերիցդ, եղբորիցդ: Ծանկերդ սրի՛ր ու ընկի՛ր, աշխարհի հոգին հանի՛ր»:

- 1) Բագրատ Էլիզարյանի
- 2) Միքայել Ալիմյանի
- 3) Իսահակ Մարութխանյանի
- 4) Սաղաթելի

141. Պնդուններից ո՞րն է սխալ Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի վերաբերյալ:

- 1) Գործողությունները տեղի են ունենում Մոսկվայում:
- 2) Լևոնի՝ Իտալիա գնալու գլխավոր նպատակը Լուիզային տեսնելն էր:
- 3) Լուիզան պասկվում է Կավալյարոյի հետ:
- 4) Լևոնը ինքնասպան է լինում՝ իմանալով Լուիզայի ամուսնության մասին:

142. Ո՞ր շարքում Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոսներից չկա:

- 1) Իցկո, Ոսկեհատ, Սուլյան, Գրիշա
- 2) Լուիզա, Բյազիմ բեկ, Ստեֆանիա, Պապաշա
- 3) Չուպրով, Ռասուլ, Կարապետ, Նիասամիձե
- 4) Ռոզալիա, Անուշ, Մարթա, Ալմաստ

143. Ո՞ր հեղինակի ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արավ, գլխարկը ոչ թե ծածկեց, այլ ծածկելիս ուղղակի խփեց գլխին և դուրս գնաց»:

- 1) Նար-Ղոսի
- 2) Մուրացանի
- 3) Ակսել Բակունցի
- 4) Հրանտ Մաթևոսյանի

144. Գրական որ հերոսը ո՞ր ստեղծագործությունից է:

- | | |
|--------------|--|
| ա. Պատրիկյան | 1. «Ես և Նա» (Նար-Ղոս) |
| բ. Ջուլետտա | 2. «Այրին» (Գրիգոր Չոխրապ) |
| գ. Չարդար | 3. «Նեղ օրերից մեկը» (Նար-Ղոս) |
| դ. Օհան ամի | 4. «Համբերանքի չիբուխը» (Ավետիք Իսահակյան) |

- 1) ա-1, բ-2, գ-4, դ-3
- 2) ա-4, բ-3, գ-2, դ-1
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-1, բ-4, գ-3, դ-2

145. Որ հեղինակը ո՞ր դարաշրջանում է ապրել ու ստեղծագործել:

- | | |
|-----------------------|--------------|
| ա. Նահապետ Քուչակ | 1. 18-րդ դար |
| բ. Նաիրի Չարյան | 2. 20-րդ դար |
| գ. Միքայել Նալբանդյան | 3. 19-րդ դար |
| դ. Եղիշե Չարենց | 4. 16-րդ դար |

- 1) ա-4, բ-2, գ-3, դ-1
- 2) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 3) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 4) ա-4, բ-2, գ-3, դ-2

146. Ի՞նչ ավարտ է ունենում Նար-Գոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքը:

- 1) Պատրիկյանը, չկարողանալով վճարել բնակարանի վարձը, հեռանում է քաղաքից:
- 2) Գրախանութներում վաճառված իր գրքերի փողով Պատրիկյանը շտկում է նյութական վիճակը և շարունակում մնալ և աշխատել քաղաքում:
- 3) Հուսահատության ծայրակետին հասած Պատրիկյանը շարունակում է ապրել ծանր պայմաններում:
- 4) Պատրիկյանը լրագրի քարտուղարից պարտքով հինգ ռուբլի է վերցնում՝ բնակարանի վարձը վճարելու համար:

147. Նշվածներից ո՞րը դրամատիկական սեռի ստեղծագործություն չէ:

- 1) «Ռուզան» (Մուրացան)
- 2) «Նեղ օրերից մեկը» (Նար-Գոս)
- 3) «Պաղտասար աղբար» (Հակոբ Պարոնյան)
- 4) «Արա Գեղեցիկ» (Նաիրի Զարյան)

148. Խոսքերից ո՞րը Նար-Գոսի «Ես և Նա» պատմվածքից չէ:

- 1) «Ես մտածում եմ, թե որքան զանազանություն կա Ձեր և Ձեր եղբոր միջև»:
- 2) «Վեցնեցիայում, դոժերի, ջրանցքների և գեղարվեստների այդ հրաշակներս քաղաքում, մի հին ազնվական ընտանիքի մեջ ապրում էր այդ ընտանիքի միակ զավակը՝ - գեղեցիկ Ջուլետտան»:
- 3) «Բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ... Օ՛, ի՞նչ հրաշալի վրիժառություն, որի համար, սակայն, ես անընդունակ եղա»:
- 4) «Այդ օրվանից Վեցնեցիայի փողոցներում էլ ոչ ոք չտեսավ հանրածանոթ պատանի ջութակահարին»:

149. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու ներքևը: Էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»:

- 1) «Արտիստը» (Ալեքսանդր Շիրվանզադե)
- 2) «Ավելորդը» (Դերենիկ Դեմիրճյան)
- 3) «Ես և Նա» (Նար-Գոս)
- 4) «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» (Վիլյամ Սարոյան)

150. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Երբեմնի իրավագիտության վերջին կուրսի ուսանող, փառավոր սպասզայի հույսերով լեցուն, հասարակական լայն գործունեության երազանքներով թևավորված, - այժմ դարձել էի դատարանների կողմանոցների կեղտոտ սեղանների վրա զանազան խնդրագրեր ու կլյաուզներ գրող, զանազան մութ գործեր պաշտպանող, միշտ արբած և միշտ քնատ մի աղվակատ՝ այդ զգվելի տիպի բոլոր բացասական հասկանիչներով»:

- 1) «Արտիստը» (Ալեքսանդր Շիրվանզադե)
- 2) «Նահանջը առանց երգի» (Շահան Շահնուր)
- 3) «Ես և Նա» (Նար-Գոս)
- 4) «Մթնաձոր» (Ակսել Բակունց)

151. Ո՞ր ստեղծագործության հերոսն է Պատրիկյանը:

- 1) «Փոստալ» (Գրիգոր Զոհրապ)
- 2) «Ավելորդը» (Դերենիկ Դեմիրճյան)
- 3) «Ծաղկած փշալարեր» (Գուրգեն Մահարի)
- 4) «Նեղ օրերից մեկը» (Նար-Գոս)

152. Նար-Դոսի «Ես և Նա» պատմվածքի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Ջուլետտան տարբերություն է դնում *վերևի* և *ներքևի* միջև:
- 2) Վենեցիայի փողոցներում նվագող երբեմնի պատանի ջութակահարը տարիներ անց դառնում է հռչակավոր երաժիշտ:
- 3) Տարիներ անց Անտոնիոն կրկին հանդիպում է Ջուլետտային և նորից սիրում նրան:
- 4) Անտոնիոն տարիներ շարունակ սրբորեն պահել էր Ջուլետտայի թողած երկտողը:

153. Նար- Դոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Պատրիկյանը մարմնավորում է սոցիալական ծանր պայմաններում ապրող ժամանակի գրողին և մտավորականին:
- 2) Դավիթ Ֆոմիչը և կինը սպառնում են Պատրիկյանին սենյակի վարձը չվճարելու դեպքում դուրս հանել տանից:
- 3) Պատրիկյանը կարողանում է գրախանութներում վաճառված իր գրքերի փողով վճարել բնակարանի վարձը:
- 4) Թերթի քարտուղարը ևս Պատրիկյանի նման մի կերպ գոյություն է քարշ տալիս:

154. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Տանտերը, որի ազգանունը փողոցի շքադռան պղնձե տախտակի վրա փորագրված էր Դավիթ Ֆոմիչ Ադամիրով, մոտ 40–50 տարեկան տղամարդ էր խիստ ջղուտ, կարծես քրոնզից ձուլված դեմքով, սպիտակահասոն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուքով»:

- 1) «Ծաղկած փշալարեր» (Գուրգեն Մահարի)
- 2) «Ալպիական մանուշակ» (Ակսել Բակունց)
- 3) «Ավելորդը» (Դերենիկ Դեմիրճյան)
- 4) «Նեղ օրերից մեկը» (Նար-Դոս)

155. Ո՞ր շարքում Նար-Դոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքի հերոսներից չկա:

- 1) Օհան ամի, Պատրիկյան, Սրաֆիոն Գասպարիչ
- 2) Դավիթ Ֆոմիչ, Լևոն, Սմբատ
- 3) Դիլան դայի, Անտոնիո, Պետրոս Դուլամյան
- 4) Աշխեն, Ջափինյան, Սիքայել

156. Նշվածներից քանի՞սը վեպ չեն:

- «Բաոս» (Ալեքսանդր Շիրվանզադե)
- «Կայծեր» (Բաբի)
- «Թուրքի աղջիկը» (Խաչատուր Աբովյան)
- «Պաղտասար աղբար» (Հակոբ Պարոնյան)
- «Հարճը» (Դանիել Վարուժան)

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

157. Ո՞վ է Գրիգոր Չոհրայի «Այինկա» նորավեպի հերոսուհին:

- 1) Տիգրանուհին
- 2) Պերճուհին
- 3) Ջարդարը
- 4) Վասիլիկը

158. Ո՞ր շարքում Գրիգոր Չոփրապի «Այինկա» նորավեպի հերոսներից չկա:

- 1) Սահակ, Չարդար, Սրաֆիոն Գասպարիչ
- 2) Պերճուհի, Մարտիրոս, Սմբատ
- 3) Հուսեփ աղա, Սուրբիկ հանրմ, Հաճի Տյուրիկ
- 4) Հակոբոս, Տիգրանուհի, Վասիլիկ

159. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Գրիգոր Չոփրապի «Այինկա» նորավեպին:

- 1) Նորավեպի վերջում Սահակը սպանվում է:
- 2) Հակոբոսը և Պերճուհին ամուսնանում են:
- 3) Պերճուհին վերադարձնում է Հակոբոսի նշանը և չի ամուսնանում:
- 4) Սահակի ընտանիքին հատկացված թոշակը ստանում է Հակոբոսը:

160. Գրիգոր Չոփրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:

«...Եթե գիտնայիր, որ մեկ խոսքովդ սիրտս կբանամ սա դանակով. իմ սերս ամուր է սա երկաթին պես. քուկդ... ծառի մը ոստին պես ամեն դի կծռի. սգտիկ եղբորմեն մեծ եղբորդ...»:

- 1) «Չարուղոն»
- 2) «Այինկա»
- 3) «Փոստալ»
- 4) «Այրին»

161. Ո՞վ է Գրիգոր Չոփրապի «Չարուղոն» նորավեպի հերոսուհին:

- 1) Տիգրանուհին
- 2) Պերճուհին
- 3) Չարդարը
- 4) Վասիլիկը

162. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Գրիգոր Չոփրապի «Չարուղոն» նորավեպի այուժեին:

- 1) Չարուղոնը և Վասիլիկը եկեղեցում ամուսնանում են:
- 2) Չարուղոնը կարողանում է մեծ դժվարությամբ փախչել բանտից:
- 3) Վասիլիկը դավաճանում է սիրած տղային:
- 4) Չարուղոնը բանտից փախչելուց հետո կրկին բանտ է գնում:

163. Գրիգոր Չոփրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:

«Ամենեն ավելի ամուր փակված դուռը, ամենեն բարձր պատը՝ մըտնելէ չեն արգիլեր զինքը. բանային ծակեն, տախտակներուն ճեղքերեն ներս կսպրդի կարծես, անշշուկ ստվերի մը պես»:

- 1) «Չարուղոն»
- 2) «Այինկա»
- 3) «Ճիտին պարտքը»
- 4) «Փոստալ»

164. Ո՞ր շարքի ժողովածուներից ոչ մեկը Գրիգոր Չոփրապինը չէ:

- 1) «Երկիր Նաիրի», «Ծիածան», «Խղճմտանքի ձայներ», «Յեղին սիրտը»
- 2) «Նոր տաղեր», «Հեթանոս երգեր», «Մթնշաղի անուրջներ», «Մեր թաղը»
- 3) «Վերադարձ», «Տաղարան», «Կյանքը ինչպես որ է», «Հացին երգը»
- 4) «Սարսուռներ», «Լուռ ցավեր», «Ոսկի հեքիաթ», «Եղիցի լույս»

165. Գրիգոր Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:

«Առտուն կանուխ կ'ելլեր, իր այրի կնոջ արդուզարդը կ'ըններ, լուրջ ու հանդիսավոր արդուզարդ մը, ու ճամփա կ'իյնար դեպի գերեզմանատունը. պզտիկ տասպանին քով չոքած՝ երկար բարակ ու ցած ձայնով կ'իտներ իր գավկին հետ, անոր մանուկի բարբառովը»:

- 1) «Ճիտին պարտքը»
- 2) «Այինկա»
- 3) «Փոստալ»
- 4) «Այրին»

166. Ո՞րը Գրիգոր Զոհրապի ժողովածուներից չէ:

- 1) «Խղճմտանքի ձայներ»
- 2) «Յեղին սիրտը»
- 3) «Կյանքը ինչպես որ է»
- 4) «Լուռ ցավեր»

167. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Գրիգոր Զոհրապի «Այրին» նորավեպին:

- 1) Չարդարը մինչև վերջ էլ դեռևս սպասում էր ամուսնու վերադարձին:
- 2) Մարտիրոսը մոռանում է իր ընտանիքը՝ ամուսնանալով սպասուհու հետ:
- 3) Մարտիրոսի՝ տուն չվերադառնալու համար նրա ծնողները մեղադրում էին Չարդարին:
- 4) Մարտիրոսը Պոլսից պարբերաբար նամակներ ու դրամ էր ուղարկում ընտանիքին:

168. Գրիգոր Զոհրապի ո՞ր հերոսի մասին է տրված խոսքը.

«Պարտիզակցի սպասուհի մը՝ վերջին մնացորդ իր նախկին հարաբերություններուն, ավելցուցած բոլոր ստակը, իր չորս հազար դրուշը կրտար իրեն, եթե զինքը կնության առներ»:

- 1) Սահակի
- 2) Մարտիրոսի
- 3) Չարուղոնի
- 4) Հուսեփի

169. Գրիգոր Զոհրապի ո՞ր հերոսուհին է անվերջ ու համբերատար սպասում պանդխտության մեկնած ամուսնուն:

- 1) Վասիլիկը
- 2) Տիգրանուհին
- 3) Պերճուհին
- 4) Չարդարը

170. Գրիգոր Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:

«Գիտեր, ստույգ գիտեր ալ, որ ամուսինը չպիտի գար. բայց իրիկունը, առանց ուզելու, քայլերը կ'առաջնորդեին զինքը այն արտը, ուրկե վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամփած էր իր երիտասարդ էրիկը»:

- 1) «Երջանիկ մահը»
- 2) «Ճիտին պարտքը»
- 3) «Փոստալ»
- 4) «Այրին»

171. Տրվածներից ո՞րն է համապատասխանում Գրիգոր Զոհրասյի «Ճիտին պարտքը» նորավեպին:

- 1) Առևտրի միջնորդ դարձած Հուսեփ աղան, մի քանի հաջող գործարք կնքելով, կարգավորում է իր նյութական վիճակը:
- 2) Հուսեփ աղայի աղջիկները, իմանալով հոր պարտքերի մասին, դադարում են նրան անընդհատ պահանջներ ներկայացնելուց:
- 3) Հուսեփ աղայի նախկին գործընկերներից մեկը նրան առևտրական հաջող գործարք է առաջարկում:
- 4) Հուսեփ աղայից նրա բոլոր ծանոթները երես են թերում, և նրան բարևում է միայն իրենից դժբախտ մի ծերունի:

172. Նշվածներից ով Գրիգոր Զոհրասյի ո՞ր նովելի հերոսներից է:

- | | |
|-----------------|-------------------|
| ա. Հուսեփ աղա | 1. «Զաբուղոն» |
| բ. Հաճի Տյուրիկ | 2. «Այրիկ» |
| գ. Մարտիրոս | 3. «Ճիտին պարտքը» |
| դ. Վասիլիկ | 4. «Փոստալ» |

- 1) ա-1, բ-3, գ-4, դ-2
- 2) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 3) ա-3, բ-4, գ-2, դ-1
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

173. Գրիգոր Զոհրասյի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:

«Իր կյանքին անբաժան ընկերն էր այս տոկուն կաշիեն պարկը, որով ամեն իրիկուն իր տան պիտույքը, հացն ու միսը կտաներ, կամ պտուղը իր երկու փոքրիկ զավակներուն, որոնք դրան առջևեն կբողրվեին խոստմնալից ու խոստմնապահ այս պայտուսակին շորջը»:

- 1) «Փոստալ»
- 2) «Այրիկ»
- 3) «Այինկա»
- 4) «Ճիտին պարտքը»

174. Ո՞ր բառն է բաց թողած Հովհաննես Թումանյանի տրված քառյակում:

*Աշնան ամպին ու զամպին,
..... նրստած իր ճըմբին,
Լռուու հանդում՝ մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:*

- 1) Տխուր
- 2) Մոլոր
- 3) Հուզված
- 4) Հոգնած

175. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեին:

- 1) Շահը Թմուկ բերդը գրավում է Թաթուլի կնոջ մատնությամբ:
- 2) Շահին հավատացնում են, որ Թմկա տիրուհու սրտին տիրելու դեպքում Թաթուլը անգոր կլինի նրա առաջ:
- 3) Թմկա տիրուհին հարբեցնում է Թաթուլին և նրա հաղթական գործին ու թշնամու առաջ բացում բերդի դռները:
- 4) Շահի ուղարկած պատվիրակությունը մեծամեծ ընծաներով կարողանում է համոզել Թմկա տիրուհուն բացել բերդի դռները:

176. Ո՞ր բառն է բաց թողած Հովհաննես Թումանյանի տրված քառյակում:

*Ամեն մի սիրտ ցավով լրցվեց մեր դարում,
Ցավոտ սրբտով աշխարհ լրցվեց մեր դարում.
..... աշխարհքն եկավ լրցվեց բովանդակ
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:*

- 1) Վշտոտ
- 2) Թախծոտ
- 3) Դարդոտ
- 4) Ցավոտ

177. Տրվածներից ո՞րն է համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթին:

- 1) Նազարի կինը՝ Ուստիանը, վախկոտ ամուսնուն դուրս է հանում տնից և ստիպում ամբողջ գիշերը դրսում անցկացնել:
- 2) Նազարը իր կատարած քաջագործության (ճանճեր սպանելու) մասին հայտնում է իրենց գյուղապետին, ով հանձնարարում է տերտերին այդ մասին գրել փալասի մի կտորի վրա:
- 3) Նազարին պատկանում են հսկաների գեղեցիկ քրոջ հետ, որը պետք է դառնար հարևան երկրի թագավորի կինը:
- 4) Պատերազմի դաշտում Նազարը մի ծառ է տեղահան անում ու թշնամուն ջարդելուց հետո ամբողջ ավարը բաժանում ժողովրդին:

178. Ո՞ր բառն է բաց թողած Հովհաննես Թումանյանի տրված քառյակում:

*Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հագար հազիվ դառավ Մարդասպան:
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:*

- 1) տարում
- 2) օրում
- 3) դարում
- 4) ամսում

179. Ո՞ր շարքում են միայն Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները:

- 1) «Քաջ Նազարը», «Հառաչանք», «Հայրենի հողը»
- 2) «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Հայոց վիշտը», «Թմկաբերդի առումը»
- 3) «Գիքորը», «Հայրենիքիս հետ», «Հայոց լեռներում»
- 4) «Փարվանա», «Հայրենիքիս», «Հոգեհանգիստ»

180. Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:

- ա. Ու լեռնային վրտակների
- բ. Հընչյուններով դյութական
- գ. Մըտան կաղնին հաստաբուն
- դ. Կանչում էին հըրաշալի
- ե. Անտես, անհետ չըքացան
- զ. Ալիքները պաղպաջուն
- է. Ու հենց շողաց ցոլքն արևի
- ը. Խոր սուզվեցին ակն աղբյուրի

- 1) է, գ, ա, գ, դ, բ, ը, Ե
- 2) ը, գ, ա, գ, է, դ, բ, Ե
- 3) ը, գ, է, Ե, դ, ա, բ, գ
- 4) դ, բ, է, Ե, ը, գ, ա, գ

181. Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:

- ա. Փափագ սրբտով խրնդիրք արել
- բ. Ձուրն ու ծաղիկ աստղունք դրրել
- գ. Կույս սափորով, լուռ ու մունջ
- դ. Բարի ժրպտան իր սերին
- ե. Օխտն աղբյուրից ջուր է առել
- զ. Կապել սիրո ծաղկեփունջ
- է. Խրնդիրք արել աստղերին
- ը. Օխտը ծաղկից ծաղիկ քաղել

- 1) ե, գ, ա, դ, ը, բ, է, գ
- 2) բ, է, ե, դ, ը, ա, գ, գ
- 3) ը, գ, բ, դ, ա, ե, է, գ
- 4) ե, գ, ը, գ, բ, է, ա, դ

182. Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Բազազ Արտեմի տանը Գիքորը հիվանդանում է, տեղափոխվում հիվանդանոց, որտեղ նա մահանում է:
- 2) «Բաջ Նազարը» հեքիաթի վերջում Նազարը արդեն դառնում է թագավոր, սակայն նրա վախկոտության մասին կինը պատմում է բոլորին, և մարդիկ նրան գահընկեց են անում:
- 3) «Թմկաբերդի առումը» պոեմում մատնությամբ բերող գրաված շահը հասկանում է, որ կյանքում բախտ, փառք և հաղթություն հաստատ չեն, և պետք չէ հավատալ կյանքում ոչ մեկի:
- 4) «Հայրենիքիս հետ», «Հայոց լեռներում» բանաստեղծությունների սկզբում ներկայացվում են հայ ժողովրդի արյունոտ ներկան և անցյալը, իսկ վերջին տներում հեղինակը լավատեսական խոսք է ասում հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ:

183. Տրված հատվածներից ո՞րն է Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքից:

- 1) Ու նրանց հետ՝ ցող արցունքով
Լցված սրբտերն ու աչեր՝
Մարի ծաղկունք տրխտր սյուքով
Հառաչեցին էն գիշեր:
- 2) Ամպի տակից ջուր է գալի,
Դռչ է տալի, փրփրփրում.
Ա՛խ, իմ ազիզ յարն է լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում:
- 3) Կանչում է կրրկին, կանչում անդադար
Էն չըքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու՛ թևերն ահա փրռած տիրաբար՝
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն:
- 4) Չըմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անգուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:

184. Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:

- ա. Հայոց լեռներում
- բ. Տանում է իրեն վերքերն անհամար
- գ. Թալանված, ջարդված
- դ. Սուգի լեռներում
- ե. Ու հատված-հատված
- զ. Ու մեր քարվանդ շրփոթ, սուկահար

- 1) ե, գ, ա, դ, բ, գ
- 2) գ, բ, գ, ե, դ, ա
- 3) բ, գ, ա, դ, գ, ե
- 4) գ, գ, ե, բ, ա, դ

185. Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ժանրային բնութագրումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) «Քաջ Նազարը» հեքիաթ է, «Գիքորը»՝ պատմվածք:
- 2) «Թմկաբերդի առումը», «Անուշը» պոեմներ են, «Հայոց վիշտը»՝ բանաստեղծություն:
- 3) «Փարվանան» բալլադ է, «Գելը»՝ պատմվածք:
- 4) «Հայրենիքիս հետ»-ը բանաստեղծություն է, «Հոգեհանգիստը»՝ պոեմ:

186. Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Էսպես է ասել հրնուց էդ մասին
Ֆարսի բյուբյուլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՞նչը կրհաղթի կյանքում հերոսին,
Թե չըլի նին
Կինն ու գինին:*

- 1) «Հայրենիքիս հետ»
- 2) «Փարվանա»
- 3) «Անուշ»
- 4) «Թմկաբերդի առումը»

187. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմին:

- 1) Դեպի ձորը փախչող Սարոյի և նրան հետապնդող Մոսի մասին գլուղացիներին պատմում է մի ծերունի:
- 2) Մոսին և հայրը հետապնդում ու սպանում են Սարոյին:
- 3) Անցվոր ախպերը Անուշին խորհուրդ է տալիս առաջնորդվել աշխարհի կարգով և նոր սեր անել:
- 4) Դեբեդի ափին գտնվող մենակ շիրիմի շուրջը Անուշը լաց ու ողբ է անում, և գետը կանչում է անբախտ Անուշին:

188. Ո՞ր բառն է բաց թողած:

*Ու էն վրճիտ ջրերի տակ
Յույց են տալի մինչ էսօր
Ծեր արքայի ճերմակ ամբոցն
Ու շենքերը*

- 1) փառավոր
- 2) լուսավոր
- 3) դարավոր
- 4) բյուրավոր

189. Տրվածներից ո՞րն է համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքին:

- 1) Գիքորը բազազ Արտեմի խանութի մոտ տեսնում է իր երկու համազյուղացիներին, որոնք էլ նրան են տալիս տանեցիների ուղարկած նամակը:
- 2) Իր ճարպկության համար Արտեմը Գիքորին տնից խանութ է տեղափոխում:
- 3) Բազազի աշակերտ Վաստն շատ է օգնում Գիքորին՝ տիրոջից թաքցնելով նրա արարքները:
- 4) Հիվանդ Գիքորին Համբոն հիվանդանոցից գյուղ է տանում, սակայն ճանապահին Գիքորը մահանում է:

190. Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունն է սկսվում հետևյալ տողերով:

*Բարձրագահ Աբույն ու Մըթին սարեր
Մեջք մեջքի տրված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:*

- 1) «Փարվանա»
- 2) «Թմկաբերդի առումը»
- 3) «Անուշ»
- 4) «Հայոց լեռներում»

191. Ո՞ր բառն է բաց թողած:

*Տանում ենք հրնուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
..... լեռներում:*

- 1) Սուգի
- 2) Արնոտ
- 3) Դըժար
- 4) Բարձրը

192. Գևորգ Գողթյանի «Ծիծեռնակ» բանաստեղծության մեջբերված քառատողում ո՞ր բառն է բաց թողած:

*Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռի՛ր արագ
Դեպի Հայոց երկիրը՝
Ծնած տեղս՝*

- 1) Արարատ
- 2) Արտաշատ
- 3) Աշտարակ
- 4) Ագարակ

193. Ո՞ր բառն է բաց թողած:

*Հովի գրույցին ունկն դնելով Աբու Մահարին խոսում էր անձայն.-
-Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք*

- 1) մոզական
- 2) իսկական
- 3) հավերժական
- 4) դյութական

194. Ո՞ր բառն է բաց թողած:

*Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել գազաթին,
Ու անցել:*

- 1) լույս
- 2) սեզ
- 3) վես
- 4) ծեք

195. Ավետիք Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:

«Ես սիրում եմ քո տխրությունը, ... իմաստուն է քո թախիծը. և դու ասել ես քո աստվածային լեզվով, թե մարգարիտը վերքից է, որ կծնի, և խունկը այրվելով է, որ իր անուշ հոգին կբուրե»:

- 1) «Լիլիթ»
- 2) «Համբերանքի չիբուխը»
- 3) «Հայրենի հողը»
- 4) «Սասաղիի վերջին գարունը»

196. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությանը:

- 1) Աստված դեպի վեր սուրացող կրակի բոցերից ստեղծում է անդրանիկ կնոջը՝ Լիլիթին:
- 2) Ադամը Աստծուն բողոքում է, որ Լիլիթը չի ենթարկվում Աստծու հրամանին և չի հնազանդվում իրեն:
- 3) Հենց առաջին հանդիպումից Լիլիթը կավի հոտ է առնում Ադամից և սկսում է խուսափել նրանից:
- 4) Աստված գայրացած իր մոտ է կանչում Ադամին չհնազանդվող Լիլիթին, սակայն վերջինս, Աստծու մոտ գնալու փոխարեն, շտապում է սատանայի գիրկը:

197. Ո՞ր բառն է բաց թողած:

*Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով,
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես*

- 1) նազանքով
- 2) թովչանքով
- 3) հմայքով
- 4) դյութանքով

198. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությանը:

- 1) Ադամի կողից ստեղծված Եվան ևս գեղեցիկ էր, սակայն ոչ Լիլիթի պես կատարյալ ու հրեղեն:
- 2) Տեսնելով Լիլիթի պատճառով տառապող Ադամին՝ Աստված նրա համար ստեղծում է հնազանդ Եվային:
- 3) Լիլիթը թողնում է Ադամին դրախտում և գնում է երկրում գտնվող սատանայի մոտ՝ իրեն անչափ երջանիկ զգալով նրա գրկում:
- 4) Լիլիթի հեռանալուց հետո Ադամը մխիթարվում է իր կողից ստեղծված Եվայով ու այլևս չի հիշում Լիլիթին:

199. Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) «Հայրենիքիս» բանաստեղծության մեջ հեղինակը նախ հիշում է իր ժողովրդի արյունոտ անցյալը, ապա ընդգծում իր անսասան հավատը հայրենի երկրի ծաղկելու և հայ լեզվի հավերժության նկատմամբ:
- 2) «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծության մեջ հեղինակը վկայում է, որ մեր պատմիչները մագաղաթների վրա գրի են առել մեր արյունոտ պատմությունը, եղեռները՝ միայն ողբալով և Աստծո արդար դատաստանին սպասելով:
- 3) «Հավերժական սերը» ստեղծագործության վերջում բոլոր մանկավիհների ու նաժիշտների՝ Թադմորի ապարանքը լքելուց հետո էլ-Սամանը իր կմախքացած ձեռքերով շարունակում էր ամուր գրկել բամբիշին:
- 4) «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ արքայից վիրավորված զորավարի մոտ ավագանին ուղարկում է երեք փորձառու ծերերի, ովքեր կարողանում են համոզել զորավարին վերադառնալ և պաշտպանել հայրենիքը:

200. Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են Ավետիք Իսահակյանինը:

- 1) «Մի մրահոն աղջիկ տեսա», «Հայրենիքիս հետ», «Սև-մութ ամպեր», «Համբերանքի չիբուխը»
- 2) «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Հայրենիքիս», «Հայրենի հողը», «Ոսկեհանդերձ եկար»
- 3) «Աբու-Լալա Մահարի», «Լիլիթ», «Հայոց լեռներում», «Սաադիի վերջին գարունը»
- 4) «Դարդս լացեք», «Ասպետի սերը», «Արագածին», «Ռավեննայում»

201. Ո՞ր հերոսի միտքն է.

«Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա. բայց չայն անուշցավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարհը կանուշցնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարհը շա՛տ դառն է՝ օձի լեղի...»:

- 1) Օհան ամու (Ավետիք Իսահակյան, «Համբերանքի չիբուխը»)
- 2) Հաճի աղայի (Դերենիկ Դեմիրճյան, «Ավելորդը»)
- 3) Սաադիի (Ավետիք Իսահակյան, «Սաադիի վերջին գարունը»)
- 4) Սիմոնի (Հրանտ Մաթևոսյան, «Աշնան արև»)

202. Ո՞ր բառն է բաց թողած:

Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան՝ ադամանդներով, շքեղ գինդերով, Ծիածանաթև հավքերը իրար գորգոտում էին մրմունջով:

- 1) անուշ
- 2) քնքուշ
- 3) ուրախ
- 4) անհոգ

203. Ավետիք Իսահակյանի տրված ստեղծագործություններից որը ի՞նչ ժանրի գործ է:

- 1. «Մեր պատմիչները և մեր գուսանները» ա. պոեմ
- 2. «Հայրենիքիս» բ. լեզենդ
- 3. «Աբու-Լալա Մահարի» գ. պատմվածք
- 4. «Համբերանքի չիբուխը» դ. բանաստեղծություն

- 1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 2) 1-ա, 2-դ, 3-ա, 4-գ
- 3) 1-դ, 2-դ, 3-ա, 4-գ
- 4) 1-ա, 2-բ, 3-բ, 4-գ

204. Ավետիք Իսահակյանի «Հայրենի հողը» լեզունդում ի՞նչն է վիրավորված, խառված ու հեռացած գորավարին վերադարձնում հայրենիք.

- 1) սիրած աղջկա նկատմամբ անհուն սերն ու կարոտը
- 2) մանկության հիշատակներն ու սիրելի ընկերները
- 3) ներում հայցող փոքրոգի արքայի գղջման խոսքը
- 4) գուսանի հայրենի երգերն ու գեղջուկի տարած մի բուռ հայրենի հողը

205. Նշված ստեղծագործություններից որը ո՞ւմն է:

- | | |
|------------------|------------------------|
| ա. «Ասպետի սերը» | 1. Միսաք Մեծարենց |
| բ. «Հառաչանք» | 2. Հովհաննես Թումանյան |
| գ. «Նեմեսիս» | 3. Դանիել Վարուժան |
| դ. «Իրիկունը» | 4. Ավետիք Իսահակյան |

- 1) ա-1, բ-2, գ-4, դ-3
- 2) ա-4, բ-2, գ-3, դ-1
- 3) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 4) ա-2, բ-4, գ-3, դ-1

206. Ո՞ր բառակապակցությունն է բաց թողած:

*Եղեգնյա գրչով որք տունս երգեցի.
- Քեզի ընծա, ~ -:*

- 1) մայր ալեհեր
- 2) հայր կարեվեր
- 3) մայր կարեվեր
- 4) հայր ալեհեր

207. Ո՞ր բառակապակցությունն է բաց թողած:

*Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
- Ձեզի ընծա, ~ -:*

- 1) կրակի զոհեր
- 2) անբախտ զոհեր
- 3) սուրի զոհեր
- 4) դարու զոհեր

208. Ո՞ր բառակապակցությունն է բաց թողած:

*Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
- Ձեզի ընծա, ~ -:*

- 1) հեզ մարտիկներ
- 2) հայ մարտիկներ
- 3) քաջ մարտիկներ
- 4) մեր մարտիկներ

209. Ո՞ր բառակապակցությունն է բաց թողած:

*Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա, ~ -:*

- 1) հեզ հայրենիք
- 2) հին հայրենիք
- 3) որբ հայրենիք
- 4) իմ հայրենիք

210. Ո՞րը Դանիել Վարուժանի ժողովածուներից չէ:

- 1) «Հեթանոս երգեր»
- 2) «Յեղիմ սիրտը»
- 3) «Խղճմտանքի ձայներ»
- 4) «Սարսուռներ»

211. Տրվածներից ո՞րը ճիշտ չէ Դանիել Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ:

- 1) Դանիել Վարուժանն ունի բանաստեղծական չորս ժողովածու:
- 2) «Հացին երգը» ժողովածուն լույս է տեսել բանաստեղծի մահից հետո:
- 3) Դանիել Վարուժանը պանդխտության թեմայով բանաստեղծություններ չի գրել:
- 4) Դանիել Վարուժանը «Հարճը» պոեմի նյութը վերցրել է Մովսես Խորենացու պատմությունից:

212. Տրվածներից ո՞րը ճիշտ չէ Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ:

- 1) Տիրան արքայի փեսան՝ Տրդատ Բագրատունի իշխանը, ծեծել է կնոջը, կտրել նրա մազերը և հեռացել:
- 2) Սյունյաց Բակուր իշխանը, վախենալով Տիրան արքայից, դժկամությամբ է իր հարկի տակ ընդունում Տրդատ Բագրատունուն:
- 3) Տրդատը, հրապուրվելով Բակուր իշխանի հարճ Նազենիկով, փախցնում է նրան, սակայն Բակուրը հետապնդում է նրանց և սպանում Նազենիկին:
- 4) Նազենիկի աճյունը Տրդատի կարգադրությամբ ամփոփում են մի չորացած բարդու տակ, որը դրանից հետո վերընձյուղվում է:

213. Ո՞ր ստեղծագործության հերոսուհին է Նազենիկը:

- 1) «Սաադիի վերջին գարունը» (Ավետիք Իսահակյան)
- 2) «Միրհավ» (Ակսել Բակունց)
- 3) «Փոստալ» (Գրիգոր Զոհրապ)
- 4) «Հարճը» (Դանիել Վարուժան)

214. Ո՞ր բառն է բաց թողած:

*Ու լույսն անոնց, անխոս հուրի՜ դյուրական,
 Հրմայագեղ ու վարսքերով
 Շատրրվանին կիջնե՛ գուռին մեջ կաթե:*

- 1) մըշուշե
- 2) սատափե
- 3) արծաթե
- 4) մետաքսե

215. Ո՞ր բառն է բաց թողած:

*Ջուրը ցայտքեն ծաղիկ ծաղիկ կը կաթե.
 Վրճիտ, ինչպես արցունքը մանկան,
 Նրվագն անոր կը հեծեծե հեշտական:*

- 1) բոցե
- 2) ձյունե
- 3) ոսկե
- 4) լույսե

216. Ո՞ր բառն է բաց թողած:

*Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,
Եվ ալիք մը թևը բացած կը վազե
Գրկել ափունքն ոսկի ավազե:*

- 1) իղձիս
- 2) մտքիս
- 3) հոգուս
- 4) սրտիս

217. Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Միսաք Մեծարենցը չէ:

- 1) «Դարդս լացեք», «Չմրան պարզ գիշեր», «Հայոց վիշտը», «Յորյանի ծովեր»
- 2) «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Մեղուները», «Մեռած աստվածներուն», «Չոն»
- 3) «Ջարդը», «Աքասիաներու շուքին տակ», «Նեմեսիս», «Հոգեհանգիստ»
- 4) «Իջնում է գիշերն անգութ ու մթին», «Պասալը», «Ասպետի սերը», «Տաղ անձնական»

218. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված հայ գրողների կեղծանունները և իսկական ազգանունները:

- | | |
|------------------|---------------------|
| ա. Սիամանթո | 1. Եղիազարյան |
| բ. Նար-Դոս | 2. Թևոսյան |
| գ. Մուրացան | 3. Յարճանյան |
| դ. Նաիրի Զարյան | 4. Տեր-Հովհաննիսյան |
| ե. Ակսել Բակունց | 5. Հովհաննիսյան |

- 1) ա-3, բ-2, գ-5, դ-1, ե-4
- 2) ա-1, բ-5, գ-3, դ-2, ե-2
- 3) ա-3, բ-5, գ-4, դ-1, ե-2
- 4) ա-1, բ-2, գ-3, դ-5, ե-4

219. Ո՞ր բառն է բաց թողած:

*Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կիյնա վար.
Երազներու է որ կանցնի,
Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար:*

- 1) դիցուիին
- 2) պերճուիին
- 3) գեղուիին
- 4) սիրուիին

220. Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն...*

- 1) «Հարդագողի ճամփորդները»
- 2) «Հեռացումի խոսքեր»
- 3) «Դեպի լյառը Մասիս»
- 4) «Տաղ անձնական»

221. Եղիշեն Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.
Կյանքս կանցնի, կմարի, բայց երգս կա, կապրի դեռ:*

- 1) «Գանգրահեր տղան»
- 2) «Հեռացումի խոսքեր»
- 3) «Դանթեական առասպել»
- 4) «Տաղ անձնական»

222. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Եղիշեն Չարենցի «Անակնկալ հանդիպում Պետրոսյավուկյան ամրոցում» ստեղծագործությանը:

- 1) Բանաստեղծի նկարագրած ամրոցում շրջում են սովերները, իսկ անցյալի մռայլ ոտնաձայները հիշեցնում են մահվան քայլերգ:
- 2) Ամրոցի բակում քնարական հերոսը հիշում է այնտեղ տառապած հերոսներին, որոնց աչքերում չմարող վճիռ կա, չնայած մարմինների վրա դեռ մնում են խարազանների հետքերը:
- 3) Ամրոցին հրաժեշտ տալիս քնարական հերոսը հանդիպում է մի գործչի, որին անմիջապես ճանաչում է՝ հիշելով, թե ինչպես էր նա իր ստեղծագործություններով պայքարի կոչում բոլորին:
- 4) Բանաստեղծին երևակայությամբ հանդիպած գործիչը նկարագրում է մաքառումներով անցած իր ուղին՝ հպարտորեն հիշեցնելով, որ բարեկամն է եղել Հերցենի ու Օգարևի:

223. Եղիշեն Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Անց եմ կենում. շուրջս-մարդիկ, շուրջս դեմքեր հազար-հազար.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար...*

- 1) «Գանգրահեր տղան»
- 2) «Հեռացումի խոսքեր»
- 3) «Դանթեական առասպել»
- 4) «Տաղ անձնական»

224. Ո՞ր բառն է բաց թողած:

*Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը
Կյանքս թողած անհունում - ես երգել եմ սերը խոր
Ու կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան...*

- 1) մոգական
- 2) դյուբական
- 3) մշտական
- 4) սրբազան

225. Նշվածներից ո՞րը Եղիշեն Չարենցի «Տաղարան» շարքի բանաստեղծություններից չէ:

- 1) «Ես իմ անուշ Հայաստանի»
- 2) «Հեռացումի խոսքեր»
- 3) «Կուզեմ հիմի փչե գուռնեն»
- 4) «Էլի գարուն կգա, կբացվի վարդը»

226. Ո՞ր բառն է բաց թողած:

*Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝
Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս:
Երգերիս մեջ - դու գիտե՞ս - ինձ ոչ որ չի ճանաչում
Կարծես ուրիշն է երգում կարոտը հոգուս:*

- 1) կանաչ
- 2) կապույտ
- 3) դեղին
- 4) կարմիր

227. Եղիշե Չարենցի նշված ստեղծագործություններից որը ի՞նչ ժանրի գործ է:

- ա. «Տաղարան»
- բ. «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»
- գ. «Ամբոխները խելագարված»
- դ. «Հարդագողի ճամփորդները»

- 1. բալլադ
- 2. չափածո նովել
- 3. բանաստեղծական շարք
- 4. պոեմ

- 1) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 2) ա-3, բ-4, գ-2, դ-1
- 3) ա-1, բ-2, գ-4, դ-1
- 4) ա-3, բ-2, գ-4, դ-1

228. Ո՞ր բառն է բաց թողած:

*Հավիտյան գոց ու անխոս՝ թափառել եմ ու
Ոչ-որ, ոչ-ոք չգիտե՛ս՝ արդյոք ի՞նչ է կյանքս, ես.
Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել,
Ինչպես գիտեն, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ:*

- 1) երգել
- 2) խոսել
- 3) լռել
- 4) խորհել

229. Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:

«Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա... Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անգթությունը: Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կսկծում էր սիրտը, և այնքան էլ հաճույք, հանգիստ էր զգում: Անդամալույծը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար: Նրա դիակը սրբագործում էր ծերուկի մեղսալից սիրտը»:

- 1) «Քաոս», Ալեքսանդր Շիրվանզադե
- 2) «Ավելորդը», Դերենիկ Դեմիրճյան
- 3) «Մթնածոր», Ակսել Բակունց
- 4) «Համբերանքի չիբուխը», Ավետիք Իսահակյան

230. Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:

«Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի՝ փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՛ն: Միշտ հաստ շալը վաթսուներորդանասուն տարեկան կուզի վրայով վզին փաթթած, երկար իրանը բերրնքսիվայր ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջևը երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա»:

- 1) «Քաոս», Ալեքսանդր Շիրվանզադե
- 2) «Նեղ օրերից մեկը», Նար-Դոս
- 3) «Սպիտակ ձին», Ակսել Բակունց
- 4) «Ավելորդը», Դերենիկ Դեմիրճյան

231. Ի՞նչ ճակատագիր է ունենում Վասակ Սյունին Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:

- 1) Պատերազմից հետո զոջում է իր արարքների համար, մեռնում ու թաղվում է պարսից աշխարհում:
- 2) Պարսից Դռան կողմից դատապարտվում է մահվան:
- 3) Պարսիկները նրան քարշ տալով դաժանաբար սպանում են:
- 4) Անհայտ է:

232. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ո՞ւմ մասին է Վահան Ամատունին ասում. «Անդադար հոգի»:

- 1) Վարդան Մամիկոնյանի
- 2) Արտակ Մոկացի
- 3) Ատոմ Գնունու
- 4) Սրվանձտյա Գարեգինի

233. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում նշվածներից ի՞նչ չի առաջարկում Վարդան Մամիկոնյանը հայ նախարարներին՝ պարսիկներին դիմագրավելու համար:

- 1) Օգնության կոչ ուղարկել Վրաստան, Աղվանք և հունաց բաժնի հայ իշխաններին:
- 2) Դեսպանություն ուղարկել Բյուզանդիա՝ Պարսկաստանի հետ հաշտված այդ տերությանը համոզելու հայերին օգնելու անհրաժեշտությունը:
- 3) Բանասարկություններով թշնամանք լարել պարսից նախարարների մեջ և պարսիկ պաշտոնյաների մի մասին գրավել իրենց կողմը:
- 4) Ապավինել ռամիկի ուժին:

234. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում նշվածներից ո՞վ է հրաժարվում մասնակցել Հազկերտի հրովարտակի պատասխան նամակի համար Արտաշատի վանքում հայ աշխարհիկ և հոգևոր այրերի ժողովին:

- 1) Վասակ Սյունին
- 2) Վարդան Մամիկոնյանը
- 3) Մովսես Խորենացին
- 4) Սրվանձտյա Գարեգինը

235. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում Վասակ Սյունին նշվածներից ո՞ւմ էր համարում իրեն զլխավոր գործակից:

- 1) Գաղիշո Խորխոռունուն
- 2) Վարազվաղանին
- 3) Արտակ Ռշտունուն
- 4) Վահևունյաց Գյուտին

236. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում դիվանագիտական ի՞նչ հարմար պատասխան է գտնում հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը Աթրլի այն հարցին, թե արդյոք հոմերի համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն.

- 1) Նկատելով բյուզանդացի զորավար Ամատուլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրել՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատթարացումից:
- 2) Միրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:
- 3) Հոմերի համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպաավոր պատերազմի:
- 4) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթրլի՝ Բյուզանդիային հաղթելու ներկա անպատեհությունը:

237. Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ինչո՞ւ էր Վասակ Սյունին Վարազվադանին արտաքսել Սյունիքից:

- 1) իրեն դավելու և պարսից արքունիքին ծառայելու համար
- 2) մարգարանի իր պաշտոնին դավադրաբար ձգտելու պատճառով
- 3) բռնակալական անսանձ հանդգնությունների պատճառով
- 4) իր քրոջ հետ դաժան վարվելու և նրան տանջամահ անելու համար

238. Ո՞ւմ խոսքն է Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:

«...Ոչ այնքան Հազկերտն է աղետը, որքան մեր տանու թշնամին՝ ռամիկը»:

- 1) Գաղիշո Խորխոռունու
- 2) Կողակի
- 3) Ատոմ Գնունու
- 4) Արտակ Մոկացի

239. Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում Արտաշատի վանքում հավաքված հայ աշխարհիկ և հոգևոր այրերի ժողովում ո՞վ է կարդում Հազկերտի հրովարտակը:

- 1) Եզնիկ Կողբացին
- 2) Դևոնդ Երեցը
- 3) Եղիշեն
- 4) Դազար Փարպեցին

240. Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ո՞ւմ մասին է Վարդան Մամիկոնյանը ասում.

«Չսիրեցի այդ մարդու պաշտոնապաշտ զգուշավորությունը»:

- 1) Վասակ Սյունու
- 2) կաթողիկոսի
- 3) Միհրմերսեհի
- 4) Դենշապուհի հագարապետի

241. Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ո՞վ է ասում.

«Պատերազմի գործում արդարացում չկա: Հաղթեցիր՝ արդար ես, պարտվեցիր՝ մեղավոր»:

- 1) Ատոմ Գնունին
- 2) Դևոնդ Երեցը
- 3) Վարդան Մամիկոնյանը
- 4) Վասակ Սյունին

242. Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքն է.

«Ոչ մի գեղեցիկ կին հայրենիք չարժի, ոչ մի հարստություն, փառահեղ կյանք, ոչ մի պատիվ ու փառք: Հայրենիքը ամեն բանից բարձր է, և նրա գինը չի չափվի ոչ մի աշխարհային գանձով»:

- 1) Փառանձեմի
- 2) Մեծ տիկնոջ
- 3) Խորիշայի
- 4) Անահիտի

243. Ինչո՞վ է ավարտվում Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը:

- 1) Բնութագրական մի պարբերությամբ, ուր ասվում է, թե Ավարայրի դաշտից լավում է երգի մի մեղեդի՝ Վարդանանց նվիրված «հին երգը»:
- 2) Եղիշեի՝ Ավարայրի դաշտում նահատակված հայ հերոսների անունների թվարկումով:
- 3) Արտակ Մոկացի՝ պատերազմի դաշտում ընկած սիրելիների մասին հիշողություններով:
- 4) Հագկերտի՝ Փայտակարան արշավելու և հոներին դիմագրավելու պարսից հագարապետին տված հրամանով:

3. Երբևէ այդպիսի գրգռված հոգեվիճակում չէի եղել:
4. Միշտ էլ մեկը խելքից թեթև է, մյուսը՝ խարդախ, երրորդը՝ ամբարիշտ:
5. Մի քանի ակնթարթ ներսը զննելուց հետո ճամփորդը մոտեցավ դռանը և կանգ առավ:
6. Արտիստը շնչասպառ ավարտեց շեքսպիրյան բառերով շաղախված մենախոսությունը, անշնչացավ, ու թվաց՝ ուր որ է ընկնելու է:

50. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ժխտական խոնարհման բայաձև կա:

1. Ուզում է որևէ տգեղ բան անել, բայց չի կարողանում:
2. Պարո՛ն, գուր մի՛ չարչարեք ձեզ էլ, մեզ էլ:
3. Ի՞նչ հարցնեմ, տիկի՛ն,- չքմեղացավ Արտակը:
4. Բայց նրան այդ ամենի մասին չպիտի որևէ բան ասես:
5. Ծերունին ո՛չ լսեց նրա ասածը, ո՛չ էլ որևէ ձևով արձագանքեց:
6. Դու կարող ես ինձ չլսել, բայց չանսալ քո ներքին ձայնին անկարող ես:

51. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում սխալ բայաձև կա:

1. Իզուր մի՛ մտահոգվիր, քեզ թողող չկա, որ կեսգիշերին տուն գնաս:
2. Գլխի ահավոր ցավը փոքր-ինչ թուլացել էր և հիմա միայն ժամանակ առ ժամանակ էր հիշացնում իր գոյությունը:
3. Ջվարճալին այն է, որ հաճախ բախտը չարիքից փախչող մահկանացուին հենց նրա փախուստի ճանապարհին է բերում, հանդիպացնում այն նույն չարիքին, որից նա խուսափում էր:
4. Հենց նորություն ունենամ, կկապնվեմ քեզ հետ և կհայտնեմ մանրամասները:
5. Շուտով հայերը տնկեցին թթենի, նռնենի, նշենի, աճեցրին մրգեր ու բանջարեղեն և ցանեցին տեսակ-տեսակ կանաչիներ:
6. Այսպիսի սրտմաշուկ խոհերով համակված՝ մի ժամանակ ես էլ խորհում էի տնից փախնելու, ազգանունս փոխելու մասին:

52. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում հրամայական եղանակի բայաձևեր կան (առողջանության նշանները դրված չեն):

1. Իմ գերեզմանին դուք չընտենաք,
Հարկավոր չէ ինձ ո՛չ ծաղիկ, ո՛չ սուգ:
2. Հուսաբեկ մութ ու մեզ թող լինի,
Իմ վերև թող արև չըլինդա:
3. Բաբելոնն է եղել մեր ախոյանը՝ տե՛ս,
Անհետ կորել, անցել է չար մշուշի պես:
4. Լինեի չոբան սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրբանիս մոտով:
5. Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա,
Դու չմրսես ձմռան ցրտում, բոլորը քեզ...
6. Մի՛ վախեցեք
Կեղծի մասին ճիշտ գրելուց.
Նա դրանից կքչանա:

53. Նշել այն հատվածների համարները, որոնցում ըղձական եղանակի բայաձև չկա:

1. Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու...
2. Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա:
3. Բայց ես երգեցի աչքերդ միայն,
Մեկ էլ աչքերիդ երկինքները խոր...
4. Եթե ուզեն, արևներին նոր տեմպ կըտան ու նոր ուղի...
5. Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,
Չյունից ինձ նայող աչերն համբուրեմ:
6. Անտառում ամպի ծվեներ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում:

54. Նշել այն հատվածների համարները, որոնցում ենթադրական եղանակի բայաձև կա:

1. Չի դավաճանում ոչ մի ժամանակ
Հյուրընկալության հինավուրց ոճին:
2. Ինչ ունի-չունի, բաժանում է նա
Եվ չի պահանջում ոչ ոքից ոչինչ:
3. Եվ տարու վրա ծալվում է տարին,
Ու խեղճ քարափը մենակ չի մնում՝
Խորհի, թե ինչ է տալու աշխարհին:
4. Չենք հանդիպի մենք արդեն, Նվա՛րդ,
Թեև բացվում են նորից վարդեր:
5. Ես արդեն երբեք չեմ մոռանալու
Աչքերդ անգոր և անօգնական...
6. Եգիպտական բուրգերը փոշի կըդառնան,
Արևի պես, երկի՛ր իմ, կըվառվես վառման:

55. Նշել այն հատվածների համարները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են:

1. Առաջին շողքը խուտուտ է տալիս,
Շոշափում նրա շրթունքները փակ:
2. Ժամանակն այսպես գալիս է, գնում,
Եվ տարու վրա ծալվում է տարին...
Ու խեղճ քարափը մենակ չի մնում՝
Խորհի, թե ինչ է տալու աշխարհին:
3. Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան:
4. Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:
5. Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր:

56. Նշել ձևի մակբայների համարները.

1. հազիվ, 2. առաջ, 3. դանդաղորեն, 4. միշտ, 5. ձեռաց, 6. մանկուց, 7. երիցս, 8. հոսնկայս,
9. վերջերս:

57. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում վերաբերական չկա:

1. Բայց օտարը կարծես մենք էինք:
2. Մի քանի անգամ բախեց դուռը, և այն ցավալիորեն ճռնչաց:
3. Միայն թե լսեր ինձ, չգնար խոտոր ճանապարհով:
4. Ամոթ ու խղճի մնացորդ, այնուամենայնիվ, ուներ:
5. Պատշգամբում չնայած լվացարան կար, կինը, սրբիչն ուսին, միշտ կողքին էր:
6. Ա՛յ ժողովուրդ, գոնե մի կո՛ղմ քաշվեք,- ձայն տվեց մեքենայի թափքից:

58. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Մարգարիտան դադարել էր տեսնել, թե ինչ է կատարվում բարասպանի սենյակի խորքում, բայց իրեն հասնող աղմուկը ոչ մի լավ բանի մասին չէր խոսում:

1. **դադարել** –վաղակատար ձևաբայ, **ինչ**- հարցական դերանուն
2. **իրեն**-անձնական դերանուն, տրական հոլով, **մասին**-գոյական, տրական հոլով
3. **տեսնել**-վաղակատար ձևաբայ, ներգործական սեռ, **ոչ մի**- ժխտական դերանուն
4. **խորքում**-գոյական, ներգոյական հոլով, **է կատարվում**- սահմանական ներկա
5. **չէր խոսում**- անկատար անցյալ, բաղադրյալ ժամանակաձև, ներգործական սեռ, **հասնող**- ենթակայական դերբայ, ներգործական սեռ

59. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

Նա հայացքով փնտրում էր կարճահասակ ինչ-որ մեկին, որ կաղին տալով քիչ առաջ արագ-արագ չքացել էր այլիք տվող բազմության ծովում:

1. **փնտրում էր**- անկատար անցյալ, ներգործական սեռ, **նա**- անձնական դերանուն
2. **կարճահասակ**- որակական ածական, **որ**-ստորադասական շաղկապ
3. **ինչ-որ**-անորոշ դերանուն, **արագ-արագ**- ձևի մակբայ
4. **չքացել էր**-սահմանական անցյալ, չեզոք սեռ, **մեկին**- թվական, տրական հոլով
5. **բազմության**-հավաքական գոյական, -ա ներքին հոլովում, **առաջ**-ժամանակի մակբայ

60. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

- Հերցոգ, ես հիացած եմ, չէի՞ք ուզի մի գավաթ շամպայնով նշել կատարվածը, - ձայնը գլուխը գցած պնդում էր վաճառականը՝ հուսալով, որ նա իրեն վերջապես կարձագանքի:

- 1. **հերցոգ**-անձնանիշ գոյական, ի հոլովում, **ձայնը գլուխը գցած**- հարակատար դերբայ
- 2. **չէի՞ք ուզի**-սահմանակ եղանակ, բաղադրյալ ժամանակածև, պակասավոր բայ, **նշել**-անորոշ դերբայ
- 3. **հուսալով**- անորոշ դերբայ, ու հոլովում, **ես**- անձնական դերանուն
- 4. **նա**- ցուցական դերանուն, **շամպայնով**-հասարակ գոյական, գործիական հոլով
- 5. **հիացած**-սուկաձանցավոր բայ, չեզոք սեռ, **որ**- հարաբերական դերանուն

61. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

Վվելի վատ բան չկար, երբ հրավիրվածը դեսուդեն էր թափառում՝ չիմանալով ինչ է անելու, բայց, այնուամենայնիվ, նրա կարևոր գործը հյուրընկալողի վերաբերյալ զազրախոսելու նյութ հավաքելն էր:

- 1. **վատ**-որակական ածական, **չկար**- ըղձական անցյալ, ժխտական խանարիում
- 2. **հրավիրվածը**-հարակատար դերբայ, փոխանվանական կիրառություն, **դեսուդեն**-տեղի մակբայ
- 3. **էր թափառում**- անցյալ անկատար, չեզոք սեռ, **նրա**- անձնական դերանուն
- 4. **չիմանալով**-անորոշ դերբայ, ներգործական սեռ, **զազրախոսելու**-ապակատար ձևաբայ
- 5. **անելու**-անորոշ դերբայ, տրական հոլով, **այնուամենայնիվ**-վերաբերական

62. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

-Աստվածային Շտրաուսը,- ճչաց նա հիացմունքից,- և թող ինձ կախեն արևադարձային ջունգլիներում, եթե պարահանդեսի որևիցե սրահի սյուների տակ այսպիսի նվազախումբ է նվազել մի՞թե սխալվում եմ:

- 1. **աստվածային**- հարաբերական ածական, **ճչաց**- անցյալ կատարյալ, պարզ ժամանակածև
- 2. **որևիցե**-անորոշ դերանուն, **թող**- հրամայական եղանակ, ածանցավոր բայ
- 3. **երբևիցե**- ժամանակի մակբայ, **է նվազել**- վաղակատար ձևաբայ, բաղադրյալ ժամանակածև
- 4. **մի՞թե**- վերաբերական, **և**- համադասական շաղկապ
- 5. **սյուների**- հասարակ գոյական, ի հոլովում, **տակ**- կապ

63. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

Ու հենց Ազազելլոն հեռացավ, կատվի աչքն ընկավ մի սմբաժ թագավորի, որ, հասկանալով իր մոտալուտ վախճանը, հանկարծ վրայից գցեց պատմունճանը, շարտեց անկյունում ու նետվեց սանդուղքն ի վար՝ շնչասապառ լինելով իրեն հետապնդողների ձայներից:

- 1. **հենց**- վերաբերական, **հեռացավ**- անցյալ կատարյալ, ածանցավոր բայ
- 2. **մի**- անորոշ դերանուն, **թագավորի**-անձնանիշ գոյական, տրական հոլով
- 3. **որ**-հարաբերական դերանուն, **մոտալուտ**-ժամանակի մակբայ
- 4. **հանկարծ**-ձևի մակբայ, **անկյունում**- գոյական, ա ներքին հոլովում
- 5. **սանդուղքն ի վար**-տեղի մակբայ, **հասկանալով**- դերբայ, ներգործական սեռ

64. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

Ուրիշ հանգամանքներում թերևս նման բան չէին հանդուրժի, սակայն այն, ինչ իրենց ձեռքում էր, գրեթե վկայությունն էր այն բանի, որ դավաճանողներն իրենց մերձավորներն են:

1. ուրիշ-անորոշ դերանուն, **հանգամանքներում**- գոյական, ի հոլովում
2. **թերևս**-վերաբերական, **բանի**- գոյական, տրական հոլով
3. **գրեթե**-վերաբերական, **նման**- ածական
4. **չէին հանդուրժի**-ենթադրական անցյալ, ներգործական սեռ, **ինչ**-հարցական դերանուն
5. **այն**-ցուցական դերանուն, **դավաճանողները**-անձնանիշ գոյական

65. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

Որքան էլ աղոտ էր նշմարվում շրջակայքը, Մարգարիտային թվում էր, որ գուցե գտնվում էր այն մթամած ու անվերջանալի սյունաշարերով զարդարուն դահլիճում, ուր կատարվելու էր օձման արարողությունը:

1. **էլ**-վերաբերական, **աղոտ**- հարաբերական ածական
2. **Մարգարիտային**-հատուկ գոյական, տրական հոլով, **էր նշմարվում**- անկատար անցյալ, բաղադրյալ ժամանակաձև
3. **թվում էր**- անկատար անցյալ, չեզոք սեռ, **գուցե**-վերաբերական
4. **զարդարուն**-ածական, **օձման**-գոյական, ան հոլովում
5. **մթամած**- հարակատար դերբայ, **ուր**- հարաբերական դերանուն

66. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

Քնած թե արթուն` լսում էր երգը հեռավոր օվկիանի, ու հոգին, աշխարհից անէացած, տանում էր նրան հեռու մի աշխարհ, ուր ոչ վիշտ կար, ոչ էլ տառապանք:

1. **քնած**-հարակատար դերբայ, չեզոք սեռ, **թե**- ստորադասական շաղկապ
2. **հեռավոր**-տեղի մակբայ, **լսում էր**-սահմանական անցյալ, ներգործական սեռ
3. **անէացած**-ածանցավոր բայ, **նրան**-անձնական դերանուն, տրական հոլով
4. **հեռու**-տեղի մակբայ, **մի**- անորոշ դերանուն
5. **ուր**-հարաբերական դերանուն, **կար**-պակասավոր բայ, անցյալ կատարյալ

67. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:

*Խայամն ասավ իր սիրուհուն.
«Ոտդ զգույշ դի՛ր հողին,
Ո՛վ իմանա՛ որ սիրունի
Բիբն ես կոխում դու հիմի...»:*

1. **Խայամն**-հատուկ գոյական, որոշյալ առում, **ասավ**-անկանոն բայ, ներգործական սեռ
2. **սիրուհուն**-անձնանիշ գոյական, տրական հոլով, որոշյալ առում, **ոտդ**-գոյական, դ ստացական հոդ
3. **զգույշ**-ձևի մակբայ, **դի՛ր**- սոսկաձանցավոր պակասավոր բայ
4. **ով**-հարաբերական դերանուն, **իմանա**-ածանցավոր բայ, ներգործական սեռ
5. **հողին**-գոյական, տրական հոլով, **դր**-հարցական դերանուն

ԲԱԺԻՆ 4 ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

I ՏԵՍԱԿ

1. Ընդգծվածներից քանի՞սն են նախադասություն:

- **Չգիտես ինչու**, երիտասարդը ստեպ-ստեպ իր փափուկ մատներով շփում էր ճակատը, մանկական աչքերը՝ կարծես ինչ-որ բան հարթելու համար:
- Եվ ահա ես, որ ինձ համարում էի ճակատագրի խորթ զավակ, **գտա իմ բարձրագույն սփոփանքը՝** գիրքը:
- Հարատև ընթերցանության ազդեցությամբ կյանքը հետզհետե փոխվում էր իմ աչքում, կամ, **ավելի ճիշտ ասած**, նա գունավորվում էր:
- Անձանոթը մոտ քառասուն տարեկան մի տղամարդ էր՝ **կանաչ - դեղնագույն դեմքով, նոսր մազերով ու ցանցառ մորուքով:**
- Առավոտները նա ատյան մտնելիս մի քանի վայրկյան կանգ էր առնում դռների առջև, արագ քայլերով մոտենում էր գրասեղանին և **արագ նստում տեղը:**

2. Նախադասություններից քանի՞սն են բարդ համադասական:

- Արծիվն արծիվ է երկնքում իր ջինջ,
Օվկիանի խորքում արծիվն է ոչինչ:
- Ամեն պալատ մեղքի որջ է, քանի մի մութ խրճիթ կա դեռ...
- Քանի՜ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել...
- Ու՞ր է արդյոք հիմա նա. ո՞րջ է արդյոք, թե՞ մեռած
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մա՛յր իմ անուշ ու անգին...

3. Տրված նախադասություններում գոյականով արտահայտված քանի՞ ենթակա կա:

- Ի՞նչ է ասում ճամփաներին
Հավված-մաշված այս կածանը:
- Գնամ Գյազբեղիս հողմերը շնչեմ,
Գնամ հովերը շնչեմ Գյազբեղիս:
- Երեսիդ նայող չկա,
Մասրենի՛, վայրի՛ մասրենի:
- Մենք իրար ճանաչում էինք,
Իրար հետ հառաչում էինք
Մեր դաշտի ծաղիկը ու ես:
- Եվ դու այնքան ես հայ ու Հայաստան,
Որ մինչև անգամ Հայաստանից դուրս
Քո անցած բոլոր ճանապարհները
Հայաստանոտ են:

4. Հատվածներից քանիստ՞ւմ հարակատար դերբայով արտահայտված ենթակա կա:

- Ես կգամ որպես մոռացված մի երգ՝
Հյուսված աղոթքից, սիրուց ու ծաղկից:
- Տեսնո՞ւմ է աստված, որ այսքան տարի
Բան չի դրել մեր բախտի ամանում,
Եվ դրածն էլ շատ է համարում:
- Այնպես ես գալիս, այնպես ես գնում,
Ո՛վ դու, արարո՞ղ և ավերի՛չ,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:
- Քանի՛, քանի՛, քանի՛ միլիոն տարվա
Արած-դրածը քո տանջված հոգու
Մի բուռ մոխիր ու մուր կդարձնի:

5. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:

Դու և՛ Ամբերդ ես, և՛ Բյուրական ես,
Քեզ համար խորթ է վաղանցավորը,
Հավիտենության կանգնած վկան ես
Եվ բացվող օրվա անդուլ հնձվորը:

6. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել՝
Էլի մեծ էր նա, մեծ էր ու անգին,-
Քանզի աշխարհը ճամփեքս է կապել,-
Մայրս կամուրջ էր հույսի ճամփեքին:
Ու հիմա քիչ է, թե աչքերս տամ,
Թե սիրտս հանեմ ու տամ մայրիկիս,
Ա՛խ, մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ.
Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:

7. Տրված հատվածում քանի՞ ստորոգելի կա:

Ցերեկն անգոր ես, գիշերներն՝ հգոր,
Գիշերը՝ նուրբ դև, ցերեկն՝ հրեշտակ,
Առյուծն էլ քո դեմ մանուկ է անգոր,
Երբ սուրբ քնքշանքդ դառնում է հեշտանք:
Երբ կին ես, ոչ թե սրբությունը մոր:

8. Տրված հատվածում քանի՞ ստորոգելի կա:

Եթե լինեիր երկաթյա ու բիրտ,
Իմ սանդուղքն անգամ կլիներ ոսկի,
Բայց քեզ հետ ինչպե՞ս կզգայինք, իմ սիրտ,
Հրճվանքն այս խոսքի:

9. Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:

Երբ հոռոմների դեսպանը հաջորդ օրը Սուրմառի ժամանեց, ասես ոչինչ էլ չէր եղել՝ ո՛չ Անին նվաճելու եկած բյուր բանակը, ո՛չ ասեղ ճակատամարտը, ո՛չ իրենց միակ կյանքը Ախուրյանի ջրերում թաղած հազարավոր զոհերը:

10. Տրված հատվածներում ածականով արտահայտված քանի՞ որոշիչ կա:

- Իմ դուռն է ծեծում քամին խոլական,
Իմ պատերի տակ հեծում է անվերջ,
Մեղմիվ երգում է մեղեդին լալկան,
Ռռնում ամայի փողոցների մեջ:
- Խաղաղ ժպիտը փռեց վրաս,
Մեղմիվ խոսեց և անուշ լռեց,
Ու թախծոտ կյանքս դարձավ երազ:
- Անդարձ աշխարհի վարդագույն միգում,
Կյանքի հեռավոր, անցած օրերում,
Մի խորհրդավոր թախիժ էր հսկում:

11. Տրված հատվածներում ածականով արտահայտված քանի՞ որոշիչ կա:

- Ես նստում եմ մենակ, մեն-մենակ,
Եվ անվերջ երագում, ու կրկին
Այս կյանքի աշխարհում դժգունակ
Իր զարդերն է փռում իմ հոգին:
- Նուրբ սովերները փռվում են քնքուշ,
Կապույտ խավարն է երկինքը պատում:
- Մաքուր է իմ հոգին, ու հիմա
Օրհնում եմ վիճակս երկրային:

12. Տրված հատվածներում գոյականով արտահայտված քանի՞ հատկացուցիչ կա:

- Կցրեն կյանքի հուշերը ցավոտ
Ու հեքիաթային լույսեր կվառեն:
- Հողմը սրարշավ
Հոգուս դակացած ծաղիկ հույսերի
Թերթերը տարավ:
- Ինձ լուռ մոռացան, ինձ չհիշեցին,
Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս:
- Նրա խոսքերի մեղմ օրորում
Աշխարհը թվաց ինձ անեզերք,
Կարծես հնչում էր իմ օրերում
Աստղերի երկրում հյուսված մի երգ:
- Ծեծված, տրորված աշխարհում անդուռ,
Ո՞ւմ պիտի պարզի աչքերը տխուր
Եվ ո՞ւմ պատի տակ խավար գիշերով
Պիտի հանգչի նա մերժված ու խռով:

13. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:

Խաղաղության օրերն ամռան անհոգ ամիսների հետ աննկատելիորեն անցնում էին՝ իրենց հետ տանելով մահու ու կենաց պայքարում ձեռք բերածը: Խաղաղ կյանքը վերահաստատեց պայքարի ժամանակ մերժվածը: Պայքարի ժամանակ մոռացության տրվածները կրկին դարձան առաջինը երկրում, իսկ մարտադաշտում փայլածները կրկին անհայտության տրվեցին:

14. Տրված հատվածում քանի՞ հիմունքի և զիջման պարագա կա:

Հայրս, ըստ իր սովորության, չհամբուրեց ինձ: Այդ լռին ու ինքնամփոփ մարդը, չնայած իր թիկնեղ լինելուն, շատ փխրուն էր: Կյանքի դաժանությունը ստիպել էր նրան բռնել միակ որդու ձեռքը և, հակառակ իր կամքին, գցել անհայտության ծովը: Ես գնում էի մի երկիր՝ տարբեր աշխատանքներ անելու: Հորս անսպասելի սնանկությունը մեզ վերցրել էր թանկագին գորգերից և տարել հակառակ ուղղությամբ: Ես չունեի գոյության կռվի համար ոչ մի միջոց, բացի իմ պատանի հասակից և պողպատյա առողջությունից: Բայց ես, ի հեճուկս կյանքի դառնությունների, գտա իմ աշխատանքը:

15. Տրված նախադասություններից քանիստ՞նքն ընդգծվածները դերբայական դարձվածներ չեն (նախադասությունները կետադրված չեն):

- Նավապետի ձայնն այլևս նախկին վստահությամբ չէր հնչում մարդն ընկճվել էր **նկատվելու չափ:**
- Չորացած սալորը նրան չէր օգնել թեև ինչպես երևում էր **շուրջը թափված** կորիզներից շատ էր կերել:
- Նրա փոքրիկ գլուխն անգոր ընկել էր կրծքի վրա և օրորվում էր աջ ու ձախ **թելի վրա կախված** տանձի նման:
- Փոթորիկը նրա կիսամերկ մարմնի վրա չէր ազդել ինչպես հողմերը չեն ազդում տերևաթափ և **չորացած կաղնու վրա:**
- Կյանքի պարզկենդան արժանանալու համար պետք է **մարդկանց սիրտը շահելու** շնորհք ունենալ:
- Նա ոչինչ չասաց պարզ էր որ նա իմ խորապես հուզված ձայնի մեջ և **գունատված դեմքի վրա** զգաց ինչ-որ սպառնալիք:

16. Բարդ ստորադասական նախադասություններից քանիստ՞ն հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն կա:

- Գտա՞ք մեկին, որ հավատար, թե դեռ բրդե խանձարուրից Մատուցել էք բերդ ու ոստան, Վանք ու մատուռ Հայաստանին:
- Հաջողությունը ժպտում է նրան, ով լավ գիտի նրանից օգտվելու ձևը:
- Վերջապես մոտեցանք մի շենքի, որ չորս կողմից պատված էր աշտարակավոր պարսպով:
- Եվ ահա հայտնվում է նա, ում, պարզվում է, սպասել էիր ողջ կյանքիդ ընթացքում:

17. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված պարզի:

- *Ոչ որ չի ստուգել, թե որ պահից են սկսում ստել մանուկները:*
Ոչ որ չի ստուգել մանուկների՝ ստել սկսելու պահը:
- *Ես խուսափում էի մորեղբորս տուն գնալուց, որովհետև նրա կինը մի անբարեհամբույր արարած էր:*
Ես խուսափում էի մորեղբորս տուն գնալուց նրա կնոջ անբարեհամբույր բնավորության պատճառով:
- *Գուցե ինձ ծովը նետեի, եթե լինեի բավականաչափ քաջ և բավականաչափ հիմար:*
Գուցե ինձ ծովը նետեի բավականաչափ քաջ և բավականաչափ հիմար լինելուս դեպքում:
- *Ես շտապեցի հեռանալ դժբախտ կնոջ մոտից, որպեսզի փարատեմ ծանր տպավորությունս:*
Ես շտապեցի հեռանալ դժբախտ կնոջ մոտից՝ ծանր տպավորությունս փարատելու համար:

18. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:

- *Ամենաբարձր դիրքի հասածները ավելի հաճախ են մոլորեցնում սովորական մարդկանց:*
Ովքեր հասել են ամենաբարձր դիրքի, ավելի հաճախ են մոլորեցնում սովորական մարդկանց:
- *Բարեկամներին ճշմարտությունն ասելու համար հաճախ ցավ ենք ապրում:*
Ցավ ենք ապրում, քանի որ բարեկամներին հաճախ ասելու ենք ճշմարտությունը:
- *Քնած մանկան նման գեղեցիկ է հուսահատ ողբացողը:*
Հուսահատ ողբացողը գեղեցիկ է՝ նման այն մանկանը, որ քնած է:
- *Հավերի չթռչելու պատճառը մշտապես կուշտ ու սպառնով լինելն է:*
Հավերը չեն թռչում, քանի որ մշտապես կուշտ ու սպառնով են:

19. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

- *Յուրաքանչյուր երևույթ, հասնելով ուռճացման ծայր կետին, միշտ վերափոխվում է իր հակոտնյային:*
Յուրաքանչյուր երևույթ, որը հասնում է ուռճացման ծայր կետին, միշտ վերափոխվում է իր հակոտնյային:
- *Մեր քաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի հանդիպելիս հրացանը հենում են կենդանու եղջյուրների վրա ու կրակում:*
Երբ մեր քաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի են հանդիպում, հրացանը հենում են կենդանու եղջյուրների վրա ու կրակում:
- *Թուրք մոլլայի զիլ ձայնը կոչ էր անում հավատացյալներին՝ փառաբանել երկնային տիրոջը:*
Թուրք մոլլայի զիլ ձայնը կոչ էր անում հավատացյալներին, որ փառաբանեն երկնային տիրոջը:
- *Ճերմակ մորուքով զարդարված նրա բարի դեմքը անբացատրելի հմայք էր տալիս ծերունի վարպետին:*
Ծերունի վարպետի բարի դեմքը, որ զարդարված էր ճերմակ մորուքով, անբացատրելի հմայք էր տալիս նրան:

20. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:

- *Եվրոպայի՝ հայոց անլուր ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածք ընդունելը հավիտենական ամոթի խարան է նույն այդ Եվրոպայի ճակատին:*
Այն, որ Եվրոպան հայոց անլուր ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածք ընդունեց, հավիտենական ամոթի խարան է նույն այդ Եվրոպայի ճակատին:
- *Նրա դերասանական տաղանդը, ավա՛ղ, սահմանափակված էր դերասանի խառնվածք կոչվող այդ խոչընդոտով:*
Նրա դերասանական տաղանդը, ավա՛ղ, սահմանափակված էր այդ խոչընդոտով, որ դերասանի խառնվածք է կոչվում:
- *Անվերապահ դրվատանքներ հյուսելու համար չգրեցի այս գիրքը:*
Նրա համար չգրեցի այս գիրքը, որ անվերապահ դրվատանքներ հյուսեմ:
- *Թագուհին սկսեց արտասվել՝ այլևս անկարող լինելով դիմադրել սրտի հուզմանն ու հոգեկան խռովքին:*
Թագուհին, որ այլևս անկարող էր դիմադրել սրտի հուզմանն ու հոգեկան խռովքին, սկսեց արտասվել:

21. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:

- *Բանտում Սիմոնին հանդիպածներից չկարողացանք որևէ բան իմանալ նրա մասին:*
Նրանցից, ովքեր բանտում հանդիպել էին Սիմոնին, չկարողացանք որևէ բան իմանալ նրա մասին:
- *Գագիկ Արծրունին էլ հազարացիների հետ էր միացել Բագրատունյաց հարստությունը ջնջելու հույսով:*
Գագիկ Արծրունին էլ հազարացիների հետ էր միացել, որպեսզի ջնջեր Բագրատունյաց հարստությունը:
- *Գարդմանա իշխանը չէր կարողանում ընտրություն կատարել իր գեղանի դստեր ձեռքը խնդրողների միջև:*
Գարդմանա իշխանը չէր կարողանում ընտրություն կատարել նրանց միջև, ովքեր խնդրում էին իր գեղանի դստեր ձեռքը:
- *Գաբրիել Սունդուկյանը արևմտահայության տառապանքներին առաջինն արձագանքողներից մեկն էր:*
Գաբրիել Սունդուկյանը առաջիններից մեկն էր, որ արձագանքեց արևմտահայության տառապանքներին:

22. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:

- *Երևի խեղճ աղջկան հուսահատեցրել են՝ անհնարին համարելով նրա ամուսնությունը արքայորդու հետ:*
Երևի խեղճ աղջկան հուսահատեցրել է այն, որ անհնարին են համարել նրա ամուսնությունը արքայորդու հետ:
- *Գուգարքը նվաճելուց և Վասակ ու Աշոտ Գնթունի իշխաններին հանձնելուց հետո նա անցավ Վրաստանի սահմանը:*
Երբ Գուգարքը նվաճեց և հանձնեց Վասակ ու Աշոտ Գնթունի իշխաններին, նա անցավ Վրաստանի սահմանը:
- *Ինչո՞ւ, սակայն, իշխանից գաղտնի պահեցիր քո ով լինելը:*
Ինչո՞ւ, սակայն, իշխանից գաղտնի պահեցիր, թե ով ես դու:
- *Կաթողիկոսին եկեղեցու անմիաբան համայնքները միավորելու հորդոր էին հղել:*
Կաթողիկոսին հորդոր էին հղել միավորելու եկեղեցու այն համայնքները, որոնք անմիաբան էին:

23. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:

- *Գրելու այս դժվարությունը բացատրվում էր Շիրվանգադեի՝ իր գործի հանդեպ ծայրահեղ խստապահանջ լինելով:*
Գրելու այս դժվարությունը բացատրվում էր նրանով, որ Շիրվանգադեն ծայրահեղ խստապահանջ էր իր գործի հանդեպ:
- *Դժվարանում էինք որևէ սփոփիչ խոսք ասել՝ վախենալով նրա ծայրահեղ հուսահատ հոգեվիճակից:*
Դժվարանում էինք որևէ սփոփիչ խոսք ասել, քանի որ վախենում էինք նրա ծայրահեղ հուսահատ հոգեվիճակից:
- *Որոշ գրողներ էլ, հրատարակած լինելով մի քանի ժողովածուներ, այնուամենայնիվ դեռևս սկսնակ են կոչվում:*
Որոշ գրողներ էլ, որոնք հրատարակել են մի քանի ժողովածուներ, այնուամենայնիվ դեռևս սկսնակ են կոչվում:
- *Այդ տարիների իշխանություններին միշտ քծնողաբար դրվատելն անգամ Ջապելին չփրկեց բանտ ընկնելուց:*
Անգամ այն, որ միշտ քծնողաբար դրվատում էր այդ տարիների իշխանություններին, Ջապելին չփրկեց բանտ ընկնելուց:

24. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

- *Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ մոռացության են տալիս անցյալում մեր ապրած քաղցր պահերը:*
Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ մոռացության են տալիս մեր այն քաղցր պահերը, որ ապրել ենք անցյալում:
- *Նա իմ աչքում բարձրացավ՝ հատկապես արևմտահայ գրականությանը քաջատեղյակ լինելով:*
Նա իմ աչքում հատկապես բարձրացավ, որովհետև քաջատեղյակ էր արևմտահայ գրականությանը:
- *Մեր գրականության երախտավորների մասին նրա գրածը անվերապահ վստահության է արժանի:*
Այն, ինչ գրել է նա մեր գրականության երախտավորների մասին, անվերապահ վստահության է արժանի:
- *Ի՞նչ գիտեի հայության մասին ես՝ հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում ապրածս:*
Ի՞նչ գիտեի հայության մասին ես, որ ապրել էի հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում:

25. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

- *Քննադատության հանդեպ նրա արհամարհանքը առաջ էր եկել նախկինում անարդարացի ու աչառու քննադատության ենթարկվելուց:*
Քննադատության հանդեպ նրա արհամարհանքն առաջ էր եկել, երբ նախկինում անարդարացի ու աչառու քննադատության է ենթարկվել:
- *Թիֆլիսը սիրեց ինձ, փայփայեց ու գուրգուրեց իմ ծննդավայրը մոռանալ տալու աստիճան:*
Թիֆլիսը սիրեց ինձ, փայփայեց ու գուրգուրեց այնքան, որ մոռացա իմ ծննդավայրը:
- *Խնդրեցի մի նավաստու իրավիճակի մասին մի երկտող հասցնել հարազատներիս:*
Խնդրեցի, որ մի նավաստի իրավիճակի մասին մի երկտող հասցնի հարազատներիս:
- *Հեծյալների՝ Սահակ Սևադայի ապարանքին հասնելուց հետո իշխանը միայնակ առաջ անցավ:*
Երբ հեծյալները հասնում էին Սահակ Սևադայի ապարանքին, իշխանը միայնակ առաջ անցավ:

26. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:

- *Դիմելով դահլիճում նստած հայ հրամանատարներին՝ զեներայն ասաց, որ ինքը զարմանում է, թե ինչու ռազմաճակատում անհաջողությունը հետապնդում է իրենց, երբ նրանց հրամանատարությամբ հայ զինվորները կռվում են անձնագոհաբար:*
Դիմելով դահլիճում նստած հայ հրամանատարներին՝ զեներայն ասաց.
- Չարմանում եմ, թե ինչու ռազմաճակատում անհաջողությունը հետապնդում է ձեզ, երբ ձեր հրամանատարությամբ հայ զինվորները կռվում են անձնագոհաբար:
- *Տեր Մարտիրոսն ասաց, որ իր ատրճանակը պահում է վերջին օրվա համար և հավանաբար դրանով էլ վերջ կտա իր կյանքին, եթե այլ ելք չտեսնի:*
- Ատրճանակս պահում եմ վերջին օրվա համար, - ասաց տեր Մարտիրոսը, - և հավանաբար դրանով էլ վերջ կտամ կյանքիս, եթե այլ ելք չտեսնեմ:
- *Նա ինձ հիշեցրեց, որ մենք ծանոթացել ենք անցյալ տարի, երբ նույն գնացքով վերադառնում էինք. ես՝ մեր փորձակայանից, ինքը՝ իրենց ամառանոցից:*
- Մենք ծանոթացել ենք անցյալ տարի, - հիշեցրեց նա ինձ, - երբ նույն գնացքով վերադառնում էինք. Դուք՝ Չեր փորձակայանից, ես՝ մեր ամառանոցից:
- *Օրիորդ Սահակյանը Եվային ասաց, որ ինքը եկել է՝ նրան ուրախացնելու. ինքն այսօր նամակ է ստացել Աշխենից. տոներին նա այցելելու է իրենց:*
- Եկել եմ՝ քեզ ուրախացնելու, Եվա, - ասաց օրիորդ Սահակյանը. - այսօր նամակ եմ ստացել Աշխենից. տոներին նա այցելելու է մեզ:

27. Տրված նախադասության մեջ քանի՞ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Դիմացը նեղ ձորն էր ճանկոված վերքի նման լեռների ճերմակ մարմնին կպած ձորում հայրենի գետը սառցակեղև քարերի մեջ խեղդված և մանկության արահետը որ թփերի մեջ գալարվելով ձգվում էր դեպի գյուղ:

28. Տրված նախադասության մեջ քանի՞ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Փրփրահույզ ծովն էլ ասում են մարդու պես հոգի ու ճակատագիր ունի և մարդու պես թախծում է ու ցնծում պտոթկում փոթորկվում է ու հանդարտվում տառապում սառցե շոթաների ներքո և գարնան արևի առաջին շողերի հետ մոլեգնում ու կարեվեր խոցված գազանի նման փշրում է կապանքները:

29. Տրված հատվածում քանի՞ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Այնուամենայնիվ նա աստիկ ձանձրանում էր գյուղն իր տեղը չէր ու ինքն էլ այլ պլաններ էր ուղեղում փայփայել: Ամուսնու գրույցները փողոցի մայթի պես տափակ էին առանց անուրջների հուզականության ու երևակայության: Նա չէր հետաքրքրվում թատրոնով կամ ձիարշավով գրականությամբ կամ սուսերամարտով մինչդեռ ինքնաբավ ժպտում էր նայելով իր կնոջը: Ինչը ստիպեց ընդառաջ գնալու ամուսնու անհեթեթ առաջարկին Էմման չէր կարողանում բացատրել: Ամեն կին էլ երբևէ ասպրում է նման հոգեվիճակ ամուսնությունից հետո բայց ինքը ներքուստ ընդդիմանում էր և իր և իր կարգավիճակի դեմ ներքին ընդվզումը միակ սփոփանքն է նման վիճակում:

30. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Գնացքները շարունակում էին գնալ մեկ այս մեկ այն կողմ դորդացնելով ծանր անիվների տակ ճգմվելուց հոգնած գետիմը: Ինչքան տարածություն ու լույս կա դժվարանում էր միանգամից ընկալել: Իսկ մարդուն միևնույնն է միշտ մի բան պակասում է մտածում էր նա նայելով անձայրածիր տափաստանին: Իսկ մարդկանցից դուրս լինելով մարդը չի կարող ասպրել բայց նաև դժվար է մարդկանց հետ: Էհ հիմա ինչ անեմ որ ցանցն ընկած ամեն մեկն էլ վարվի այնպես ինչպես կթելադրի բանակամությունը ոչ թե հանցակիցների սահմանափակ ուղեղը: Եվ կարևոր է քայլն արվի ոչ այն պատճառով որ ունակ չէ հաղթահարելու իր մեջ գազանին: Միթե չկա հնար կամ ոչինչ չի փոխվելու:

31. Տրված հատվածում քանի՞ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Փարիզը փայլփլում էր Էմմայի աչքերում ասես լինելով շքեղ խաղալիք: Համատարած ժխորի մեջ հերթագայող պատկերները արագ հեռանում էին չթողնելով վառ տպավորություն: Դա մարդկային մի ամբողջական պատկերասրահ էր տարակերպ տարաստիճան ցույց ու կեղծ: Շքեղ տախտակամածներին ճեմող դեսպաններ էին հայելապատ դահլիճներում հասարակության սերուցք թավշյա ծածկոցներով ձվածև սեղանների շուրջ գլխիչ կուրտիզանուիներ օպերային նախասրահներում փետրազարդ գլխարկների ձյունաթույր օձիքների դիմակավորված ժպիտների շքերթ: Անշուշտ միշտ այդպիսին է եղել Փարիզը որի մեջ երբեմն գլխապտույտ էր զգում և նրան թվում էր անսովոր այդ աշխարհը օտար վանող կամ ձգողական մի օր կարող էր իրեն էլ ընդունել ինչը սակայն միայն թվում էր բերելով հեռվից դյուրող մի աշխարհի անդիմադրելի մղում:

32. Տրված հատվածում քանի՞ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Կամսարյանը լռեց կանգնած մնալով ձորաբերանի քարաժայռին հայացքով հետևելով հեռացող մեքենային: Փռչին ցրվեց և հսկայական խռոչը անմիջապես երևաց: Նա գիտեր ողորպատույտ ճանապարհի ամեն մի կիլոմետրը պայթյունի հատվածից ճանապարհը գահավիժում էր ցած: Նայեց շուրջը գյուղն անդորր նիրհի մեջ էր: Հանկարծ կամրջին սովերներ նշմարվեցին դարբիններն էին: Սի պահ քարացավ ամեն մեկի ձեռքին իր հուշարձանի քարն էր ու առաջանում էին ծանր լռությունը ոտնակոխ տալով: Առջևից ընթացողները երեքն էին պապ որդի ու թոռ: Ավելի ուշադիր զննեց երեքն էլ բարձրահասակ էին:

33. Տրված հատվածում քանի՞ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Ներս մտավ անորոշ տարիքի դեմքի անորոշ արտահայտությամբ մի մարդ ոչ գեղեցիկ էր ոչ տգեղ: Նրան շրջապատում յուրաքանչյուրը մի անունով էր դիմում ոմանք Իվան Վասիլիչ իսկ ոմանք Իվան Իլյիչ: Ազգանունը էդ մեկը ինքս էլ հստակ չեմ հիշում ևս տարբեր կերպ էին տալիս և նա երբեք ճշգրտում չէր մտցնում չէր ընդվզում: Ազգանունը լսելիս եթե մարդ չի ճշտում չի ընդվզում կամ վիրավորվում որտեղից դիմացինը գլխի ընկնի ինչպես է ճիշտը: Լայրծուն ժպիտով ինչ-որ անորոշ հայացք էր նետում բարևողին ու անցնում անհա տիպիկ քամելեռնի վարքագիծ որ թերևս լավագույնս բնութագրում է նրա նմաններին: Մարդկանց շրջանում նրան չէին էլ նկատում նա ինքն էր չափազանց սուսուփուս հարմարվող ու ծավող:

34. Տրված հատվածի նախադասություններից քանիստ՞ն փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):

Բագրատունյաց Գագիկ արքայի հիմնած ձախլիկ նետաձիգների վաշտը Գրիգոր Մագիստրոսն էր արքային տվել այդ գաղափարը եզակի էր իր տեսակի մեջ: Նրանցից ոչ մեկը ինչպես պարզվեց չէր վրիպում և բոլորի նետերը անվրեպ խոցում էին թիրախը երևի աշխարհի ոչ մի բանակում նման բան չէր գրանցվել զարմացնելով պալատականներին: Մանրակրկիտ քննելով ձախլիկներին հայ բժիշկները եզրակացրին որ ամենայն հավանականությամբ մեծ մասամբ ցորնահաց և ցորենով պատրաստված կերակուր գործածողների չորրորդ սերունդը ձախլիկ է լինում սա իրավամբ զարմանալի փաստ է այսինքն մարդը ձախլիկ է եթե նրա պապի հայրը պապը և հայրը ցորնակերներ են: Հետաքրքիր է մի բան ևս ձախլիկության խնդրին մարդիկ անդրադարձան հազար տարի անց միայն պարզելով մի քանի բան ձախլիկը ճարպիկ է ունի ձիգ կեցվածք ավելի նրբազգաց է աջիկից: Քանի որ ձախլիկի ուղեղի աջ կիսագունդն ավելի գործունակ է ի դեպ աջ կիսագունդում տեսողական պատկերն ավելի արագ է հայտնվում նա ավելի շուտ է կողմնորոշվում և ավելի մեծ ճարպկություն դրսևորում:

35. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ չկա:

- Եվ մի լուռ իրարանցում սկսվեց. տանտիրուհին թեքվում, երեխաների ականջին ինչ-որ բաներ էր ասում և ճամփու դնում:
- Հիմա էլ նույն զգացումն են ապրում Միացյալ Նահանգներում՝ զարմանք պատճառելով թե՛ ուղեկիցներին և թե՛ հյուրընկալ հայրենակիցներին:
- Եվ որոշում են՝ տուն հասնելուս հենց հաջորդ օրը ավտոմեքենա պիտի նստեն ու գնան Թալինի շրջանի Վերին Սասնաշեն գյուղը:
- Քամին Արագածի արևի ոսկեգոծումից զարթնող բնության թուլչական գրկում աստղերի արցունքից գոյացած վճիտ լճակի փաղաքուշ հովը կբերի, հորդացած ջրերի խենթությունն ու ծաղիկների նրբաբույրը:
- Ուզեցի ափսոսանքով հրաժեշտ տալ, մի ուրիշ անգամ այցելելու խոստումով, բայց այդ լեռնուհին փխրուն ու փոքրամարմին, մեծ ուժով բռնեց թևերիցս՝ նստեցնելով սեղանի մոտ:

36. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ չկա:

- Դժվար էր ասել երբ և ով էր կորիզը նետել եկեղեցու գմբեթին, բայց ավելի դժվար էր ըմբռնել՝ ինչպես էր կորիզը, հարմարվելով ճեղքում, ծիլ տվել:
- Գիտեմ՝ եկող զարնանն էլ ծառը կծաղկի, հետո պտուղ կտա, և գյուղի տղաների հերթական սերունդը չհամբերելով կմագլցի վեր՝ պոկելու դեռևս կանաչ պտուղները:
- Հետո նրանք կնստեն վերևում՝ կիսավեր գմբեթի վրա, կսեղմվեն իրար՝ ճգնելով տեղավորվել ծիրանենու հովից թրթռացող ստվերում:
- Նայելով ծառին՝ ես անընդհատ զարմանում ու մտքումս հարց են տալիս.
- Ինչպե՞ս ես դիմանում, ծիրանի՛ ծառ:

II ՏԵՄԱԿ

37. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում շարադասության սխալ կա:

1. Հայագգի մեծանուն ճարտարապետ Սինանի կառուցած Սելիմիե մզկիթը համաշխարհային ճարտարապետությանը հայտնի է որպես օսմանյան ճարտարապետական գլուխգործոց:
2. Վաղուց ի վեր մարդիկ աստղային երկինքը համաստեղությունների են բաժանել, և դրա վառ ապացույցն է Կենդանակերպը:
3. Աշխարհի հնագույն բնակավայրերից մեկը, որտեղ խաղող է մշակվել, գտնվում է Արցախի Հաղորթի շրջանում և կոչվում է Ազոխ, այսինքն՝ խակ խաղող:
4. Հայ ժողովրդի վաղնջական ժամանակներից բոլոր խավերը օգտագործել են զվարթացնող ըմպելիքը՝ գինին, և այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Հայաստանը խաղողագործության դասական երկիր է:
5. Հաշվի առնելով, որ գինարբուքը գայթակղիչ է, և արքունականներից շատերը հրապուրվում են դրանով, Վաղարշակ թագավորը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում կերուխումի և զբոսանքների համար:

38. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում շարադասության սխալ կա:

1. Պարադոնտիտը լնդաբորբն է, հետագա ատամների քայքայումը և արդյունքում՝ ատամի կորուստը:
2. Գինեգործության և խաղողագործության ասպարեզում ամենահեղինակավոր ուսումնասիրողներից մեկը՝ Վիկտոր Հենը, «Կենդանիների ու բույսերի դեզերումները» գրքում հաստատում է, որ գինու իրական հայրենիքն այն բարեբեր երկրամասն է, որ Կովկասի, Արարատի և Տավրոսի միջև է ընկած:
3. Նախկին կրթության և գիտության նախարարը վերջերս իր հեռուստատեսությամբ խոսում էր կրթության ոլորտի թերությունների մասին:
4. «Արդշինիմվեստ» բանկի ցանկացած Երևանի մասնաճյուղից կարող եք ձեռք բերել կուտակային քարտեր:
5. Ճապոնացի գիտնականները մի քանի տարի շարունակ ուսումնասիրություններ են անցկացրել՝ հայտնաբերելու համար այն բուսատեսակները, որոնք կարող են պայքարել օդի աղտոտվածության դեմ:

39. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում համաձայնության սխալ կա:

1. Յավոք, Դուք այն գրողներից եք, որ կարծում են, թե իրենց չի հասկանում ոչ ոք, քանի որ իրենք բարձր են բոլորից:
2. Իմ ներկայացրած փաստարկումները համոզիչ է, այդ պատճառով էլ պնդում եմ, որ հարցը դրվի քննարկման:
3. Մարգարեների համալիրը ապահովում է բոլոր մկանների մասնակցությունը, լավացնում օրգանիզմի ընդհանուր վիճակը:
4. Մշտական մարգարեն ու վարժությունը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, որը բնութագրվում է սրտի՝ մարմնի բջիջներին անհրաժեշտ թթվածին մատակարարելու կարողությամբ:
5. Նա իր թիմի հետ կմասնակցի առաջիկա մրցումներին:

40. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ: Նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառության սխալ կա:

1. Բոլորին կարելի է ինչ-որ կերպ հասկանալ և ներել՝ բացառությամբ ձեր դասարանից:
2. Տիեզերական առաջին զբոսաշրջիկը դա ամերիկացի գործարար Դենիս Տիտոն է, որը 2001 - ին տիեզերք է բարձրացել երկու աստղանավորողների հետ:
3. Մոլորակի լեռներն առաջացել են բարդ ընդերքային գործընթացների հետևանքով:
4. Ըստ Շառլ Դիլի՝ հինգ հայկական նշանավոր կոթող են Աղթամարի Սուրբ Խաչը, Էջմիածնի Հռիփսիմեի տաճարը, Գանձատարի վանքը, Հաղպատի համալիրը, Անիի Մայր տաճարը:
5. Բացի քո վերաբերմունքը քո իսկ ընկերների նկատմամբ, կարևոր էին նաև բազմաթիվ այլ հանգամանքներ ձեր հարաբերություններում:

41. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ: Նշել այն նախադասությունների համարները, որոնցում համաձայնության սխալ կա:

1. Նա մի փոքր մտածեց և վերահասու դառնալով կատարվածին՝ բարձրաձայն ասաց, որ անխուսափելի է կտրուկ քայլերը. իրավիճակն այլ կերպ շտկել չի լինի:
2. Մարգաշխարհի «Էպիկենտրոն»-ի լուրերը կհեռարձակվեն ժամը 7-ին:
3. Հնագույն աստղադիտարանը նախատեսված են երկնային լուսատուների շարժը դիտելուն և ժամանակը չափելուն:
4. Եթե դուք նկատի ունեք մեր մասին, մենք խուսափում ենք այդ միջոցառմանը մասնակցելուց:
5. Նախարարը ներկա է եղել հայոց լեզվի և գրականության քննությանը, ով դրական է գնահատել ընդունելության գործընթացը:

42. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Վերը երկնի լազուրում ճախրում էին ծիածանաթև հավքերի երամները:
2. Նա հուժորի ու երգիծանքի անսպառ պաշարներ ունեցող մարդ է այն եզակիներից է որ այդ հուժորն ու երգիծանքը նախ և առաջ ինքն իրեն է ուղղում:
3. Մենք հայաստանցիներս մի մեծ խումբ ութսունվեցի հոկտեմբերին վայրէջք կատարեցինք Բուենոս Այրեսի օդանավակայանում:
4. Դպրոցից մի քիչ հեռու իրենց տան առաջ ծիրանենու տունկերն էին ձգվում արևի ոսկեգոծ ճաճանչների տակ:
5. Իբրև փորձառու ռազմագետ նա գիտեր որ թշնամին շատ անգամ հարձակվում է չսպասված ժամանակ:
6. Ամեն անգամ օտար երկրներում շրջագայելիս նոր աշխարհներ տեսնելու հաճույքի հետ մեջս միշտ ապրել է տուն վերադառնալու սպասման երանությունը:

43. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարզ ստորոգյալ կա:

1. Ջաղացը, անուշ-անուշ մտմտալով, մանուկ օրերից մի հեքիաթ է պատմում:
2. Ինչ որ մեզ համար վերջալույս է, այլոց համար արշալույս է:
3. Այսուհետև անհնար է հավատալ մարդուն:
4. Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պետք է կռվել և հետ բերել մեր կորցրած հայրենիքը:
5. Ոչ մի անհատ հասարակական կարծիքից ազատ չէ և չի կարող շրջանցել այն:
6. Ինձանից առաջ շատերն են այդ ցավը զգացել:

44. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անուղղակի խնդիր կա:

1. Ամառվա երկարատև, տոթ օրվա ավարտին քիչ էր մնացել: 2. Պառավ կինը և նրա երկու փոքրիկ թոռները ծալապատիկ նստել էին թախտին և ինչ-որ բան էին ուտում: 3. Սպիտակ սփռոցի վրա փայլում էր մի փոքրիկ լամպ, որին էլ մոտեցավ հոգնատանջ պառավ կինը: 4. Նրանց կերածը փռի սև հաց էր և կիսախակ մի ձմերուկ, որի գույնը դժվար էր որոշել: 5. Լամպի լույսն իր շուրջը հավաքել էր ահագին թվով մանր մժեղների, որոնք պտույտ էին գալիս տաք ապակու շուրջը, թափվում ներքև: 6. Պառավ Հեղնարը ցամաքած, կուչ եկած մի կին էր՝ դեմքի անհամար խորշոմներով: 7. Հարատև չքավորությունն ու բախտի ծանր հարվածները ծռել էին նրա մեջքը և իրենց անջնջելի կնիքը դրոշմել նրա դեմքի կնճիռների և թախմալի աչքերի մեջ: 8. Թոռները որք էին, և պառավ տատի խնամքն անհրաժեշտ էր նրանց:

45. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկ ձևի պարագա կա:

1. Զեզ բախտն ուր էլ տարավ,
Մտքով քո տանն էիր,
Դու կիրճերում փրփրած
Քո Որոտանն էիր:
2. Ես չիմացա, թե ինչու,
Դու չիմացար, թե ինչպես
Պատահեցին մեկմեկու
Մեր երազներն առանց մեզ:
3. Մի դատարկված ամպի նման
Եկել եմ ես,
Որ ջուր տանեմ քո ձորերից
Դաշտի ծարավ ծաղիկներին:
4. Կանգնել է նա լուռ ու հանդարտ.
Քայլեց, պիտի հետը տանի,
Բայց ո՞ր տանի այս մի պատառ
Ինքնությունը Հայաստանի:
5. Ու դողում է հասակով մեկ
Մանկությունս վայրի,
Վախենում է՝ հրդեհի մեջ
Յնցոտիներն այրի:

46. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը դերբայական դարձված է:

1. Եվ այդ ժամանակ դուք կարող եք տեսնել **խկապես լավ խաղալիս:**
2. **Դուրս գալու տենդագին ու մշտական ցանկությամբ** նա իրեն պատեպատ է տալիս:
3. **Խաղացողի դիմաց կանգնած** մի քանի բախտախնդիրներ եկել էին այստեղ՝ իրենց բախտը փորձելու:
4. **Նրա դեմքից դատելով՝** քսանհինգ տարեկան կլիներ, և մոլությունը նրա մոտ պատահական բան չէր:
5. Նրանց **բոցկլտացող, փայլող ու ժպտացող** աչքերը հուշում էին, որ նրանց համար ամեն ինչ դեռ առջևում է:
6. Ծերունի դռնապանը, **նկատելով գլխարկի գզգզված վիճակը,** վերադարձրեց այն:

47. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածը կատարում է հանգման անուղղակի խնդրի պաշտոն:

1. Իրենից խորհուրդ հարցնողներին երբեք հուսախաբ չէր անում:
2. Ստուգում էր ձայնագրված ժապավենները՝ պարզելու դրանց պարունակությունը:
3. Արվեստի երկու հսկաների հոգում անթեղված կայծը հրդեհ է դառնում ներկա ժամանակի մարդու համար:
4. Նա սպասում էր հրավիրյալների ներս մտնելուն:
5. Տանջանքից փախչողները դառն ու թշնամի անապատում գտան իրենց մահը:

48. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածի պաշտոնը ճիշտ է նշված:

1. Նոյեմբերյան մի օր ես գնացի հյուրանոց՝ նրան վերցնելու: *(նպատակի պարագա)*
2. Ռեստորանում իմ տեղը վերադառնալիս հանդիպեցի մի հին ծանոթի, որը շատ էր փոխվել: *(ժամանակի պարագա)*
3. Ես քեզ հայտարարում եմ, որ իշխանությունը կամ գրական մեծ համբավ նվաճելը ինձ թվում էր հեշտագույն հաղթանակ: *(ենթակա)*
4. Իմ մեջ եռացող այս անսահման ինքնասիրությունը ինձ այդ պահին լիովին փրկեց: *(որոշիչ)*
5. Բայց նա այդքան շուտ հուսահատվողներից չէ, նրան չի կարելի ընկճել: *(ստորոգելի)*
6. Ես որոշեցի անհապաղ վրեժ լուծել հասարակությունից, իշխել մարդկանց մտքերին: *(անջատման խնդիր)*

49. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված անդամի պաշտոնը սխալ է նշված:

1. Եվ նորից խորհում է տիեզերքի **մեծության մասին:** *(ուղիղ խնդիր)*
2. Ամռան մի օր՝ **լճից վերադառնալիս,** երկու հոգի ծեծել էին նրան: *(ժամանակի պարագա)*
3. Աննկարագրելի է այն զգացումը, որ ստացա այդ **հայացքից:** *(անջատման խնդիր)*
4. Կարոտով նայում էր իր վաղեմի **բնակարանին:** *(հանգման խնդիր)*
5. **Քրմապետի խորհրդով** նա որդուն տարավ աստվածների դուռը: *(հիմունքի պարագա)*
6. **Այծյամի պես** մի աղջիկ անդադար խոսում է ու խոսում: *(ձևի պարագա)*

50. Նշել այն տարբերակների համարները, որոնցում միակազմ նախադասություն կա:

1. Ինձ թվում է՝ հիմա ես լսում եմ գրոհող հեծելազորի դոփյունը:
2. Բացարձակապես անվախ է, որովհետև անտառի մասին գիտի ամեն ինչ:
3. Մնում է, որ մենք էլ հետևենք նրա օրինակին:
4. Ամեն անգամ գետը գերան չի բերի:
5. Այդ գիշեր բարձրացավ մի կատաղի քամի:

51. Նշել այն նախադասությունների համարները, որոնք բարդ համադասական են:

1. Ամառվա երկարատև, տոթ օրը նոր էր մթնել: 2. Պառավ Հեղնարը և նրա երկու փոքրիկ թոռները՝ մեկը տղա, մյուսն աղջիկ, ծալապատիկ նստել էին թախտի վրա և ինչ-որ բան էին ուտում: 3. Կապույտ սփռոցի վրա պսպրում էր մի փոքրիկ լամպ, որ չմաքրած ապակու միջից պղտոր լույս էր սփռում նրանց հոգնատանջ, քրտնած երեսներին: 4. Նրանց կերածը փռի սև հաց և կիսախակ մի ձմերուկ էր, որի գույնը դժվար էր որոշել: 5. Լամպի լույսն իր շուրջը հավաքել էր ահագին թվով մանր մոծեղներ, որոնք պտույտ էին գալիս տաք ապակու շուրջը: 6. Պառավ Հեղնարը ցամաքած, կույ լեկած մի կին էր՝ դեմքի անհամար խորշումներով: 7. Հարատև չքավորությունն ու բախտի ծանր հարվածները ծռել էին նրա մեջքը և իրենց անջնջելի կնիքը դրոշմել նրա դեմքին: 8. Թռռները որբ էին և մնացել էին պառավ տատի խնամքի տակ: 9. Նրա դեմքի ու ձեռքերի կաշին եռացրած ջրի ու թոնրի կրակի մեջ չորացել, ճաքճքել, մագաղաթ էր դարձել:

52. Նշել նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:

Ամբողջ օրը գրոսնելուց հետո նա տուն էր վերադառնում բարձր տրամադրությամբ. ժայռերի շիկացած լանջերից իջնող ուրցաբույր գեփյուռը շոյում էր նրա գրգռված նյարդերը և պարզևում հոգեկան անդորր:

- 1. **ամբողջ օրը** – ժամանակի պարագա, **նա** - ենթակա
- 2. **վերադառնում էր** – պարզ ստորոգյալ, **տրամադրությամբ** - ձևի պարագա
- 3. **ուրցաբույր** – որոշիչ, **գեփյուռը** - ենթակա
- 4. **նրա** - հատկացուցիչ, **գրգռված** – որոշիչ
- 5. **նյարդերը** - ենթակա, **հոգեկան** – որոշիչ

53. Նշել նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:

Հինգ նյարդային օր տևեց սպասումը, և առավոտյան ես ու Ռատուլը ազարակների վաճառքի գործակալության տիրուհու մոտ գնացինք, որն իր կարծիքը հրամցրեց գյուղի տների մասին:

- 1. **հինգ** - չափի պարագա, **տևեց** – պարզ ստորոգյալ
- 2. **սպասումը** - ենթակա, **առավոտյան** – ժամանակի պարագա
- 3. **Ռատուլը** - ենթակա, **ազարակների** – հատկացուցիչ
- 4. **տիրուհու մոտ** – տեղի պարագա, **որն** - ենթակա
- 5. **իր** – հատկացուցիչ, **տների մասին** – վերաբերության անուղղակի խնդիր

54. Նշել նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:

Պոլսից հետո, որտեղ երկրորդ ձերբակալումից Չոհրապը մի կերպ էր գլուխն ազատել, Փարիզում կյանքը նոր իմաստ էր ստացել քառասունյոթամյա գրողի համար. հիմա նա վերջապես զգում էր ապրելու հրճվանքը:

- 1. **որտեղ** – տեղի պարագա, **երկրորդ** - որոշիչ
- 2. **ձերբակալումից** - անջատման անուղղակի խնդիր, **մի կերպ** – ձևի պարագա
- 3. **հիմա** - ժամանակի պարագա, **նա** - ենթակա
- 4. **կյանքը** - ուղիղ խնդիր, **քառասունյոթամյա** - որոշիչ
- 5. **զգում էր** - պարզ ստորոգյալ, **հրճվանքը** – ուղիղ խնդիր

55. Նշել ենթակա երկրորդականով նախադասությունների համարները:

- 1. Ինչ լավ է, որ մենք վերջապես հանդիպեցինք:
- 2. Մեզ համար մեծ ուրախություն էր, երբ ամբողջ ընտանիքը հավաքվում էր ու միասին ընթրում:
- 3. Ասում են, որ հնաբնակները վաղուց են հայտնվել այս վայրերում:
- 4. Կարծես երեկ էր, որ մենք հանդիպեցինք:
- 5. Սիրում եմ, երբ մարդիկ չեն թերագնահատում իրենց համեստ կարողությունները:
- 6. Դեռ հայտնի չէ՝ երբ են նրանք գալու:

56. Նշել ստորագելի երկրորդականով նախադասությունների համարները:

1. Այստեղ էականն է այն, որ դու մեզ հետ ես:
2. Այս պահին գլխավորն այն է, որ մենք չդավաճանենք ինքներս մեզ:
3. Լավ ընկերը նա չէ, ով ամեն ինչում իր շահն է հետապնդում:
4. Առայժմ այն է հասկացել միայն,
Որ ինքը մեծ ու աններելի սխալ է գործել:
5. Ես նա եմ, հենց նա,
Ով մարդկանց մերժել չի կարողանում:
6. Այդ ո՞վ է ասել՝ նորից եմ սիրում:

57. Նշել հատկացուցիչ երկրորդականով նախադասությունների համարները:

1. Աղջկա լռությունը նշանակում էր, որ ինքը ընդունում է տղայի առաջարկը:
2. Եկեք նաև նրան ներենք,
Ով լռում է հարկադրված:
3. Ովքեր անկյունում էին նստած, նրանց դեմքերը լավ չէին երևում:
4. Նրանց, ում մոտ մենք սովորում ենք, կոչում ենք ուսուցիչներ:
5. Մարդկությունը չի հիշի նրանց անունը, ովքեր կյանքում գեթ մի բարի գործ չեն կատարել:
6. Ես երբեք չեմ մոռանա հայացքը նրա, ում կյանքը հարվածել էր ոչ մեկ անգամ:

58. Նշել բացահայտիչ երկրորդականով նախադասությունների համարները:

1. Սերում են նրանք բոլոր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում:
2. Հատկապես կարևոր է ծիրանի ծառը, որը մեր յուրօրինակ խորհրդանիշն է:
3. Այն բույսերն են, որքան էլ բարձրացավ, դահլիճը քար կտրեց:
4. Իսկ գարնանը, երբ բնությունը զարթոնք է ապրում, ի՞նչ եղեմական ծաղկունք է բացվում այս լեռան վրա:
5. Փրկարար օղակը, որը կախված էր անկողնու վերևում, քեզ ծաղր է թվում:
6. Դու, որ գալիս ես աշխարհը փոխելու, փոխի՛ր նաև ինքդ քեզ:

59. Նշել անուղղակի խնդիր երկրորդականով նախադասությունների համարները:

1. Մենք տեսանք, թե ինչպես արևը կամաց բարձրացավ լեռան հետևից:
2. Ես միշտ հպարտացել եմ նրանով, որ իմ ծնողները հայ են, ու ես հայ եմ ծնվել:
3. Նա երգում էր այն լեռնագագաթների լազուրի մասին, որոնցից ինքը գահավիժել էր:
4. Բոլորը սպասում էին նրանց, ովքեր կռել էին հաղթանակը:
5. Հայրս խորապես հավատում էր, որ ճամփորդությունը կփրկի նրան:
6. Նա խուսափում էր միայն այն բանից, որ որևէ տաղտկալի գործ չհանձնարարեն իրեն:

60. Նշել այն նախադասությունների համարները, որոնց ստորադասի բնույթը սխալ է նշված:

1. Ես չնկատեցի, թե նա ինչպես հեռացավ մեզանից: *(ձևի պարագա)*
2. Մերը հասկանում է միայն նա, ով դա զգացել է: *(ենթակա)*
3. Ով չի վախենում ճշմարտությունից, սոփյա վախենալու բան չունի: *(ենթակա)*
4. Ես անհամբեր սպասում եմ, թե երբ նորից կհանդիպեմ քեզ: *(ուղիղ խնդիր)*
5. Մինչև երեխան լաց չիկնի, մայրը կաթ չի տա: *(պայմանի պարագա)*
6. Այն ժամանակ, երբ այլևս ելք չկար, հայտնվեցիր դու: *(ժամանակի պարագա)*

61. Նշել այն նախադասությունների համարները, որոնց ստորադասի բնույթը ճիշտ է նշված:

- 1. Մինչև հիմա էլ ինձ թվում է, որ իմ այդ ստորագրությունը տպված է ոսկե տառերով: *(ուղիղ խնդիր)*
- 2. Այդ շշուկի մեջ կանացիություն կար այնքան, որ ես նրան պատկերացրի ավազանում լողալիս: *(չափի պարագա)*
- 3. Տարիներ հետո, երբ արտասահմանում հանդիպեցին, երկար վերհիշեցին իրենց պատանեկությունը: *(ժամանակի պարագա)*
- 4. Ես ուզում եմ, որ այժմ մեկն ինձ դաժանորեն խոշտանգի այդ արարքներիս համար: *(ենթակա):*
- 5. Նրա համար ամենաերջանիկն այն օրն էր, երբ առաջին անգամ պետք է գնար համալսարան: *(ստորոգելի)*
- 6. Մեկը կար, որ առաջին հայացքից խելոք էր թվում: *(որոշիչ)*

62. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:

- 1. *Ես հաճախ էի լսում այդպիսի դեպքերի՝ նրա սրտաբուխ ծիծաղով ընդհատվող նկարագրություններ:*
Ես հաճախ էի լսում այդպիսի դեպքերի նկարագրությունները, որ նա ընդհատում էր սրտաբուխ ծիծաղով:
- 2. *Եվ չպետք է մոռանալ երկնքի՝ բոլորինը լինելը:*
Եվ չպետք է մոռանալ, որ երկինքը բոլորինն է:
- 3. *Հրթիռը տիեզերք ուղարկողն ամենաշատը կարիք ունի ջերմ մտերմության, հոգեկան անդորրի ու միասնության:*
Նա, ով հրթիռը տիեզերք է ուղարկում, ամենաշատը կարիք ունի ջերմ մտերմության, հոգեկան անդորրի ու միասնության:
- 4. *Ասես զվարթություն ու խիճղ կա նրա՝ հազար վիշտ տեսած այդ խոհուն հայացքի մեջ:*
Ասես զվարթություն ու խիճղ կա նրա հայացքի մեջ, որ հազար վիշտ է տեսել:

63. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:

- 1. *Երեխան անհամբեր սպասում էր մոր՝ իրեն կերակրելուն:*
Երեխան անհամբեր սպասում էր, թե երբ մայրը իրեն կկերակրի:
- 2. *Մտածում եմ նրանից ինչպես հեռանալուս մասին:*
Մտածում եմ այն մասին, թե ինչպես հեռանամ նրանից:
- 3. *Ես միանգամայն հավատում էի նրա մեղավոր լինելուն:*
Ես միանգամայն հավատում էի, որ նա մեղավոր է:
- 4. *Տղայի համար կարևորը անձնագրություն ցույց տալն է:*
Տղայի համար կարևորն այն է, որ անձնագրություն ցույց տա:

64. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:

- 1. *Հասմիկը շատ էր անհանգստանում որդու՝ գիշերը ուշ տուն գալուց:*
Հասմիկը շատ էր անհանգստանում որդու համար, քանի որ գիշերը ուշ էր տուն գալիս:
- 2. *Ո՞վ կհերքի վշտի՝ մարդուն դժբախտացնելը:*
Ո՞վ կհերքի, որ վիշտն է մարդուն դժբախտացնում:
- 3. *Զգաց իր՝ այլևս այդ անտանելի ճնշմանը չդիմանալը:*
Զգաց, որ ինքն այլևս չի դիմանում այդ անտանելի ճնշմանը:
- 4. *Մեր ճարտարապետական վաղեմի կոթողները չտեսածը թող չխոսի հայրենիքից:*
Նա, եթե չի տեսել մեր ճարտարապետական վաղեմի կոթողները, թող չխոսի հայրենիքից:

65. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:

1. *Ու նա՝ դրախտի շքեղաշուք պարտեզների սիրահարը, սկսեց թախծել ու չտեսնել բնության կատարելությունը:*
Ու նա, որ դրախտի շքեղաշուք պարտեզների սիրահարն էր, սկսեց թախծել ու չտեսնել բնության կատարելությունը:
2. *Ու տեսավ Աստծու ստեղծած մարդկային արարածների այնքա՛ն փոքր լինելը:*
Ու տեսավ, որ Աստծու ստեղծած մարդկային արարածները այնքա՛ն փոքր են:
3. *Տեսավ աշխարհի իրական դեմքը՝ իր բոլոր խոստումների մեջ խաբուսիկ ու դրժող:*
Տեսավ աշխարհի իրական դեմքը, որքան էլ այն իր բոլոր խոստումների մեջ խաբուսիկ էր ու դրժող:
4. *Ազահ տիրակալը դավեր էր նյութում ազդեցիկ իշխանների դեմ՝ հողեր գրավելու և սեփական ամրոցներից նրանց արտաքսելու համար:*
Ազահ տիրակալը դավեր էր նյութում ազդեցիկ իշխանների դեմ, որ հողեր գրավի և սեփական ամրոցներից նրանց արտաքսի:

66. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:

1. *Ինչպե՞ս եղավ, որ ես խոսեցի նրա հետ և մինչ այդ եղած տարածայնությունները մոռացա:*
Ինչպե՞ս եղավ իմ՝ նրա հետ խոսելը և մինչ այդ եղած տարածայնությունների մոռացվելը:
2. *Արդեն բավական ժամանակ մի մեծ ճանճ էր պտտվում ավտոբուսում, չնայած մեքենայի ապակիները բարձրացված էին:*
Արդեն բավական ժամանակ մի մեծ ճանճ էր պտտվում ավտոբուսում՝ չնայած մեքենայի՝ ապակիները բարձրացրած լինելուն:
3. *Խճուղու ամեն անհարթությունն անցնելիս ժամանակ զգում էր, թե ինչպես էր քնից վեր թռչում քնկոտ ամուսինը:*
Խճուղու ամեն անհարթությունն անցնելիս ժամանակ զգում էր քնկոտ ամուսնու՝ քնից ինչպես վեր թռչելը:
4. *Հիմա ավազն ապակիներին էր զարնվում այնպես, որ դրանք ամեն վայրկյան դրդոտում էին:*
Հիմա ավազն ապակիներին էր զարնվում՝ դրանք ամեն վայրկյան դրդոցանելով:

67. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:

1. *Իր անունը լսելով՝ նա հանկարծ մտածեց այն մասին, որ իր նման մարմնեղ կնոջ համար բավականին ծիծաղելի է այդ փաղաքշական անունը:*
Իր անունը լսելով՝ նա հանկարծ մտածեց իր նման մարմնեղ կնոջ համար այդ փաղաքշական անվան բավականին ծիծաղելի լինելը:
2. *Ժանիմը հանկարծ զգաց, որ ինչ-որ մեկն իրեն է նայում անթարթ, և զգուշորեն հետ շրջվեց:*
Ժանիմը հանկարծ զգաց ինչ-որ մեկի՝ իրեն անթարթ նայելը և զգուշորեն հետ շրջվեց:
3. *Նրա համար ակնհայտ էր, որ ինքը տարիների ընթացքում յուրացրել էր ամուսնու ձանձրալի և տափակ խոսելաոճը:*
Նրա համար ակնհայտ էր իր՝ տարիների ընթացքում ամուսնու ձանձրալի և տափակ խոսելաոճը յուրացնելը:
4. *Իրենք անցնում էին արաբների կողքով, ու թեպետ շատերի գլուխները խոնարհված էին, նրանք բոլորն էլ կարծես եվրոպացի կնոջն էին նայում:*
Իրենք անցնում էին արաբների կողքով, ու շատերի գլուխները խոնարհված լինելով՝ նրանք բոլորն էլ կարծես եվրոպացի կնոջն էին նայում:

68. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:

1. *Ես շատ շուտ ճանաչեցի նրանց ներաշխարհը, որովհետև դյուրին է այդպիսի մարդկանց ճանաչելը:*
Ես շատ շուտ ճանաչեցի նրանց ներաշխարհը այդպիսի մարդկանց դյուրին ճանաչելու համար:
2. *Բայց նա հիմա էր հասկանում, որ այդքան ժամանակ ինքը պարզապես կանգնած է եղել երկուսի միջև:*
Նա հիմա էր հասկանում այդքան ժամանակ իր երկուսի միջև պարզապես կանգնած լինելը:
3. *Չգիտեմ ինչ խոսեցի երեսփոխանի հետ, ինչ հորդորեցի նրան:*
Չգիտեմ երեսփոխանի հետ ինչ խոսելու, նրան ինչ հորդորելու:
4. *Ծագող արևի առաջին ճառագայթներն ընկան մերձակա բլրի հյուսիսարևելյան լանջին, որը ծածկված էր սաղարթախիտ անտառով:*
Ծագող արևի առաջին ճառագայթներն ընկան մերձակա բլրի՝ սաղարթախիտ անտառով ծածկված հյուսիսարևելյան լանջին:

69. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:

1. *Չեկուցողը ամենից շատ քննադատվեց նրանց կողմից, ովքեր ամենաքիչն էին հասկանում այդ հարցից:*
Չեկուցողը ամենից շատ քննադատվեց նրանց՝ այդ հարցից ամենաքիչը հասկացողների կողմից:
2. *Քո արարքը արդարացվում է միայն նրանով, որ դու անտեղյակ ես եղել այդ ամենին:*
Քո արարքը արդարացվում է միայն քո՝ այդ ամենին անտեղյակ լինելով:
3. *Ես անհամբեր սպասում եմ, թե դու երբ ես գալու:*
Ես անհամբեր սպասում եմ քո երբ գալուն:
4. *Ես միշտ էլ վախեցել եմ, որ դու ինձ ճիշտ չես հասկանա:*
Ես միշտ էլ վախեցել եմ քո՝ ինձ ճիշտ չհասկանալու համար:

70. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:

1. *Իմ մեծությունն է այն, որ իմ տոհմը ինձանից է սկսվում:*
Իմ մեծությունը իմ տոհմի ինձանից սկսվելն է:
2. *Աշխարհի նպատակն այն է, որ բանականությունը թագավորի:*
Աշխարհի նպատակը բանականության թագավորելն է:
3. *Եթե մարդու սրտում սեր չկա, ապա ոչ մի տեղ այն լինել չի կարող:*
Մարդու սրտում սեր չլինելու դեպքում ապա այն ոչ մի տեղ լինել չի կարող:
4. *Ով շատ է խոսում, շատ հիմարություններ է ասում:*
Շատ խոսողը շատ հիմարություններ է ասում:

71. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:

1. – *Քո առաջարկն ընդունել չեմ կարող, - մեղմորեն պատասխանեց նկարիչը և ավելացրեց. - մի քանի տարի հետո քո նժույգներն այլևս չեն խրխնջա, իսկ իմ նկարները կապրեն հավերժ:*
Նկարիչը մեղմորեն պատասխանեց, որ նրա առաջարկն ինքն ընդունել չի կարող, և ավելացրեց, որ մի քանի տարի հետո նրա նժույգներն այլևս չեն խրխնջա, իսկ իր նկարները կապրեն հավերժ:
2. – *Ո՞րն է Ձեր դժգոհության պատճառը, - վրդովված հարցրեց ուղևորներից մեկը. - Դուք աղջկան հրեցիք, և Դուք էլ դեռ դժգոհում եք, գոնե լռե՛ք:*
Ուղևորներից մեկը վրդովված հարցրեց, թե որն է նրա դժգոհության պատճառը. նա աղջկան հրեց, և նա էլ դեռ դժգոհում է, գոնե լռի:
3. *«Ի՞նչ անես, ինչպե՞ս կընդունի այս լուրը Դավիթ-Բեկը», - խորհում էր Մովսեսը և մտքերի տակ կքած՝ ծպտված քայլում էր անձանոթ քաղաքով:*
Մովսեսը խորհում էր, թե ինչ անի ինքը, ինչպես կընդունի արդյոք այդ լուրը Դավիթ-Բեկը, և մտքերի տակ կքած՝ ծպտված քայլում էր անձանոթ քաղաքով:
4. – *Դուք մեր առաջարկները քննարկեցի՞ք, - անվստահ հարցրեց աշխատակիցը տնօրենին և հասկանալով, որ նա թղթապանակը չի էլ բացել, բարկացած գոռաց. - երբևէ զբաղվելո՞ւ եք Դուք Ձեր անմիջական պարտականություններով:*
Աշխատակիցը տնօրենին անվստահ հարցրեց, թե ինքը նրանց առաջարկները քննարկեց արդյոք, և հասկանալով, որ նա թղթապանակը չի էլ բացել, բարկացած գոռաց, թե նա երբևէ զբաղվելու է իր անմիջական պարտականություններով:

72. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:

1. *Ես զարմացած հարցրի նրան. - Ինչո՞ւ հարցը չլուծեցիր նրանց միջոցով, ովքեր, իմ կարծիքով, կարող էին այն լուծել:*
Ես զարմացած հարցրի նրան, թե նա ինչու հարցը չլուծեց նրանց միջոցով, ովքեր, նրա կարծիքով, կարող էին այն լուծել:
2. *Հայրը բարկացավ տղայի վրա և ասաց. - Դու ինչո՞ւ ես մեր վեճի մասին պատմել մորդ. չէ՞ որ ես քեզ խնդրել էի լռել:*
Հայրը բարկացավ տղայի վրա և ասաց, թե նա ինչու է իրենց վեճի մասին պատմել մորը. չէ՞ որ ինքը խնդրել էր նրան լռել:
3. *Կինը շարունակ ինքն իրեն հարց էր տալիս. «Ավելի լավ չէ՞ր լինի իմ հեռանալը, քան թե ամուսնուս հետ մնայն ու տառապելը»:*
Կինը շարունակ ինքն իրեն հարց էր տալիս, թե ավելի լավ չէր լինի, որ ինքը հեռանար, քան թե ամուսնու հետ մնար ու տառապել:
4. – *Ուրեմն այսպես, Արամ,- անթաքույց գայրությունով ասաց ուսուցչուհին,- փակե՛ք Ձեր բերանը և ինձ հնարավորություն տվե՛ք դասավանդելու:*
Ուսուցչուհին անթաքույց գայրությամբ ասաց Արամին, որ ուրեմն փակի իր բերանը և նրան հնարավորություն տա դասավանդելու:

73. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:

1. *Մարդիկ նորից ինձ դիմեցին՝ այս անգամ ասելով.*
- *Երեք տարի առաջ կոչ էիք անում, որ փրկեն կաքավներին, հիմա էլ կոչ պիտի անեք, որ արտերը փրկեն կաքավներից:*
Մարդիկ նորից ինձ դիմեցին՝ այս անգամ ասելով, որ երեք տարի առաջ կոչ էինք անում, որ փրկեն կաքավներին, հիմա էլ կոչ պիտի անենք, որ արտերը փրկեն կաքավներից:
2. – *Ոչ մի դեպքում,- աներկբայորեն ասաց Փափազյանը և շարունակեց,- հանդիսատեսն ի՞նչ մեղք ունի, որ ես հիվանդացել եմ. չէ՞ որ նա հոգեբանորեն պատրաստվել է ինձ տեսնելու, ու ես անպայման պիտի խաղամ:*
Փափազյանը աներկբայորեն ասաց՝ շարունակելով, որ ոչ մի դեպքում, հանդիսատեսն ինչ մեղք ունի, որ ինքը հիվանդացել է. չէ՞ որ նա հոգեբանորեն պատրաստվել է իրեն տեսնելու, ու ինքը անպայման պիտի խաղա:
3. – *Անցյալը հիշելով՝ ոչինչ չես շահի. մի՞թե ավելի հաճելի չի լինի, եթե հանցանքդ քավես,- պատասխանեց թագուհին՝ զսպելով հեծկլտոցը և գաղտնի սրբելով արտասուքը:*
Թագուհին պատասխանեց՝ զսպելով հեծկլտոցը և գաղտնի սրբելով արտասուքը, որ անցյալը հիշելով՝ ոչինչ չես շահի. մի՞թե ավելի հաճելի չէր լինի, եթե նա իր հանցանքը քավեր:
4. – *Ներս արի, տղան. – ասաց կինը,- ես անգլերեն կարդալ չեմ կարող. մեքսիկոսի եմ և խնդրում եմ՝ կարդաս հեռագիրը:*
Կինը ասաց տղային, որ ներս գա, ինքը անգլերեն կարդալ չի կարող. մեքսիկոսի է և խնդրում է, որ ինքը կարդա հեռագիրը:

74. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:

1. *Ռաֆայելը ասաց, որ թույլ տա, որ ինքը դատապարտի իր կյանքը. եթե նրա բարեկամությունը ուժ չունի իր գանգատները լսելու, ուրեմն թող քնի:*
Ռաֆայելը ասաց.
- Թո՛ւյլ տուր, որ ես դատապարտեմ իմ կյանքը. եթե քո բարեկամությունը ուժ չունի քո գանգատները լսելու, ուրեմն քնի՛ր:
2. *Տղամարդը շարունակեց, որ եթե նա իրենց մի անգամ էլ ստիպի հարցնել նրա իսկական անունը, հրացանի մի գնդակով կարժանանա ժառանգորդների հարզանքին:*
- Եթե նա մեզ մի անգամ էլ ստիպի հարցնել իմ իսկական անունը, -շարունակեց տղամարդը,- հրացանի մի գնդակով կարժանանա ժառանգորդների հարզանքին:
3. *Նա հեզնախառն շեշտով ասաց պարոնին, որ քանի որ նա Մարսելից է, իրենք թույլ կտան, որ հանգիստ շարունակի իր ճամփան:*
Նա հեզնախառն շեշտով ասաց.
- Պարո՛ն, քանի որ Դուք Մարսելից եք, մենք թույլ կտանք, որ հանգիստ շարունակեք Ձեր ճամփան:
4. *Նա, ինքնիրեն խոսելով, ասաց, որ, այո՛, ինքը խանգարում է նրանց, բայց շուտով այդ արարածն այլևս իր երեսը չի տեսնի:*
Նա, ինքնիրեն խոսելով, ասաց. «Այո՛, ես խանգարում եմ նրանց, բայց շուտով այդ արարածն այլևս իմ երեսը չի տեսնի»:

75. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Դոյակը իտալական ոճով կառուցված մի նոր շինություն էր երկու առաջադիր թևերով երեք նախագավթով: 2. Միմյանցից հեռու պուրակների միջև լայն ճանապարհն էր մեծ ընդունելությունների օրերին բազում շքեղ կառքերի անցուդարձի ուղին: 3. Դիմացի կամրջի տակով գետակն էր հոսում կամուրջն այնքան հին էր որքան դոյակի փեշերին տարածված գյուղն էր ավեզրյա եղեգնուտների ջրերում միշտ լողացող բաղերի ու սագերի խմբերով: 4. Դոյակն ուներ երեք աշտարակ գոթական ոճով կառուցված գունավոր ապակիներով նախշազարդված ու նայելիս թվում էր արևի շողն ընկնելիս ծիածանն իր բոլոր գույներով խաղում է այնտեղ: 5. Մուտքի երկու մեծ փեղկերով դարպասը դրվագված էր դրախտահավքերով ու լոտոսներով:

76. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Ճաշը վերջացնելուց հետո հայրս իսկույն ևեթ խոսք բացեց հյուրերի հետ իմ ապագայի մասին սկսելով երկար-բարակ մի խորհրդակցություն:
2. Այդ մարդը խորհուրդ էր տալիս հորս ինձ նույնպես ուղարկել քաղաք երկաթագործության որևէ ճյուղ սովորելու:
3. Հայրս երկար վիճաբանությանը վերջ դնելու և հարցը միանգամից լուծելու համար ընդհատեց խոսքը:
4. Մինչ նրանք այս վիճաբանության մեջ էին ես ևս սկսեցի մտքումս խորհել իմ ապագայի մասին:
5. Այն ժամանակ ես չգիտեի ինչ է նշանակում վաճառականի գործակատար և որն է նրա զբաղմունքը:
6. Թե ինչ պայմաններով ես պիտի ծառայեի Գուլամյանցների տանը այդ մասին հայրս ինձ չհայտնեց:

77. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Ինձ համար հաճելի էր այդ պատկերը հիասքանչ որը ես այսօր կարող եմ համեմատել միայն Ռաֆայելի կտավների հետ:
2. Նրա ծովի նման ընդարձակ հայացքը միշտ ուղղված էր դեպի անորոշություն:
3. Նա միջահասակ էր նագելի կազմվածքով գեղեցիկ մազերով:
4. Թվում էր թե երբևէ ինչ-որ սարսափելի տեսիլ է ազդել նրա աչքերի վրա և այդ հանդիպումն այն ժամանակից դրոշմվել է այնտեղ առմիշտ:
5. Վերջապես մի օր առավոտյան ժամը տասին դիմացի դռները բացվեցին և փողոց ելավ բարձրահասակ տղամարդը:
6. Ես նայելով այդ կնոջը ակամա ցնցվեցի և իմ տեղում մնացի բևեռված:

78. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի:

1. Աչքերը պղտորվում են փղծուկը սեղմում է կոկորդը մի կարճ վայրկյան և վշտալլուկ հայրը բարձունքից ցած է նետվում:
2. Բարեկրնի զարդը կախովի այգիներն էին որոնք ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի հիմնվել էին թագավորի սիրելի կնոջ համար:
3. Հարավային մեղմ սյուրը շոյեց երիտասարդի հուզմունքից բորբոքված աչքերը:
4. Մհարկու վիշապի նման գետը գոռգոռում էր երախի մեջ առած կոճղեր ու ծառեր:
5. Ասում են թե դրանից հետո էր որ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց բաղձալի աշխարհամասը Ասիան:
6. Ոչ ոք չէր կռահում ինչի համար է նրբահյուս ժանեկազարդ կտորը:

79. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի:

1. Քանի դեռ ուղևորը գիշեր-ցերեկ ճանապարհին է նա շտապում է չնկատելով անքնությունն ու վտանգները:
2. Նա թուլացավ և քնեց այնպիսի խոր քնով որ մարդիկ կարծելով թե մեռած է նրան դուրս տարան սենյակից:
3. Հռոմեական բանակը ծերունագարդ զինվորներով և փորձառու ռազմիկներով կռվից ուժասպառ տուն վերադարձավ:
4. Նրանք նայեցին իրենց ծննդավայրի մարգագետիններով զարդարված լայնարձակ տարածություններին և հասկացան որ արդեն բավական ծեր են:
5. Նրանք իրենց հերթին հարցրին թե որտեղ են որդիները և նրանց պատասխանեցին որ պատերազմը վերջացել է և Կեսարը մեռել:
6. Նրանք հիշեցին որ հայրական տան մութ անկյուններում տեսել են մարմարյա խորհրդավոր կիսանդրիներ լատիներեն մակագրությամբ:

80. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Երկու շաբաթից ավելի էր (1) նա գտնվում էր այդ գետնավորում և մենության մեջ դառն ու անհուսալի խոհերը հետզհետե ջլատելով նրա ուժերը (2) գերեզմանային քմրություն էին բերել հոգուն: Խավարի մեջ հագիվ գծագրվող դեմքն այժմ արտահայտում էր խոր հուսահատություն և շողերի վրա գամված աչքերն անշարժ էին (3) ինչպես մեռյալի աչքերը: Նա բարձի փոխարեն գլխի տակ էր դնում կաշեկազմ «Նարեկը» (4) այն ընթերցելու: Ամեն առավոտ (5) օրվա ուտելիքը բերելիս սպասավորը միշտ դժգոհում էր որ հայր սուրբը սպասին ձեռք չի տվել: Արեղան տխուր ժպտում էր (6) հանգստացնում պատանուն (7) ասելով (8) լավ է գգում: Ու սկսում էր հարցուփորձը (9) դրսի աշխարհից ակնկալելով նորություններ:

81. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

Տարօրինակ բան (1) բարձրիկ սարերը թողած (2) արծիվը քաղաք մտավ նստեց Սյեհի դեմ դիմաց որձաքարի վրա: Արծիվն իջնի մարդկանց մոտ (3) ով է տեսել: Տարակուսանքի մեջ էր իրեն կորցրել էր հալածական էր դարձել հավքերի արքան: Ումից է հալածվել որ թշնամուց (4) զգիտեր: Գուցե իր նման փախել էր ոչ թե թշնամուց այլ նրա նենգությունից: Գուցե եկել էր մարդկանց մոտ իմանալու թե ինչու է աշխարհը լի նենգությամբ: Մլեհը հասկանալով (5) ինչքան երկար է ապրում արծիվն ու ինչքան շատ բան է հիշում (6) գտավ գլխավորը (7) հզոր թռչունի թշնամին հիշողությունն է: Արծիվը թևածեց Հայոց լեռնապարի կողմը ու ինքը հիշեց հեքիաթի տղային որ արծվի թևերին նստած (8) սավառնում է դեպի իր աշխարհի (9) մանկության լույսով ողողված ափը արևոտ լուսավոր ջերմ:

82. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Մերուժանը ինն օր ճանապարհների վրա էր միայնակ ու լքված: 2. Հոգնածության հետ տանջում էր նաև քաղցը երկու օր էր ոչինչ չէր կերել: 3. Որպես ռազմիկ նա սովոր էր բացօթյա կյանքին բայց քաղցին ընդդիմանալու կարողություն չուներ: 4. Ոտքերն ընդարմացել էին աչքերը պղտորվել: 5. Մի անորոշ երկյուղ կրծում էր վշտերից կարեվեր խոցված հոգին: 6. Դիմացը հորիզոնի գծին գուգահեռ ուղղաբերձ լեռներն էին հակառակ կողմում հուռթի արտեր: 7. Լսվեց շների հաչոց երևի հովիվն էր գալիս: 8. Մերուժանի համբերությունն արդեն սպառվել էր նա պատասպարան խնդրեց հովվից: 9. Նա որ հայոց արքունիքում առաջնակարգ նախարարի բարձ ուներ պարսից թագավորի հետ շատ անգամ նույն թախտին էր նստել երթևէ այնքան ախորժակով չէր ճաշել որքան այստեղ հովվի անպանույճ քողտիկում:

83. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում երկու բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Կից սենյակում թախտին պառկած էր անդամալույծը անհաղորդ ողբերգական անցուդարձին:
2. Թվում էր երկնքից թափվում է կրակի հեղեղ վայրենի մռնչյուն արձակելով:
3. Լողում էր մակույկը մաքառելով ալիքների դեմ ջանալով մոտենալ ափին:
4. Անփորձ աչքի համար առեղծված է ինչպես են քարերը նստել միմյանց վրա ստեղծելով ժայռակույփ կերտվածք:
5. Բակում խաղացող երեխաները մեզ տեսնելով զարմացած թողեցին խաղը:
6. Գզիրը մի անգամ էլ պտույտ արեց փողոցներում բարձր կանչով իսկ շներն այս ու այն կողմից ձայն տվեցին արագ հանդարտվելով:

84. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուֆ չսյխտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Արքայանիստ քաղաքի նորաշեն բարձրաբերձ ու գեղադիր արքունիքում արտասովոր եռուզեռ էր տիրում:
2. Թվում էր թե մահաբեր մի ուժ մի չար ուժ ամայացրել էր երբեմնի աշխույժ կենդանի եռուզեռով լի քաղաքը:
3. Երջանիկ էր գգում որ մուրազը կատարվեց տեսավ իր երկիրը վայելեց կարոտն առավ:
4. Մշակները հայացքները հառել էին Սմբատին որը ձեռքերը գրպանները դրած լայնեզր գլխարկն աչքերին քաշած շրջում էր նավթամբարների մոտ:
5. Մեկ տարի հետո Սորունի ձորում ճանապարհից դուրս ծլեցին բազմաթիվ ընկուզենիներ:
6. Դրանք հիմա ահագին ծառեր են և ստվեր են գցում ճանապարհի արևով մշտապես ողողված հատվածներին:

85. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միջակետ պիտի դրվի:

1. Հայրս դասավորեց ճամպուրակն ու վերցրեց իր թառը պատերազմ լինեթ թե չլինեթ նա չէր ուզում բաժանվել գործիքից և հետմիջօրեին ճանապարհ դրինք նրան:
2. Բայց Ազնավուրյանների ընտանիքին օգնելու ժամանակը ամենայն հավանականությամբ դեռ չէր եկել անբարեհաջող ղեկավարման և անօրինակ ճգնաժամի հետևանքով երկար հոգեվարքից հետո ռեստորանը փակվեց:
3. Նրանք միակն էին որ արդարացրին հորս վստահությունը ու այդ էր պատճառը անկասկած որ հայրս երկար ժամանակ ուզում էր շրջել Ադիս Աբեբայում դեռ պատանեկան տարիների երազանքն էր դա:
4. Ինչպես է հորս հանդիպել երբ և որտեղ են ամուսնացել չգիտեմք չկան եկեղեցիներում պահպանվող պատկերասրահների մատյանները ավաղ մեր եկեղեցիները թալանվեցին ու ավերվեցին:

86. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում առոգանության նշան պիտի դրվի:

1. Ինչքան որ հուր կա իմ սրտում բոլորը քեզ:
2. Ինչքան ցավ եմ տեսել ես նենգ ու դավ եմ տեսել ես:
3. Ինչքան աշխարհը սիրես այնքան այն ցանկալի կլինի:
4. Եվ ինչքան պետք է տանջես ինձ այդպես:

87. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում առոգանության նշան պիտի դրվի:

1. Ես ինչ անեմ որ հոգիս չհեծկլտա կարոտից:
2. Եվ ով է հյուսել հեքիաթն այս վսեմ...:
3. Ով քաղաքից էր հեռացել նա թողել էր մշուշը ծեր:
4. Ես ինչ անեմ որ մնա ծիածանը երեքգույն:
5. Ինչ էլ լինի ինձ հանկարծ չմոռանաս:

88. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):

1. Ժուկով-ժամանակով մի թագավոր է լինում որ ամեն իրիկուն մութն ընկնելուն պես թափառաշրջիկի հագուստով շրջում է փողոցից փողոց որ իր աչքով տեսնի ինչպես է ապրում իր ժողովուրդը նա պալատականներին մեծ հավատ չէր ընծայում:
2. Տաթևի նշանավոր վանքում Հովհան Ռոտունցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալած գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաթևը կրթական խոշոր կենտրոն է դառնում:
3. Այն որ դեղձը հայկական պտուղ է և սխալմամբ է օտարների կողմից պարսկական համարվել և «պերսիկ» կոչվել վկայում է պարսկական առածը. «Ոչ հայն իր դեղձնուն կխփի ոչ պարսիկն իր դստերը» չէ որ պարսիկը իր ստեղծած մրգի մասին նման բան չէր ասի:
4. Պապի ականջին հաճախ փսփսուքներ էին հասնում պալատն առանց քծնանքի ու բանասարկության պալատ չի լինում թե Մուշեղը անկեղծ չէ արքայի հետ և պատահական չէ որ հայոց թագուհու վրեժն առնելու փոխարեն Շապուհի կանանոցը ազատ արձակեց:
5. Այդ օրը ինչպես և սպասվում էր դահլիճը լիքն էր հանդիսականներով:
6. Երեկոյան խրախճանքի թեժ պահին Դամոկլեսը նկատելով հավաքվածների չարագուշակ հայացքները նա անտեղյակ էր որ իր գլխավերևում սուր է կախված հայացք նետեց առաստաղին և աչքովն ընկավ հենց իր գլխավերևում կախված սուրը:

89. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Երբ Հայկ Աղեղնավորը հաղթեց բռնակալ Բելին, քաշվեց Հարք գավառը և խաղաղության մեջ անցկացրեց կյանքի մնացած օրերը:
2. Դյուցազնի մերձավորները հաշվեցին նրա ապրած տարիները, և նրա մահվան օրը հայտարարեցին, թե նա ապրել է ուղիղ հարյուր տարի:
3. Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է կուրացած հորը.
- Հայր, խորհուրդ տո՛ւր ինձ՝ ինչ հուշարձան կառուցեմ, որ անմահացնեմ իմ և քո անունը:
4. Ցավալին այն է, որ աշխարհում ոչ մի կայուն բան չկա՝ ամեն ինչ փոխվում է:
5. Եթե ոսկյա սյուն էլ կանգնեցնես, կվերածուլեն և քո անունը չեն տա, փառահեղ տաճար կերտես՝ կկործանեն հիմնիվեր, պողոտա սարքես՝ արահետ կդարձնեն ու իրենց անունով կկոչեն:
6. Ուզում եմ ասել՝ նախանձն ամեն ինչի ընդունակ է:

90. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:

1. Բայց գմայլանքի խուլ աղմուկը աստիճանաբար հանդարտվեց, երգերը հնչեցին բեմի վրա և աստիճանաբար մարեցին հնչյունները:
2. Այդ ուժը, սակայն ոչ մեկին պետք չէր. անհրաժեշտ էր աճեցնել արագությունը ի հաշիվ ուժի:
3. Փոխանակ իրենց կատարածը ջուրը նետելու, նրանք պետք է հարգանք դրսևորեն ավագ սերնդի նկատմամբ և փորձեն այդ նորը հաստատել կյանքում:
4. Իսկ թե ինձ հաղթես՝ քեզ սպասվում են այսպիսի պարզևներ՝ երկու հազար ոսկեդրամ, նրբին աշխատանքով ձիասարք, արոսի փայտից պատրաստված հոյակապ սարք:
5. Ժամկետը լրացավ, և յոթ տարվա ավարտը մոտեցավ. յոթերորդ տարվա վերջին օրվա երեկոյան նրա տան շեմին մի անձանոթ մարդ հայտնվեց՝ իսպանացու տեսքով:
6. Այս մարդկանց հանդիպումը, որոնց, թվում է, վիճակված չէր կապվել իրար հետ, շատ անսպասելի էր:

91. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:

1. Կյանքը, սակայն, սրընթաց թռչում էր, և երբեմնի կանաչ-կարմիր ասպետը օրըստօրե թառամում:
2. Մոռան էր՝ ճերմակաթույր ատամներով աղջիկը, որ տարիներ առաջ սրտաբուխ քրքջում էր՝ սրունքները կախած առվակի մեջ:
3. Երրորդ օրն է՝ ծանր, կակձալի նախազգացումները կրծում էին նրա՝ կասկածներից ալեկոծ հոգին:
4. Մի օր էլ, երբ վարպետը նստած էր իր սիրած տեղը՝ դարպասի քարին, նրան մոտեցավ կոմիսարը՝ լուռ ու գլխահակ:
5. Ամառային պարզկա, վառվռուն առավոտ էր՝ լի թռչունների ճովողյունով, տերևների շրշյունով, դեղձի, դաղձի ու փշատի հոտոտելիքը գրգռող բույրերով:
6. Դուրս գալով պատշգամբ՝ Սմբատը մի հայացք նետեց հանդիպակաց լեռների՝ արևից ոսկևորված կատարներին, գինեվետ այգիներին և հոգոց հանելով իջավ սանդուղքներով:

92. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:

1. – Սքանչելի է, - շնչաց նա՝ ոտքի ելնելով: - Որպես դեսպան՝ ես երջանիկ եմ, որ իմ վսեմափայլ թագավորին պիտի մատուցեմ այս հրաշագործությունները:
2. - Գահը պատրաստված է մեր շատ հարգելի վաճառականապետի հոր՝ նախկինում անվանի ոսկերիչ պարոն Սահրադի անմիջական հսկողության ներքո, - խոնարհվելով պատասխանեց Հովհաննեսը:
3. - Դու որոշել ես ինչ-որ անարժանների պատճառով թողնել աշխատանքդ ու հեռանալ, - լավեց նկարչապետի կշտամբական ձայնը. – կարծում ես՝ դրանով չարյաց արմատները կչորանա՞ն:
4. «Ճշմարիտն Աստված, մենք ձգտում ենք լուստ ու հայրենյաց ազատության, - մտածում էր իշխանը՝ մի պահ նայելով հետզհետե բորբոքվող մոմին»:
5. Աստվածատուրը զարմացավ՝ պատասխանելով.
 - Ես մինչ այդ էլ վարանում էի: - Երբ հանգեցի այդ մտքին, նա արդեն ամուսնացել էր:

ԲԱԺԻՆ 5 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

I ՏԵՍԱԿ

1. Մտքերից քանի՞սն են հակասում տեքստի բովանդակությանը:

1982 թվականին անգլիացի հետազոտող Ջ. Ֆարմանը Անտարկտիդայի վրա հայտնաբերեց մթնոլորտային շերտի ճեղքվածք՝ ավելի քան 1000 կմ տրամագծով: Այս իրադարձությունը մեծ տագնապ առաջացրեց գիտական, քաղաքական և այլ շրջաններում. չէ՞ որ օզոնային ճեղքերն իրենցից մեծ վտանգ են ներկայացնում կենդանի օրգանիզմների համար: Այդ շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթը Արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների չափից մեծ քանակից: Սրա հետ կապված՝ 1985-ին ընդունվում է Վիեննայի համաձայնագիրը՝ օզոնային շերտի պահպանման վերաբերյալ, 1987-ին՝ Մոնրեալի արձանագրությունը: Բայց դեռ չէին խաղաղվել օզոնային շերտի քայքայման հետ կապված անհանգստությունները, 1992-ին մեկ այլ ճեղք հայտնաբերվեց, բայց այս անգամ՝ Արկտիկայի վրա, հետո՝ Ուրալյան լեռների հատվածում: Ուսումնասիրողները երկար տարիներ ենթադրում էին, որ օզոնային շերտի նստացման ու ճեղքերի գոյացման գլխավոր մեղավորը մարդն է և նրա արդյունաբերական գործունեությունը, հատկապես այնպիսի օզոնաքայքայիչ արտադրություններ, որոնցից է, օրինակ, ֆրեոնը, որը լայն կիրառություն ունի սառեցնող սարքավորումներում: Հակառակն ապացուցեցին 90-ականներին կատարված հետազոտությունները. օզոնային ճեղքերը ոչ մի կապ չունեն մարդու գործունեության հետ: Դրանք ավելի շուտ Երկրի բևեռների աստիճանական փոփոխման հետևանք են, երբ մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը, և նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է, բայց դրանք բնակլիմայական լուրջ փոփոխությունների են հասցնում՝ ազդելով և՛ կենդանիների, և՛ մարդու վրա: Սա է գուցե օզոնի շերտի քայքայման պատճառը:

1. 1982-ին գիտական և քաղաքական լայն շրջաններում անհանգստություն առաջացրեց Անտարկտիդայի և Ուրալյան լեռների վրա հայտնաբերված մթնոլորտային շերտի ճեղքվածքը՝ ավելի քան 1000 կմ տրամագծով:
2. 1985-ի և 1987-ի համաձայնագրերը բարդացրին իրավիճակը, և այդ հատվածներում եղած ճեղքերը ավելի մեծացան:
3. Օզոնային շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների չափից մեծ քանակությունից, որոնք օզոնը քայքայող արտադրությունների արդյունք են:
4. Մոլորակի բևեռների փոփոխման հետ կապված՝ մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը, և նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է:

2. Մտքերից քանի՞սն են հակասում տեքստի բովանդակությանը:

Շվեյցարիայի գիտնականներն անցկացրել են կենդանիների մտավոր կարողությունների բացահայտման հետաքրքիր գիտափորձ և պարզել, որ մարդուց հետո մտավոր ունակություններով երկրորդ տեղում է դելֆինը (առայժմ մրցանակային այդ աստիճանն է հասկացվել նրան), երրորդում՝ փիղը, իսկ կապիկը գրավում է չորրորդ՝ ոչ մրցանակային տեղը միայն: Պարզվում է՝ դելֆինի ուղեղի կեղևն ունի երկու անգամ ավելի շատ ծալքեր, և նա ընդունակ է 1,5 անգամ ավելի շատ գիտելիքներ յուրացնելու և ամբարելու, քան մարդու ուղեղը: Արտառոց կարող է թվալ, սակայն դարեր շարունակ փողոսկրեր որոնողները, որոնք երազել են հայտնաբերել փղերի դիակներ ու չեն գտել, չեն կարողացել բացատրել, թե ինչու երբևէ չեն հանդիպել սատկած փղերի դիակների: Ուղղակի նրանք տեղյակ չեն Ռոդեզայի «Մերու» արգելանոցում պատահածին, այլապես կհասկանային փղերի գաղտնիքը: Արգելանոցի աշխատակիցները մի անգամ տեսել են, թե ինչպես փղերը հավաքվել են իրենց սպանված առաջնորդի դիակի մոտ, կնճիթներով փոս են փորել և թաղել նրան: Հետևաբար նրանք ցեղակիցների դիակներն անտեր չեն թողնում, այլ հողին են հանձնում: Մոլորություններ կան և ոչխարների հարցում: Նրանք բնավ էլ արժանի չեն հիմարության չափանիշ համարվելու իրենց վարկանիշին. ուշիմ են, խորաթափանց, ունեն գերազանց հիշողություն և անսխալ հիշում են մարդկանց դեմքերը, մի բան, որ դժվար կարողանա կատարել մարդը, եթե հարկ լինի հիշել ոչխարների դեմքերը:

1. Դելֆինների ուղեղը ծալքերի առումով կրկնակի գերազանցում է մարդու ուղեղին, ինչը թույլ է տալիս նրանց համարել ամենախելոք կենդանին մարդուց հետո:
2. Կենդանիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչխարների անսովոր հիշողությունը նրանց թույլ է տալիս ազատվել «հիմար» համարվելու արմատացած կարծիքից և խելացի կենդանիների շարքում հավասարվել մարդկանց ու դելֆիններին:
3. Ուսումնասիրությունները պարզել են, որ մարդու ուղեղը մեկուկես անգամ քիչ ծալքեր ունի, քան դելֆիններինը, որոնք արտասովոր ընդունակություններ են ցուցաբերում գիտելիքների յուրացման գործընթացում:
4. Պակաս խելացի չեն կապիկները, որոնք որոշ դեպքերում հանդես են բերում աշխատանքային հմտություններ, երբեմն ցուցաբերում են փոխօգնություն, որն առավելապես մարդկային շփման ձև է:

II ՏԵՍԱԿ

3. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:

1. Այս կաթնասունների արձակած բարձր հաճախականության ձայները բաղկացած են շատ կարճ (վայրկյանի տասնորդական կամ հարյուրերորդական մասի տևողությամբ) թրթռոց-ազդակներից: Օրինակ՝ ջրի մեջ իջեցված 1 սմ տրամագծով գնդակը դելֆինը նկատում է ոչ ավելի, քան երեք մետրից, բայց ձայնային ազդանշանների շնորհիվ նա կարող է գնդակին «սել» 10-13 մետրից: Եվ ինչպե՞ս բացատրել, որ աֆալին դելֆինատեսակը այլումի՞նե խողովակների արգելքը «նկատում է» 350 մետրից:
2. Այդ ունակությունների գործադրմանը գուզընթաց դելֆինները իրենց գլուխները մի կողմից մյուսն են շարժում, որ ավելի ճշգրիտ որոշեն իրենց հետաքրքրող առարկայի գտնվելու վայրը:
3. Արդյոք հնարավո՞ր է նման բան. իհարկե, ո՛չ: Տեսողությամբ առարկան ջրի մեջ այդ հեռավորությունից հայտնաբերելու մասին վարկած նույնիսկ տեսականորեն չի կարելի թույլ տալ: Մնում է ապավինել դելֆինների ուլտրաձայնային արձագանքման ունակություններին:
4. Դելֆինները ցուցաբերում են տարածության մեջ կողմնորոշվելու զարմանալի ունակություն, և գուցե պատճառն այն է, որ նրանք չունեն լավ տեսողություն և ջրում կողմնորոշվելու, առարկաներ հայտնաբերելու համար արձակում են բարձր հաճախականության ձայներ:

4. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:

1. Բայց նույնիսկ եթե ներկայումս ապրող կաթնասունների հետ հաշվարկենք նաև ժամանակին անհետացած բոլոր տեսակները (դրանց թիվը գրեթե 2-3 անգամ ավելին է), միևնույնն է, երկրագնդի երեսին երբևէ բնակված կաթնասունների տեսակների թիվը չի անցնի 15000-ից:
2. Արդի կենսաբանությունը կաթնասուններին բաժանում է շուրջ 25 խմբի, որոնցում ներառված են մոտ 140 ընտանիք և 4600 տեսակ: Սա չնչին մասն է կենդանական տեսակների բազմազանության, քանի որ այսօր հայտնի են շուրջ 5 մլն կենդանական տեսակներ, որոնց երկու երրորդը բաժին է ընկնում միջատներին, թռչունները 5000 են, ձկները՝ 20000:
3. Կենդանական աշխարհը չափազանց բազմազան է, և դժվար թե մեկը երբևէ կարողանա հաշվել եղած բոլոր տեսակների ճշգրիտ թիվը: Պատճառը զարգացման գործընթացում որոշ տեսակների բնաջնջումն է, նրանց հետքերի վերացումը. կարող են վերանալ ամբողջական ընտանիքներ, և դա նույնքան տարածված է, որքան նոր տեսակների ու ցեղատեսակների առաջացումը:
4. Բացի գոյություն ունեցողներից՝ կենսաբանները դասերում ընդգրկում են նաև իրենց հայտնի բնաջնջված կամ անհետացած կենդանատեսակներ, որոնց թվերը մոտավոր են:

5. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:

1. Այսպես վարվելու հիմքերը գորավոր էին. զարհուրելի էր կյանքը, և անկախությունն այդ օրերին թվում էր հեզմանք: Փաստորեն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12000 քառ. կիլոմետր, աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, ծանրաբեռնված զաղթականներով ու որբերով, շրջապատված թշնամիներով, անհաս, անդեղ, անօգնական: Մով ու հիվանդություն, լաց ու թշվառություն, կոտորած ու սարսափ:
2. Հրի ու սրի միջով անցնելով՝ Հայաստանը ձեռք բերեց անկախություն և կոչվեց անկախ կյանքի: Յնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի կողմից այն դիտվում էր անժամանակ ծնունդ: Ոմանք չէին հավատում նրան. «անկախություն» ու «հանրապետություն» բառերը դնում էին չակերտի մեջ:
3. Անկախության առաջին իսկ օրից վրաց կառավարությունն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրույթ արտահայտել, որ Վրաստանի հողի վրա շարունակում է մնալ օտար պետության մի իշխանություն: Հայերին ուղղվում էին աներկդիմի խոսքեր, թե նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը: Եվ դա այն պահին, երբ ամեն հաղորդակցություն Երևանի հետ կտրված էր, և Լոռու ու Փամբակի ձորերում թուրքերն ու տեղի մահմեդականները մաքրագործում էին հայկական գյուղերը:
4. Հայաստանում այսպիսին էր դրությունը, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ: Մայիսի 26-ից հետո հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայրաստիճան. վրացիները, արբած իրենց անկախությամբ ու գերմանական հովանավորությամբ, թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք էլ իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող:

ԲԱԺԻՆ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԿՆՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

I ՏԵՍԱԿ

1. Քանի՞ հնարանություն կա տրված հատվածում:

Գրա համար մեկիքը հրամայել է՝ որքան կարելի է սակավ ցույց տան անասունների թիվը, հողերը չափելու չվանը սովորականից երկար անեն, որպեսզի արտերը չերկցնեն ավելի տարածություն: Նա նաև գնում էր իսանի շտեմարանների ցորյանը, լցնում յուր պահեստները: Ով որ տեղեկություն ունի այդպիսի առևտրից, գիտի, թե մեծ չափով առնելը և փոքրով վաճառելը որքան օգուտ կբերի առևտրականին:

II ՏԵՍԱԿ

2. Նշել այն հատվածների համարները, որոնք արևմտահայերեն են:

1. Ոչ ոք ըսավ. «Սա տրդին Պատռենք սիրտը տրտմագին, Նայինք՝ ինչե՛ր գրված կան...»: Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:
2. Եղեգնյա գրչով երգեցի արյուն. Ձեզի ընծա՛, սուրի զոհեր–
3. Ձեզանից հետո եկավ գիտություն՝ Յուր ծանր հայացքով աշխարհի վերա, Ամեն բան ընկավ մտածության տակ, Բոպե չմնաց ազատ կամ ունայն:
4. Մանգաղս քարին եկավ. Յարս յար ունի– Քարեն լորիկը թռավ: Լե՛րդս կ'արյունի:

3. Նշել այն շարքերի համարները, որոնցում սխալ են համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները.

1. բարկօղի – կոնյակ
2. հավկիթ – ձու
3. ալեհավաք – շանթարգել
4. աղվոր – գեղեցիկ
5. հանրակառք – կառք
6. աղեկ – լավ

4. Նշել ճիշտ պնդումների համարները:

1. Արևմտահայերենը բայի սահմանական ներկան կազմում է *կը* մասնիկի միջոցով՝ կը սիրեմ, կը հավատամ, իսկ արևելահայերենը՝ *ուսմ*-ով՝ սիրում եմ, հավատում եմ:
2. Արևելահայերենում գրեթե բոլոր գոյականները հոգնակի թվում ենթարկվում են *ի* հոլովման, իսկ արևմտահայերենում՝ *ու*:
3. Թե՛ արևելահայերենում և թե՛ արևմտահայերենում հոգնակիի կազմության ժամանակ *ի* և *ու* ձայնավոր ունեցող մի շարք բառեր (ջուր, շուն, մուկ, սիրտ և այլն) հնչյունափոխվում են:
4. Արևմտահայերենում անձի առման քերականական կարգը բացակայում է, այսինքն՝ արևմտահայերենում թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ գոյականները ուղիղ խնդիրը ձևավորում են միևնույն ձևով:
5. Արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական տարբերություններից կարևոր է ժխտական դերանունների գործածությունը բայի հետ. ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում կրկնակի ժխտում չկա:

5. Նշել այն պնդումների համարները, որոնցում սխալ կա:

1. Գրավոր հայերենը անցել է զարգացման երեք հիմնական փուլ:
2. Գրական արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիմքի վրա:
3. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի լույս տեսնելուց հետո գրաբարը վերջնականապես դադարում է գործածվելուց:
4. Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու է:

ԲԱԺԻՆ 7 ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

I ՏԵՍԱԿ

1. Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր:

Մեջս եմ ամփոփել երկրայինը *աղջ*,
Աղոթանվեր պատգամավորն եմ *համայն* աշխարհի:

2. Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր:

- **արթնացող** ամպ
- **բարակ** մութ
- **քարե** ամպրոպ
- **ծծմբային** գոլորշի
- **խոնավ** մութ
- **կարմիր** սարսուռ

3. Տրված բանաստեղծական հատվածում քանի՞ մակդիր կա:

Մարի հետևում շողերը մեռան,
 Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.
 Տխուր երեկոն զարկել է վրան,
 Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:

4. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են մակդիր:

Թե զինվոր տեսնեմ, մահ եմ սպասում,
 Թե պատգամավոր՝ դառը խստություն...
 Եթե տեսնում եմ ինձ հասնող բարիք,
 Փախուստ եմ տալիս չար կասկածներով...

5. Տրված հատվածում քանի՞ համեմատություն կա:

Ժամ-ժամ զիմ դարիպությունս ես յիշեմ և նըստիմ ու լամ,
 Ճապղեր եմ ջրրի նման, ի օտար երկիր կու գընամ,
 Յորեկն եմ նետի նման, զով տեսնեմ ի դեմ կու գնամ,
 Գիշերն եմ աղեղան նըման, ես լարթափ ի վար կու մընամ:

6. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել:

Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում,
Շուրջս վառված է մի անուշ տազնապ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում...

- մակդիր
- շրջադասություն
- փոխաբերություն
- համեմատություն

7. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:

*Հայրը ինչպես մռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարված՝
Դուրս են գալիս միասին:*

- համեմատություն
- մակդիր
- փոխանունություն
- չափազանցություն

8. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել:

*Սոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին,
Սոսին՝ իմ սեզ հարսի պես՝
Լուսնի ոսկե կուժն ուսին...*

- փոխաբերություն
- շրջադասություն
- համեմատություն
- բաղաձայնույթ

9. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:

*Այնքան նման է ձյունի պատառին
Լուսնեղջյուրը, որ լեռան ուսին է,
Չյունի պատառն էլ լեռան կատարին
Կարծես մայր մտնող կիսալուսին է:*

- հանգավորում
- շրջադասություն
- համեմատություն
- փոխաբերություն
- մակդիր

10. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել:

«...Շատ բաներ բերեց մեր աշխարհին խարտյաշ և մագերի ծայրը գանգուր այս Երվանդյան Տիգրանը, որ գունեղ երեսով էր և քաղցր նայվածքով, վայելչակազմ էր և թիկնեղ... Նրա մասին մեր հները, որոնք փանդիռի նվազածությամբ երգում էին, ասում էին, թե մարմնական ցանկությունների մեջ ևս չափավոր է եղել... Ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ յուրաքանչյուրի կյանքը կշռում էր իր մտքի լծակով»:

- մակդիր
- փոխաբերություն
- համեմատություն
- չափազանցություն

11. Պնդումներից քանիստ՞ում սխալ կա:

- Վարչական ոճին բնորոշ է գրաբարյան և աշխարհաբարյան նախդրավոր կապակցությունների գործածությունը:
- Գիտական ոճը առանձնանում է տրամաբանական հասկացությունների և դատողությունների օգտագործմամբ:
- Հրապարակախոսական ոճի գործառության հիմնական ոլորտը հասարակական-քաղաքական հարաբերություններն են:
- Գեղարվեստական ոճի գրվածքներում կարող են լինել տարբեր ոճերի տարրեր:

II ՏԵՄԱԿ

12. Նշել պատկերավորման-արտահայտչական այն միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում:

*Գիշերն ընկավ, թանձրացավ մութը,
Ու նվաղեցին ձեները տրտում,
Հոգնեցին, հանգան... Ծերուկ Դեբեդը
Մգում էր մենակ խավար անդնդում:*

1. փոխաբերություն
2. մակդիր
3. շրջադասություն
4. հակադրություն
5. համեմատություն
6. հանգավորում

13. Նշել պատկերավորման-արտահայտչական այն միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում:

*...Ողջո՛ւյն քեզ, Աստված, դողդոջ էակին,
Շողին, փրթթին, ավույն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս շրթանց, թռիչն հոգվույս,
Անպ տրվիր աչացս, հևք տրվիր սրբտիս,
Ըսիր՝ մահվան դուռն ինձ պիտի ժրպտիս,
Անշուշտ, ինձ կյանք մը պահած ես ետքի,
Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի...*

1. հանգավորում
2. շրջադասություն
3. համեմատություն
4. փոխաբերություն
5. մակդիր

14. Նշել պատկերավորման-արտահայտչական այն միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում:

*Բերանը՝ երկբերթ, վարդ էր կաթում շրթունքներից,
Երբ խտում էր, ասես տավրի
Քաղցրանվազ ձայն էր հնչում...
Լուսափայլ էր ծոցը՝ կարմիր վարդով լցված,
Դաստակները՝ ծիրանագույն մանուշակի գեղեցիկ փունջ:*

1. համեմատություն
2. մակդիր
3. աստիճանավորում
4. չափազանցություն

ԲԱԺԻՆ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I ՏԵՍԱԿ

1. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Բաֆֆու «Մամվել» պատմավեպի համանուն հերոսի վերաբերյալ:

- Իմանալով հոր դավաճանության մասին՝ նա որոշում է առաջին իսկ հանդիպման ժամանակ առանց երկմտելու անմիջապես սպանել նրան:
- Նա որոշում է անպայման հանդիպել հորը՝ լիապես հասկանալու կատարվածի էությունը, և եթե հնարավոր է, համոզել մոլորվածին հետ կանգնելու ուրացության ճանապարհից:
- Հոր դավաճանությունից հետո նա չի կարողանում այլևս հանդիպել սիրած աղջկան՝ Աշխենին, քանի որ վերջինս երես էր թեթել իրենից:
- Ուրիշ նախարարական տների երիտասարդների պես մեծամիտ էր, ռամիկների նկատմամբ անզուր ու դաժան:

2. Ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Մուրացանը.

«Խորհրդավոր միանձնուհի», «Խենթը», «Նոյի ագռավը», «Ոսկի աքաղաղ», «Առաքյալը», «Նամուս», «Երկու տող», «Առաջին սերը»:

3. Ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Ալեքսանդր Շիրվանզադեն.

«Նամուս», «Խորհրդավոր միանձնուհի», «Դավիթ-Բեկ», «Ոսկի աքաղաղ», «Չար ոգի» («Ցավագարը»), «Թուրքի աղջիկը»:

4. Պնդումներից քանի՞սն են սխալ Ալեքսանդր Շիրվանզադեի «Բառս» վեպի վերաբերյալ:

- Բովանդակում է բազմաբնույթ հարցադրումներ՝ ընտանեկան, տնտեսական, բարոյական:
- Ապտակված Միքայելը Սմբատի խորհրդով փորձում է դատարանի միջոցով վերականգնել իր սասանված պատիվը:
- Գործողությունների ընթացքում աստիճանաբար փոխվում են Սմբատի ըմբռնումները ամուսնության մասին, փոխվում են նաև նրա երբեմնի պատկերացումները փողի և հարստության վերաբերյալ:
- Արշակը բարոյական և հոգեբանական շրջադարձ է ապրում՝ դառնալով լրջմիտ, առողջ ու օրինավոր մի պատանի:

5. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Գրիգոր Զոհրապի «Փոստալ» նորավեպի վերաբերյալ:

- Սուրբիկ հանրմը, խղճահարությունից դրդված, Տիգրանուհուն ընդունում է աշխատանքի:
- Տիգրանուհու երեխան հիվանդությունից մահանում է:
- Սուրբիկ հանրմը, Տիգրանուհուն անբարոյական անվանելով, դուրս է հանում իր տանից:
- Տիգրանուհու ամուսինը գյուղում թոքախտից մահանում է:

6. Ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Նար-Դոսը:

«Նեղ օրերից մեկը», «Առաքյալը», «Ռուզան», «Ես և նա», «Այրիկ», «Նամուս», «Սպանված աղավմին», «Խենթը», «Երկու տող», «Սեր թաղը»:

7. Հովհաննես Թումանյանի նշված ստեղծագործություններից քանիսի՞ հերոսուհիներն են անանուն:

«Թմկաբերդի առումը», «Քաջ Նազարը», «Փարվանա», «Անուշ»:

8. Տրվածներից քանի՞սն են համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադին:

- Փարվանա արքայադուստրը համաձայնում է ամուսնանալ այն քաջի հետ, ով կհաղթի կտրիճների մրցույթում:
- Փարվանա արքայադուստրը կտրիճների պայքարում հաղթած քաջից պահանջում է գնալ և իր համար բերել անշեջ հուրը:
- Արքայադուստր արցունքներից գոյացած լիճը ծածկում է քաղաքն ու ամրոցը, և Փարվանա արքան տեղափոխվում է այլ քաղաք:
- Թիթեռներ դարձած կտրիճները որտեղ ճրագ, կրակ ու լույս են տեսնում, խելագարի պես մեջն են ընկնում ու այրվում:

9. Տրվածներից քանի՞սն են համապատասխանում Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններին:

- «Հավերժական սերը» ստեղծագործությունն ավարտվում է նրանով, որ Էլ-Սամանի և բամբիշի սիրո պատմությունից արդեն անցել են դարեր, և անապատը ծածկել է ամեն ինչ, նաև Թաղմորի ապարանքն ու Էլ-Սամանի անմահ սիրո վկա աշտարակը:
- «Աբու-Լալա Մահարի» պոեմում անապատ հեռացող բանաստեղծը դառը խոսքեր է ասում բոլորի հասցեին՝ բացառություն անելով միայն ազնիվ ու հավատարիմ ընկերոջը:
- «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծության մեջ հեղինակը վկայում է, որ մեր գուսանները խանդավառ գովերգել են հայ դյուցազունների հաղթանակը՝ ծաղրելով ոսոխների պարտությունն ու տեսնելով մեր շքեղ ապագան:
- «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ արքայից վիրավորված զորավարի մոտ որոշում են գնալ գուսանն ու ծեր շինականը՝ հայրենի հողով, տավիղով ու երգերով հիշեցնելու նրան իր հայրենիքն ու նախկին փառքը:

10. Տրվածներից քանի՞սն են ճիշտ Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների վերաբերյալ:

- «Օտար, ամայի ճամփեքի վրա» բանաստեղծության մեջ հեղինակը պնդում է, որ կինը շուտ է մոռանում արցունքներ, և ինքը չի հավատում նրա համբույրին:
- Ավետիք Իսահակյանը աշխարհաթողության թեմային անդրադարձել է միայն «Աբու-Լալա Մահարի» պոեմում:
- «Սև-մութ ամպեր» բանաստեղծության մեջ հեղինակը գրուցում է Ալազյազի հետ՝ համոզված պնդելով, որ իր դարդի պես դարդ ոչ մեկը չունի, և սարերն ու հավքերն էլ անգամ չեն դիմանա դրան:
- «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ հերթական ճակատամարտում մատնությամբ թշնամուց պարտված քաջ զորականը հեռանում է սեփական երկրից:

11. Նշված ստեղծագործություններից քանի՞սն են Դանիել Վարուժանինը.

«Չմրան պարզ գիշեր», «Անիի ավերակներուն մեջ», «Կիլիկյան մոխիրներուն», «Դյուցազնորեն», «Հոգեվարքի և հույսի ջահեր», «Հովր», «Առաջին ծիլեր», «Հունձք կը ժողվեն», «Արտերուն հրավերը», «Տո՛ւր ինձի, Տե՛ր...»:

12. Նշված ստեղծագործություններից քանի՞սն են Դանիել Վարուժանինը.

«Վայրկյան», «Հիվանդ է», «Իրիկունը», «Մեղուները», «Նավասարդյան», «Հովր», «Նեմեսիս», «Չարդը», «Տաղ անձնական», «Աքափաներու շուքին տակ»:

13. Տրվածներից քանի՞սն են ճիշտ Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ:

- Բակուրի տանը հյուրընկալված Տրդատը փախցնում է նրա գեղեցկուհի կնոջը՝ Նազենիկին, սակայն ճանապարհին Բակուրը նետահարում է նրանց:
- «Հարճը» պոեմի վերջում Բակուրի նետից ծանր վիրավորված Նազենիկին կախարդանքով բուժում են անտառաբնակ չորս քրմերը:
- Պոեմի նյութը Դանիել Վարուժանը վերցրել է հինգերորդ դարի պատմիչներ Փավստոս Բուզանդի և Ագաթանգեղոսի պատմություններից:
- Պոեմի վերջում Տրդատը կարողանում է Նազենիկի հետ թողնել Բակուրի կալվածքների սահմանները և անցնել Շիրակ:

14. Տրվածներից քանի՞սն են ճիշտ Դանիել Վարուժանի ստեղծագործությունների վերաբերյալ:

- Դանիել Վարուժանի առաջին բանաստեղծական ժողովածուն «Սարսուռներն» է:
- Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի հերոսուհին անանուն է:
